4/II	11/II	791
14/II	22/V	591
		36
		712
		635
		20
		278
		28

Ն. 4.

L'ABBÉ PRÉVOST

HISTOIRE

DE

MANON LESCAUT

ET DU

CHEVALIER DES GRIEUX

EDITION D'ETAT D'ARMÉNIE

Տեխ. խմբագիր Հ. ԲԱՐԱՄԵԱՆ՝
Դասդր, ֆորպայը, սխեմաներինք՝
Հ. ԿՈՉՈՑԱՆԻ

Տպագրված է Հ. Խ. Ս. Հ. Գեոֆիզիկայի Մոսկվայի տպարանում։ Մոսկվա, Արմյանսկի պեր. 2. Պատվեր № 939. Գրաքննվար № Բ—20297. Տիրաժ 5000. Հանձնված է արտադր. 23/VI 36 թ. Ստորագրված է տպագր. 20/I 37 թ.։ 17 մամուլ մամուլում՝ 31, 500 տպանիշ։

Maurice Leloir
Hurot sc

Ա. Ռ Ա. Ջ Ա. Բ Ա. Ն

Գրքեր կան՝ հաստատուն համբավ ստացած, որոնք գրեթե անբացատրելի ժամանակակից մարդկանց և անհասկանալի՝ նրանց հետնորդների համար,—գրքեր, դուրկ այն բոլոր «ընդունված և անվիճելի» բարեմասնություններից, որոնք այդ համբավին մասամբ մանկավարժական բնույթ են տալիս։ Սակայն միևնույն ժամանակ այդ գրքերը չեն կարող դասվել այն յերևույթների շարքը, որոնք իրենց հրապույրով արժեք չներկայացնելով հանդերձ, դրավիչ են «արդելված պտղի» թովչությամբ։

Այսպիսի գրքերի թվին և պատկանում «Ակամավոր մարդու հիշատակարան» կոչված մեծածավալ հրատարակության VII հատորը, որն արդասիք և սքեմազգեստ մի արկածախնդրի՝ աբբա Պրևոյի գրչի Վերջինս ուներ անզուսպ յերևակայություն, անզուսպ խառնվածք, անզուսպ գրիչ, որը մարդկությանը տվեց քառասուն մեծահատոր յերկեր։ Բախտը ժպտում եր այդ մարդուն, սակայն նա ի չարն եր գործ դնում այդ պարգևն. նա արեց ամեն ինչ, որպեսզի մարտահրավեր նետի իր բախտին։ Շատ քչերն են այդ-

պես քիչ հոգացել իրենց բարեհամբավի մասին, հազվագյուտ են։ այն մարդիկ, որոնք այնքան շատ առիթներ են տվել իրենց անվանարկելու։ Ահա ինչու խոշոր տաղանդի անժխտելի հռչակի հետաքրքիր Գրեվոյի շուրջը բազմաթիվ՝ մինչև զրպարտության հասնող լուրեր են պտտվում, մի զրպարտություն, որը մինչ ցնորամտության է հասնում։

Այն դարում, յերբ կեղծամը, կեղծ-խալը, պուդրան տղամարդկանց և կանանց անբաժան պատկանելիությունն եյին կազմում, յերբ սպիտակ մազերը և ներկված գեմքերը բարեվայելչության նախապայման եյին հանդիսանում,—հանրակառքերի և փոստային կառքերի դարում, մեծ ճանապարհների վրա կատարվող ավազակային հարձակումների դարում, կամզոլի, գավոտի և մինուետի դարում, Վերսայլի կոկած ծառերի դարում, աղի, գույքի և դյուղացու աշխատանքի վրա դրվող ծանր հարկերի դարում, աղնվական Ֆրանսիայի անհոգ կենցաղավարության դարում, ֆրանսիական միապետության խորտակմանը նախորդող դարում, սենտիմենտալ բարեկամության և քնքույշ սիրո դարում, որ յերգվում եր անաղարտ բանաստեղծության և ֆրանսիական քաղաքած արձակի մեջ, մի դարում, յերբ դեռ գոյություն ունեյին կախարդուհիները և վերջին ալքիմիկները, ալքիմիկներ, որոնք ուղիներ եյին փնտրում դեպի հավիտենական կյանքը և անմեռ յերիտասարդությունը, միջոցներ որոնում՝ կապարից ոսկի պատրաստելու, ֆրանսիական մատերալիզմի դարում, Ռուսոյի և դ'Ալամբերի Գիտություններին, արվեստների և արհեստների բառագրքի մշակման դարում,—ահա այդ դարում՝ արկածախնդրի կառկածելի համբավը հաճախ մարդու համար ապահովում եր չտեսնված մի յերջանկություն, հաջողություն և բարեկեցություն։ Սակայն, ճիշտ այն չափով, ինչ չափով վոր թագավորների բարյացակամությունը զուրկ եր կայունությունից, նույն այդ չափով և՛ արկածախնդրի թեթեամիտ բախտը փոփոխական եր։

Տոհմազուրկ բուրժուան քրտնաջան ու յերկար աշխատանքով եր դիզում իր կարողությունը։ Դժվար ու համառ աշխատանքով եր այն ձեռք բերում։ Ֆրանսիայի յերբորդ դասի գծուծ ներկայացուցիչը դյուրությամբ չե, որ բաղմապատկում եր դրամով լի պարկերը իր յերկաթե անդուկներում։ Զպատկանելով հանդերձ Ֆրանսիայի իշխող դասակարգին, նա իր կաշվի վրա զգում եր թագավորական կապրիզները և հաճախ տանջվում յերբորդ դասը ճնշվող ազնվականության ծանր ձեռքից։ Այս պարագան իր հատուկ կնիքն եր դնում հասունացող ֆրանսիական բուրժուազիայի տնային կենցաղի, վարքի ու բարքի վրա։ Մինչդեռ թագավորական պալատում խայտաբղետ կամզոլներ և սպիտակ կեղծամներ եյին կրում,—հարուստ բուրժուաները համեստ կյանք եյին վարում, սիրում եյին հասարակ սև շորերը։ Նրանց թույլատրվում

եր բնական դուրսի մաղեր կրել, սակայն ինչքան էլ վոր հարուստ լինեին, նրանք մերձենալ անդամ չեին կարող մի ամբողջ շարք պետական պաշտոնների, իսկ սպայական արտոնագիր ձեռք բերելը բուրժուական միջավայրի սոսկ մի քանի յերջանիկ նորելուկներին եր վիճակված։ Դասային սուր խտրականությունը, վորը նման եր կաստային նեղ սահմանափակումներին, մարդկանց հնարավորություն եր տալիս դոռոզանալ մի դիրքում և նախանձել մի ուրիշում՝ ավելի բարձր դիրքում գտնվողներին։

Սակայն պատմությունը վորոշ տեղերում արդեն իսկ խախտել եր այդ սահմանների խստությունը։ Մանակացած, վոչ-գիտուն աղնվականը հաճախ իրեն ավելի վատ եր զգում, քան թե բանիմաց, ընդունակ ու կրթված բուրժուան։ Մի քանի ձախող տոնախմբություններ, վոր անասելի ծախսեր եյին առաջացրել, — և ահա փայլուն աղնվականը հարկադրվում և դիմել ատելի գծուծ բուրժուային. վերջինս մեծ տոկոսներով եր դրամ փոխ տալիս։ Մյուս կողմից, յերիտասարդ տղամարդիկ, բուրժուական ընտանիքներում սնված, շփվելով աղնվական յերիտասարդության փայլի, շքեղության և շռայլության հետ, ձգտում եյին նմանվել նրան, միշտ էլ չունենալով այդ նպատակի հնարավորությունները։ Դեռևս չկար այն մեծ լուրջ գործը, վորը՝ հետագա մեր դրողի խոսքերով ասած, «բարքերին բնականություն տար և մտքերին ու բնավորություններին՝ լրջություն»։ — Դեռևս չկար հեղափոխական մրրկի վորոտը։ Այս պայմանների ամբողջությունը ստեղծեց արկածախնդրական տիպերի մի տեսակ։ Դա մի ամբողջ կենսաբանական ժամանակաշրջան և ընդդրկում, դրանք բնավորություններ են, վորոնց լուծումը գտնելը դժվար և, յեթե չբացենք դրանք սնող հողի բոլոր շերտերը։ Առանց նման վերլուծության ստացվում և հակասությունների ծվատման, ամբողջականության բացակայության, ոտարոտության և հանելուքայնության տպավորություն։ Մինչդեռ, հատկապես չկիրառված եներգիայի այս ավելցուկը, հատկապես այն պայմանների բացակայությունը, պայմանների, վորոնց առկայության դեպքում այդ եներգիան իզուր չեր կորչի, ամենից հաճախ վոչ աղնվական յերիտասարդությունը մղում եյին դուտ արկածախնդրության ուղին բռնելու։

Անտուան-Ֆրանսուա Պրևոն, հետագայում Պրևո դ'Ենքսիլ, ծնվել և թագավորական նոտարի ընտանիքում, այսինքն՝ լավագույն դեպքում նրան կարելի յե անվանել մանտայի աղնվական։ Իրականում սակայն նա մեաց վորպես մանր բուրժուական միջավայրից սերված մի անձնավորություն։ Նա ծնվել և Արտուա պրովինցիայում, Դիզդեն կոչված ավանում, 1697 թվին, ֆրանսիական հեղափոխության վճռական տարուց յերեսուն տարի առաջ, մինչ Լյուդովիկ XVI-ի մահապատիժը։ Յերիտասարդ Պրևոյի ծնողները նրան պատրաստում եյին հոգևոր կոչման համար,

քանի վոր ուրիշ ամեն տեսակ կարգերայի ուղիները փակ էին նոտարի անտոհմիկ վորդու համար։ Կենցաղային անկախությունն ապահովող նյութական միջոցներ՝ դոնե այն չափով, վոր ուներ Ֆրանսիայի բուրժուազիան, Պրեվոյի ծնողները չունեին։ Դաստիարակված յեզվիտական դպրոցում՝ տասնվեցամյա Պրեվոն դառնում է յեզվիտական միաբանության վանական յեղբայր։ Սակայն յերեք տարի մնալով այս կոչման մեջ, մի անգամ նա իրականացնում է անակնկալ մի վորոշում, պատռում — դեն է ձգում իր ռքեմը, զինվորի համազգեստ է հագնում և փախչում վանքից։ Քսաներկու տարեկան հասակում նա թողնում է զինվորական ծառայությունը, մի վորոշ ժամանակ տատանվում է, վերստին վանք ձգտում, սակայն դրա փոխարեն նորից զինվորականի խթաններ է կլսում և առաջ վերցնում։ Անսպասելի կերպով 1720 թվին մենք նրան տեսնում ենք բենեդիկտյան վանքի քարոզչական ամբիոնում կանգնած և ականավոր մարդկանց յերեխաների դրակալների յետևում՝ Սեն-Ժերմեն-դե-Բրեյում՝ նրանց լատիներեն լեզու սովորեցնելիս։

Հատ յերևույթին, հատկապես այդ ժամանակին և վերաբերում «Ականավոր մարդու հիշատակարանը» խորագիր կրող մեծ վեպի սկզբնավորությունը։ Ըստինքյան յեզվիտական քարոզչի դրական աշխատանքը, վորոշ եջերի թեթևաբարո տոնը, ընդունվեցին վորպես յեկեղեցական կանոնադրության խախտումներ։ Պրեվոն իր բարեկամներից տեղեկություն է ստանում այն մասին, վոր դաղտնի կարգադրություն է արված իրեն ձերբակալելու։ Նա հարկադրվում է Հոլլանդիայի վրայով Անգլիա փախչել։ Այնտեղ լույս են տեսնում «Ականավոր մարդու հիշատակարանը» և նրա նոր յերկասիրությունը՝ «Անգլիական փիլիսոփան», կամ «Կլեվելանտի մեմուարները»։ Ձեռներեց և հարուստ ձիրքերով պարգևատրված լինելով՝ գոյության միջոցներ հայթայթելու նպատակով, նա սկսում է հրատարակել «Թեր և դեմ» գրական հանդեսը։

Շուտով գրավոր հավատիացումների միջոցով Պրեվոն հաշտվում է յեկեղեցու հետ և վերադառնում Ֆրանսիա։ Նրա յերկերի հաջողությունը միաժամանակ նրան հնարավորություն է տալիս բարելավել իր նյութական գործերը։ Նա հրատարակում է «Կիլերական դեկան», «Մեր որերի հելլենուհու պատմությունը» գրքերը և մի վեպ ֆրանսիական պատմությունից — «Մարգարիտ դ'Անժու»։ Կարիքը և արկածասիրությունը Պրեվոյին դրդում են վտանգավոր աշխատակցություն ցույց տալ լրագրանման մի թերթիկի, վորը պարապում եր շանտաժով և սկանդալային նորություններով։ Այստեղ աշխատելիս Պրեվոն նվազ համբավ ձեռք չբերեց, իսկ շոշափելով «մեծամեծ և կարող մարդկանց» պատիվը, անհաշտ թշնամիներ վաստակեց, վորոնց մեքենայություններն այնտեղ են հասնում, վոր Պրեվոն ստանում և աքսորի հրաման։

Վերստին սկսվում է աստանդական կյանքը։ Ամիսներում նա հանդիպում է մի աղջկա, սիրահարվում նրա վրա մինչ կատարյալ ինքնատրկացում. ամեն միջոց դործ է դնում իր կրքի առարկայի ազատության համար, յերբ նրա սիրուհուն, որպես հանցավորի, տաժանակրության են ուղարկում և միանդամայն ջախջախված՝ փորձում է մոռանալ իր կրած վիշտը, առաջին անդամ անկեղծորեն և վոչ թե ձևանալով, փորձում է մխիթարություն գտնել կրոնի մեջ։ Հենց այս դեպքն է այուժետ տվել «Ակամավոր մարդու հիշատակարանի» VII հատորի համար, որն անմահացրեց հեղինակի անունը։

«Ասպետ դը Գրիյոյի և Մանոն Լեսկոյի պատմությունը» լույս տեսավ Ամստերդամում 1731 թվին։ Դաղտնի կերպով բերված լինելով Ֆրանսիա, «ոժբախտ և ճակատագրական սիրո» այդ պատմությունը դարձավ ֆրանսիական ընթերցողների բուռն հրապուրանքի առարկան, բայց այդ հրապուրանքը թագուն եր։ Գիրքը կարդալուց չեյին հոգնում, սակայն իրենց դատումները յերկի մասին իրար շշուկով եյին հաղորդում։ Հափշտակությամբ կարդում եյին այն, սակայն բարձրաձայն դատապարտում և դատում կարծես թե ուրիշներից լսած խոսքերով։ Մեծաղղորդ մի սկանդալ պայթեց այն ժամանակ միայն, յերբ մի ինչ վոր ռուանյան գրավաճառ շահասիրությունից դրդված, վճռեց վերահրատարակել այդ գիրքը. գիրքն արգելվեց, դատապարտվեց այրման, իսկ «աղնիվ քաղաքացիները» պարտավոր եյին վառել այն։ Մատիե Մարե— Պրեվոյի ժամանակակից մի բուրժուա,—թերևս ավելի պակաս կեղծավոր, քան նրա համաքաղաքացիները, հայտարարեց, վոր «գիրքն այրելուց առաջ այնուամենայնիվ նա կարդաց այն։ դա մի կրակոտ գիրք է, վորը բորբոքում է հանցավոր կրքերի հրդեհը։ Կառավարությունը և յեկեղեցին պետք է կրակով պատասխանեն՝ այրելու հեղինակին և գիրքը»։

Միայն 1753 թվին դառնալով իշխան Կոնդեյի քարտուղարը և ստանալով պատվեր իր հովանավորից «Կոնդի տան ժամանակագրությունը» գրելու, Պրեվոն թույլտվություն և ձեռք բերում գրքի հրատարակման։ Այն որից, յերբ թագավորական գրաքննիչի փետուրե գրիչը խզմզոցով գրեց «imprimatur» թույլտվական բառը, ֆրանսիական գրաշուկան ինչ վոր կատաղի յեռուզեռ ապրեց։ Հաղիվ թե աշխարհում վորևե այլ գիրք այդքան հրատարակություններ ունեցավ։ Այն ժամանակվա պայմաններում «Ասպետ դը Գրիյոյի և Մանոն Լեսկոյի պատմության» տիրաժներն ուղղակի անհավատալի յեն, իսկ հարստացած և ծերացող հեղինակի կողմից գրանենգիչների դեմ հարուցած գործերի թիվը գերազանցում է, ըստ ֆրանսիական վիճակագրության, մարդկային մի կյանքի հասնող դատական պրոցեսների թիվը։

Իր կյանքի վերջին քսան տարին Պրեվոն անցկացրեց Սեն-Ֆիրմենում, վորպեսզի իր համար դյուրացնի Շանտիլիի արխիվ-

ներում զբաղվելու՝ հնարավորությունը։ Մահը վրա հասավ «Գոնդի ընտանիքի պատմությունը» մշակելու միջոցին։ Նրա մահից հետո Գրեվոյի անվան շուրջը հյուսվեց ականդալային բամբասանքների և համարյա լեգենդական հերյուրանքների մի խիտ ցանց։ Մերկացողները Գրեվոյին մեղադրում էին բաղմակնությյան, իր հարազատ հորը թունավորելու մեջ, չխնայելով անգամ մեռած աբբայի թերևս կենդանի մտերմուհիների բարեհամբավը, — մեղադրում էին նաև մուրհակներ կեղծելու, մութ անկյունից ապանություններ կատարելու մեջ, և այլն։ Այս խռովահույզ մարդու կենսագրության եզերքը առիթներ են ստեղծել և հնարավորություն տվել դրանք լցնելու ճարպիկ մարդկանց հնարանքներով, վորոնց հայրերը և յեղբայրները մի ժամանակ ուժեղ հարվածներ էին ստացել Գրեվոյի մերկացնող ժուրնալիստիկայից։ Նրա հրատարակիչներին ել հենց այդ էր պետք։ Հեղինակի ականդալային համբավը մեծացնում էր նրա յերկերի տիրաժները, սակայն դրանց մեջ ամենամեծ հաջողությունն ուներ «Առպետ դը Գրիյոյի և Մանոն Լեսկոյի պատմությունն» դիրքը։

Գրեվոյի վեպը, ինչպես մենք արդեն ասացինք, անպայմանինքնակենսագրական բնույթ և կրում։ Դա մի վիպակ և յերիտասարդ և անփորձ մի աղնվականի սիրո մասին, մի աղնվականի, վորը նոր է կյանք մտնում և կյանքի շեմքին՝ չճաշակած զգացմունքի վողջ թարմությամբ՝ սիրում է մի աղջկա, ոժտված նույնպիսի կրակով, սակայն գունաթեղված սիրեկանի յերևակայությամբ։ Յերբ վիպակի հերոսը ճանաչում է իր սիրուհու վիրավորիչ մի ամբողջ շարք հատկությունները, նա չի զգում կրքի հորդման նվազումը, ընդհակառակը՝ նրա սերն ել ավելի ուժգին է բորբոքվում։ Առպետ դը Գրիյոյի մտքի հստակության վայրկյանն անչափ կարճ է և ավելի շուտ՝ նրա տեսակետով՝ նման է մի ինչ վոր խավարման։ Ահա նա վերստին իր սիրելի եյակի կողքին է, վորին մինչ այդ ուզում էր խիստ ու կտրուկ խոսքեր ասել, սակայն հենց այդ րոպեին այսպիսի խորհրդածություններ է անում. «Յես զարմացա, նորից նրա կողքին գտնվելով, թե ինչպես կարող էի դեպի այս հիասքանչ արարածը տածած իմ քնքշությունն ամոթալի համարել»։

Բարքերի սովորական շրջանակները, մարդկային հասարակության պայմանականությունները — այս բոլորն առպետ դը Գրիյոն մոռանում է հանուն իրեն ստրկացնող սիրու։ Հերոսները խղճահարություն են զարթեցնում, իսկ վեպի կառուցվածքը, վորի ուժով կենտրոնական դեմքերը, — դը Գրիյոն և Մանոնը — ավելի ցայտուն են նկարագրված, իսկ բոլոր մնացածները կարծես թե ֆոն են հանդիսանում՝ զուրկ ինքնուրույն նշանակությունից, — ապահովում է դրքի խոշորագույն ներգործությունն ընթերցողի վրա։ Սակայն պետք է նկատի ունենալ, վոր մինչև իսկ յերկու հիմնա-

կան հերոսների նկարագրության մեջ Գրեվոն չի տալիս սպառիչ բնութագրեր և ամեն կողմից լուսաբանված սահմանումներ, այլ համարյա վորպես վերջին եպոխաների ռոմանտիկ կամ մինչև իսկ վորպես վերջին ոդերի իմպրեսիոնիստ մեթոդիկ կերպով բոլոր ուշադրությունը կենտրոնացնում է իր հերոսի մի զգացմունքը պատկերելու վրա՝ կրքոտ, անձնվեր զգացմունքը, վորը միևնույն ժամանակ խղճահարություն է հարուցում իր ծայրահեղությամբ։

Միանգամայն հետաքրքիր է, թե Գրեվոն ինչպես է իրականացնում իր գեղարվեստական չեղանակավորումը՝ ցույց տալու այս միասնական զգացմունքը հերոսների գործողություններին, արարքների և կացություններին մեջ։ Հնոյա ֆրանսիական գրականության կլասիկ պահանջը հեղինակին պարտադրում եր իր հերոսների գործերն ու ոդերը շաղկապել այս կամ այն արատի կամ թե այս կամ այն առաքինության ընդհանուր առանցքի հետ։

Այս միակողմանիությունը, վորը ստվերարկում եր մյուս հատկությունները,—կլասիկ յերկերի մեջ գործող դեմքերին հաղորդում եր սխեմատիզմ, պայմանականություն և դաժանություն, համարյա լիակատար անռեալականություն։ Այնուամենայնիվ Գրեվոն իր ժամանակակիցներից և նախորդներից տարբեր՝ վերցրել է իրոք կենդանի մի զգացմունք, պատկերել այն խորին իրականության գծերով, սակայն նա իջեցրել է նրա վորակը, դիմելով դեպի մի խորին իրական, բայց մի գուցե վոչ լիարժեք առարկա։ Մանոնն «որինակելի» աղջիկ չէ, «անբիծ կին» չէ, ահա ինչու այս վեպն ընթերցողին ուժգին համակում է գույների անսովոր թարմությամբ և կացությունների ճշտությամբ։ Նա ունի բոլոր հատկություններն իսկական գեղարվեստական համոզողականության, վորը պահանջում եր այդ ժամանակ արդեն ուժեղացած ֆրանսիական բուրժուազիան։ Ցեկեղեցու փարիսեցիականությունը և պալատի կեղծ բարեպաշտությունը չեյին կարող կասեցնել հին Ֆրանսիայի նոր դասակարգի կենսունակ յերիտասարդ ուժի բուռն առաջխաղացումը։

Ա. Կ. ՎԻՆՈԳՐԱԴՈՎ

ՀԵՂԻՆԱԿԻ ԱՌԱՋԱԲԱՆԸ

Թեպետ և յես կարող եյի իմ «Հիշատակարան»-ում[1] զետեղել ասպետ դը Գրիյոյի արկածների պատմությունը, սակայն քանի վոր դրանց մեջ վոչ մի անհրաժեշտ կապակցություն չկա, ինձ թվաց, թե ընթերցողին ավելի հաճելի կլինի տեսնել այն լույս ընծայված առանձին։ Ի դեպ, այս ծավալի մի վիպագրություն տևականորեն կընդհատեր իմ սեփական պատմության թելը։ Վորքան և յես հեռու լինեմ իսկական գրող կոչվելու հավակնությունից, այնուամենայնիվ լավ գիտեմ, վոր պատմվածքը զերծ պետք է լինի այն բոլոր հանգամանքներից, վորոնք խճճում ու ծանրաբեռնում են յերկը. տակավին Հորացիոսն է ասել.

Ut jam nunc dicat jam nunc debentia dici
Pleraque differat, ac praesens in tempus omittat.

---

1 Ծանոթությունները վերջում։ Թարգմանիչ։

Այս պարզ ճշմարտությունն ապացուցելու համար բնավ հարկ չկա դիմելու այդքան խոշոր մի հեղինակության, վորովհետև առողջ դատողությունը սույն կանոնի առաջին աղբյուրն է։

Եթե ընթերցողը հետաքրքրական և ուշագրավ է համարել իմ կյանքի պատմությունը, ապա յես համարձակվում եմ խոստանալու, վոր սույն հավելումը սակավ հաճույք չպիտի պատճառի նրան։ Պարոն դը Գրիյոյի վարքի մեջ ընթերցողը կտեսնի կրքերի հզորության սոսկալի արտահայտությունը։ Յես պետք է նկարագրեմ կրքից կուրացած մի պատանու, վորը հրաժարվում է յերջանիկ լինելուց՝ իրեն հոժարակամ մատնելով ծայրահեղ թշվառության. վորն ոժտված լինելով հանդերձ այն բոլոր բարեմասնություններով, վորոնք ամենափայլուն հասարակական դիրք են ապահովում, այնուամենայնիվ գերադասում է մութ ու թափառական կյանքը հարստության և բնության պարգևած առավելությունից. վորը նախատեսում է իր դժբախտությունն ու չի ջանում խուսափել դրանից. վորը գիտակցելով հանդերձ այդ դժբախտությունը՝ ընկճվում է նրա ծանրության ներքո, սակայն առանց գործադրելու անդադար իրեն առաջարկված բուժման այն միջոցները, վորոնք ունակ են ամեն վայրկյան այդ վերացնելու։ Վերջապես յես պետք է պատկերեմ տարամերժ մի բնավորություն, առաքինությունների ու մոլությունների խառնուրդը, բարի հակումների և վատ արարքների մշտական հակադրությունը։ Այսպիսին է իմ ուրվագծած պատկերի ֆոնը։ Վողջամիտ մարդիկ անշուշտ այս կարգի յերկը ապարդյուն գործ չպիտի համարեն։ Բացի ընթերցման հաճույքից նրանք այստեղ կտեսնեն վոչ սակավաթիվ դեպքեր, վորոնք կծառայեն իբրև բարոյական խրատներ. իսկ զվարճացնելով խրատել՝ դա, ըստ իս, նշանակում է ընթերցողին մեծ ծառայություն մատուցել։

Բարոյական սկզբունքների մասին խորհրդածելիս մենք չենք կարող չզարմանալ, տեսնելով, վոր մարդիկ

դրանք թե հարգում են և թե արհամարհում։ Հարց և ծագում. ինչով բացատրել մարդկային սրտի այն քմայքը, վոր ճաշակելով հանդերձ բարու և կատարելության գաղափարները, իրականում նա միևնույն ժամանակ հրաժարվում է դրանցից։ Եթե վորոշ մտայնության ու կրթության տեր մարդիկ կամենան հետազոտել, թե վորն է իրենց զրույցների՝ կամ նույնիսկ ինքնամտորումների ամենասովորական առարկան, ապա նրանք հեշտությամբ կնկատեն, վոր դա գրեթե միշտ պատվում է վորևե բարոյական դատողության շուրջը։ Իրենց կյանքի ամենաքաղցր րոպեները նրանք մենակ են ապրում կամ մի մտերիմ բարեկամի հետ՝ սրտաբաց խոսակցելով առաքինության հրապույրների, բարեկամության քաղցրության, յերջանկության հասնելու միջոցների, յերջանկությունից մեզ հեռացնող մեր բնության թուլությունների և այդ թուլությունները հաղթահարելու յեղանակի մասին։ Հորացիոսը և Բուալոն այդպիսի զրույցը համարում են մեկն այն ամենաբեղեցիկ գծերից, վորոնցով ստեղծվում է, ըստ նրանց, յերջանիկ կյանքի պատկերը։ Արդ, ինչպես է պատահում, վոր մենք այնքան դյուրությամբ գահավիժում ենք այս խոհերի բարձունքից ու իսկույն իջնում մինչ սովորական մարդկանց մակարդակը։ Ցես սխալված կլինեմ, յեթե ստորև նշած իմ փաստերը պատշաճորեն չբացատրեն մեր գաղափարների ու վարմունքի միջև գոյություն ունեցող հակասությունը։ Իսկ վորովհետև բարոյականության բոլոր պատվերները լոկ ընդհանուր սկզբունքներ են, ապա միանգամայն դժվար է դրանք մասնակիորեն կիրառել այս կամ այն բարքերի ու արարքների նկատմամբ։ Ապացուցենք որինակով։ Բարեծին հոգիները զգում են, վոր հեզությունն ու մարդկայնությունը վսեմ առաքինություններ են, ուստի և նրանք ձգտում են այդպիսիք կիրառել իրենց կյանքում։ Սակայն հենց այն րոպեին, յերբ պետք է իրականացնել այդ առաքինությունները, հաճախ նրանց կենսագործումը խափանվում է։ Հիրավի, արդյոք հար-

մեր է առիթը։ Ի՞նչ չափով անհրաժեշտ է առաքինութիւնների ցուցաբերումը։ Զենք սխալվում արդյոք տվյալ անձի նկատմամբ։

Հաղար ու մի տարակուսանք կաշկանդում է մարդուն։ Նա վախենում է խաբվել, յերբ կամենում է բարերար ու առատաձեռն լինել. համարվել թուլամորթ, յերբ իրեն ցույց է տալիս չափազանց մեղմ ու զգայուն. մի խոսքով՝ սահմանից դուրս դալ կամ ըստ հարկի չկատարել այն պարտականութիւնները, վորոնք ծայր աստիճան աղոտ են պարփակվում հեզության ու մարդկայնության հասկացողութիւնների մեջ։ Այդպիսի տատանման պահին միայն փորձն ու որինակը կարող են ճշտիվ վորոշել սրտի հակումը։ Սակայն փորձն այնպիսի մի շեմարհք չէ, վորին յուրաքանչյուր վոք ի վիճակի լինի տիրանալու. դա կախում ունի զանազան դրութիւններից, վորոնց մեջ գտնվում է մարդս ճակատագրի բերմամբ։ Հետևաբար մնում է սոսկ որինակը, վորն իբրև կանոն ունակ է ծառայելու այն բուզմաթիվ մարդկանց, վորոնք իրագործում են առաքինութիւնը։

Հենց այդպիսի ընթերցողի համար նմանորինակ յերկերը կարող են վերին աստիճանի շահեկան լինել, յեթե միայն դրանք գրել է ազնվաբարո ու վողջամիտ մի մարդ։ Ամեն մի իրադարձութիւն, վորի մասին այստեղ խոսվում է, իրենից ներկայացնում է լույսի մի նշույլ, մի խրատ, վորը փոխարինում է փորձին. ամեն արկած՝ մի նմուշ, վորի համեմատ մարդը կազմավորվում է բարոյապես։ Մնում է միայն այս ամենը կիրառել այն հանգամանքներում, վորոնց մեջ գտնվում են մարդիկ։ Մեր ամբողջ յերկը մի բարոյական տրակտատ է՝ վերածված ուշագրավ անցքերի։

Խստապահանջ ընթերցողը թերևս վիրավորանք համարի, վոր իմ տարիքում յես վերստին գրիչ եմ վերցնում՝ բախտախնդիր ու սիրային արկածներ գրելու համար։ Սակայն, յեթե վերևում նշած իմ խորհրդածութիւնը ճիշտ է, դա արդարացնում է ինձ. իսկ յեթե դա սխալ է, ապա սխալանքս կլինի իմ ներումը։

ՄԱՆՈՆ ԼԵՍԿՈ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ



ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

Ցեսս ստիպված եմ խնդրել ընթերցողին՝ վերադառնալ դեպի իմ կյանքի այն շրջանը, երբ առաջին անգամ հանդիպեցի ասպետ դե-Գրիյոյին։ Այս դեպքը պատահեց իմ Իսպանիա մեկնելուց մոտ վեց ամիս առաջ։ Թեև ցեսս հազվադեպ եյի դուրս գալիս իմ մենությունից, սակայն դեպի դստերս տածած դուրգուրանքը հարկադրում եր ինձ յերբեմն կատարել զանազան փոքր ճանապարհորդություններ, վորոնք ցեսս կըրճատում եյի կարելույն չափ։

Մի անգամ ցեսս վերադառնում եյի Ռույենից, ուր գնացել եյի նրա խնդրանքով դիմելու Նորմանդիայի պարլամենտին՝ մի քանի կալվածների ժառանգության գործով։ Այդ ժառանգության իրավունքը ցեսս ստացել եյի մորենական պապից և իմ հերթին ղինջել աղջկանս։

Ցեսը ուղևորվեցի դեպի Եվրոպա, ուր անցկացրի առաջին դիշերը, իսկ հետևյալ օրը ճաշին հասա Պասսի՝ վորը այդտեղից հինգ-վեց մղոն հեռավորության վրա է գտնը-վում։ Այդ ավանը մտնելիս ինձ զարմացրեց բնակիչ-ների բուռն իրարանցումը։ Նրանք դուրս էին թափ-վել տներից ու խուռն բազմությամբ վազում էին դեպի մի խղճուկ պանդոկի դարպասը, վորի առաջ կանգնած էին յերկու ծածկված սայլակներ։ Տոթից ու հոգնա-ծությունից շնչասպառ ձիերը տակավին չէին արձակ-ված, վոր և վկայում եր սայլակների նոր ժամանումը։

Մի բոպե յես կանգ առա՝ իրարանցման պատճառը պարզելու համար։ Սակայն քիչ բան կարողացա իմա-նալ հետաքրքրությամբ տարված այդ ամբոխից, վորը վոչ մի ուշադրություն չեր դարձնում իմ հարցերին և մեծ խառնաշփոթությամբ միմյանց բութելով շարու-նակում եր վազել դեպի պանդոկ։ Վերջապես դարպասի մոտ յերևաց մի հրացանաձիգ—ուսին մուսկետ, մեջքին՝ սուսերակալ։ Ցեսն ձեռքով նշան արի նրան, վոր մոտենա ինձ և խնդրեցի բացատրել այդ իրարանցման պատճառը։ «Դատարկ բան, պարոն»,—ասաց նա ինձ։—«Ցեսն իմ ըն-կերների հետ տասներկու զվարճության աղջիկներ ենք տանում Հավր-դե-Գրաս, վորտեղից նավով պիտի ճա-նապարհ դնենք դեպի Ամերիկա։ Նրանցից մի քանիսը դեղեցիկ են և ըստ յերևույթին դա է, վոր հարուցում է այս բարեսիրտ գյուղացիների հետաքրքրությունը»։

Այս բացատրությունից հետո յես պատրաստ եյի շա-րունակել ճանապարհս, յեթե իմ ուշադրությունը չգրա-վեյին պանդոկից դուրս յեկող մի պառավի բացական-չությունները. նա ձեռքները յերկինք պարզած գոչում եր, թե դա բարբարոսություն է, սարսափ ու կարեկ-ցանք շարժող անդթություն։ «Ի՞նչ է պատահել»,— հարցրի յես նրան։—«Ա՜խ, պարոն»,—պատասխանեց նա,—«ներս մտեք և տեսեք՝ արդյոք կարող է այսպիսի մի տեսարան չխոցել մարդու սիրտը»։ Հետաքրքրու-թյունն ինձ ստիպեց իջնել ձիուց, վորը հանձնեցի ա-պանդոկապահիս խնամքին։ Ամբոխը ճեղքելով դժվա-

ՐՈՒԹՅԱՄԲ ՆԵՐՍ ՄՏԱ ԵՒ, հիրավի, իմ աչքի առաջ բացվեց սրտաճմլիկ մի տեսարան։

Մեջքերից, վեց-վեց իրար շղթայված այդ տասներկու աղջիկների մեջ կար մեկը, վորի դեմքն ու արտաքինն այնքան քիչ էին համապատասխանում իր ներկա դրությանը, վոր այլ պայմաններում յես նրան հասարակության բարձր շրջանի կին կհամարեյի։ Դեմքի թարխիծը, կեղտոտ սպիտակեղենն ու զգեստները այնքան քիչ էին տգեղացնում նրան, վոր նրա տեսքը հարգանք ու կարեկցանք ներշնչեց ինձ։ Այսուհանդերձ նա ճգնում եր՝ վորքան այդ թույլ եր տալիս շղթան՝ մի կողմ շրջվել հանդիսատեսներից, իր դեմքը նրանցից թաքցնելու համար։ Թաքնվելու իր ճիգը վերին աստիճանի բնական եր և ասես պարկեշտության զգացումից բղխելիս լիներ։

Այս անբախտ խմբին ուղեկցող վեց պահակներն էլ նույն սենյակումն էին։ Յես մի կողմ կանչեցի նրանց ավագին և խնդրեցի փոքր ինչ լուսաբանել այդ գեղեցիկ աղջկա վիճակը։ Բայց նա միայն ամենաընդհանուր տեղեկություններ կարողացավ տալ։ «Մենք այդ աղջկան վերցրինք արգելատնից՝ վոստիկանության գլխավոր պետի հրամանով», — պատասխանեց նա ինձ։ «Պարզ է, նա այնտեղ բանտարկված եր վոչ իր բարի գործերի համար։ Ճանապարհին բազմիցս հարցուփորձ արի նրան, սակայն նա համառորեն լռում է։ Թեև յես

վոչ մի հրաման չեմ ստացել ավելի լավ վարվելու նրա-
հետ, քան մյուսների, այնուամենայնիվ վորոշ սիրալի-
ությունն եմ ցույց տալիս նրան, վորովհետև ինձ թվում
է, թե նա ավելի արժանավոր է, քան իր ընկերուհիները։
Ահա այս յերիտասարդ տղամարդը»,— ավելացրեց հրա-
ցանանձիդը,— «կարող է ինձնից լավ ձեզ բացատրել նրա
դժբախտության պատճառը։ Սկսած Փարիզից նա ուղեկ-
ցում է այդ աղջկան և դրեթե մի բոպե անգամ չի դադարում
արտասվելուց։ Թերևս նրա յեղբայրն է կամ սիրեկանը»։

Ցեսս շրջվեցի դեպի այն անկյունը, ուր նստած եր
այդ յերիտասարդը. նա կարծես ընկղմված եր խոր մտածմունքի մեջ։ Կյանքումս յես յերբեք չեյի տեսել վշտի ավելի կենդանի մի պատկեր։ Նա վերին աստիճանի պարզ եր հագնված. սակայն առաջին իսկ հայացքից յերևում եր, վոր ազնվազարմ ու բարեկիրթ մի մարդ է։ Ցեսս մոտեցա նրան։ Նա վոտքի կանգնեց, և յես նրա աչքերում, դեմքի և բոլոր շարժումների մեջ այնքան նիրություն, ազնվություն նկատեցի, վոր իմ սիրտը բնականաբար համակվեց բարյացակամ զգացումով դեպի նա։ «Արդյոք չեմ խանգարում ձեզ»,— ասացի նրան, նստելով կողքին։ «Ցեսս կցանկայի իմանալ այս դեղեցիկ կնոջ պատմությունը։ Կբարեհաճեք բավարարել իմ հետաքրքրությունը։ Ինձ թվում է, նա ծնված չէ այն տխուր վիճակի համար, վորի մեջ տեսնում եմ նրան»։

Նա անկեղծորեն պատասխանեց, վոր չի կարող ինձ ասել, թե ով է այդ կինը, առանց մատնելու միևնույն ժամանակ և իր ով լինելը։ Այնինչ, նա լուրջ պատճառներ ունի անհայտ մնալու։ «Կարող եմ այնուհանդերձ ասել ձեզ այն, ինչ հայտնի յե այս թշվառականներին»,— ավելացրեց նա, մատնացույց անելով հրացանաձիգներին. «յես սիրում եմ այդ աղջկան այնպիսի բուռն սիրով, վոր դրա համար դարձել եմ աշխարհիս ամենաանբախտ մարդը։ Փարիզում յես բոլոր հնարները գործադրեցի նրան ազատելու համար, սակայն ինձ չոգնեց վոչ աղերսանքը, վոչ հնարամտությունը և վոչ եր ույժը։ Ի վերջո վորոշեցի հետևել նրան թեկուզ մինչև

աշխարհի ծայրը։ Ցեռ նրա հետ նավ կնստեմ և կգնամ Ամերիկա»։

«Սակայն ամենամեծ անգթությունն այն է, որ սուն ստոր սրիկաները», — շարունակեց նա, խոսելով հրացանաձիգների մասին, — «թույլ չեն տալիս, որ մոտենամ նրան։ Ցեռ մտադիր եյի ուղղակի հարձակվել նրանց վրա՝ Փարիզից մի քանի մղոն հեռանալուց հետո։ Այդ նպատակով յես պայմանավորվել եյի չորս մարդկանց հետ, որոնք մի խոշոր գումարի դիմաց խոստացել եյին ինձ իրենց աջակցությունը։ Սակայն ապիկարները կռվի պահին լքեցին ինձ և դրամս առած փախան։ Ույժով իմ նպատակին հասնելու անզորությունս ստիպեց ինձ զինաթափ լինել։ Ցեռ խնդրեցի հրացանաձիգներին գոնե թույլ տալ հետևելու իրենց՝ առաջարկելով վորոշ վարձատրություն։ Շահի տենչը ստիպեց նրանց համաձայնվել։ Ամեն անգամ, յերբ ինձ թույլատրում եյին խոսել սիրուհուս հետ, նրանք վճար եյին պահանջում։ Քսակս շուտով դատարկվեց և այժմ, յերբ մի սու անգամ չունեմ, նրանք այնքան բարբարոս են, որ կոպտությամբ ինձ յետ են հրում, հենց որ մի քայլ եմ անում նրան մոտենալու։ Դեռ մի բոպե առաջ, յերբ յես՝ չնայած նրանց ապառնալիքներին համարձակվեցի մոտենալ, նրանք հանդգնեցին հրացան ուղղել ինձ վրա։ Այժմ յես ստիպված եմ, նրանց ագահությունը բավարարելու և ճանապարհս շարունակելու համար, ծախել

իմ անպետք ձին, վորով յեկել եմ մինչև այս ավանը։

Թեև կարծես այս ամենը նա պատմեց բավական հանդարտ, սակայն յերբ խոսքը վերջացրեց, արտասուքները կաթիլ-կաթիլ գլորվում եյին նրա աչքերից։ Այս իրադեպը ինձ վերին աստիճանի արտասովոր և հուզիչ թվաց։ «Ցեսս չեմ պահանջում, վոր դուք ինձ հայտնեք ձեր գաղտնիքը», — ասացի յես նրան, — «սակայն, յեթե կարող եմ ձեզ վորևե բանում ոգտակար լինել, հաճությամբ պատրաստ եմ ձեզ ծառայելու։ — «Ավաղ», — պատասխանեց նա, — «հույսի նշույլ անգամ չեմ տեսնում։ Ցեսս հարկադրված եմ ամբողջովին համակերպվել իմ դաժան բախտին։ Ցեսս կդնամ Ամերիկա, ուր գոնե ազատ կարող եմ սիրել։ Ցեսս գրել եմ իմ բարեկամներից մեկին և նա ինձ փոքր ինչ կոգնի Հավր-դը-Գրասում։ Ինձ մատանջում են միայն մինչև այնտեղ հասնելու դժվարությունները և այս անբախտ արարածի», — ավելացրեց նա, թախծանքով նայելով իր սիրուհուն, — «ճանապարհը դեթ մի քիչ թեթևացնելու անկարողությունս»։ — «Յեթե այդպես ես», — պատասխանեցի նրան, «յես ուզում եմ վերջ դնել ձեր մատանջությանը։ Ահա ձեզ մի փոքր գումար. խնդրում եմ ընդունեք. շատ եմ ցավում, վոր այլ կերպ չեմ կարող ձեզ ոգնել»։

Ցեսս նրան չորս վոսկի տվի պահակներից թաքուն, լավ գիտենալով, վոր յեթե նրանք իմանան այդ գումարի մասին, ապա ավելի թանգ կծախեն իրենց մատուցած ծառայությունը։ Ցեսս նույնիսկ մտածեցի սակարկել նրանց հետ, վորպեսզի ապահովեմ յերիտասարդ սիրեկանին մինչև Հավր իր սիրուհու հետ անընդհատ խոսակցելու թույլտվությունը։ Ցեսս նշան տվի պահակապետին մոտենալու ինձ և համապատասխան առաջարկ արի։ Նա, ըստ յերևույթին, ամաչեց՝ չնայած իր անպատկառությանը։ «Մենք, պարոն, չենք արգելում նրան խոսելու աղջկա հետ», — պատասխանեց նա շփոթված, — «բայց յերիտասարդը կամենում է միշտ նրա մոտ լինել, իսկ դա մեզ անհանգստացնում է. միանգամայն արդարացի յե, վոր նա վճարի պատճառած անհանգստ-

տության համար։ — «Լավ, թող այդպես լինի», — ասացի նրան, — «իսկ վորքան պետք է վճարել, վորպեսզի դուք այդ անհանդստությունը չզգաք»։ Նա հանդգնություն ունեցավ ինձնից յերկու վոսկի պահանջելու։ Ցես իսկույն վճարեցի։ — «Սակայն նայեցեք», — ավելացրի յես, — «առանց խարդախության։ Ցես իմ հասցեն թողնում եմ այս յերիտասարդին, վորպեսզի նա ամեն ինչի մասին իրազեկ պահի ինձ և հավատացնում եմ, վոր ի վիճակի կլինեմ հարկ յեղած դեպքում ձեզ պատժել տալ»։

Այս հանդիպումն ինձնից խլեց վեց վոսկի։

Այն արժանավայել և ջերմ յերախտագիտությունը, վորով յերիտասարդ անծանոթն արտահայտեց իր շնորհակալությունը, վերջնականապես համոզեց ինձ, վոր նա մեծատոհմիկ մի մարդ է՝ արժանի իմ առատաձեռնությանը։ Մեկնելուց առաջ յես մի քանի խոսք ուղղեցի նրա սիրուհուն։ Վերջինս ինձ պատասխանեց այնպիսի ընքուշ ու հմայիչ համեստությամբ, վոր սենյակից դուրս գալիս յես հազար ու մի խորհրդածություն արի կանանց անիմանալի բնության մասին։

Ցես վերադարձա դեպի իմ մենությունը և այս արկածի շարունակությունն անհայտ մնաց ինձ։ Անցավ մոտ յերկու տարի և յես բոլորովին մոռացել եյի այն, յերբ մի յերջանիկ պատահականությամբ առիթ ունեցա ծանոթանալու այդ պատմության բոլոր հանգամանքների հետ։

Լոնդոնից նոր եկի հասել Կալե իմ աշակերտ մարկիզ դը...ի հետ։ Մենք իջևանեցինք, յեթե չեմ սխալվում, «Վոսկե Առյուծ» կոչված հյուրանոցում, ուր, ինչ վոր պատճառներից ստիպված, անցկացրինք ամբողջ որը և հետևյալ գիշերը։ Ճաշից հետո փողոցներում զբոսնելիս ինձ թվաց, թե յես տեսնում եմ նույն յերիտասարդին, վորին հանդիպել եկի Պասսիյում։ Նա չափազանց վատ եր հագնված և շատ ավելի դալկադեմ եր, քան մեր առաջին տեսակցության պահին։ Թևի տակ մի հին ուղեպարկ ուներ. յերևի նոր եր ժամանել քաղաք։ Սակայն վորովհետև նա չափազանց դեղեցկատես եր, ապա հեշտ եր նրան ճանաչել, և յես իսկույն իմացա, վոր այդ նա յե։ — «Մոտենանք այս պատանուն», — ասացի յես մարկիզին։

Անկարելի յե նկարագրել պատանու ուրախությունը, յերբ իր հերթին նա յել ինձ ճանաչեց։ «Ա՜խ, պարոն», — բացականչեց նա ձեռս համբուրելով, — «ուրեմն յես կարող եմ մի անգամ ևս ձեզ հայտնել իմ անմոռաց յերախտագիտությունը»։ — Ցես նրան հարցրի, թե վորտեղից և գալիս։ Նա պատասխանեց, վոր ծովով և յեկել Հավր-դը-Կրասից. իսկ այնտեղ ժամանել է Ամերիկայից մի քանի որ առաջ։ — «Ինձ թվում է, դուք դրամի կարիք ունեք», — դիմեցի յես նրան։ «Գնացեք «Վոսկե Առյուծ» հյուրանոց, ուր իջևանել եմ. իսկույն յես ել կգամ»։

Ցես անմիջապես վերադարձա հյուրանոց, անհամբեր սրտով շտապով իմանալու նրա դժբախտ վիճակի մանրամասնությունները և Ամերիկայի ճանապարհորդության հանգամանքները։ Գուրգուրիչ ուշադրությամբ պատեցի նրան և կարգադրություն արի, վոր նա վոչ մի ՝բանի պակասություն չզգա։ Նա չսպասեց, վոր խնդրեմ իրեն՝ անելու իր կյանքի պատմությունը։ — «Պարոն», — ասաց նա, — «դուք այնքան ազնիվ եք դեպի ինձ, վոր յես ստոր ապերախտության մեջ պիտի հանդիմանեմ ինձ, յեթե վորևե բան թաքցնեմ ձեզնից։ Ցես ձեզ կպատմեմ վոչ միայն իմ դժբախտության ու տառապանքների, այլ նաև իմ անառակ կյանքի և ամե-

նամոթալի թուլություններիմասին։ Հավատացած եմ, վոր դատապարտելով հանդերձ, դուք չեք կարող ինձ չկարեկցելդ։

Այստեղ յես ուզում եմ ընթերցողին նախազգուշացնել, վոր նրա պատմությունը գրի առա այն լսելուց անմիջապես հետո և հետևաբար կարելի յե միանգամայն վստահ լինել դրա ճշգրտությանն ու իսկությանը։ Հավաստիացնում եմ, վոր ճշտությունը պահպանել եմ մինչև իսկ այն տեղերում, ուր խոսում եմ խորհրդածությունների և զգացումների մասին, վոր յերիտասարդ արկածախնդիրն արտահայտում եր ամենայն շնորհալի ու սրտագին պատրաստակամությամբ։

Ահա նրա պատմությունը, վորին յես մի բառ անգամ չեմ ավելացնելու մինչև վերջը։

Ցես տասնյոթ տարեկան եյի և վերջացնում եյի փիլիսոփայական ուսմունքը Ամիյենում, ուր ինձ ուղարկել եյին իմ ծնողները, վորոնք Պ...ի լավագույն ընտանիքներից մեկին եյին պատկանում։ Ցես վերին աստիճանի խելոք ու բարեբարո կյանք եյի վարում և իմ ուսուցիչներն ինձ մատնանշում եյին իբրև օրինակելի ուսանող ամբողջ ուսումնարանում։ Ըստ վորում, վոչ մի արտակարգ ճիգ չեյի թափում, վորպեսզի արժանանամ այդ գովեստին. յես ի բնե մեղմ ու խաղաղ բնավորություն ունեմ. իսկ ուսման փարել եյի հակումով։ Այնուհետև ինձ վերագրում եյին առաքինություններ,

վորոնք հետևանք եյին դեպի մոլությունը տածած իմ բնական խորշանքի։ Շնորհիվ իմ ծագման, ուսման մեջ ունեցած հաջողությունների և վորոշ արտաքին դրավչության՝ քաղաքում բոլոր ազնվաբարո մարդիկ ինձ ճանաչում և հարգում եյին։

Հասարակական քննությունները յես վերջացրի այնպիսի փայլուն հաջողությամբ և ընդհանուրի հավանությամբ, վոր այնտեղ ներկա գտնվող սլ. յեպիսկոպոսը ինձ առաջարկեց հոգևոր դաս մտնել, ուր կարող եյի՝ նրա կարծիքով՝ ավելի խոշոր փառքի հասնել, քան Մալթայի ասպետական կարգում, վորի համար ինձ կանխորոշել եյին իմ ծնողները։ Նրանց կամքի համաձայն, յես արդեն կրում եյի այդ կարգի խաչը և ասպետ դե-Գրիյո անունը։ Արձակուրդները մոտենում եյին և յես պատրաստվում եյի վերադառնալ հորս մոտ, վորը խոստացել եր շուտով ինձ Ակադեմիա ուղարկել։

Ամիյենից հեռանալիս միայն մի բան եր ինձ վշտացնում. այնտեղ յես թողնում եյի մի բարեկամ, վորի հետ կապվել եյի մշտական ու քնքույշ մտերմությամբ։ Նա մի քանի տարով ինձնից մեծ եր։ Մենք միասին եյինք դաստիարակվել. բայց աղքատ ընտանիքից լինելով, նա ստիպված եր հոգևորական դառնալ և մնալ Ամիյենում՝ այդ աստիճանին պատշաճ դասընթացներին հետևելու համար։ Նա բազմաթիվ արժանիքներ ուներ։ Դուք նրան կհանդիպեք իմ պատմության ընթացքում, ուր նա այնպիսի խանդաղատանք ու վեհանձնություն ե ցուցաբերում մեր բարեկամության մեջ, վորոնք գերազանցում են հնադարյան ամենափառապանծ որինակները։ Եթե այն ժամանակ յես հետևած լինեյի նրա խորհրդներին, միշտ վողջամիտ ու յերջանիկ կլինեյի։ Եթե դեթ լսած լինեյի նրա խրատները, թեկուզ այն անդունդից, ուր ինձ ընկղմել եյին իմ կրքերը,—յերբ խորտակվեց իմ կարողությունն ու բարեհամբավը, գոնե մի բան կմնար ինձ։ Սակայն նա իր հոգատարությունից այլ ոգուտ չքաղեց, քան յեթե այն անոգուտ տեսնելու ցավը։ Նա նույնիսկ կծու խոսքերի յեր արժանանում

յերաքատամոռիս կողմից, վորը նրա հոգածությունը իրը վիրավորանք եր ընդունում և անպատեհ համարում։

Ցեռ նախորոք վորոշել եյի իմ Ամիյենից մեկնելու ժամը։ Ավա՜ղ, ինչո՞ւ այդ մի որ առաջ չնշանակեցի։ Անաղարտ անմեղությամբ յես վերադարձած կլիներեյի իմ հորտունը։ Քաղաքից հեռանալու հենց նախորյակին, յերբ յես զբոսնում եյի բարեկամիս հետ, վորին Տիբերժ եյին կոչում, մենք պատահեցինք Արբասից յեկող հանրակառքին և դրան հետևեցինք մինչև պանդոկ, ուր իջևանում եյին ուղևորները։ Մենք այդ արինք պարզապես հետաքրքրությունից դրդված։ Կառքից դուրս յեկան մի քանի կանայք և իսկույն մտան հյուրանոց։ Մեկը միայն, մի բոլորովին դեռատի աղջիկ, մնաց բակում, մինչդեռ հասակավոր մի մարդ, յերևի նրան ուղեկցող սպասավորը, աշխատում եր կառքից իջեցնել նրա իրերը։ Այդ աղջիկը վերին աստիճանի գեղեցիկ յերևաց ինձ և յես, վոր մինչ այդ յերբեք չեյի մտածել սեռերի տարբերության մասին, չեյի նայել քիչ թե շատ ուշադրությամբ վորևե աղջկա վրա, յես, ասում եմ, վորի ժուժկալությունը և համեստությունն ընդհանուրի հիացմունքի առարկան եյին, մի ակնթարթում բռնկվեցի սիրատենչ զգացումով։ Ցեռ մի մեծ պակասություն ունեյի. չափից դուրս յերկչոտ եյի ու ամոթխած։ Սակայն այդ բոպեին իմ այդ թուլությունը չկասեցրեց ինձ և յես ուղղվեցի դեպի իմ սրտի տիրուհին։

Թեև նա ինձնից ավելի փոքր եր, սակայն իմ սիրալիր ուշադրությունն ընդունեց կարծես առանց շփոթվելու։ Ցեսն նրան հարցրի, թե ինչ առիթով ե յեկել Ամիյեն և քաղաքում ով ունի ծանոթ։ Նա պատասխանեց անկեղծորեն, վոր նրան ուղարկել են ծնողները՝ կուսանոց մտնելու համար։

Սերն այնպես եր լուսավորել միտքս այն բոպեյից, յերբ նա գրավել եր իմ սիրտը, վոր յես իսկույն այդ դիտավորությունը համարեցի մահացու մի հարված իմ տենչերին։

Խոսելուս յեղանակից նա հասկացավ, թե ինչպիսի զգացումներով եմ համակված, վորովհետև նա ինձնից շատ ավելի փորձված եր. նրան կուսանոց եյին ուղարկում հակառակ իր կամքի, անշուշտ, դեպի հաճույքն ունեցած նրա հակումը սանձահարելու նկատառումով, մի հակում, վորն արդեն յերևան եր յեկել և վորը հետագայում դարձավ իմ և նրա թշվառությունների պատճառը։ Ցեսն ծառացա նրա ծնողների մտադրության դեմ և դա վիճարկեցի այն բոլոր ապացույցներով, վոր ինձ ներշնչեցին նոր փթթող սերս ու դպրոցական պերճախոսությունս։ Նա չարտահայտեց վոչ խստաբարությունն, վոչ ել արհամարհանք։ Մի վայրկյան լռելուց հետո ասաց, վոր ինքն ել կանխատեսում ե իր ապագա դժբախտ կյանքը, բայց յերևի այդպես ե վիճակված ի վերուստ, քանի վոր վոչ մի միջոց չկա դրանից խուսափելու։ Նրա հայացքի քնքշությունը, սույն խոսքերն արտասանելու թախծոտ գրավչությունը, կամ ավելի շուտ մի ճակատագրական ույժ, վորն ինձ դեպի իմ կործանումն եր մղում,— թույլ չտվին, վոր մի բոպե անգամ տատանվեմ իմ պատասխանի մեջ։ Սկսեցի նրան համոզել, վոր յեթե ապավինի իմ պատվին և այն անսահման քնքշությանը, վորն արդեն ներշնչել ե ինձ, յես կզոհաբերեմ իմ ամբողջ կյանքը՝ նրան իր ծնողների բռնակալությունից ազատելու և յերջանկացնելու համար։

Հետագայում այդ մասին մտածելիս յես միշտ զարմացել եմ, թե այն ժամանակ վիրտեղից եր ինձ այնքան կորով ու արտահայտվելու դյուրությունը։

Սակայն սերը յերբեք աստվածություն չեյին համարի, յեթե նա հաճախ հրաշքներ չգործեր։ Ցես ուրիշ շատ կրակոտ և համոզիչ խոսքեր ասացի Նրան։

Գեղանի անծանոթուհիս լավ գիտեր, վոր իմ հասակում մարդ չի խաբում. նա խոստովանեց, վոր, հիրավի, յեթե յես կարողանամ վորևե միջոց գտնել Նրան ազատելու, նա իրեն պարտավորված պիտի համարի իմ հանդեպ՝ կյանքից առավել թանկագին մի բանով։ Ցես կրկնեցի, վոր պատրաստ եմ դիմելու ամեն մի քայլի։ Սակայն չունենալով բավականին փորձառություն, վորպեսզի անհապաղ միջոցներ գտնեմ Նրան աջակցելու, յես բավականացա այս ընդհանուր հավաստիացումով, վորից վոչ մի ոգուտ չկար վոչ ինձ և վոչ էլ Նրան։ Մինչ այդ՝ Նրա ծեր սպասավորը մոտեցավ մեզ և յես մտածեցի, թե բոլոր իմ հույսերը պիտի խորտակվեն, յեթե Նրա հնարամտությունը չոգներ մտքիս անկարությանը։ Ցես ապշած մնացի, յերբ ծերունու մոտենալու միջոցին նա ինձ անվանեց հորեղբոր վորդի և առանց շփոթության նշույլ անգամ ցույց տալու՝ ասաց, վոր շատ ուրախ է, վոր ինձ հանդիպում է Ամիյենում և թե այդ առթիվ նա վաղվան է թողնում կուսանոց մտնելը, վորպեսզի իրեն չզրկի ինձ հետ ընթրելու հաճույքից։ Ցես լավ հասկացա այս խորամանկության իմաստը։ Նրան առաջարկեցի ինձանել մի հյուրանոցում, վորի տերը Ամիյեն փոխադրվելուց առաջ յերկար

ժամանակ հորս կառապանն եր յեղել, իսկ այժմ միանգամայն հավատարիմ եր ինձ։

Ցեսլինքս ուղեկցեցի նրան հյուրանոց։ Ծեր սպասավորն ասես փնթփնթում եր քթի տակ, իսկ իմ բարեկամ Տիբերժը վոչինչ չհասկանալով այս անց ու դարձից, առանց մի խոսք արտասանելու հետևում եր ինձ։ Նա մեր խոսակցությունը չեր լսել։ Նա շարունակել եր մեն գալ բակում, յերբ յես սիրաբանում եյի իմ գեղեցիկ տիրուհու հետ։ Վախենալով նրա խոհեմությունից, յես ուզեցի ազատվել նրանից, խնդրելով, վոր կատարի իմ մի հանձնարարությունը։ Այսպիսով, յերբ մենք հասանք հյուրանոց, յես բախտ ունեցա առանձին՝ յերես առ յերես խոսակցելու սրտիս թագուհու հետ։

Շատ շուտ համոզվեցի, վոր յես այնքան ել յերևիա չեյի, վորքան կարծում եյի։ Իմ սիրտը բացվեց բյուր քաղցրատենչ զգացումների հանդեպ, վորոնց մասին մինչև այդ գաղափար անգամ չունեյի։ Իմ յերակներով մի սնուշ ջերմության հոսանք անցավ։ Ցեսլինքս գտնվում եյի մի հոգեզմայլ վիճակում, վորը միաժամանակ ինձ զրկեց խոսելու կարողությունից և վորը արտացոլվում եր միմիայն աչքերիս մեջ։

Որիորդ Մանոն Լեսկոն,—նա ինձ ասաց, վոր այսպես են կոչում իրեն,— մեծապես գոհ մնաց իր հմայքի ներգործությունից։ Ինձ թվաց, թե նա ինձնից պակաս հուզված չեր։ Խոստովանեց, վոր յես իրեն դուր եմ գալիս և թե շատ ուրախ ե, վոր ինձ ե պարտական իր փրկությամբ։ Նա ցանկացավ իմանալ, թե ով եմ յես և, յերբ այդ հայտնեցի, ավելի շատ զգացվեց, վորովհետև ինքը լինելով հասարակ ընտանիքից, առավել ևս հրճվեց, վոր տիրացել ե ինձպես սիրելիանի սրտին։ Մենք սկսեցինք խորհել միմյանց պատկանելու միջոցների մասին։

Ցերկար խորհրդածությունից հետո մենք այլ հնար չգտանք, քան փախուստը։ Անհրաժեշտ եր մի կերպ թքմրեցնել նրան ուղեկցող սպասավորի զգոնությունը, վորը թեպետ և սոսկ մի ծառա յեր, բայց վորից և հարկ եր

զգուշանալ։ Վորոշեցինք, վոր յես այդ գիշեր պատրաստ կպահեմ մի փոստատար կառք և վաղ առավոտյան՝ մինչև նրա ուղեկցի արթնանալը՝ կվերադառնամ պանդոկ, վորտեղից մենք գաղտնի կփախչենք և ուղղակի կգնանք Փարիզ, ուր անմիջապես կամուսնանանք։ Մոտս ընդամենը քսանհինգ եկյու ունեյի՝ իմ մանր խնայողությունների արդյունքը. իսկ Մանոնը՝ մոտավորապես յերկու անգամ ավելի։ Սակայն վորպես անփորձ պատանիներ, մենք կարծում եյինք, թե այդ գումարն անսպառ կլինի. բացի դրանից, մենք քիչ հույս չեյինք դնում մեր այլ ձեռնարկությունների հաջողության վրա։

Մինչ այդ ինձ համար միանգամայն նոր բավականությամբ ընթրելուց հետո յես հեռացա՝ մեր ծրագիրն իրագործելու համար։ Իմ անելիքը հեշտանում եր շնորհիվ այն բանի, վոր հետևյալ որը յես մտադիր եյի տուն վերադառնալ և դրա համար արդեն պատրաստել եյի իմ համեստ ճամբրուկը։ Ուստի, առանց դժվարության այն փոխադրել տվի պանդոկ և պատվիրեցի, վոր կառքը պատրաստ լինի առավոտյան ժամը հինգին, քաղաքի դռները բացվելու ժամին։ Սակայն մնում եր միայն մի խոչընդոտ, վորի մասին չեյի մտածել և վորը քիչ մնաց խորտակեր իմ ամբողջ ծրագիրը։

Տիբերժը, թեպետ յերեք տարով միայն մեծ եր ինձնից, բայց հասունացած վողջամտության և խստաբարո վարքի տեր մի պատանի յեր։ Նա ինձ սիրում եր ար-

տասովոր մի քնքշությամբ։ Այնքան գեղեցիկ աղջկա տեսքը, ինչպիսին Մանոնն էր, սրան ուղեկցելու իմ բուռն ցանկությունը և իրենից ազատվելու իմ ջանքերը նրա մեջ կասկած էին հարուցել իմ սիրո մասին։ Նա չէր համարձակվել վերադառնալ պանդոկ, ուր ինձ թողել էր, յերկյուղելով, թե դրանով կվիրավորի. սակայն վճռել էր իմ բնակարանում սպասել, ուր յես նրան դատա վերադարձիս, չնայած վոր արդեն յերեկոյան ժամի տասն էր։ Նրա ներկայությունն ինձ վշտացրեց։ Նրա համար հեշտ էր նկատել իմ վրդովմունքը։— «Հավատացած եմ»,— անկեղծորեն ասաց նա,— «վոր դուք մտադիր եք անել մի բան, վորն ուզում եք ինձնից թաքցնել. այդ յես տեսնում եմ ձեր դեմքից»։ Ցես բավականին խիստ պատասխանեցի, թե պարտավոր չեմ իմ յուրաքանչյուր դիտավորության մասին հաշիվ տալ նրան։— «Անշուշտ»,— վրա բերեց նա,— «բայց դուք միշտ ինձ վերաբերվել եք իբրև բարեկամի և դա պայմանավորված է վորոշ վստահությամբ և անկեղծությամբ»։— Նա այնքան համառ և յերկար խնդրեց հայտնել իմ դաղտնիքը, վոր յես միշտ մտերիմ լինելով նրան, այս անգամ ել վստահեցի պատմելու նրան իմ բուռն հրապուրանքի մասին։ Իմ խոստովանությունը նա ընդունեց այնպիսի բացահայտ դժգոհությամբ, վոր յես սարսռեցի։ Ցես զղջացի, մանավանդ վոր հայտնեցի նրան իմ փախուստի ծրագիրը։ Նա ասաց, վոր տածելով դեպի ինձ ամենասերտ բարեկամություն, չի կարող հակառակ չլինել իմ մտադրություններին. վոր ուզում է նախ մատնանշել այն ամենը, ինչ կարող է ինձ կասեցնել. սակայն, յեթե այս ամենից հետո յես դարձյալ չհրաժարվեմ իմ չարաբաստիկ վորոշումից, ապա նա այդ մասին պիտի նախազգուշացնի այն անձանց, վորոնք անվրեպ կարող են հիմնովին խափանել իմ դիտավորությունը։ Այնուհետև նա մի լուրջ ճառ ասաց, վորը տևեց քառորդ ժամից ավելի և վերջացրեց սպառնալիքով, թե ինձ կմատնի, յեթե խոսք չտամ ավելի խելոք ու զգույշ լինելու։

Վհատությունն ինձ պատեց, որ այսպես անտեղի մատնեցի ինձ։ Սակայն սերը, որ վերջին յերկույերեք ժամվա ընթացքում ծայր աստիճան լուսավորել եր իմ միտքը, ոգնեց ինձ դլխի ընկնելու, որ նրան դեռ չեմ հայտնել, թե իմ ծրագիրը պիտի գործադրեմ հետևյալ առավոտ, և յես վորոշեցի խորամանկությամբ մոլորեցնել նրան։—«Տիրերժ»,—ասացի նրան,—«մինչև այսոր յես ձեզ համարում եյի իմ բարեկամը և իմ խոստովանությամբ ուզեցի փորձել ձեզ։ Ճիշտ է, որ յես սիրում եմ, չեմ խաբել ձեզ, սակայն ինչ վերաբերում է իմ փախուստին, դա այնպիսի՞ մի քայլ չէ, որին կարելի լինի դիմել թեթևամտությամբ։ Վաղը՝ առավոտյան ժամի իններին յեկեք ինձ մոտ, յես ձեզ կծանոթացնեմ, յեթե հնարավոր լինի, իմ սիրուհու հետ և դուք ինքներդ կդատեք, թե արդյոք նա արժանի՞ յե իմ վորոշումին»։ Նա հեռացավ ինձնից իր մտերմության մասին հազար ու մի հավաստիացումներ անելով։ Այդ ամբողջ գիշերը յես անցկացրի կարգի բերելով իմ գործերը և առավոտյան հենց վոր լույսը բացվեց՝ գնացի պանդոկ, ուր Մանոնն արդեն սպասում եր ինձ։ Նա կանգնած եր դեպի փողոց նայող լուսամուտի առաջ և ինձ տեսնելուն պես ինքն անձամբ բացեց դուռը։ Մենք դուրս յեկանք առանց աղմուկի։ Նրա ամբողջ ծանրոցը միայն սպիտակեղենն եր, որը և ինքս վերցրի։ Կառքը պատրաստ եր մեկնելու, և մենք իսկույն հեռացանք քաղաքից։

A 21688

Հետագայում յես ձեզ կպատմեմ, թե ինչ եր արել Տիբերժը, յերբ իմացել եր, վոր յես խարել եմ իրեն։ Նրա հոգատար վերաբերմունքը դեպի ինձ դրանից չնվազեց։ Դուք կտեսնեք, թե նա ինչ ծայրահեղության հասցրեց այն, և վորքան յես արցունք եմ թափել, յերբ մտածել եմ, թե վերն ե յեղել նրա հատուցումը։

Մենք այնպես արագ եյինք ընթանում, վոր մինչև մութն ընկնելը հասանք Սեն-Դրենի։ Ձի նստած յես սուրում եյի կառքի կողքից, այնպես վոր միայն յերիվարները փոխելու ժամանակ կարող եյինք միմյանց հետ զրուցել։ Բայց, յերբ տեսանք, վոր մոտենում ենք Փարիզին, այսինքն՝ դրեթե ապահով դրության մեջ ենք գտնվում, կանգ առանք մի բան ուտելու համար, վորովհետև Ամիյենից մեկնելուց հետո վոչինչ չեյինք կերել։ Վորքան ել յես բուռն սիրահարված լինեյի նրա վրա, այնուամենայնիվ Մանոնը կարողացավ համոզել ինձ, վոր ինքը ևս սիրում ե ինձ վոչ պակաս ուժգնությամբ։ Մենք ծայր աստիճան անզուսպ եյինք մեր փաղաքշանքների մեջ և համբերություն չունեյինք սպասելու, վոր առանձին լինենք։ Փոստատարները և պանդոկապետները հիացմունքով եյին դիտում մեզ և յես նկատեցի, վոր նրանք զարմացած եյին, տեսնելով մեր տարիքի յերկու պատանիների, վորոնք այնպես մոլեգին սիրում են միմյանց։

Սեն-Դրենիում մենք մոռացանք մեր ամուսնանալու դիտավորությունը և խախտելով յեկեղեցու իրավունքները, ամուսիններ դարձանք, առանց մինչև իսկ մտածելու այդ մասին։ Կասկած չկա, վոր յես՝ ի բնե ուժգին լինելով քնքույշ և կայուն բնավորությամբ, իմ վողջ կյանքում յերջանիկ կլինեյի, յեթե Մանոնն ինձ հավատարիմ մնար։ Վորքան ավելի եյի ճանաչում նրան, այնքան առավել նոր և հրապուրիչ հատկություններ եյի գտնում նրա մեջ։ Նրա խելքը, սիրտը, քնքշությունն ու գեղեցկությունն այնպիսի մի հատատուն և հիասքանչ շղթա եյին կազմում, վոր յես իմ ամբողջ յերջանկությունը կզոհաբերեյի՝ հավիտյան նրա գերին լինելու համար։ Սարսափելի՜ մի դարձ։ Այն, ինչ այժմ

իմ հուսահատության պատճառն է — կարող եր իմ յերջանկության առարկան լինել։ Ցեսլինձ համարում եմ ամենաանբախտ մարդը, շնորհիվ հենց իմ սիրո կայունության, վորից յես պետք է սպասեյի ամենաքաղցր մի վիճակ և ամենակատարյալ բարիքներ։

Փարիզում մենք մի կահավորված բնակարան վարձեցինք Վ... փողոցում, դժբախտաբար հայտնի կապալառու պ. դը Բ...ի տան մոտ։ Անցավ յերեք շաբաթ, վորոնց ընթացքում յես այնքան եյի տարված իմ կրքով, վոր շատ քիչ եյի մտածում իմ ընտանիքի և այն վշտի մասին, վոր հայրս կրած կլիներ բացակայության հետևանքով։ Սակայն, վորովհետև վարմունքիս մեջ անկարգության հետք անգամ չկար և Մանոնը նույնպես իրեն շատ համեստ եր պահում,—այսպես անդորը ընթացող մեր կյանքը իմ մեջ աստիճանաբար հարուցեց պարտականության գիտակցությունը։ Ցեսլ վորոշեցի հաշտվել հորս հետ, յեթե դա հնարավոր և։ Իմ սիրուհին այնպես չքնաղ եր, վոր յես բնավ չեյի կասկածում, թե նա հաճելի կլինի հորս, յեթե միայն կարողանայի միջոցներ գտնել ծնողիս ապացուցելու նրա վողջամտությունն ու պարկեշտությունը։ Մի խոսքով՝ յես հույս ունեյի նրանից ստանալ Մանոնի հետ ամուսնանալու թույլտվությունը, վորովհետև առանց նրա համաձայնության դա իրագործելն ինձ հուսահատություն պետք է պատճառեր։ Իմ մտադրությունը յես հայտնեցի Մա-

նանին և հասկացրի նրան, վոր բացի սիրո պարտականությանն դրդապատճառներից, պետք է այստեղ նկատի առնել նաև անհրաժեշտությունը, վորովհետև մեր միջոցները չափազանց համեստ են, և յես սկսել եմ հրաժարվել այն մտքից, վոր դրանք անսպառ են։

Մանոնն իմ այս առաջարկությունն ընդունեց սառնությամբ։ Սակայն ինձ թվում եր, թե նրա հարուցած դժվարությունները ծագում եյին իր իսկ սիրալիր քընքշությունից և ինձ կորցնելու վախից, յեթե հայրս՝ իմանալով հանդերձ մեր ապաստարանի տեղը, չտա իր հավանությունը մեր մտադրությունն իրագործելու համար։ Բես բնավ չկասկածեցի այն վտանգը, վորն արդեն պետք է ինձ հարվածեր։ Անհրաժեշտության մասին տված իմ պատճառաբանությանը նա պատասխանեց, վոր մեր միջոցները տակավին կբավականացնեն մի քանի շաբաթ ևս ապրելու, և թե այնուհետև նա հույսունի, վոր կոգնեն իրեն սիրող դավառացի մի քանի ազգականներ, վորոնց ուզում է դիմել նամակով։ Նա իր մերժումը քաղցրացրեց այնպիսի քնքույշ և տարփալիր գգվանքներով, վոր յես, շնչելով սոսկ նրանով և բնավ չտարակուսելով նրա սրտաբուխ անկեղծությանը, ուրախությամբ համաձայնվեցի նրա բոլոր առարկություններին և վորոշումներին։

Ցեռ նրան եյի հանձնել մեր դրամապանակի տնորինությունը և առորյա ծախսերը վճարելու հոգը։ Քիչ ժամանակ անց նկատեցի, վոր մեր սեղանը հետզհետև ճոխանում է և վոր Մանոնն իր համար մի քանի թանկագին հագուստներ է ձեռք բերել։ Գիտենալով, վոր մեր դրամից հագիվ տասներկու-տասնհինգ պիստոլ կարող է մնացած լինել, յես նրան հայտնեցի իմ զարմանքը՝ մեր կարողության ակնհայտնի աճման առթիվ։ Ժպիտը յերեսին նա խնդրեց ինձ չանհանգստանալ։ — «Ձեզ չիհոստացած»,—ասաց նա,—«վոր ձեռք կբերեմ պետք յեղած միջոցները»։ Ցեռ նրան սիրում եյի պատանեկական կատարյալ պարզամտությամբ, ուստի և դյուրությամբ տաղնապահար չեղա։

Մի անգամ, կեսորից հետո, յես դուրս եյի յեկել տունից, նախազգուշացնելով Մանոնին, թե կվերադառնամ սովորականից ուշ։ Վերադարձիս ինձ զարմացրեց այն հանգամանքը, վոր դռան մոտ յերկու-յերեք բոպե ինձ սպասել տվին։ Մեզ սպասարկում եր մի փոքրիկ աղջիկ, վորը մոտավորապես մեր տարիքն ուներ։ Ցերը նա դուռը բացեց, յես հարցրի, թե ինչու յեր նա ինձ այնքան յերկար սպասել տալիս։ Շփոթված նա պատասխանեց, թե չի լսել, վոր դուռը բաղխում են։ Ցես դուռը ծեծել եյի միայն մի անգամ, ուստի և նկատեցի. «սակայն, յեթե չեք լսել, ապա՞ ինչու բացիք»։ Իմ հարցն այն աստիճան շփոթեցրեց նրան, վոր նա՝ անընդունակ մի բան հնարելու՝ սկսեց լաց լինել և ինձ վստահացնել, վոր ինքը վոչ մի բանում մեղավոր չե, այլ տիկինն և նրան արգելել դուռը բանալու, քանի դեռ պարոն դը Բ...ն չի հեռացել մյուս սանդուխքով, վորը դեպի տիկնոջ առանձնասենյակն և տանում։ Իմ հուզումն այնքան մեծ եր, վոր յես ուժ չունեցա ընակարան մըտնելու։ Ցես վորոշեցի դուրս գալ՝ պատրվակելով ինչ վոր մի գործ և հրամայեցի աղջկան, վոր տիկնոջը հայտնի, թե մի բոպե հետո կվերադառնամ, սակայն արգելելով նրան խոստովանելու, թե ինձ հետ խոսել ե պ. դը Բ...ի մասին։

Այնպիսի մի սուր վիշտ համակեց ինձ, վոր յերբ յինում եյի սանդուխքի աստիճաններով, արտասուքները հոսում եյին իմ աչքերից, առանց իմանալու տա-

կավին, թե ինչ զգացումներից են դրանք հորդել։ Ցեսմտա առաջին պատահած սրճարանը և նստելով սեղանի մոտ, գլուխս հենած ձեռներիս, սկսեցի խորհել, թե ինչ է կատարվում իմ սրտում։ Ցես չեյի համարձակվում մտաբերել այն, ինչ հենց նոր լսել եյի։ Ցես ուզում եյի դամի պատրանք համարել և մի քանի անգամ պատրաստվեցի տուն վերադառնալ, առանց ցույց տալու Մանոնին, թե վորևե բան նկատել եմ։ Այն աստիճան անհնարին եր թվում, թե Մանոնը դավաճանած լինի ինձ, վոր վախենում եյի իմ կասկածով վիրավորել նրան։ Ցես նրան պաշտում եյի, դա անտարակուսելի յեր. յես նրանից շատ ավելի սիրո ապացույցներ եյի ստացել, քան ինքս եյի տվել. արդ, ինչպես կարող եյի մեղադրել նրան, վոր նա ինձնից նվազ անկեղծ է և նվազ կայուն՝ իր սիրո մեջ։ Նա ինչ շարժառիթ ուներ ինձ խաբելու։ Դեռ յերեք ժամ սրանից առաջ նա ամենաքնքույշ փայփայանքներով եր պատել ինձ և զմայլանքով ընդունել իմ փոխադարձ գուրգուրանքը. իմ սեփական սիրտը նրա սրտից ավելի լավ չեյի ճանաչում։ «Վոչ, վոչ»,—ասացի ինքս ինձ,— «անհնար է վոր Մանոնն ինձ դավաճանած լինի։ Նա լավ գիտե, վոր յես նրանով եմ ապրում. նա բնավ չի կասկածում, վոր յես պաշտում եմ իրեն. և դա ինձ առելու շարժառիթ չի կարող ծառայել»։

Այնուամենայնիվ, պարոն դը Բ...ի այցը և գողունի փախուստը պղտորել եյին մտքերս։ Ցես հիշեցի նաև Մանոնի մանր-մունր գնումները, վորոնք իմ կարծիքով գերազանցում եյին մեր կարողությունը։ Սա կարծես վկայում եր նոր սիրեկանի առատաձեռնությունը։ Ցեվ ինչ եր նշանակում նրա վստահությունը դեպի այն դրամական միջոցները, վորոնք անհայտ եյին ինձ։ Այս բոլոր առեղծվածներին յես չկարողացա տալ այն բավարար լուծումը, վորպիսին տենչում եր իմ սիրտը։

Մյուս կողմից, Փարիզ փոխադրվելուց հետո վոչ մի րոպե նրան չեյի հեռացրել իմ աչքից։ Զբոսնելիս, զվարճանալիս, զբաղվելիս՝ մենք միշտ միասին ենք յեղել։ Առավոտ իմ, մի րոպեյի անջատումը մեզ անչափ վիշտ-

պիտի պատճառեր։ Մեզ անհրաժեշտ եր անդադար կրկնել, վոր սիրում ենք միմյանց. առանց այս խոստովանության մենք վշտից կմեռնեյինք։ Ուստի յես մի բոպե անդամ չեյի կարող յերևակայել, վոր Մանոնն ինձնից բացի ուրիշ մեկով տարված լինի։

Ի վերջո, ինձ թվաց, վոր յես գտել եմ այս գաղտնիքի լուծումը։ «Պարոն դը Բ...ն»,—ասացի յես ինձ,—«մեծ գործերով և զբաղվում և լայն կապեր ունի. յերևի Մանոնի ծնողները նրա միջոցով Մանոնին վորոշ գումար են փոխադրել։ Մի գուցե նա արդեն նրանից դրամ և ստացել. այսոր ել այդ պարոնը յերևի յեկել եր կրկին մի բան հանձնելու համար։ Անշուշտ Մանոնը դիտմամբ և ինձնից թաքցրել այդ, վորպեսզի հանկարծակի բերի ինձ հաճելի անակնկալությամբ։ Ցեվ թերևս նա այդ մասին կպատմեր ինձ, յեթե յես, սովորականի պես, մտած լինեյի տուն, փոխանակ գալու այստեղ և վշտի մեջ թաղվելու։ Համենայն դեպս նա վոչինչ չի թաքցնի ինձնից, յեթե ինքս այդ մասին սկսեմ հարցնել»։

Ցեսս այն աստիճան հափշտակվեցի այս մտքով, վոր դա խիստ մեղմացրեց իմ վիշտը։ Անմիջապես տուն վերադարձա և սովորական քնքշությամբ գրկեցի Մանոնին։ Նա քաղցրությամբ ընդունեց ինձ։ Ցեսս նախ մտածեցի նրան հաղորդելու իմ կռահումները, վորոնք այժմ միանգամայն ստույգ եյին թվում ինձ. սակայն այդ

չարեցի՝ հուսալով, թե մի գուցե նա կկանխի ինձ, պատմելով այն բոլորը, ինչ պատահել է։

Ընթրիքը մատուցեցին։ Ցես սեղան նստեցի շատ ուրախ տրամադրված. սակայն իմ և Մանոնի միջև դրված մոմի լույսով ինձ թվաց, թե թախիծ եմ տեսնում թանկագին սիրուհուս յերեսին և աչքերի մեջ։ Նրա թախիծը համակեց և ինձ։ Ցես նկատեցի, վոր սովորականից տարբեր է ինձ վրա ուղղված նրա հայացքը։ Ցես չեյի կարողանում հասկանալ, թե ինչ է արտահայտում դա՝ սեր թե կարեկցություն, թեև այդ ինձ թվում եր իրրև շոյող և քնքշանվաղ մի զգացում։ Այնուամենայնիվ, յես նույն ուշադրությամբ նայում եյի նրան. և թերևս նրա համար ավելի հեշտ եր դատել իմ սրտի վիճակի մասին, տեսնելով իմ հայացքը։ Մենք անկարող եյինք վոչ խոսելու և վոչ էլ ուտելու։ Վերջապես արտասուքները հոսեցին նրա հիասքանչ աչքերից. կեղծ ու նենդ արտասուքներ։

«Ա՛խ, ասուած իմ», — բացականչեցի յես, — «դուք լալիս եք, անգին Մանոն. դուք վշտացած եք մինչ արտասվելու չափ և ինձ մի խոսք անգամ չեք ասում ձեր ցավերի մասին»։ Նա ինձ պատասխանեց միայն մի քանի հառաչանքներով, վորոնք էլ ավելի սաստկացրին իմ անհանգստությունը։ Դողալով վոտքի կանգնեցի։ Իմ սիրո ամբողջ կորովով յես թախանձեցի նրան հայտնել ինձ իր արտասուքների պատճառը։ Դրանք սրբելիս ինքս էլ արտասվեցի։ Ցես ավելի շուտ մեռած եյի, քան կենդանի։ Բարբարոսն անգամ կզգացվեր իմ վշտի ու ահի այս վկայությունից։

Այն միջոցին, յերբ յես ամբողջապես զբաղված եյի նրանով, լսեցի սանդուխքով բարձրացող մի քանի մարդկանց վոտնաձայն։ Դուռը թեթև բաղխեցին։ Մանոնը շտապ համբուրեց ինձ և իմ գրկից դուրս պրծնելով, արագ իր սենյակը մտավ և խսկույն դուռը փակեց։ Ցես կարծեցի, թե նա ուզում է յեկող կողմնակի մարդկանցից թաքնվել, փոքր ինչ անփույթ հագնված լինելու պատճառով։ Ինքս գնացի բանալու։

Հաղիվ եյի դուռը բացել, յերբ յերեք մարդ՝ ինձ բռնեցին. իսկույն ճանաչեցի, վոր դրանք իմ հոր սպասավորներն են։ Նրանք ինձ վրա բռնություն գործ չդրին, սակայն մինչդեռ յերկուսը բռնել եյին իմ ձեռքերը, յերրորդը խուզարկեց գրպաններս, վորտեղից հանեց մի փոքրիկ դանակ՝ իմ մոտ յեղած միակ զենքը։ Նրանք ներողություն խնդրեցին, վոր ինձ հետ անքաղաքավարի վերաբերվելու անհրաժեշտության մեջ են գտնվում, և բացատրեցին, վոր հարկավ այդ անում են հոբս կարգադրությամբ. նրանք ավելացրին, թե ներքևում կառքի մեջ ինձ սպասում է իմ մեծ յեղբայրը։ Յես այն աստիճան հուզված եյի, վոր առանց դիմադրության և առարկության թույլ տվի, վոր ինձ տանեն նրա մոտ։ Յեղբայրս իրոք սպասում եր դրսում։ Ինձ նրա հետ կառք նստեցրին և կառապանը՝ նախորոք ստացած հրամանի համաձայն՝ ձիերը սրընթաց քշեց մինչև Սեն-Դրնի։ Յեղբայրս քնքշանքով համբուրեց ինձ, սակայն մի խոսք անգամ չարտասանեց, այնպես վոր յես միանգամայն ազատ կարող եյի խորհել իմ դժբախտ վիճակի մասին։

Նախ ամենից ինչ ինձ ծայր աստիճան մթին ու անհասկանալի թվաց և յես անկարող դարձա վորևե յենթադրություն անելու։ Դաժանաբար դավաճանել եյին ինձ։ Սակայն ո՞վ։ Ամենից առաջ մտքովս անցավ Տիբերժը։ «Դավաճանն», — ասացի յես, — «բանդ բուրդ և,

յեթե իմ կասկածներն արդարանան։ Այսուհանդերձ մտածեցի, վոր նա չգիտեր մեր բնակավայրի տեղը, ուստի և նրանից չեյին կարող իմանալ, վոր Փարիզում ենք։ Մանոնին մեղադրել, սակայն իմ սիրտը չեր հանդգնում այդպիսի մեղադրանք անելու։ Թեև նրա արտասովոր տխրությունը, վորից ասես նա ընկճված եր, նրա արտասուքները, սենյակ քաշվելուց առաջ ինձ տված քնքույշ համբույրը առեղծվածային եյին թվում ինձ, սակայն յես պատրաստ եյի այդ բոլորը բացատրել մեր յերկուսի մոտալուտ դժբախտության նախազգացումով. մինչդեռ հուսաբեկ մորմոքում եյի չարաբաստիկ պատահականությունից, վորն ինձ անջատել եր Մանոնից, այնուամենայնիվ տակավին դյուրահավատությամբ յերևակայում եյի, թե նա ավելի շատ է կարոտ կարեկցության, քան յես։

Իմ մտորումների հետևանքը յեղավ հանգել այն համոզման, վոր Փարիզի փողոցներում ինձ տեսել են ինչ վոր ծանոթ մարդիկ և այդ մասին հաղորդել հորս։ Այս միտքն ինձ սփոփեց։ Ցեռ հույս ունեյի պրծնել սոսկ կշտամբանքներով կամ այլ թեթև պատժով, վոր պետք է կրեյի հանուն հայրական հեղինակության։

Վորոշեցի ամեն ինչ տանել համբերությամբ և խոստանալ այն, ինչ ինձնից կպահանջեն, վորպեսզի, յերբ առիթը ներկայանա՝ առանց դժվարության ու արագ վերադառնամ Փարիզ՝ իմ կյանքն ու յերջանկությունը սիրելի Մանոնին նվիրաբերելու։

Մենք շատ շուտ հասանք Սեն-Դրնի։ Զարմացած իմ լռությունից, յեղբայրս կարծել եր, թե դա հետևանք է վախի։ Նա սկսեց ինձ մխիթարել, հավատացնելով, թե կարող եմ չվախենալ հորս խստասրտությունից, միայն անհրաժեշտ է, վոր յես սակավ առ սակավ գիտակցեմ իմ վորդիական պարտականությունները և ջանամ արժանի լինել հորս՝ դեպի ինձ տածած սիրուն։ Ցեղբայրս կարգադրեց, վոր գիշերն անցկացնենք Սեն-Դրնիում և զգուշության համար յերեք սպասավորներին ել հրամայեց քնել իմ սենյակում։

Ցեսս սուր ցավ զգացի, յերբ նորից ինձ գտա հենց այն պանդոկում, ուր իջևանել եյինք Մանոնի հետ Ամիյենից Փարիզ գնալիս։ Պանդոկապետը և սպասավորներն ինձ ճանաչեցին և միևնույն ժամանակ զուշակեցին իմ արկածախնդրության ճիշտ պատմությունը։ Ցեսս լսեցի, թե ինչպես սպասավորներից մեկն ասում եր իր տիրոջը. «Ա՜խ, սա այն գեղեցիկ պարոնն ե, վոր վեց շաբաթ սրանից առաջ այստեղից անցնում եր մի սիրունիկ որիորդի հետ։ Վերքան նա սիրում եր նրան։ Վերքան հրաշագեղ եր այն աղջիկը։ Ամեն յերեխաներ, ինչպես նրանք գուրգուրում եյին միմյանց։ Աստված վկա, շատ ցավալի յե, վոր նրանց անջատել են»։ Ցեսս այնպես ձևացրի, թե վոչինչ չեմ լսում և աշխատեցի հնար յեղածին չափ քիչ յերևալ մարդկանց աչքին։

Սեն-Դընիում յեղբորս սպասում եր յերկտեղանի մի կառեթ. մենք մեկնեցինք վաղ առավոտյան և մյուս որը յերեկոյան դեմ հասանք տուն։ Ցեղբայրս ինձնից առաջ տեսակցեց հորս հետ, յերևի նրան հոգուտ ինձ տրամադրելու համար, պատմելով, թե վորպիսի հեզությամբ ու առանց դիմադրության յես թույլ եմ տվել ինձ տուն ուղեկցելու. այսպիսով հայրս ինձ ընդունեց նվազ խստությամբ, քան յես եյի սպասում։ Նա բավականացավ սովորական հանդիմանանքով իմ պարտազանցության նկատմամբ՝ առանց իր թույլտվության տնից բացակայած լինելուս համար։ Իսկ իմ սիրուհու

մասին ասաց, վոր ինձ հետ պատահածն արժանի հատուցումն է յեղել՝ անծանոթ աղջկանով անզգուշորեն հրապուրվելուս. նա ավելացրեց, թե առաջ ավելի լավ կարծիք ուներ իմ խոհեմության մասին. սակայն հուսով է, վոր այս փոքրիկ արկածից հետո յես ավելի կխելոքանամ։ Նրա խոսքերին յես տվի իմ դիտավորություններին համապատասխանող նշանակություն։ Յես շնորհակալություն հայտնեցի հորս՝ ինձ ներելու բարեսրտության համար՝ և խոստացա ապագայում ավելի հեզ ու վայելուչ վարք ունենալ։ Սրտիս խորքում յես հաղթանակ եյի տոնում, վորովհետև իրերի ընթացքից բնավ չեյի կասկածում, վոր նույն դիշերն ևեթ լուսաբացից առաջ հնարավորություն պիտի ունենամ տնից անհետանալու։

Սեղանը պատրաստ եր և մենք նստեցինք ընթրիքի։ Սկսեցին ինձ ծաղրել՝ Ամիյենում տարած հաղթությանս և իմ հավատարիմ սիրուհու հետ փախչելուս համար։ Յես սիրալիր ներողամտությամբ ընդունեցի հարվածները. նույնիսկ անչափ զոհ եյի, վոր ինձ թույլտվություն և ընձեռնվում զրուցելու միաքս անդադար ղրաղեցնող առարկայի մասին։ Սակայն հորս շրթներից թռած մի քանի խոսքեր ստիպեցին ինձ միանգամայն լարել ուշադրությունս։ Նա խոսեց Նենգության և պարոն դը Բ...ի շահախնդիր ծառայության մասին։ Յես շշմեցի, յերբ հորից լսեցի այս խոսքերը և խոնարհաբար խնդրեցի ավելի պարզ բացատրել, թե նա ինչ է ուզում ասել։ Դառնալով դեպի իմ յեղբայրը նա հարցրեց, մի՞թե ինձ չի պատմել վողջ յեղելությունը։ Յեղբայրս պատասխանեց, վոր յես ճանապարհին այն աստիճան հանգիստ եմ պահել ինձ, վոր նա մտածել է, թե բնավ կարիք չկա դիմելու այդ միջոցին՝ ինձ իմ անմտությունից բուժելու համար։ Նկատեցի, վոր հայրս յերկընտրանքի մեջ է. պետք է արդյոք ամեն ինչ պարզել, թե վոչ։ Սակայն յես այնպես թախանձագին խնդրեցի նրան, վոր նա բավարարեց իմ հետաքրքրությունը, կամ ավելի շուտ անդթորեն ինձ վոչնչացրեց ամենասարսափելի մի պատմությամբ։

Նախ նա հարցրեց մի՞թե յես միշտ միամտորեն հավատացել եմ, թե սիրուհիս հավատարիմ է ինձ։ Ցեսամենայն համարձակությամբ պատասխանեցի, որ դրանում այն աստիճան վստահ եմ, որ ոչ մի բան չի կարող ամենաթեթև կասկածն անգամ հարուցել իմ մեջ։ «Հա՜, հա՜, հա՜, սքանչելի յես»,—բացականչեց հայրս անդուսպ քրքիջով,—«վերջքան դու միամիտ ես ու դյուրահավատ։ Զվարճալի՜ յես քո զգացումներով։ Զապիազանց ցավալի յես, իմ խեղճ ասպետ, որ կոչված ես Մալտայի կարգը մտնելու, քանի որ բավական հակում ես ցույց տալիս համբերատար ու հարմարվող ամուսին լինելու»։ Ցեվ այսպիսի անդուր խոսքերով նա դեռ յերկար ծաղրեց իմ հիմարությունը և դյուրահավատությունը, ինչպես ինքն եր ասում։

Վերջապես տեսնելով, որ յես համառում եմ լռության մեջ, նա շարունակեց ինձ բացատրել, որ իմ Ամիյենից մեկնելուց հետո անցած ժամանակի հաշվի համաձայն, Մանոնն ինձ սիրած պիտի լինի մոտավորապես տասներկու որ. «Վորովհետև»,—ավելացրեց նա,—«յես գիտեմ, որ Ամիյենից դու մեկնեցիր անցյալ ամսի 28-ին. այսոր ամսի 29-ն է. պարոն դը Բ... ի նամակը յես ստացել եմ տասնմեկ որ առաջ. յենթադրում եմ, որ նրան ուժ որ եր պետք, որպեսզի կարողանար ծանոթանալ քո սիրուհու հետ. այսպես, ուրեմն, յեթե ուժը և տասնմեկը հանենք յերեսունմեկից,—

մի ամսի 28-ից մինչև մյուս ամսի 29-ը տևած ժամանակը, — կմնա տասներկու կամ մոտավորապես այսքան»։ Այս խոսքերից հետո քրքիջի պոռթկումները էլ ավելի սաստկացան։

Այս բոլորը լսելիս իմ սիրտը ճմլվում եր և յես վախենում եյի, թե այլևս ի վիճակի չեմ լինի դիմանալու մինչև սույն տխուր կատակերգության վերջը։ «Իմացիր», — շարունակեց հայրս, — «քանի վոր ինքդ չգիտես, — պարոն դը Բ... ն նվաճել է քո իշխանուհու սիրտը. իհարկե նա ծաղրում է ինձ, յերբ ուզում է համոզել, վոր կամեցել է քեզնից հափշտակել սիրուհուդ՝ ինձ ծառայություն մատուցելու անշահախնդիր ցանկությունից միայն դրդված։ Այդպիսի մի մարդուց, վորը նույնիսկ անծանոթ է ինձ, չպետք է սպասել այդքան վեհ զգացումներ։ Նա քո սիրուհուց իմացել է, վոր դու իմ վորդին ես, և վորպեսզի աղատվի քո անցանկալի ներկայությունից, ինձ գրել է բնակավայրիդ հասցեն և քո անկարգ կյանքի մասին, միաժամանակ և հասկացնելով, վոր անհրաժեշտ եր խիստ միջոցներ դործադրել քեզ այնտեղից րոնի հեռացնելու համար։ Նա ինձ առաջարկում եր իր աջակցությունը՝ քեզ ձերբակալելու միջոցները դյուրացնելու համար և միայն նրա և քո սիրուհու ցուցմունքների շնորհիվ յեղբորդ հաջողվեց քեզ հանկարծակի բերել և տուն վերադարձնել։ Դու կարող ես այժմ շնորհավորել քեզ՝ տարածդ հաղթանակի տեսականության առթիվ։ Դու ընդունակ ես մեծ արագությամբ հաղթություն տանելու, ասպետս։ Սակայն չես կարող քո նվաճումները պահպանել»։

Յես չկարողացա ավելի յերկար տանել հորս ճառախոսությունը, վորի յուրաքանչյուր խոսքը խոցում եր սիրտս։ Սեղանից վեր կացա և հազիվ չորս քայլ եյի արել — սենյակից դուրս գալու համար, յերբ ընկա հատակին՝ ուշաթափ ու անզգա։ Շնորհիվ ցույց տված արագ ոգնության, յես շուտով ուշքի յեկա։ Բացի աչքերս, վոր արցունքի հեղեղներ թափեմ, բերանս՝ վոր վշտագին ու սրտառուչ տրտունջներ ասեմ։ Հայրս,

վոր միշտ կաթոդին սիրել եր ինձ, ամենայն քնքշանքով աշխատում եր մխիթարել։ Ցես լսում եյի նրան, սակայն չեյի հասկանում արտասանած խոսքերը։ Ցես ծունկ չոքեցի նրա առջև և ձեռքերս վեր բարձրացրած աղերսեցի թույլատրել գնալ Փարիզ՝ պարոն դը Բ...ին սրախողող անելու։ «Վո՛չ», — ասում եյի յես, — «նա չի նվաճել Մանոնի սիրտը, նա բռնություն և գործ դրել նրա վրա, հրապուրել և նրան վորևե կախարդանքով կամ թույնով. թերևս կոպտությամբ բռնաբարել և նրան։ Մանոնն ինձ և սիրում։ Մի՞թե յես չգիտեմ այդ։ Պարոն դը Բ...ն դաշույնը ձեռին սպառնացել և նրան, վորպեսզի հարկադրի ինձ լքելու։ Նա ամեն մի միջոցի դիմած կլինի՝ ինձնից հափշտակելու իմ աննման սիրուհուն։ Ա՜խ, ասուված իմ, ասուված իմ, մի՞թե կարելի յե, վոր Մանոնն ինձ դավաճանած լինի և սիրելուց դադարած»։

Ցես անընդհատ կրկնում եյի, թե ուզում եմ շուտափույթ վերադառնալ Փարիզ և նույնիսկ ամեն անգամ այս ասելիս տեղից վեր եյի կենում, այնպես վոր հայրս համոզվեց, վոր յես՝ տարված մոլեգնությամբ՝ վոչ մի միջոցի առաջ կանգ չեմ առնի։ Տան վերնահարկում նա ինձ մի սենյակ հատկացրեց և մոտս թողեց յերկու սպասավորներ, վորպեսզի աչալուրջ հսկեն։ Ցես այլևս ինձ չեյի տիրապետում։ Ցես պատրաստ եյի հազար կյանք զոհաբերելու, միայն թե քառորդ

ժամով Փարիզում գտնվեմ։ Ցեռ հասկացա, վոր այդքան բացահայտ իմ դիտավորությունը հայտնելուց հետո ինձ հեշտությամբ թույլ չեն տա սենյակից դուրս գալու։ Ցեռ աչքով չափեցի լուսամուտների բարձրությունը և, յերբ տեսա, վոր այս կերպ վոչ մի հնար չկա փախչելու, մեղմությամբ խոսեցի իմ պահակների հետ։ Հազար յերդումներով նրանց խոստացա հետագայում առատաձեռն վարձատրել, յեթե արգելք չլինեն իմ փախուստին։ Աղաչեցի, հորդորեցի, սպառնացի, սակայն իմ այս փորձն ել անոգուտ անցավ։ Սրանից հետո յես կորեցի ամեն հույս։ Վորոշեցի մեռնել և ինձ անկողին նետեցի, միայն մահիցս հետո այն թողնելու մտադրությամբ։ Այս դրության մեջ անցկացրի դիշերը և հետևյալ օրը։ Մյուս առավոտ ինձ բերած կերակրից հրաժարվեցի։

Կես որից հետո հայրս յեկավ ինձ տեսնելու։ Նա բարեսրտությամբ աշխատեց ամենաքաղցր մխիթարական խոսքերով մեղմացնել իմ տառապանքները։ Նա այնպես վճռականորեն հրամայեց մի բան ուտել, վոր յես հնազանդվեցի՝ հարգանքից դրդված։ Մի քանի որ յես սնունդ եյի ընդունում միայն հորս ներկայությամբ և նրան հնազանդվելու համար։ Նա անդադար շարունակում եր պատճառաբանություններ առաջ բերել, վորոնք ի վիճակի լինեին վերադարձնել իմ առողջ դատողությունը և արհամարհանք ներշնչել ինձ դեպի անհավատարիմ Մանոնը։ Ճիշտ ե, յես այլևս Մանոնին չեյի հարգում. ինչպես կարող եյի հարգել բոլոր արարածներից ամենաթեթևամտին, ամենանենգին։ Սակայն նրա պատկերը, հմայուն դիմագծերը, վորոնք կրում եյի սրտիս խորքում, նախկինի պես հարատևում եյին այնտեղ։ «Թող յես մեռնեմ,— ասում եյի ինքս ինձ. «դա նույնիսկ անհրաժեշտ ե այսքան ամոթից ու տառապանքներից հետո. յես կարող եմ հազար մահ տանել, բայց չպիտի կարողանամ մոռանալ ապերախտ Մանոնին»։

Հայրս զարմացած եր, տեսնելով, վոր յես տոչորվում եմ խորտակված սիրով։ Նա դիտեր իմ սկզբունքները պատվի խնդրում և չկասկածելով, վոր Մանոնի

դավաճանությունը պիտի ստիպի ինձ արհամարհել նրան, նա կարծեց, թե իմ սիրո հարատևությունը առաջ է գալիս վոչ թե այն մասնավոր կրքից, վոր յես տածում եմ դեպի Մանոնը, այլ ընդհանրապես դեպի կանայք ունեցած իմ հակումից։ Նա այն աստիճան հաստատուն կառչեց այս մտքին, վոր դրդված դեպի ինձ տածած քնքույշ զգացումից, մի անգամ մոտս յեկավ այդ կարծիքն ինձ հաղորդելու։ «Ասպետս», — ասաց նա, — «մինչև հիմա յես փափագում եյի, վոր դու կրես Մալտայի խաչը, սակայն տեսնում եմ, վոր դու ուրիշ հակումներ ունես։ Դու սիրում ես գեղեցիկ կանայք, յես պատրաստ եմ գտնել մեկը, վորը դուր գա քեզ։ Սակայն անկեղծորեն, ինչ ես մտածում այս մասին»։

Ցես նրան պատասխանեցի, վոր այլևս վոչ մի տարբերություն չեմ տեսնում կանանց միջև, և ինձ հետ պատահած դժբախտությունից հետո նրանց բոլորովին հավասարապես արհամարհում եմ։ «Ցես քեզ համար կգտնեմ մեկը», — շարունակեց ժպտերես հայրս, — «վոր Մանոնի նման լինի, նաև ավելի հավատարիմ»։ — «Ա՜խ, յեթե դուք սիրում եք ինձ և բարիք եք կամենում», — ասացի յես նրան, — «ապա վերադարձրեք ինձ իմ Մանոնին, միայն նրան։ Հավատացնում եմ ձեզ, սիրելի հայր, վոր նա ինձ չի դավաճանել, նա անընդունակ է այդքան անգութ ու դաժան ստորության։ Մեզ բոլորիս՝ ձեզ, ինձ, Մանոնին, խաբում է նենգամիտ պարոն դը

Բ... ն։ Եթե միայն դուք գիտենայիք, թե վերքան քնքույշ ու անկեղծ է Մանոնը, յեթե դուք նրան ճանաչեք, ինքներդ կսիրեք նրան»։—«Դուք դեռ յերեխա յեք»,—առարկեց հայրս։ «Ի՞նչպես կարող եք այդ աստիճան կուրացած լինել այն ամենից հետո, ինչ յես պատմեցի նրա մասին։ Հենց նա ինքն է ձեզ հանձնել ձեր յեղբորը։ Դուք պետք է մոռանաք նրան, մոռանաք նրա անունն անդամ, և չանաք, յեթե վողջախոհ եք, ոգտվել ձեր հանդեպ ունեցած իմ ներողամտությունից»։

Ինձ համար միանգամայն ակներև եր, վոր հայրս իրավացի յե։ Սոսկ հոգեկան ակամա մի շարժում ինձ դրդում եր պաշտպանել դավաճան սիրուհուս։ «Ավաղ»,—բացականչեցի յես, վայրկենական լռությունից հետո,—«միանգամայն անտարակույս է, վոր յես ամենաստոր դավաճանության դժբախտ զոհն եմ։ «Այո՛»,—շարունակեցի յես զայրույթից հորդառատ արցունքներ թափելով,—«տեսնում եմ, վոր տակավին յերեխա յեմ։ Նրանց համար բնավ դժվար չեր խաբել իմ դյուրահավատությունը։ Սակայն գիտեմ, թե ինչ պետք է անել, վորպեսզի նրանցից իմ վրեժն առնեմ»։ Հայրս կամեցավ իմանալ իմ մտադրությունը։ «Կգնամ Փարիզ»,—ասացի յես,—«կհրդեհեմ դը Բ...ի տունը և նրան՝ նենգ Մանոնի հետ միասին կայրեմ վողջ-վողջ»։ Իմ բարկության պոռթկումը ծիծաղ պատճառեց հորս և միայն առիթ յեղավ, վոր ինձ սենյակում առավել խստությամբ հսկեն։

Այնտեղ արգելափակված մնացի վեց ամիս. առաջին ամսում մտադրություններս մեծ փոփոխություններ չկրեցին։ Իմ բոլոր զգացումները սոսկ ատելության ու սիրո, հույսի ու վհատության մի անընդհատ շղթա եյին կազմում, նայած թե յես մտքումս ինչպես եյի պատկերացնում Մանոնին։ Մերթ յես նրան պատկերացնում եյի վորպես բոլոր աղջիկներից ամենահամեստը, և այրվում նրան տեսնելու ցանկությունից. մերթ՝ իբրև ստոր ու նենգ մի սիրուհի և յերդվում եյի գտնել նրան՝ միայն պատժելու նպատակով։

Ինձ գրքեր ավին, վորոնք փոքր ինչ նպաստեցին հոգուս անդորրությանը։ Ցես նորից կարդացի իմ սիրած բոլոր հեղինակների յերկերը. ծանոթացա նոր հեղինակների հետ. նորից անսահման սեր զգացի դեպի ուսումը։ Դուք կտեսնեք, թե այս պարագան ինչպես ոգնեց ինձ հետագայում։ Սերը ճաշակած՝ յես պարզ ըմբռնեցի Հորացիոսի և Վիրգիլիոսի գրությունների բազմաթիվ հատվածները, վորոնք մինչ այդ ինձ համար անհասկանալի եյին։ Ցես սիրային մեկնաբանություն շարադրեցի Ենեականի չորրորդ գլխի մասին։ Վորոշել եմ հրատարակել և հույս ունեմ, վոր ընթերցողները զոհունակությամբ կընդունեն այն։ «Ավա՜ղ»,— ասում եյի յես այդ շարադրելիս,—«հավատարիմ Դիդոնին՝ իմ սրտի նման սիրտ եր պետք»։

Մի անգամ իմ արգելարանը յեկավ Տիրերժը՝ ինձ այցելելու։ Ցես զարմացա, տեսնելով այն ցնծությունը, վորով նա գրկախառնվեց ինձ հետ։ Մինչ այդ՝ դեպի ինձ տածած նրա սիրո մասին ուրիշ ապացույցներ չունեյի, վորոնք դրդեյին ինձ այն ընդունել վոչ իբրև հասարակ դպրոցական մտերմություն, ինչպիսին հաստատվում է մոտավորապես միևնույն տարիքի պատանիների միջև։ Նա այն աստիճան փոխված և առնացած եր անցած հինգ կամ վեց ամսվա ընթացքում, ինչ յես նրան չեյի տեսել, վոր նրա դեմքն ու խոսելու յեղանակն ինձ հարգանք ներշնչեց։ Նա ինձ հետ խոսեց

ավելի շուտ վորպես իմաստուն խորհրդատու, քան դպրոցական բարեկամ։ Նա ցավ հայտնեց իմ մոլորությանն առթիվ. շնորհավորեց իմ ամոքումը, վորը բարեհաջող եր համարում։ Վերջապես նա ինձ հորդորեց ոգուտ քաղել իմ պատանեկական մոլությունից, աչքերս բանալով հաճույքների ունայնության վերաբերմամբ։ Ցեսս զարմանքով եյի նայում նրան։ Նա այդ նկատեց։

— «Միրելի ասպետս»,—դարձավ նա ինձ,— «ցեսձեզ չեմ ասում այնպիսի բան, վոր կատարելապես ճշմարիտ չլինի և վորի ստուգության մեջ ինքս համոզված չլինեմ լուրջ ինքնաքննությամբ։ Ցեսս ձեզանից նվազ հակում չեմ ունեցել դեպի զգայասիրությունը. սակայն յերկինքը ինձ շնորհել է միևնույն ժամանակ և՛ առաքինության սերը։ Ցեսս դիմեցի իմ բանականությանը, վորպեսզի համեմատեմ թե մեկի և թե մյուսի տված ոգուտը։ Ցեսս առանց հապաղելու ճանաչեցի նրանց տարբերությունը։ Ցերկինքը միացրեց իր ոգնությունն իմ խորհրդածություններին։ Դեպի աշխարհն իմ մեջ ծագեց մի արհամարհանք, վորը գերազանց է ամեն բանից։ Ասա՞մ ձեզ, թե ինչն է ինձ ստիպում մնալ այստեղ»,— ավելացրեց նա,—«և ինչն է ինձ արգելք հանդիսանում նվիրելու ինձ մենակյաց կյանքին։ Միմիայն դեպի ձեզ տածած քնքույշ բարեկամությունս։ Ցեսս ճանաչում եմ ձեր սրտի և մտքի վսեմ հատկությունները. չկա այնպիսի բարություն, վորը կատարելու դուք ընդունակ չլինեք։ Հաճույքի թույնը ձեզ մոլորեցրել է ուղիղ ճանապարհից. ինչպիսի կորուստ առաքինության համար։ Ամիյենից ձեր փախուստն այնքան վիշտ պատճառեց ինձ, վոր այդ որից ի վեր մի ուրախ րոպե չեմ ունեցել։ Այդ մասին դուք կարող եք դատել իմ ձեռնարկած քայլերի համաձայն»։

Նա ինձ պատմեց, թե յերբ նկատել է, վոր յես նրան խաբել և փախել եմ սիրուհուս հետ, ձի յե նստել ինձ հետևելու. բայց, վորովհետև յես չորս-հինգ ժամ նրանից առաջ եյի մեկնել, չի կարողացել հասնել

ինձ։ Այնուամենայնիվ նա Սեն-Դրնի չէ հասել՝ իմ այնտեղից մեկնելուց կես ժամ հետո, հավատացած լինելով, որ կիջևանեմ Փարիզում։

Փարիզում նա ճնշեցել է վեց շաբաթ՝ ինձ ապարդյուն որոնելով։ Ցեղել է այն բոլոր վայրերում, ուր հույս է ունեցել ինձ հանդիպելու և վերջապես մի անգամ թատրոնում նա ճանաչել է իմ սիրուհուն. նրան տեսել է մի այնպիսի շքեղ զգեստով, որ մտածել է, թե նա դրանով պարտական է մի նոր սիրեկանի։ Նա հետևել է նրա կառքին մինչև տուն և այնտեղ ծառայից իմացել, որ Մանոնն ապրում է պարոն դը Բ...ի շնորհներով։ — «Ցեսս դրանով չբավարարվեցի», — շարունակեց նա,— «հետևյալ որը նորից վերադարձա, որպեսզի իրենից իսկ իմանամ, թե ինչ է պատահել ձեզ հետ։ Նա իսկույն հեռացավ ինձնից, հենց որ լսեց ձեր անունը և չես ստիպված չեղա վերադառնալ դավառ, առանց այլ տեղեկությունների։ Այնտեղ չես իմացա ձեր արկածի և այն վհատության մասին, որի մեջ ընկել եք։ Սակայն չես չէի ցանկանում ձեզ տեսնել, մինչև որ չհամոզվեի, թե ձեզ կգտնեմ մի ավելի անդորր վիճակում»։

«Ուրեմն դուք տեսել եք Մանոնին», — ասացի չես հառաչանքով։ «Ավաղ, դուք ինձնից յերջանիկ եք, որովհետև չես դատապարտված եմ յերբեք չտեսնելու նրան»։ Տիրերժն ինձ հանդիմանեց իմ հառաչանքի համար, որովհետև դա վկայում եր տակավին Մանոնի

հանդեպ ունեցած իմ թուլությունը։ Նա այնպիսի մի ճարպիկ՝ փափկանկատությամբ շոյեց իմ հեզահամբույր բնավորությունն ու բարի հակումները, վոր այդ իսկ առաջին այցից հետո իմ մեջ բուռն ցանկություն ծագեց՝ նրա պես հրաժարվել աշխարհի բոլոր վայելքներից և անցնել հոգևոր դասը։

Այս միտքն այն աստիճան գրավեց ինձ, վոր յերբ մենակ եյի մնում, այլևս ուրիշ բանի մասին չեյի մտածում։ Վերհիշեցի Ամիյենի պ. յեպիսկոպոսի խոսքերը, յերբ նա ինձ նույն խորհուրդն եր տալիս և յերջանիկ ապագա կանխատեսում՝ հոգևոր աստիճան ընդունելու դեպքում։ Բարեպաշտությունը նույնպես նպաստեց իմ դիտավորությանը։ — «Մելոք ու քրիստոնիային վայել կյանք կվարեմ»,— ասում եյի ինքս ինձ, «կնվիրվեմ ուսման ու կրոնին և այս պարագան ինձ թույլ չի տա մտածելու սիրո՝ վտանդալից վայելքների մասին։ Ցեսս կարհամարհեմ այն ամենը, ինչ գայթակղեցնում է հասարակ մարդկանց, վորովհետև զգում եմ, վոր իմ սիրտը պիտի տենչա միայն այն, ինչ հարգելի յե. յես կունենամ նույնքան քիչ հոգսեր, վորքան և ցանկություններ»։

Ընդ սմին կանխորոք մի անդորր ու մենակյաց կյանքի ծրագիր կազմեցի։ Դա յես պատկերացնում եյի վորպես մեկուսացած մի տնակ՝ պարտեզի յետևում պուրակով ու ջինջ առվակով. մի դրադարան՝ ընտիր գրքերով. մի քանի առաքինի ու վողջամիտ բարեկամների մտերիմ խմբակ. մաքուր, սակայն չափավոր ու պարզ սնունդ։ Այս ծրագրին յես միացնում եյի նամակագրություն Փարիզում ապրող մի բարեկամի հետ, վորը պիտի հաղորդեր ինձ հասարակական նորություններ վոչ այնքան իմ հետաքրքրությունը բավարարելու՝ վորքան մարդկանց անմիտ հույզերով ինձ զվարճացնելու նպատակով։ «Մի՞թե յերջանիկ չպիտի լինեմ»,— ավելացրի յես. «մի՞թե իմ բոլոր տենչերը չպիտի իրագործվեն»։ Անկասկած այս ծրագիրը չափից դուրս շոյում եր իմ հակումները։ Սակայն այդքան խելոք իմ ապագա կյանքի պատկերը կառուցելուց հետո յես զգում եյի, վոր սիրտս

անձկում է դեռ մի ուրիշ բանի յել, և վորպեսզի իմ դերազանցորեն հմայիչ մենության մեջ վոչ մի բանի պակասություն չզգամ, ինձ անհրաժեշտ եր հետս տանել և՛ Մանոնին։

Մինչդեռ Տիբերժը շարունակում եր հաճախ այցելել ինձ, ամրացնելու համար իմ այդ դիտավորությունը, վոր նա նեբշնչել եր, յես այդ մասին մի անգամ հաղորդեցի հորս։ Նա ասաց, վոր իր սկզբունքն է վորդիների ազատ կամքին թողնել իրենց ապագա վիճակի ընտրությունը և ինչ եել վոր լինի իմ դիտավորությունը, նա իրեն վերապահում է միայն խորհուրդներով ինձ ոգնելու իրավունքը։ Նա մի քանի վերին աստիճանի իմաստալից խրատներ տվեց, վորոնց նպատակն եր վոչ այնքան ինձ յետ պահել իմ մտադրությունից, վորքան դրդել՝ այն իրագործել գիտակցաբար։

Ուսումնական տարվա սկիզբը մոտենում եր։ Տիբերժի հետ մենք պայմանավորվեցինք միասին Սեն-Սյուլպիս սեմինարիա մտնել—նա՝ իր աստվածաբանական ուսումը ավարտելու, իսկ յես՝ իմը սկսելու համար։ Նրա արժանիքները հայտնի եյին թեմական յեպիսկոպոսին և դրանց շնորհիվ Տիբերժը դեռ մեր մեկնումից առաջ մեծ բենեֆիցիա ստացավ այդ պրելատից։

Հայրս, յենթադրելով, վեր յես բոլորովին ապաքինվել եմ կրքից, առանց դժվարության ինձ թույլ տվեց մեկնելու։ Մենք ժամանեցինք Փարիզ։ Հոգևոր հան-

դերձը փոխարինեց Մալտայի խաչին և արբա դը Գրիյո անունը՝ ասպետի կոչմանը։ Ցեռ այնպիսի ջանասիրությամբ սկսեցի սովորել, որ մի քանի ամսվա ընթացքում արտակարգ առաջադիմություն ցույց տվի։ Մասամբ և՛ գիշերներն եյի զբաղվում, իսկ որվա մեջ մի րոպե անգամ ազարդյուն չեյի կորցնում։ Իմ համբավը այնպիսի մեծ աղմուկ հանեց, որ ինձ արդեն շնորհավորում եյին ազազա բարձր ստաիճանի համար, որն անկասկած ստանալու եյի։ Առանց իմ խնդրաուվության անունս մուծվեց բենեֆիցիաների ցանկը։ Բարեպաշտությունն ել յես աչքաթող չեյի արել. խանդավառությամբ կատարում եյի բոլոր կարգն ու կանոնը։ Տիրերժը զմայլված եր իր ջանքերին վերագրելով այս ամենը և յես բազմիցս նկատեցի, որ նա արտասուք ե թափում, իրեն շնորհավորելով ինձ դավանաղարձ անելու առիթով, ինչպես ինքն եր ասում։

Վոր մարդկային դիտավորությունները յենթակա յեն փոփոխության, դա ինձ յերբեք չի զարմացրել. մի կիրք հարուցում ե, մինչդեռ մյուսը կարող ե վոչնչացնել դրանց։ Սակայն յերբ մտածում եմ իմ դիտավորությունների սրբության մասին, վորոնք ինձ առաջնորդել եյին Սեն-Սյուլպիս և այն խորը բերկրանքի մասին, որ յերկինքն ինձ ճաշակել եր տալիս դրանց իրագործման առթիվ, — յես սարսում եմ, թե վորքան դյուրությամբ կարողացա դրանք խորտակել։ Ցեթե ճշմարիտ ե, որ յերկնային ոգնությունը յուրաքանչյուր րոպեյում համազոր ե կրքերի ույժին, ապա թող ինձ բացատրեն, թե ինչ չարաբաստիկ ներգործությամբ մարդիկ խուսափում են իրենց ճշմարիտ պարտականությունից, առանց դիմադրություն ցույց տալու և առանց ամենաաննշան խղճի խայթ անգամ զգալու։

Ցեռ յենթադրում եյի, թե միանգամայն ազատվել եմ դեպի տերն ունեցած իմ թուլություններից։ Ինձ թվում եր, թե այսուհետև յես կգերադասեմ սուրբ Ավգուստինոսի յերկերից մի եջ կարդալը կամ մի քառորդ ժամ քրիստոնեական մտորումների մեջ խորասուզվելը

զգայական բոլոր հաճույքներից, չբացառելով և այնպիսիք, վորոնք կարող եր ինձ պատճառել Մանոնը։ Սակայն մի չարաբաստիկ ակնթարթ ինձ նետեց անդունդը և իմ անկումը առավել ևս անդարձ յեղավ. այսպիսով, հանկարծ ինձ գտնելով նույն խորության մեջ, վորից դուրս եյի յեկել, յես նոր և ավելի մեծ մոլություններով մեջ ընկա, վորոնք ինձ անդունդի ամենախորքը նետեցին։

Մոտ մի տարի յես անցկացրի Փարիզում առանց Մանոնի մասին տեղեկանալու։ Սկզբում ինձ դժվար եր մաքառել փորձության դեմ։ Սակայն Տիբերժի մշտական խորհուրդներն ու իմ սեփական խորհրդածություններն ինձ ոգնեցին հաղթանակելու։ Վերջին ամիսներն այնքան անվրդով եյին սահել, վոր թվում եր, թե շուտով յես առհավետ կմոռանամ այն չքնաղ ու նենգ արարածին։ Հասավ ժամանակը, յերբ պարտավոր եյի հրապարակական քննություն տալու աստվածաբանության դպրանոցում։ Յես դիմեցի մի քանի ականավոր մարդկանց, խնդրելով, վոր իրենց ներկայությամբ մեծարեն իմ քննությունները։ Այսպիսով իմ անունը տարածվեց Փարիզի բոլոր թաղամասերում և հասավ ուխտադրուժ սիրուհուս ականջը։ Նա միանգամից ստուգությամբ չճանաչեց այն՝ արբա տիտղոսի անվան տակ. սակայն բոլորովին չսպառված հետաքրքրությունը կամ թերևս ինձ դավաճանած լինելու զղջումը (յերբեք չեմ կարողացել իմանալ, թե այս զգացումներից իրոք. վոր մեկը)

դրդեց նրան հետաքրքրվել մի անունով, որն այնքան նման եր իմ անվան։ Ուրիշ մի քանի տիկինների հետ նա յել յեկավ Սորբոն։ Նա ներկա. գտնվեց իմ քննությանը և անկասկած առանց դժվարության ճանաչեց ինձ։

Ցես վոչինչ չգիտեյի նրա այցի մասին։ Բոլորին հայտնի յե, որ Սորբոնի քննության դահլիճներում առանձին խուցեր են հատկացվում կանանց, որոնք մյուս հանդիսատեսներից թաքնված՝ նստում են շերտափեղկերի յետև։ Ցես դպրանոց վերադարձա փառքով պսակված և բարեմաղթությունների ու հաճոյախոսությունների տարափի տակ։ Ցերեկոյան ժամի վեցն եր։ Մի քիչ անց ինձ հայտնեցին, թե մի տիկին կամենում է ինձ տեսնել։ Իսկույն գնացի ընդունարան։ Ասուված իմ, ինչ անսպասելի հանդիպում. Մանոնն եր այնտեղ։ Դա նա յեր. սակայն ավելի քնքույշ, ավելի գեղանի, քան յերբևե տեսել եյի նրան։ Նա նոր եր թևակոխել իր տասնութ տարին։ Անկարելի յե նկարագրել նրա գրավչությունը. նա վերին աստիճանի նրբակերտ եր, քնքույշ ու համայիչ. իսկ և իսկ ինքը Սերը. նրա վողջ կերպարանքն ինձ կախարդական թվաց։

Նրա ներկայությունը բոլորովին շշմեցրեց ինձ և չկարողանալով գուշակել նրա այցի նպատակը՝ դողդոջուն և աչքերս գետին հառած սպասում եյի, որ նա խոսի։ Մի րոպե նա ինձնից նվազ շփոթված չեր։ Սակայն յերբ տեսավ, որ յես շարունակում եմ լռել, ձեռը տարավ դեպի աչքերը, արցունքները թաքցնելու համար։ Ցերկչոտ ձայնով ասաց, որ խոստովանում է, թե իր անհավատարմությամբ արժանի յե իմ ատելությանը։ Սակայն, յեթե ճշմարիտ է, որ յես յերբևիցե վորևե քնքշություն եմ տածել դեպի իրեն, ապա նվազ անդթություն չե իմ վիճակի մասին յերկու տարվա ընթացքում և վոչ մի լուր նրան չհաղորդել և առավել ևս անդթություն է՝ այժմ նրա հետ հանդիպելով ու տեսնելով նրա հուզումնալից վիճակը, չասել նրան և վոչ մի խոսք։ Անհնարին է արտահայտել իմ հոգու ալեկոծումը, յերբ լսեցի նրա այս խոսքերը։

Նա նստեց։ Ցեսն մնացի վոտի վրա՝ նրանից կիսով չափ շրջված, վորովհետև չեյի համարձակվում շեշտակի նայել նրա յերեսին։ Բազմիցս փորձեցի պատասխանել նրան, սակայն ամեն անգամ ուժ չեյի ունենում խոսքս ավարտելու։ Վերջապես մի ճիգ ևս արեցի և ցավագին բացականչեցի. «Նենդ Մանոն։ Ա՜խ, նենդ, նենդ»։ — Նա կրկնեց, ջերմ արցունքներ թափելով, վոր բնավ մտադիր չե արդարացնելու իր նենգությունը։ — «Այդ դեպքում ինչ եք կամենում», — գոչեցի յես նորից։ — «Ցեսս կամենում եմ մեռնել», — պատասխանեց նա, — «յեթե դուք չվերադարձնեք ինձ ձեր սիրտը, առանց վորի ինձ անհնարին ե ապրելը»։—«Այդ դեպքում պահանջիր իմ կյանքը, ուխտադրուժ», — բացականչեցի յես, ինքս ել թափելով արցունքներ, վոր իզուր ճգնում եյի զըսպելու. «պահանջիր իմ կյանքը, միակ բանը, վոր ինձ մնացել ե քեզ զոհաբերելու, վորովհետև իմ սիրտը յերբեք չի դադարել քեզ պատկանելուց»։

Հազիվ յես կարողացա արտասանել այս խոսքերը, յերբ նա տեղից վեր կացավ և հոգեզմայլ՝ նետվեց դիրկս։ Նա վողողեց ինձ իր տարփալիր փաղաքշանքներով։ Նա ինձ տվեց այն բոլոր անունները, վոր սերն ստեղծում ե իր ամենավառ քնքշություններն արտահայտելու համար։ Ցեսս տակավին զուսպ ու թույլ եյի արձագանքում։ Հիրավի, ինչ անցում այն անդորը դրությունից, վորի մեջ գտնվում եյի, դեպի հոգեկան այն հուզումնալի

շարժումները, որոնք վերակենդանանում էին իմ մեջ։ Սարսափն ինձ պատեց։ Ցեսը դողում էր, ինչպես դողում է մարդը, երբ գիշեր ժամանակ գտնվում է որևէ հեռու, անբնակ վայրում, երբ թվում է, թե փոխադրված ես մի ինչ որ նոր իրադրության մեջ. այդտեղ քեզ համակում է մի ինչ-որ գաղտնի սարսափ, որից ազատվում ես միայն այն ժամանակ, երբ յերկար և ուշիմ քննում ես շրջապատդ։

Մենք նստեցինք կողք կողքի։ Նրա ձեռքերը յես առա իմ ձեռքերի մեջ։ «Ա՜խ, Մանոն», — ասացի նրան, — «յերբեք ձեզանից չեյի սպասում այն սև դավաճանությունը, որը դուք ցույց տվիք ինձ ի հատուցումն իմ սիրո։ Ձեզ համար հեշտ եր խաբել մի սիրտ, որի բացարձակ վերապահությունն եյիք դուք, և որի զողջ յերանությունը ձեզ հանձնյանալն ու հնազանդվելն եր։ Ասացեք հիմա ինձ, ուրիշ մեկի մոտ դուք գտաք արդյոք նույնքան սիրող, նույնքան հլու սիրտ, որքան իմ սիրտն եր։ Վա՜յ, վա՜յ. բնությունը հաճախ չի ստեղծում իմ սրտի նմանը։ Գեթ ասացեք ինձ, յերբևիցե ափսոսացե՞լ եք այն կորցնելու համար։ Ի՞նչ հավատ կարող եմ ընծայել այն բարի զգացման նկատմամբ, որը դրդել է ձեզ դալ ինձ սփոփելու։ Ցես լավ տեսնում եմ, որ դուք ավելի հմայիչ եք, քան յերբևե, սակայն հանուն այն բոլոր տառապանքների, որ կրեցի ձեր սիրուն, չքնաղ Մանոն, ասացեք ինձ, կլինե՞ք այսուհետև ավելի հավատարիմ»։

Ի պատասխան ինձ՝ նա այնպիսի սրտառուչ խոսքեր ասաց իր զղջման մասին և այնպիսի հավաստիացումներով ու յերդումներով պարտավորվեց հավատարիմ մնալ, որ իմ սիրտն անասելի փափկեց։ «Թանկագին Մանոն», — ասացի նրան, շփոթելով սիրային և աստվածաբանական արտահայտությունները, — «հասարակ արարածի համար դու չափազանց գեղեցիկ ես։ Ցես զգում եմ, թե ինչպես իմ սիրտը տոգորվում է հաղթական քաղցրությամբ։ Այն ամենը, ինչ սեմինարիայում ճառում են կամքի ազատության մասին, դա միայն

բանդագուշանք եւ։ Քո սիրո համար յես պետք է կորցնեմ իմ կարողությունն ու բարեհամբավը, յես այդ լավ եմ կանխատեսում. իմ ճակատագիրը կարդում եմ քո հրաշագեղ աչքերում. սակայն ինչ կորուստներից չեմ մխիթարվի քո սիրով։ Հարստության առավելությունները ինձ չեն հրապուրում։ Փառքն ինձ թվում է իբրև ծուխ։ Կղերական կյանքի իմ բոլոր ծրագրերը՝ ցնորք։ Վերջապես այն բոլոր բարիքները, որոնք տարբեր են քեզնից ակնկալած վայելքից, արհամարհելի յեն ինձ, որովհետև դրանք մի ակնթարթ անգամ չեն կարող ճնալ իմ սրտում՝ սոսկ քո մեկ նայվածքի հանդեպ։

Խոստանալով հանդերձ նրա հանցանքները լիովին մոռացության տալ, այնուամենայնիվ յես ուզեցի իմանալ, թե նա ինչպես է կարողացել հրապուրվել պարոն դը Բ...ով։ Նա պատմեց, որ դը Բ...ն նրան տեսել է լուսամուտի առաջ ու սիրահարվել։ Այդ պարոնը հայտնել է նրան իր սերը որպես կապալառու, այսինքն նամակով գրել է, թե վարձատրությունը համապատասխան կլինի նրա դժվանքներին։ Ինքը զիջել է սակայն միայն այն նպատակով, որ նրանից մի խոշոր դումար կորզի, որը հնարավորություն տա մեզ ապահով ապրելու։ Պարոն դը Բ...ն այնպիսի հրապուրող խոսքերով է շլացրել նրան, որ նա ստիպված եղել է ենթարկվել։ Այնուամենայնիվ յես կարող եմ դատել իր զղջման մասին այն

ցավից, վոր ինքը արտահայտեց մեր բաժանման նախորյակին։ Թեվ չնայած այն փարթամության, վորով շրջապատված եր, նա յերբեք Բ...ի հետ յերջանկություն չի վայելել, վոչ միայն այն պատճառով, վոր ինքը նրա մոտ չի գտել, — ասաց նա ինձ, — իմ զգացմունքների քնքշությունն ու վերաբերմունքի քաղցր թովչանքը, այլ նրա համար, վոր նույնիսկ անվերջ իրեն պատճառած հաճույքների մեջ իր սրտի խորքում նա անշեջ կրել է իմ սիրո հիշատակը և իր անհավատարմության խայթը։ Նա խոսեց Տիբերժի և այն մեծ շփոթության մասին, վոր իրեն պատճառել է նրա այցելությունը։ — «Ուսերի հարվածն իմ սրտում», — ավելացրեց նա, — «ավելի քիչ խոցած կլիներ ինձ։ Թես հեռացա նրանից, չկարողանալով մի ակնթարթ անգամ տանել նրա ներկայությունը»։

Նա շարունակեց ինձ պատմել, թե ինչպես է իմացել, վոր յես Փարիզում եմ ապրում, նաև իմ վիճակի փոփոխության և Սորբոնի քննությունների մասին։ Նա հավատացրեց, վոր շատ հուզվել է հարցաքննության միջոցին։ Նա շատ ճիգ է թափել վոչ միայն արցունքները, այլ նույնիսկ հառաչանքները և ճիչերը զսպելու, վորոնք բաղմիցս ստիպում եյին նրան փղձկալ։ Վերջապես նա ասաց, թե ինքը դահլիճից դուրս է յեկել ամենից հետո, վորպեսզի թաքցնի իր հուզմունքը և, թե միայն սրտի մղման և զգացմունքների ուժգնության շնորհիվ է, վոր նա ուղղակի յեկել է սեմինարիա, այստեղ մեռնելու վորոշումով, յեթե ինձ ներելու պատրաստակամ չտեսնի։

Կարելի՞ յե արդյոք գտնել մի բարբարոս, վորին չհուզեր այսքան վառ ու քնքույշ զղջումը։ Ինչ ինձ է վերաբերում, յես այն բոպեին զգացի, վոր Մանոնի սիրուն պատրաստ եյի զոհաբերելու քրիստոնյա աշխարհի բովանդակ թեմերը։ Թես հարցրի նրա կարծիքը մեր անելիքի մասին։ Նա պատասխանեց, վոր անհապաղ պետք է դուրս գալ սեմինարիայից և աշխատել մի ավելի ապահով ապաստարան գտնելու։ Թես առանց առարկելու համաձայնվեցի նրա բոլոր թելադրանքնե-

ին։ Նա նստեց իր կառքը, վորպեսզի մեկնի և փողոցի անկյունում ինձ սպասի։ Փոքր ինչ հետո յես ել դռնապանից աննկատելի հեռացա։ Մենք ուղևորվեցինք դեպի պատրաստի զգեստի խանութը։ Յես նորից հագա ասպետի բաճկոնս և կապեցի սուսերս։ Մանոնը վճարեց դրանց արժեքը, վորովհետև յես մի գրոշ անգամ չունեյի. նա չկամեցավ, վոր յես՝ թեկուզ մի վայրկյան՝ վերադառնամ իմ խուցը դրամ վերցնելու համար, վախենալով, թե մի գուցե վորևե բան արգելք հանդիսանա իմ փախուստին։ Բացի դրանից, իմ ունեցածը չնչին գումար եր. իսկ նա շնորհիվ Բ...ի առատաձեռնության, բավականին հարուստ եր, այնպես վոր նրա հրամանով թողած հարստությունս ափսոսալու առիթ չկար։ Մենք հենց խանութում վորոշեցինք մեր անելիքը։

Վորպեսզի յես ավելի գնահատեմ ի սեր ինձ կատարած իր զոհաբերությունը, նա վորոշեց խզել իր բոլոր կապերը Բ...ի հետ։ — «Յես ուզում եմ կահկարասիքը թողնել նրանց», — ասաց նա ինձ, — «դա նրան է պատկանում. սակայն միանգամայն արդարացի յե, վոր վերցնեմ բոլոր զոհարները և մոտ վաթսուն հազար ֆրանկ, վոր ստացել եմ նրանից յերկու տարվա ընթացքում։ Նա վոչ մի իրավունք չունի իմ նկատմամբ», — ավելացրեց Մանոնը, — «այնպես վոր մենք անյերկյուղ կարող ենք մնալ Փարիզում և վարձել մի հարմար տուն, ուր կապրենք յերջանիկ»։

Ցեռ նրան առարկեցի, վոր յեթե նրա համար վոչ մի վտանգ չկա, ինձ համար վտանգը մեծ է, վորովհետև վաղ թե ուշ քաղաքում ինձ կճանաչեն և ինձ շարունակ պիտի սպառնա դժբախտությունը, վոր մի անգամ արդեն կրել եմ։ Նա ինձ հասկացրեց, վոր նրա համար դժվար է հեռանալ Փարիզից։ Ցեռ այն ստիճան վախենում եյի նրան վշտացնելուց, վոր չկար և վոչ մի վտանգ, վոր չարհամարհեյի, միայն թե հաճելի լինեմ նրան։ Այնուամենայնիվ մենք գտանք մի միջին խելացի յելք, այն է, մի տուն վարձել Փարիզի շրջակա վորևե գյուղում, վորտեղից հեշտ կլիներ գալ քաղաք ամեն անգամ, յերբ մեր բարի ցանկությունը կամ անհրաժեշտ կարիքը կթելադրեր մեզ։ Մենք ընտրեցինք Շայո, վորը գտնվում եր քաղաքից վոչ հեռու։ Մանոնն անմիջապես մեկնեց իր բնակարանը։ Ցեռ գնացի նրան սպասելու Տյուլերիի պարտեզի դռնակի մոտ։

Մի ժամ հետո նա վերադարձավ վարձու կառքով. հետը վերցրել եր իրեն սպասարկող աղախնուն և մի քանի պայուսակներ, վորոնց մեջ նրա զգեստներն ու թանկագին իրերն եյին։

Մենք շատ շուտ հասանք Շայո։ Գիշերն անցկացրինք հյուրանոցում, վորպեսզի ժամանակ ունենանք մեզ համար մի տուն կամ գոնե մի հարմար բնակարան փընտռելու։ Հաջորդ որն ևեթ վարձեցինք մեր ուզած տունը։

Սկզբում ինձ թվաց, թե իմ յերջանկությունը միանգամյան հաստատուն է։ Մանոնն ինքնին քնքշություն ու սիրալիրություն եր։ Նա այնպիսի քաղցր և սիրալիր ուշադրությամբ եր վերաբերվում ինձ, վոր յես կարծեցի, թե իմ ամբողջ տառապանքների փոխարեն ստացել եմ լիակատար հատուցում։ Ցերկուսս ել բավական փորձառություն եյինք ձեռք բերել, ուստի և ի վիճակի եյինք կշռադատելու մեր կարողության մեծությունը։ Վաթսուն հազար ֆրանկը, վորը մեր հարստության հիմքն եր, այնպիսի մի մեծ գումար չեր, վոր բավարարեր մեր ամբողջ կյանքի ընթացքում։ Բացի այդ մենք տրամադիր չեյինք մեր ծախսերը զգալիորեն կըր-

ճատելու։ Ինայողությունը վոչ Մանոնի և վոչ ել իմ գլխավոր առաքինությունն եր։ Ցես նրան հետևյալ ծրագիրն առաջարկեցի.— «Վաթսուն հազար ֆրանկը կարող է մեր գոյությունն ապահովել տաս տարի։ Եթե մենք շարունակենք ապրել Շայոյում, յերկու հազար եկյու մեզ կբավարարե մի տարի։ Մենք այստեղ կվարենք պատվավոր, սակայն համեստ կյանք։ Մեր միակ ծախսը կլինի թատրոնը և կառեթ պահելը։ Մենք կապրենք մեր միջոցների համեմատ։ Դուք սիրում եք ոգևրան։ Շաբաթը յերկու անգամ կհաճախենք։ Թղթախաղում մենք այնպես կսահմանափակենք մեզ, վոր մեր կորուստը յերբեք յերկու պիստոլից ավելի չլինի։ Անկարելի յե, վոր տաս տարվա ընթացքում իմ ընտանեկան կյանքում վոչ մի փոփոխություն չպատահի։ Հայրս ծեր է, և կարող է շուտով մեռնել։ Ցես կստանամ ժառանգության ինձ հասանելիք մասը և այն ժամանակ մենք կհաղթահարենք մեր մտավախությունը և կհարթենք ետացած բոլոր դժվարությունները»։

Այս կարգադրությունն իմ կյանքի ամենաանմիտ արարքը չեր լինի, յեթե մենք բավականաչափ խելոք գտնվեյինք մշտապես նրան հարմարվելու։ Սակայն մեր վորոշումը տևեց միայն մի ամիս։ Մանոնը հաճույք եր սիրում, իսկ յես պաշտում եյի նրան։ Ամեն բոպե դրամ ծախսելու նոր պռիթներ եյին ծագում և յես վոչ միայն չեյի ափսոսում այն գումարները, վոր նա վատնում

ևը յերբեմն մեծ շռայլությամբ, այլ ընդհակառակը, ինքս առաջինը պատրաստ եյի նրան տալու այն ամենը, ինչ կարող եր նրան հաճելի լինել։ Շայոյում մեր. կյանքը արդեն տաղտկալի յեր դառնում նրա համար։

Ձմեռը մոտենում եր. բոլորը վերադառնում եյին քաղաք. գյուղն ամայանում եր։ Նա առաջարկեց նորից Փարիզ տեղափոխվել։ Ցեռ չհամաձայնվեցի. սակայն, վորպեսզի մի կերպ բավարարած լինեմ նրան, ասացի, վոր կարելի յե քաղաքում մի կահավորված բնակարան վարձել, վորտեղ կարող կլինենք գիշերն անցկացնել, յերբ յերկար կնստենք ժողովարանում, ուր շաբաթը մի քանի անգամ լինում եյինք. վորովհետև նա գիշերն ուշ վերադառնալու անհարմարություններն եր բերում իբրև պատրվակ՝ Շայոյից հեռանալու համար։ Այսպիսով մենք ունեցանք յերկու բնակարան. մեկը՝ քաղաքում, իսկ մյուսը՝ գյուղում։ Սույն փոփոխությունը շուտով մեծ շփոթ առաջացրեց մեր գործերում, հարուցելով յերկու արկածներ, վորոնք և պատճառ յեղան մեր կործանման։

Մանոնը մի յեղբայր ուներ, վորը գվարդիայի զինվոր եր։ Մեր չար բախտից պարզվեց, վոր նա ևս ապրում եր Փարիզում և հենց մեր փողոցում։ Ցեվ ահա՝ նա ճանաչում ե իր քրոջը, յերբ մի առավոտ նրան տեսնում ե լուսամուտում և անմիջապես վազում ե մեզ մոտ։ Նա մի կոպիտ և պատվազուրկ մարդ եր։ Սոսկալի հայհոյանքներով մտնում ե մեր սենյակը և վորովհետև մասամբ իմացել ե. քրոջ արկածները, ապա անզուսպ հիշոցներ ու հանդիմանություններ ե տեղում նրա գլխին։

Սենյակից յես դուրս եյի յեկել փոքր ինչ դրանից առաջ, անկասկած նրա ու իմ բախտից, վորովհետև յես բնավ տրամադիր չեյի վիրավորանքներ տանելու։ Բնակարան վերադարձա նրա հեռանալուց հետո։ Մանոնի տրտմությունից յես կռահեցի, վոր իմ բացակայության ժամանակ մի արտասովոր բան ե պատահել։ Նա ինձ պատմեց յեղբոր հետ ունեցած. անախորժ խոսակցության և նրա կոպիտ սպառնալիքների մասին։

Ցեռ այնպիսի զայրույթ զգացի, վոր ուզում եյի անմիջապես գնալ պատճառած վիրավորանքի վրեժն առնելու, բայց Մանոնի արտասուքներն ինձ զսպեցին։

Ցերը յես սույն արկածի մասին խոսում եյի սիրուհուս հետ, գվարդիականն առանց դուռը բախելու նորից մտավ մեր սենյակը։ Ցեթե յես նրան ճանաչեյի, ապա չեյի ընդունի այնքան սիրալիր քաղաքավարությամբ. սակայն մեզ ուրախ բարևելուց հետո նա ժամանակ գտավ ասելու Մանոնին, վոր յեկել է նրանից ներողություն խնդրելու իր դյուրաբորբոքության համար։ Նա ասաց, վոր ինքը կարծել է, թե իր քույրն անառակ կյանք է վարում և այդ միտքը հարուցել է նրա զայրույթը. բայց, յերբ մեր ծառաներից մեկից իմացել է իմ ով լինելը և ուրիշ շատ բարենպաստ տեղեկություններ իմ մասին, ուստի այժմ կամենում է մեզ հետ հաշտ ապրել և մտերմություն հաստատել։

Թեև մեր սպասավորներից մեկից իմ մասին ստացված այս տեղեկությունն ինքնին տարորինակ ու վիրավորական եր, այնուամենայնիվ յես քաղաքավարությամբ ընդունեցի նրա բարևը։ Ինձ թվում եր, վոր այսպիսով հաճույք կպատճառեմ Մանոնին. նա հիացած եր, վոր իր յեղբայրը հաշտության է տրամադրված։ Մենք նրան այդ որը ճաշի հրավիրեցինք։

Նա շուտով այնքան մտերմացավ մեզ, վոր յերբ լսեց մեր՝ Շայո վերադառնալու մասին, նա ուզեց անպայման

ուղեկցել մեզ։ Մենք հարկադրվեցինք նրան ևս տեղավորել մեր կառքում։ Այդպիսով նա իր տիրակալությունը հաստատեց մեր կյանքի վրա, վորովհետև կարճ ժամանակից նա սովորություն դարձրեց մեզ այցելել այնպիսի հաճույքով, վոր ի վերջո իրեն զգաց ինչպես իր տանը և դարձավ կատարյալ տնորենն այն ամենի, ինչ մեզ եր պատկանում։ Նա ինձ յեղբայր եր անվանում և յեղբայրական ազատությամբ իր բոլոր բարեկամներին սկսեց հրավիրել Շայո՝ մեր տուն և նրանց մեր հաշվին հյուրասիրել։ Նա իր համար շքեղ զգեստ կարեց մեր ծախսով և մինչև իսկ ստիպեց մեզ վճարելու իր պարտքերը։ Ցեռ աչքերս փակում եյի այս բռնակալության հանդեպ՝ Մանոնին չվշտացնելու համար և նույնիսկ ձևացնում եյի, թե չեմ տեսնում, ինչպես նա ժամանակ առ ժամանակ խոշոր գումարներ և կորզում իր քրոջից։ Ճիշտ է, լինելով մեծ խաղամոլ՝ նա այնքան ազնվություն ուներ, վոր յերբեմն վերադարձնում եր ստացած գումարները, յերբ բախտը նպաստում եր իրեն։ Սակայն մեր կարողությունը չափազանց աննշան եր, վորպեսզի հնարավոր լիներ յերկար ժամանակ հոգալու նրա այդ կարգի անչափ ծախսերը։

Ցեռ արդեն պատրաստվել եյի ամենայն խստությամբ բացատրվել նրա հետ իր անտերեսության համար, յերբ մի չարաբաստիկ դիպված ազատեց ինձ այդ հոգսից, նետելով մեզ մի ուրիշ դժբախտության գիրկը, վորը մեզ անվերադարձ կործանեց։

Մի անգամ մենք ճնացել եյինք Փարիզում, գիշերն այնտեղ անցկացնելու համար, ինչպես դա հաճախ եր պատահում։ Աղախինը, վորն այն ժամերին մենակ եր ճնում Շայոյում, առավոտյան յեկավ ինձ հաղորդելու, վոր մեր տանը հրդեհ է բռնկվել և թե մեծ դժվարությամբ են հանգցրել այն։ Ցեռ նրան հարցրի, թե մեր կահ-կարասիքը չի՞ ճնասվել արդյոք։ Նա պատասխանեց, վոր այնպիսի մի իրարանցում է յեղել այնտեղ՝ շնորհիվ ոգնության յեկած բազմաթիվ անծանոթ մարդկանց, — վոր նա վոչ մի բան դրականապես պնդել չի

կարող։ Ցեռ սարսափ զգացի, մտածելով փոքր արկղում դտնվող մեր դրամի մասին։ Անմիջապես Շայո վերադարձա։ Չո՜ւր աճապարանք. արկղիկն անհետացել եր։

Ցեռ միայն այն ժամանակ հասկացա, վոր կարելի չե դրամը սիրել և՛ առանց ժլատ լինելու։ Այս կորուստն այնպիսի մի սուր ցավով համակեց ինձ, վոր կարծեցի, թե խելագարվում եմ։ Անմիջապես պատկերացրի, թե ինչ նոր դժբախտությունների պիտի յենթարկվեմ. չքավորությունը դրանցից փոքրագույնն եր։ Ցեռ լավ եյի ճանաչում Մանոնին. իմ մորթու վրա արդեն զգացել եյի, վոր նա վորքան ել հավատարիմ ե ու նվիրված ինձ, յերբ բախտը ժպտում ե մեզ, այնուամենայնիվ դրժբախտության դեպքում նրա վրա հույս դնել չի կարելի. նա չափից դուրս սիրում եր փարթամությունն ու հաճույքները, վորպեսզի ի վիճակի լիներ դրանք զոհաբերելու իմ սիրուն։—«Կկորցնեմ նրան».—բացականչեցի ես։ «Անբախտ ասպետ, դու վերստին կորցնում ես այն ամենը, ինչ սիրում ես»։ Այս միտքն այնպիսի սարսափելի տագնապի մեջ ձգեց ինձ, վոր մի քանի րոպե տատանվում եյի, թե լավ չի՞ լինի արդյոք միանգամից վերջ դնել իմ բոլոր տառապանքներին, դիմելով անձնասպանության։

Բայց և այնպես հոգով դեռ բավականին արի եյի, վորպեսզի կարողանայի նախապես քննել, թե չկա՞ արդյոք վորևե այլ միջոց՝ աղետի հետևանքները կանխելու։ Ցերբ

կինքն ինձ ներշնչեց մի միտք, վորը փրկեց ինձ հուսալքությունից. մտածեցի, թե արդյոք չեմ կարող մեր կորուստը թաղցնել Մանոնից։ Շնորհիվ իմ հնարամտության կամ մի յերջանիկ պատահականության յես ի վիճակի կլինեմ նրան ապահովել պատվավոր ու բարեկեցիկ մի կյանք, վորպեսզի նա չզգա կարիքի բեռը։ «Ցեսս հաշվել եյիր»,— ասացի ինձ մխիթարելու համար,— «թե քսան հազար եկյու մեզ կբավականանա տաս տարի. այժմ յենթադրենք, թե այդ տաս տարին արդեն անցել է, մինչդեռ իմ ընտանիքում չի կատարվել սպասած փոփոխությունը։ Ի՞նչ պիտի անեյի տվյալ հանգամանքներում, այդ լավ չգիտեմ. սակայն, ինչն է ինձ արգելում հիմա անել այն, ինչ յես պիտի անեյի այդ դեպքում։ Փարիզում վորքան մարդիկ են ապրում, վորոնք վոչ իմ խելքն ունեն և վոչ էլ բնատուր ձիրքերս, սակայն վորոնք իրենց ապրուստը հայթայթում են սեփական ընդունակությունների համեմատ։

«Մի՞թե նախախնամությունը կատարյալ իմաստությամբ չի դասավորել աշխարհի բաները»,— ավելացրի յես, խորհրդածելով տարբեր հասարակական դիրքերի մասին։ «Հարուստ և մեծանուն մարդկանց մեծամասնությունը տխմարներ են. սա ակներև է յուրաքանչյուր մարդու համար, ով քիչ թե շատ ճանաչում է աշխարհը։ Արդ, այստեղ զարմանալի արդարություն և նախատեսված։ Ցեթե այդ մարդկանց իրենց հարստության հետ տրված լիներ նաև խելք, նրանք չափից դուրս յերջանիկ պիտի լինեյին, իսկ մնացած մարդիկ՝ չափազանց անբախտ. այս վերջիններիս էլ տրված են մարմնի և հոգու ունակությունները, վորպես թշվառության ու չքավորության դեմ մաքառելու միջոցներ։ Վոմանք վայելում են մեծերի հարստությունը՝ սպասարկելով նրանց հաճույքներին և նրանց իրենց խաբեության զոհը դարձնելով։ Ուրիշները ծառայում են նրանց դաստիարակությանը, ջանալով նրանցից պատվարժան մարդիկ կրթել. ճշմարիտ է, դա հազվադեպ է հաջողվում նրանց, սակայն ատվածային իմաստության նպատակը

այդ չէ. դրանք միշտ իրենց ջանքերից ոգուտ են քաղում, ապրելով ի հաշիվ այն մարդկանց, վորոնց դաստիարակում են. և խնդիրը ինչ կողմից ել վոր քննելու լինենք, ունևորների ու մեծատունների տխմարությունն այս աշխարհի ընչազուրկների յեկամուտի լավագույն աղբյուրն ե։

Այս խոհերը մի փոքր հանգստացրին իմ սիրտն ու միտքը։ Ցեսս վորոշեցի նախապես խորհրդակցել Մանոնի յեղբոր՝ պարոն Լեսկոյի հետ։ Նա կատարելապես գիտեր Փարիզը և յես բազմիցս առիթ եյի ունեցել համոզվելու, վոր նրա յեկամտի գլխավոր աղբյուրը վոչ իր սեփական կարողությունն ե և վոչ ել թագավորից ստացած թոշակը։ Ինձ մոտ մնում եր ընդամենը քսան պիստոլ, վորոնք բարեբախտաբար գրպանումս եյին։ Ցեսս նրան ցույց տվի քսակս ու պատմեցի իմ դժբախտության ու մտավախության մասին, խնդրելով, վոր նա ասի, թե ինձ համար չկա արդյոք մի ուրիշ յելք, քան սովամահությունը կամ ինքնասպանությունը։ Նա պատասխանեց, վոր ինքնասպանությունը տխմարների գործն ե. ինչ վերաբերում ե սովամահության, բազմաթիվ խելացի մարդիկ անդամ յենթարկվում են դրան, յերբ չեն կամենում գործադրել իրենց ձիրքերը։ Հետո նա ավելացրեց, թե ինքս պիտի մտածեմ, թե ինչ բանի յեմ ընդունակ. իսկ նա իր կողմից պատրաստ ե ինձ աշակցել և խորհուրդներ տալ իմ բոլոր ձեռնարկներում։

«Այդ ամենը չափազանց անորոշ է, պարոն Լեսկո», — ասացի յես նրան.— «իմ դրությունն անմիջական ոգնություն է պահանջում, վորովհետև ինչ պիտի ասեմ Մանոնին»։ — «Ի՞նչն է ձեզ անհանգստացնում Մանոնի վերաբերմամբ», — վրա բերեց նա։ «Նրա նկատմամբ դուք միշտ էլ կարող եք հանգիստ լինել, յեթե կամենաք։ Նման մի աղջիկ պետք է, վոր մեզ բոլորիս՝ և՛ ձեզ, և՛ իրեն, և՛ ինձ պահի»։ Նա թույլ չտվեց ինձ ըստ հարկի պատասխանելու իր անլուր լկտիությանը և ավելացրեց, ասելով, վոր խոստանում է մինչև յերեկո հայթայթել հազար եկյու, կեսը՝ ինձ, կեսը՝ իրեն, յեթե միայն կամենամ հետևել իր խորհրդին։ Նա ասաց, վոր ճանաչում է մի ազնվական պարոնի, վորն այն աստիճան առատաձեռն է հաճույքի խնդրում, վոր ինքը հավատացած է, թե նա մեծ հաճությամբ կտա հազար եկյու Մանոնի նման մի աղջկա սիրո համար։

Ցես նրան թույլ չտվի շարունակելու։— «Ձեր մասին յես ավելի լավ կարծիք ունեյի», — ասացի նրան։— «Ցես յերևակայում եյի, թե ձեր՝ դեպի ինձ տածած բարեկամությունը բղխում է մի այլ զգացումից, քան այն, վորը դուք ցուցաբերեցիք հենց հիմա»։ Նա ստորությամբ խոստովանեց ինձ, վոր ինքը միշտ նույն կարծիքն է ունեցել, և քանի վոր քույրը խախտել է իր սեռի որենքները՝ թեկուզ և ամենից սիրած տղամարդու համար, ապա ինքը հաշտվել է նրա հետ սոսկ այն հույսով, վոր իրեն կհաջողվի վորևե ոգուտ քաղել քրոջ վատ վարքից։

Ինձ համար դժվար չեր հասկանալ, վոր մինչև այսոր նա մեզ անամոթ կերպով խաբել է։ Սակայն վորքան էլ նրա խոսքերը իմ արդար զայրույթը հարուցեցին, այնուամենայնիվ կարիքն ինձ ստիպեց ժպտալով պատասխանել, վոր նրա խորհուրդն ընդունում եմ վորպես վերջին միջոց, վորին պետք է դիմել ծայրահեղ դեպքում։ Իսկ այժմ նրան խնդրում եմ մի այլ ուղի նշել։

Այն ժամանակ նա ինձ առաջարկեց ոգտագործել բնությունից ինձ շնորհված յերիտասարդությունս ու

դեղեցկությունս, և ջանալ սիրային կապեր հաստատել վորևե պառավ և առատաձեռն տիկնոջ հետ։ Ցես չընդունեցի և՛ այս խորհուրդը, վորովհետև դա պահանջում եր դավաճանել Մանոնին։

Ցես նրան մատնանշեցի թղթախաղը, վորպես միակ և ամենադյուրին մի միջոց, վորը պատշաճում է իմ վիճակին։ Նա ասաց, վոր, հիրավի, թղթախաղը կարող է փող վաստակելու միջոց լինել, սակայն դա պահանջում է վորոշ բացատրություններ։ Նախաձեռնել թղթախաղը միայն տանելու հույսով, դա անտարակույս նշանակում է կատարյալ դարձնել իմ կործանումը. իսկ հավակնել մենակ, առանց ուրիշի աջակցության, կիրառելու այն բոլոր փոքր հնարները, վոր գործադրում են ճարպիկ մարդիկ, վորպեսզի շտկեն բախտի անակնկալությունը, դա չափազանց վտանգավոր մի զբաղմունք է։ Կա և մի յերրորդ ճանապարհ՝ ընկերության մեջ մտնել ուրիշ խաղացողների հետ։ Սակայն իմ յերիտասարդությունը նրան յերկյուղ է ներշնչում, թե ընկերության պարոն անդամները կարող են կարծել, վոր յես տակավին զուրկ եմ նրանց ընկերակցելու շնորհքից։ Այնուամենայնիվ նա խոստացավ իմ մասին բարեխոսել նրանց, և այն, ինչ յես բնավ չեյի սպասում նրանից, առաջարկեց ինձ մի վորոշ գումար, յերբ ծայր կարիքն ինձ նեղի։ Միակ շնորհը, վոր յես խնդրեցի նրանից տվյալ հանգամանքներում, դա այն եր, վոր

Նա վոչինչ չասի Մանոնին վոչ իմ կորուստի և վոչ էլ մեր խոսակցության նյութի մասին։

Նրա մոտից յես հեռացա ավելի դժգոհ, քան այցելել եյի. յես նույնիսկ զղջացի, վոր իմ գաղտնիքը հայտնել եմ նրան։ Նա ինձ վոչ մի այնպիսի բան չարեց, վորը յես չկարողանայի նրանից ստանալ առանց իմ խոստովանության. մինչդեռ յես սաստիկ վախենում եյի, վոր նա կխախտի իր խոստումը՝ վոչինչ չհայտնելու Մանոնին։ Բացի այդ, իր զգացումների հայտնությամբ, նա ինձ առիթ տվեց յերկյուղելու, վոր կվորոշի Մանոնից ոգուտ քաղել, ինչպես ինքն եր ասում, խլելով նրան իմ ձեռից կամ առնվազն խորհուրդ տալով նրան լքել ինձ՝ վորպես հարուստ և առավել յերջանիկ սիրեկանի հետ կապվելու համար։ Այս առթիվ արած իմ բյուր խորհրդածությունները լոկ մի բանի հանգան՝ սաստկացրին իմ տագնապն ու վերանորոգեցին այն հուսալքությունը, վորը պատել եր ինձ առավոտյան։ Մի քանի անգամ մտադրվեցի նամակով դիմել հորս, և մի նոր կեղծ զղջումով նրանից դրամական ոգնություն հայցել։ Սակայն անմիջապես հիշեցի, թե ինչպես նա՝ չնայած իր բարեսրտության՝ վեց ամիս խստությամբ արգելափակել եր ինձ առաջին հանցանքիս համար։ Ցեսս համոզված եյի, վոր Սեն-Սյուլպիսից իմ կատարած փախուստից հետո, վորն անկասկած խոշոր աղմուկ պետք է հանած լիներ, նա ինձ հետ ավելի խիստ կվարվեր։

Ի վերջո, այս խորհրդածությունների շփոթից իմ գլխում մի միտք ծագեց, վորն իսկույն ինձ հանգստացրեց և յես զարմացա, թե ինչու այն ավելի առաջ չեյի հղացել. իմ մեջ ծագեց Տիբերժի աջակցությանը դիմելու միտքը։ Ցեսս հավատացած եյի, վոր հանձինս նրա միշտ կգտնեմ նույն ջերմ ու բարեկամական վերաբերմունքը։ Վոչինչ չկա ավելի հրապուրիչ և վոչ մի բան այնքան պատիվ չի բերում առաքինությանը, քան այն վստահությունը, վորով դիմում ես այնպիսի անձանց, վորոնց աղնվությունը քեզ արդեն հայտնի յե. գիտես, վոր վոչ

մի անակնկալությունից յերկյուղ չունես, յեթե նրանք միշտ ի վիճակի չեն ողնության ձեռք կարկառելու, զոնե վստահ ես, որ նրանք քեզ բարություն ու կարեկցանք ցույց կտան։ Սիրտդ, որ ոտար մարդկանց առջև փակվում է այնքան մեծ խնամքով, ինքնաբերաբար բացվում է նրանց ներկայությամբ, ինչպես ծաղիկն է փրթթում ջերմ արևի տակ, որից նա միայն կենսատու ջերմություն ստանում։

Մտածեցի, որ յես սոսկ ասածս ներշնչմամբ այսպես՝ հինգ ժամանակին՝ մտաբերեցի Տիբերժին և որոշեցի միջոցներ վորոնել, նրա հետ մինչ յերեկո տեսնվելու համար։ Ցես անմիջապես վերադարձա տուն, վորպեսզի նրան մի յերկտող գրեմ և նշանակեմ մեր տեսակցության հարմար վայրը։ Ցես նրան խնդրեցի կատարյալ լռություն պահպանել մեր հանդիպման մասին. դա ամենամեծ ծառայությունն եր, որ նա կարող եր ինձ մատուցել իմ ներկա վիճակում։

Տիբերժի հետ տեսնվելու հույսի ներշնչած բերկրանքը ջնջել եր իմ դեմքից թախիծի հետքերը, որ Մանոնն անպայման կնշմարեր իմ յերեսին։ Շայությամբ մեզ պատահած դժբախտությունը յես նրան ներկայացրի իբրև մի դատարկ բան, որը բնավ չպիտի հուզեր նրան։ Ցեվ վորովհետև Փարիզն այն քաղաքն եր, որը նա ամենից շատ եր սիրում և ուր նա միշտ տենչացել եր ապրել, նա բնավ չսրտմտեց, որ մենք ստիպված

ենք այնտեղ մնալ, մինչև վոր Շայոյում նորոգեն հրդեհի պատճառած չնչին ավերումները։

Մի ժամ հետո ստացա Տիբերժի պատասխանը. նա խոստանում եր լինել նշանակված վայրում։ Ցես անհամբերությամբ վազեցի դեպի այդ վայրը։ Այնուամենայնիվ վորոշ ամոթ զգացի՝ յերևալու մի բարեկամի աչքի առաջ, վորի սոսկ ներկայությունն իմ անառակության կշտամբանքը կարող եր լինել։ Սակայն նրա սրտի բարության մասին ունեցած վստահությունս ու Մանոնի նկատմամբ զգացած հոգատար գուրգուրանքս պահեցին իմ արիությունը։

Ցես նրան խնդրել եյի գալ Պալե-Ռուայալի պարտեզը։ Նա ինձնից առաջ եր յեկել այնտեղ։ Հենց վոր ինձ տեսավ իսկույն նետվեց դեպի ինձ և գրկախառնվեց. նա յերկար ժամանակ ինձ սեղմեց իր գրկում և նրա արցունքները թրջեցին դեմքս։ Ցես ասացի, վոր մեծ ամոթով եմ հանդիպում նրան և վոր իմ սրտում միշտ վառ ե մնում յերախտագիտությանս զգացումը. ամենից առաջ յես խնդրեցի նրան ասել, թե արդյոք ինձ թույլատրելի յե նայել իրեն իբրև բարեկամի, յերբ միանգամայն արդարացիորեն արժանի յեմ, վոր նա ինձ գրկի իր հարգանքից ու սիրուց։ Նա պատասխանեց ամենաքնքույշ խոսքերով, վոր վոչ մի բան չի կարող ստիպել նրան հրաժարվելու այդ կոչումից. մինչև իսկ իմ դժբախտությունները,— և յեթե յես ներեմ նրա համարձակությունը,— մոլություններս ու մոլորություններս կրկնապատկել են դեպի ինձ տածած իր քնքշությունը։ Սակայն այդ քնքշությունը համակվել ե ամենախոր վշտով, վորը զգում ես սիրելի բարեկամիդ հանդեպ, յերբ նա քո աչքերի առաջ կործանվում ե, իսկ դու ի վիճակի չես ոգնության ձեռք կարկառել նրան։

Մենք նստեցինք միևնույն նստարանի վրա։ — «Ավելորդ»,— ասացի յես նրան սրտի խոր հառաչանքով,— «ձեր կարեկցությունը չափազանց մեծ ե, սիրելի Տիբերժ, յեթե ինչպես դուք հավաստիացնում եք, այն

հավասար է իմ տառապանքներին։ Ցես ամաչում եմ դրանք ձեզ ցուցադրելուց, վորովհետև պատճառը, խոստովանում եմ, գովելի չէ. սակայն նրանց հետևանքն այն աստիճան տխուր է, վոր կարիք չկա ինձ սիրել այնպես, ինչպես դուք եք սիրում, վորպեսզի կարեկցանք շարժեմ դեպի ինձ։

Նա ինձ խնդրեց՝ հանուն մեր բարեկամության՝ առանց վորևե բան թաքցնելու, պատմել իրեն այն ամենը, ինչ ինձ պատահել է իմ Սեն-Սյուլպիսից մեկնելուց հետո։ Ցես բավարարեցի նրա ցանկությունը. նկարագրեցի իմ սիրո պատմությունը դրա՝ ինձ ներշնչած թափով, առանց աշխատելու աղավաղել ճշմարտությունը կամ նվազեցնել մոլորություններս՝ դրանց ներումը դյուրությամբ ստանալու նպատակով։ Ցես իմ սերը նրան պատկերացրի իբրև մեկը ճակատագրի մասնակի հարվածներից, վորը մարդուս մղում է դեպի իր կործանումը և վորից առաքինությունը չի կարող պաշտպանել, ինչպես այդ չի կարող նախատեսել իմաստությունը։ Ցես վառ գույներով նկարագրեցի նրան իմ հուզմունքը, յերկյուղը և այն հուսալքությունը, վորով բռնված եյի յերկու ժամ առաջ և վորի մեջ վերստին պիտի ընկնեյի, յեթե իմ բարեկամներն ինձ լքեն Նույնպիսի անգթությամբ, ինչպես արել է ճակատագիրը։ Ի վերջո, իմ պատմությամբ յես այն աստիճան շարժեցի Տիբերժի սիրտը, վոր նա՝ դեպի ինձ տածած կա-

բեկցանքից՝ նույնքան վշտացած եր, որքան յես—իմ ցավերից։

Նա անդադար գրկում եր ինձ, քաջալերում ու մխիթարում։ Սակայն, որովհետև նա մինչև վերջը պնդում եր, թե ինձ անհրաժեշտ է Մանոնից բաժանվել, յես կտրականապես ասացի նրան, որ այդ իսկ բաժանումը յես համարում եմ իմ դժբախտությունների ամենամեծագույնը և, որ յես պատրաստ եմ կրելու վոչ միայն ամենածայրահեղ թշվառությունը, այլև մինչև իսկ ամենադաժանելի մահը, նախքան դիմելու բուժման այնպիսի մի միջոցի, որ շատ ավելի անտանելի յե, քան իմ բոլոր ցավերը միասին վերցրած։

«Այդ դեպքում, խնդրում եմ, բացատրեցեք ինձ»,— ասաց նա,—«ինչպիսի ոգնություն կարող եմ ցույց տալ, քանի որ դուք ընդդիմանում եք իմ բոլոր առաջարկություններին»։ Յես քաջություն չունեցա ասելու, որ նրա քսակի ոգնության կարիքն ունեմ։ Ի վերջո նա ինքը գուշակեց այդ և խոստովանելով, որ իրեն թվում է, թե ինձ հասկանում է, նա մի պահ լռեց տատանվող մարդու կերպարանք ընդունելով։—«Զկարծեք»,—ասաց նա նորից,—«որ իմ մտածմունքիս պատճառը սիրուս ու բարեկամությանս սառնությունն է. սակայն դուք այնպիսի յերկընտրանքի առաջ եք դնում ինձ, որ յես ստիպված եմ կամ մերժել միակ ոգնությունը, որ դուք համաձայնվում եք ընդունել, կամ խախտել իմ պարտականությունը՝ ընձեռելով ձեզ այդ ոգնությունը. մի՞թե դա չի նշանակում մասնակցել ձեր անառակ կյանքին՝ նպաստելով ձեր համառությանն այդ կյանքում»։

«Այնուամենայնիվ»,—շարունակեց նա, մի րոպե մտածելուց հետո,—«յես յենթադրում եմ, որ դուցե հենց ձեր փոթորկալից դրությունը, որի մեջ նետել է չքավորությունը, ձեզ զրկում է լավ ընտրություն անելու աղատությունից։ Միայն անդորը վիճակում մարդ կարող է ճաշակել իմաստությունն ու ճշմարտությունը։ Յես միջոց կգտնեմ ձեզ դրամ հայթայթելու։ «Միայն

թույլ տվեք, սիրելի ասպետս, — շարունակեց նա դրկելով ինձ, — ձեզ մի պայման դնել. դուք ինձ կհայտնեք ձեր բնակավայրի հասցեն և կհանդուրժեք, որ յես դոնե ջանամ ձեզ վերադարձնել առաքինությանը, որը, ինչպես յես լավ գիտեմ, դուք սիրում եք, և որից ձեզ հեռացնում է լոկ ձեր կրքերի մոլեգնությունը։

Ցես անկեղծորեն խոստացա նրան այն, ինչ ցանկանում եր և խնդրեցի կարեկցել իմ չարախինդ ճակատագրին, որը ստիպում է ինձ այդ աստիճան անարժան վերաբերմունք ցույց տալ այդքան ազնիվ մի բարեկամի խորհուրդներին։ Այնուհետև նա ինձ առաջնորդեց իրեն ծանոթ մի բանկիրի մոտ, որն ինձ տվեց հարյուր պիստոլ նրա մուրհակի դիմաց, որովհետև ինքը Տիրերժը բնավ կանխիկ դրամ չուներ։ Ցես արդեն առիթ ունեցա ասելու, որ նա հարուստ չեր։ Նրա բենեֆիցիան հազար եկյուր արժեք ուներ, սակայն որովհետև նա առաջին տարին եր այդ ստանում, ուստի տակավին վոչ մի յեկամուտ չեր ունեցել դրանից. նա այդ դումարն ինձ տվեց ի հաշիվ իր ապագա յեկամուտի։

Ցես լավ զգացի նրա մեծահոգության վողջ արժեքը և այն աստիճան զգացվեցի, որ սկսեցի վողբալ շլացումն իմ ճակատագրական սիրո, որը ստիպում եր ինձ խախտելու բոլոր պարտականություններս։ Միառժամանակ առաքինությունը բավականին ույժ ունեցավ իմ սրտում ըմբոստանալու կրքիս դեմ և յես՝

գեթ արթնամտության այդ բոպեներին գիտակցեցի իմ շղթաների ամոթն ու ստորությունը։ Սակայն պայքարը թույլ եր և յերկար չտևեց։ Սոսկ Մանոնի տեսքն ընդունակ եր ինձ դահավիժել յերկնքից և, յերբ նորից նրա մոտ յեղա, յես զարմացա, թե ինչպես կարողացել եյի, թեկուզ մի ակնթարթ, ամոթալի համարել այդպիսի արդարացի ընքշությունը՝ այնքան հրապուրիչ մի անձի համար։

Մանոնը մի արտասովոր արարած եր։ Անկարելի յե յերևակայել մի աղջիկ, վորն այնքան քիչ սիրեր դրամը, ինչպես Մանոնը. սակայն դրա սոսկ պակասության յերկյուղը մի բոպե անգամ հանգիստ չեր տալիս նրան։ Նա սիրում եր միայն հաճույքը և կենսուրախ ժամանցը։ Նա յերբեք մի սու անգամ չեր ծախսի, յեթե կարելի լիներ զվարճանալ առանց դրամի։ Նա չեր ել հետաքրքրվում, թե ինչ դրության մեջ են մեր միջոցները, միայն թե որը հաճելի անցկացներ։ Մանոնը թղթախաղով չափից դուրս չեր տարվում, վոչ ել շլանում եր մեծ ծախսերի շուքով, այնպես վոր նրան բավարարելուց ավելի հեշտ բան չկար, միայն թե որը որին պետք եր ապահովել հաճելի զվարճությունները։ Սակայն մինչ այն աստիճան նրան անհրաժեշտ եյին այդ զվարճությունները, վոր առանց դրանց բացարձակապես անկարելի յեր ապավինել նրա տրամադրության և վստահել՝ հակառակներին։ Թեև նա ինձ սիրում եր քնքշագին և յես՝ նրա սեփական խոստովանությամբ՝ միակ մարդն եյի, վորն ի վիճակի յեր նրան լիովին ճաշակել տալու սիրո քաղցրությունը, այնուամենայնիվ գրեթե համոզված եյի, վոր նրա քնքշությունը՝ վորոշ յերկյուղի ազդեցության տակ՝ չեր կարող անդրդվելի մնալ։ Նա ինձ կգերադասեր վողջ աշխարհից, յեթե միայն յես թեկուզ միջակ կարողություն ունենայի. սակայն յես ամենևին չեյի տարակուսում, վոր նա ինձ կլքի վորևե մի նոր դը Բ...ի համար, հենց վոր յես սոսկ ընդունակ կլինեմ նրան առաջարկել միմիայն իմ սիրո հարատևությունը և հավատարմությունս։

Ուստի յես վորոշեցի այնպես կարգավորել սեփական ծախսերս, վոր միշտ ի վիճակի լինեմ նրա պետքերը հոգալու, և ավելի շուտ ինձ զրկել հազար ու մի անհրաժեշտ բաներից, քան սահմանափակել նրան թեկուզ և շռայլության մեջ։ Ինձ ամենից շատ վախեցնում եր կառեթը, վորովհետև բնավ հնարավորություն չունեցի ձիեր և կառապան պահելու։

Իմ մտատանջության մասին հայտնեցի պարոն Լեսկոյին։ Ցես նրանից չեյի թագցրել, վոր մի բարեկամից հարյուր պիստոլ եյի ստացել։ Նա ինձ վերըստին հիշեցրեց, վոր յեթե ցանկանում եմ փորձել իմ բախտը թղթախաղում, նա հույս ունի, վոր մի հարյուր ֆրանկ բարեհաճորեն զոհաբերելով նրա ընկերներին հյուրասիրելու համար, ինձ կհաջողվի իր հանձնարարությամբ ընդունվել վարպետ խաղացողների ընկերության մեջ։ Չնայած դեպի խաբեությունն ունեցած իմ գարշանքին, յես ստիպված եյի համաձայնվել, դրդված անողոք անհրաժեշտությունից։

Նույն յերեկո պ. Լեսկոն ինձ՝ իբրև իր ազգականին ներկայացրեց նրանց։ Նա ավելացրեց, վոր յես առանձնապես տրամադրված եմ տանել թղթախաղում, վորովհետև բախտի շնորհների մեծ կարիք ունեմ։ Միևնույն ժամանակ, վորպեսզի հասկացնել տա, թե յես ամենահետին չքավորը չեմ, նա ասաց, վոր մտադիր եմ բոլորին ընթրիքի հրավիրելու։ Այս առաջարկությունն

ընդունվեց։ Ցեսնրանց շատ լավ հյուրասիրեցի։ Նրանք անվերջ խոսում էին իմ գեղեցկադիմությանն և յերջանիկ ձիրքերի մասին։ Միաբերան հաստատում էին, թե ինձնից շատ բան կարելի յե սպասել, թե իմ դեմքն այնքան ազնվություն և արտահայտում, վոր վոչ վոք ինձ չի կասկածի խարդախության մեջ։ Ի վերջո նրանք իրենց գոհունակությունն հայտնեցին պարոն Լեսկոյին՝ ընկերության մեջ այսպիսի մի շնորհալի նորեկի անդամագրության համար և ասպետներից մեկին հանձնարարեցին ուսուցել ինձ թղթախաղի անհրաժեշտ կանոնները և հրահանգները։

Իմ սիրադործությունների գլխավոր թատերաբեմը պիտի լիներ Տրանսիլվանյան հյուրանոցը, ուր մի դահլիճում դրված եր փարատնախաղի սեղանը, իսկ մյուս սրահներում խաղում էին զարերով. կային նաև ուրիշ թղթախաղեր։ Այս խաղատունը պահում եր իշխան Ռ...ն, վորն այն ժամանակ ապրում եր Կլանիայում և նրա սպանների մեծ մասը մեր ընկերության մեջ եր դասնրվում։ Թեպետ և ամաչում եմ խոստովանել, սակայն պետք է ասեմ, վոր քիչ ժամանակում մեծ ոգուտ քաղեցի ուսուցչիս դասերից. յես առանձնապես մեծ ճարպկություն ձեռք բերի թղթերը փոխարինելու շնորհքի մեջ. մի զույգ յերկար բազկակալների ոգնությամբ յես ամենասեռուն աչքերից անդամ աննկատելի կերպով խարդախում էի և ամենայն սառնասրտությամբ սնանկացնում բազմաթիվ ազնիվ խաղացողների։ Սույն արտակարգ ճարպիկությունն այն աստիճան բազմացրեց իմ կարողությունը, վոր մի քանի շաբաթից խոշոր դումարների տեր դարձա, չհաշված այն դրամները, վոր յես սիրահոժար կիսում էի իմ ընկերակիցների հետ։

Ցեսայլևս չեմ յերկյուղում Մանոնին պատմելու Շայոյի մեր կորստյան մասին, և այս անախորժ լուրից նրան սփոփելու համար մի կահավորված տուն վարձեցի, ուր սկսեցինք փարթամ ու անհոգ կյանք վարել։

Այս ամբողջ ժամանակվա ընթացքում Տիբերժը բաղմիցս այցելել եր ինձ։ Նրա բարոյական խրատանք-

ներին վերջ չկար։ Նա անդադար հիշեցնում եր այն ֆնասը, վոր յես պատճառում եմ իմ խղճմտանքին, պատվին ու կարողությանը։ Նրա նկատողությունները յես ընդունում եյի բարեկամարար և թեպետ բնավ տրամադիր չեյի հետևելու նրա խրատներին, այնուամենայնիվ մեծապես յերախտապարտ եյի նրան իր խանդավառ հոգատարության համար, վորովհետև գիտեյի, թե ինչ աղբյուրներից ե բղխում այն։ Շատ անգամ յես մտերմաբար ծաղրում եյի նրան Մանոնի ներկայությամբ և հորդորում չջանալ իր բծախնդրությամբ գերազանցել բազմաթիվ յեպիսկոպոսների և այլ կղերականների, վորոնք թե սիրուհի յեն պահում և թե բենեֆիցիա ստանում։ — «Դիտեցեք», — ասում եյի յես նրան, մատնանշելով իմ սիրուհու աչքերը, — «և ասացեք, կան այնպիսի հանցանքներ, վորոնք չարդարացվեն այսպիսի մի հրաշագեղ պատճառով»։ Նա համբերությունը չեր կորցնում. ընդհակառակը, անչափ մեծ եր այն։ Սակայն, յերբ տեսավ, վոր իմ հարստությունն որեցոր աճում ե և վոչ միայն յես նրան վերադարձրել եմ իր հարյուր պիստոլը, այլ մի նոր տուն վարձելով և կրկնապատկելով իմ ծախսերը, նորից թաղվում եմ ավելի մեծ հաճույքների մեջ, քան յերբևե, նա միանգամայն փոխեց իր խոսելու ձևը և վերաբերմունքը դեպի ինձ։ Նա զանգատվեց իմ քարսրտությունից, սպառնաց յերկնային պատժով և նախազուշակեց

ապագա իմ դժբախտությունները, վորոնք և շուտով հարվածեցին ինձ։ «Անկարելի յե», — ասում եր նա, — «վոր ձեր անառակ կյանքին անհրաժեշտ հարստությունները ձեռք բերված լինեն որինավոր ճանապարհով։ Դուք անարդարությամբ եք վաստակել դրանք և նույն յեղանակով էլ պիտի կորցնեք։ Ամեն ամենասարսափելի պատիժը կլինի թողնել, վոր դուք հանդարտ վայելեք դրանք։ Իմ բոլոր խորհուրդները», — ավելացրեց նա, — «իզուր անցան ձեզ համար. յես լավ եմ նախատեսում, վոր շուտով դրանք տաղտկալի պիտի յերևան ձեզ։ Մնաք բարով, ապերախտ և թուլամորթ բարեկամս։ Թող սովերների պես անհետանան ձեր հանցավոր հաճույքները։ Թող անվերադարձ կորչի ձեր բարեբախտությունն ու կարողությունը, և դուք մնաք մերկ ու միայնակ, վորպեսզի զգաք ձեզ խելահեղորեն արբեցնող բոլոր բարիքների ունայնությունը։ Այն ժամանակ դուք ինձ կգտնեք պատրաստակամ ձեզ սիրելու և ծառայելու. իսկ այսոր՝ յես խզում եմ ամեն մի հարաբերություն ձեզ հետ և արհամարհում այն կյանքը, վոր դուք եք վարում»։

Այս առաքելական քարոզը նա կարդաց իմ սենյակում Մանոնի ներկայությամբ։ Նա վոտքի կանգնեց, վոր հեռանա։ Ցես փորձեցի չթողնել նրան։ Սակայն Մանոնն ինձ կասեցրեց, ասելով թե բարեկամս խելագար է, վորին պետք է թույլ տալ հեռանալու։

Այնուամենայնիվ նրա խոսքերը վորոշ տպավորություն գործեցին ինձ վրա։ Այսպես, յես նշում եմ այն բազմաթիվ առիթները, յերբ իմ սիրտը տենչում եր վերադառնալ դեպի բարին, վորովհետև ապագայում յես այս հուշերին եյի պարտական իմ ուժի մի վորոշ մասով, վորն ինձ ոգնեց տանելու իմ կյանքի ամենացավալի պարագաները։

Մանոնի փաղաքշանքները մի ակնթարթում փարատեցին այս տեսակցության ինձ պատճառած վիշտը։ Մենք շարունակեցինք վարել հաճույքներից ու սիրուց հյուսված մի կյանք։ Մեր հարստության աճումը կրկնա-

պատկեց մեր փոխադարձ դուրգուրանքը։ Վեներան և բախտը յերբևիցե մեզնից ավելի յերջանիկ ստրուկներ չեն ունեցել։ Ասումած իմ, ինչպես կարելի յե աշխարհն անվանել տառապանքների անդաստան, յերբ այստեղ մարդիկ կարող են ճաշակել այնքան քաղցրանույշ վայելքներ։ Սակայն, ավաղ, դրանք սրընթաց թռչելու հատկություն ունեն. ուրիշ ինչ յերանություն կարելի յե գերադասել դրանցից, յեթե դրանք իրենց ընությամբ հարատև լինեյին։ Իմ և Մանոնի վայելքներին ել վիճակված եր նույն ընդհանուր բախտը, այսինքն՝ այդ հաճույքները յերկար չտևեցին և դառն կսկիծներ պատճառեցին մեզ։

Թղթախաղում յես այնպիսի խոշոր գումարներ տարա, վոր մտածում եյի մի մասը այլևս պահ տալ սեղանավորին։ Մեր ծառաները գիտեյին իմ հաջողությունների մասին, մանավանդ իմ սպասավորը և Մանոնի աղախինը, վորոնց ներկայությամբ հաճախ մենք խոսակցում եյինք առանց զգուշանալու։ Աղախինը գեղեցիկ եր։ Իմ սպասավորը սիրահարվել եր նրա վրա։ Նրանք գործ ունեյին յերիտասարդ ու ներողամիտ տերերի հետ, վորոնց, ինչպես նրանք կարծում եյին, հեշտությամբ կարելի յեր խաբել։ Նրանք հղացան մեզ կողոպտելու միտքը և այդ իրագործեցին այնքան չարամտորեն և այնպիսի դրության մեջ նետեցին մեզ, վորից այնուհետև յերբեք չկարողացանք դուրս գալ։

Մի անգամ պարոն Լեսկոն մեզ ընթրիքի յեր հրավիրել իր մոտ և, յերբ մենք տուն վերադարձանք, մոտավորապես կես գիշեր եր։ Ցես կանչեցի իմ սպասավորին, Մանոնը՝ իր աղախնին. չերևաց վոչ մեկը և վոչ մյուսը։ Իմացանք, վոր նրանք ութ ժամ առաջ հեռացել են տնից, իրենց հետ վերցնելով մի քանի արկղներ, նրանց ասելով, ինձանից ստացած կարգադրության համաձայն։ Ցես մասամբ նախազգացի ճշմարտությունը. սակայն այն, ինչ տեսա սենյակ մտնելիս, գերազանցեց իմ բոլոր կասկածները։ Իմ առանձնասենյակի փականքը կոտրել եյին և դրամս ու բոլոր զգեստներս գողացել։ Մինչդեռ յես մտածում եյի այս դեպքի մասին, Մանոնը սաստիկ հուզված յեկավ ինձ հաղորդելու, վոր նույն կողոպուտը կատարվել է և՛ իր սենյակում։

Հարվածն այն աստիճան անողորմ եր, վոր միայն բանականության արտակարգ ճիգն արգելեց ինձ անձնատուր չլինել լաց ու կոծին։ Ցերկյուղը, վոր իմ վհատությամբ կհամակվի և՛ Մանոնը, ստիպեց ինձ արտաքուստ անվրդով կերպարանք ցույց տալ։ Կատակով յես նրան ասացի, թե Տրանսիլվանյան հյուրանոցում վորևե ձախողակ խաղացող կհատուցի մեր ցնասները։ Մինչդեռ ինձ թվաց, թե նա այն աստիճան հուզված է մեզ պատահած դժբախտությունից, վոր նրա տրամադրությունն ինձ շատ ավելի վշտացրեց, քան իմ կեղծ զվարճությունը կարող եր նրան զերծ պահել հուսալքությունից։ «Մենք կործանվեցինք»,—ասաց նա, արցունքները աչքերին։ Իզուր յես աշխատում եյի նրան մխիթարել իմ գգվանքներով։ Սեփական արտասուքներս մատնում եյին վհատությունս ու վիշտս։ Հիրավի, այնպես հիմնովին եյին կողոպտել մեզ, վոր մի շապիկ անգամ չեյին թողել։

Ցես վորոշեցի իսկույն ևթ կանչել պարոն Լեսկոյին։ Նա ինձ խորհուրդ տվեց անմիջապես դիմել պ. վոստիկանապետին և Փարիզի գլխավոր դատավորին։ Ցեսայդ կատարեցի, սակայն՝ մեծապես ցնսելով ինձ, վորովհետև վոչ միայն դիմումս և իմ խնդրանքով արդա-

բաղատությանն այս պահապանների արած քայլերը վոչ մի հետևանք չունեցան, այլ այսպիսով յես ժամանակ տվի Լեսկոյին խորհրդակցելու իր քրոջ հետ և իմ բացակայությամբ նրան ներշնչել մի սարսափելի վճիռ։ Նա Մանոնին պատմում է մի ծեր տռիասեր՝ պ. դը Գ... Մ... ի մասին, վորը շռայլորեն հատուցում եր իր հաճույքների համար և այնքան համոզիչ կերպով է մատնանշում նրան այդ պարոնի սիրուհին լինելու առավելությունները, վոր Մանոնը՝ միանգամայն ընկճված մեր դժբախտությունից՝ համաձայնվում է նրա բոլոր ասածներին։ Սույն պատվավոր գործարքը կնքվել եր իմ վերադարձից առաջ, իսկ իրագործումը հետաձգվել մյուս որվան, վորպեսզի Լեսկոն նախազգուշացնի պարոն դը Գ... Մ... ին։

Ցերը յես վերադարձա, Լեսկոն մեր տանը սպասում եր ինձ, բայց Մանոնն առանձնացել եր իր սենյակը քնելու և հրամայել եր սպասավորին ասել ինձ, վոր հանգստի կարիք ունի և խնդրում է չխանգարել իրեն այդ գիշեր։ Լեսկոն հեռացավ ինձնից, առաջարկելով մի քանի պիտոլ, վոր և յես ընդունեցի։

Ցերը անկողին մտա, մոտ ժամի չորսն եր։ Ցեսնորից յերկար ժամանակ խորհեցի մեր կարողությունը վերականգնելու միջոցների մասին և այնքան ուշ քնեցի, վոր միայն ժամի տասնմեկին կամ կեսորին զարթնեցի։ Հապճեպ վեր կացա, վորպեսզի գնամ իմա-

նալու Մանոնի առողջության մասին. ինձ ասացին, թե մի ժամ առաջ նա տանից մեկնել է իր յեղբոր հետ, վորը նրա յետևից յեկել եր կառքով։ Թեպետ այդպիսի մի կառարշավ զբոսանքը Լեսկոյի հետ ինձ խորհրդավոր թվաց, այնուամենայնիվ յես ճնշում գործ դրի ինձ վրա՝ առայժմ վանելու կասկածները։ Մի քանի ժամ անցկացրի ընթերցանությամբ. ի վերջո, չկարողանալով այլևս զսպել իմ հուզմունքը, սկսեցի մեծ-մեծ քայլերով յերթևեկել բնակարանում։ Մանոնի սենյակում սեղանի վրա մի փակ նամակ նկատեցի։ Նամակն ինձ եր ուղղված. ձեռագիրը նրանն եր։ Ցես բացի այն մահացու մի սարսուռով. ահա թե ինչ եր ասված այնտեղ.

«Ցերդվում եմ քեզ, իմ սիրելի ասպետ, վոր դու «սրտիս կուռքն ես, և վողջ աշխարհում միայն յես «կարող եմ սիրել քեզ այնպես, ինչպես իրոք սիրում «եմ. սակայն դու չես տեսնում, իմ խեղճ, սիրելի «հոգյակս, վոր մեր արդի վիճակում հավատարմու«թյունն անմիտ առաքինություն է։ Մթթե դու կար«ծում ես, թե կարելի յե քնքույշ լինել, յերբ պակա«սում է հացը։ Քաղցն ինձ համար մի ճակատագրական «սխալանքի պատճառ կարող է լինել. մի որ յես կտամ «իմ վերջին շունչը, կարծելով, վոր դա սիրո հառա«չանքն է։ Ցես քեզ պաշտում եմ, հավատա ինձ. սա«կայն թույլ տուր ինձ մի առ ժամանակ հարթել մեր «դրամական դժվարությունները։ Վայ նրան, ով կընկնի «իմ ցանցը։ Ցես աշխատում եմ, վորպեսզի հարստաց«նեմ և յերջանկացնեմ ասպետիս։ Իմ յեղբայրը քեզ «լուրեր կհաղորդի քո Մանոնի մասին. նա քեզ կասի, «թե վորքան յես արտասվել եմ քեզ լքելու անհրաժեշ«տության պատճառով»։

Այս նամակի ընթերցումից հետո յես ընկա մի այնպիսի դրության մեջ, վոր միանգամայն դժվարանում եմ նկարագրել, վորովհետև մինչև այսոր էլ չգիտեմ, թե ինչպիսի զգացումներով եյի այն ժամանակ փոթորկված։ Դա մեկն եր այն բացառիկ կացություն-

ներից, որոնց նմանը վոչ վոք չի ապրել յերբևե. չի կարելի դրանք բացատրել ուրիշներին, վորովհետև ուրիշները չեն կարող գաղափար կազմել այդ մասին. բացի դրանից, ինքդ ել դժվարանում ես լավ ըմբռնել դրանք, վորովհետև լինելով յեզակի իրենց տեսակում՝ հիշողության մեջ դրանք չեն հարակցվում այլ ապրումների հետ, և վոչ ել կարելի յե մինչև իսկ դրանք համեմատել վորևե ծանոթ զգացման հետ։ Սակայն, ինչպիսին ել վոր լիներ իմ կացությունը, համենայն դեպս պարզ եր, վոր նա պարունակում եր և՛ ցավ, և՛ զայրույթ, և՛ խանդ, և՛ ամոթ։ Վորքան յես յերջանիկ կլինեյի, յեթե այն չպարունակեր մեծ չափով և՛ սեր։

«Մանոնն ինձ սիրում ե, յես հավատում եմ դրան։ Սակայն չե՞ վոր նա պետք ե հրեշ լինի», — բացականչեցի յես, — «վորպեսզի ատի ինձ։ Կա՞ն արդյոք այնպիսի իրավունքներ մի սրտի նկատմամբ, վոր յես չունենամ նրա հանդեպ։ Ել ի՞նչ ե մնացել անելու այն ամենից հետո, ինչ յես զոհաբերեցի նրան։ Այնուամենայնիվ նա ինձ լքում ե. ապերախտը կարծում ե, թե իրեն իմ կշտամբանքներից զերծ ե պահում, ասելով թե չի դադարել ինձ սիրելուց։ Նա քաղցից ե վախենում։ Ո՞, սիրո ատված, զգացումների ինչպիսի գռեհկություն և վո՞րպիսի հատուցում՝ իմ սեփական նրբազգացությանը։ Քաղցն ինձ չահաբեկեց, յերբ յես, ի սեր նրա, հաճույքամբ ինձ յենթարկեցի դրա փորձանք-

ներին՝ հրաժարվելով իմ կարողությունից ու հայրական տան քաղցը անդրբրից։ Ցեռ, վոր ինձ զրկել եմ ամենաանհրաժեշտ պետքերից, վորպեսզի բավարարեմ նրա չնչին ցանկություններն ու քմահաճույքները։ Նա ասում է, թե ինձ պաշտում է։ Ցեթե, հիրավի, դու ինձ պաշտեյիր, յերախտամոռ, գիտեմ, վոր դու կխորհրդակցեյիր ինձ հետ. դեթ դու ինձ չեյիր լքի առանց հրաժեշտի։ Ի՛նձ պետք է հարցնել, թե ինչպիսի դաժան տանջանքների յե յենթարկվում մարդս, յերբ բաժանվում է իր պաշտած եյակից։ Պետք է բանականությունից զրկված լինես, վորպեսզի քեզ հոժարակամ յենթարկես դրանց»։

Իմ գանգատներն ընդհատեց մեկի այցելությունը, վորին յես բնավ չեյի սպասում. այցելողը Լեսկոն եր։ «Դահիճ»,— գոչեցի յես, ձեռքս տանելով սուսերիս,— «ո՞ւր է Մանոնը, ինչ արիր նրան»։ Նա ահարեկվեց իմ շարժումից։ Պատասխանեց, վոր յեթե նրան այդպես եմ ընդունում, յերբ գալիս է ինձ հաշիվ տալու այն խոշորագույն ծառայության համար, վոր կարողացել է ինձ մատուցել, ապա նա ստիպված է իսկույն հեռանալ և դրանից հետո ել յերբեք իր վոտքն իմ տունը չդնել։ Ցես վազեցի դեպի դուռը, վորը և պինդ փակեցի։ «Զկարծես», ասացի յես դառնալով դեպի նա,— «թե քեզ կհաջողվի մի անգամ ևս ինձ խաբել ու հեքիաթներով կերակրել։ Պաշտպանիր քո կյանքը կամ ինձ վերադարձրու Մանոնին»։— «Ե՞, հե, վերքան դուք դյուրաբորբոք եք»,— առարկեց նա,— «յես ել հենց այդ նպատակով եմ յեկել։ Ցեկել եմ ձեզ հայտնելու մի յերջանկության մասին, վորը ձեր մտքով անգամ չի անցել, և վորի համար դուք թերևս ձեզ պարտաճանաչ պիտի համարեք դեպի ինձ»։ Ցես պահանջեցի, վոր նա անմիջապես բացատրի, թե ինչ է ուզում ասել։

Նա ինձ պատմեց, վոր Մանոնը չկարողանալով տանել թշվառության յերկյուղը և մանավանդ այն միտքը, վոր մենք ստիպված պիտի լինենք միանգամից փոխելու մեր ապրելակերպը, խնդրել է իրեն

հնարավորություն տալ ծանոթանալու պ. դը Գ... Մ... ի հետ, վորի մասին ասում են, վոր շատ առատաձեռն ե։ Նա, իհարկե, չասաց, վոր ինքն ե այդ խորհուրդը տվել Մանոնին, և վոչ էլ այն, վոր ինքն ե ուզի հարթել, նախքան նրան այնտեղ առաջնորդելը։ — «Ցեռ այս առավոտ»,—շարունակեց նա, — «Մանոնին տարա նրա մոտ և այդ արժանապատիվ մարդն այնքան հրապուրվեց նրա գեղեցկությամբ, վոր հրավիրեց նրան նախապես գնալ իր ամառանոցը, ուր նա ցանկանում ե անցկացնել մի քանի որ։ Իսկ յես,—շարունակեց Լեսկոն,— «մի ակնթարթում ըմբռնելով, թե ինչ ոգուտ կարելի յե քաղել ձեզ համար այս առիթից, ճարտարությամբ հասկացրի նրան, վոր Մանոնը խոշոր կորուստներ ե ունեցել, և այն աստիճան շոյեցի նրա մեծահոգությունը, վոր նա ամեն բանից առաջ յերկու հարյուր պիստոլ նվիրեց Մանոնին։ Ցեռ նրան ասացի, վոր առայժմս դա հրաշալի յե, սակայն ապագայում մեծ ծախսեր են սպասում քրոջս. նա իր խնամքի տակ ե վերցրել մեր հոր և մոր մահից հետո մնացած փոքրիկ յեղբորը և, յեթե ինքը Մանոնին արժանի յե համարում իր հարգանքին, ապա պետք ե հուսալ, թե չպիտի թողնի, վոր իմ քույրը մտատանջվի այն խեղճ յերեխայի համար, վորի կյանքն անբաժան ե իր կյանքից։ Պարոն Գ... Մ...ն զգացվեց իմ պատմածից։ Նա պարտավորվեց մի հարմար տուն վարձել ձեզ և Մա-

նոնի համար, վորովհետև այդ դուք եք մեր խեղճ, փոքրիկ վորբ յեղբայրը։ Նա խոստացավ պատշաճորեն կահավորել տունը և ձեզ նշանակել չորս հարյուր լիա-հնչյուն ֆունտ ամսաթոշակ, վորն անում է իմ հաշ-վով չորս հազար ութ հարյուր՝ մի տարում։ Գյուղ մեկնելուց առաջ նա հրամայեց իր կառավարիչին մի տուն վորոնել և մինչև իր վերադարձը հոդ տանել, վոր ամեն ինչ այնտեղ պատրաստ լինի։ Ցեվ այն ժա-մանակ դուք վերստին կտեսնեք Մանոնին, վորն ինձ հանձնարարել է իր փոխարեն ձեզ հազար անգամ համ-բուրել և հավաստիացնել, վոր նա ձեզ սիրում է ավելի շատ, քան յերբևէ»։

Հուսաբեկ յես նստեցի և խորասուզվեցի դառն մտածմունքների մեջ, թե ինչ տարորինակ, հեղհեղուկ ընթացք ունի իմ վիճակը։ Զանազան զգացումներ ու մի անասելի անորոշ կացություն պատեցին ինձ և յես յերկար ժամանակ վոչ մի պատասխան չկարողացա տալ Լեսկոյի հարցումների տարափին։ Այդ վայրկյա-նում պատիվը և առաքինությունն ինձ ստիպեցին խղճի խայթ զգալու և յես հառաչելով մի հետադարձ հայացք ձգեցի դեպի Ամիյեն՝ դեպի իմ հայրենական տունը, դեպի Սեն-Սյուլպիս և դեպի այն բոլոր վայ-րերը, ուր յես ապրել եյի անմեղության մեջ։ Ի՞նչ-պիսի անսահման տարածություն եր ինձ բաժանում նախկին յերջանիկ կացությունից։ Ցես այն տեսնում եյի հեռվից։ Նա յերևում եր վորպես մի ստվեր, վորը հարուցում եր իմ կսկիծն ու տանջանքները, և վորը սա-կայն չափազանց թույլ եր, վորպեսզի կարողանար հա-րուցել և՛ իմ յեռանդը։ — «Ի՞նչ ճակատագիր»,— ասացի յես մտքումս,— «այս աստիճան հանցագործ ե դարձրել ինձ։ Սերն անմեղ մի կիրք ե։ Ի՞նչպես դա ինձ համար յեղավ թշվառության ու անառակության աղբյուր։ Ո՞վ եր ինձ արգելում անդորր ու առաքինի ապրել Մանոնի հետ։ Ինչի համար յես նրա հետ չամուսնացա, նախ-քան նրա սիրո ապացույցն ստանալը։ Մթթե ինձ քնքշագին սիրող հայրս չեր համաձայնվի, յեթե յես

թախանձելի նրան որինավոր պնդումով։ Ո՜հ, հայրս ինքը կգուրգուրեր Մանոնին վորպես հրաշագեղ մի աղջկա, վորն ավելի քան արժանի է իր վորդու կինը լինելու. դա յերջանիկ կլինեյի Մանոնի սիրով, հորս գուրգուրանքով, աղնվաբարո մարդկանց հարգանքով, բախտի բարիքներով՝ և առաքինության անդորրությամբ։ Ո՜, իմ չարաբաստիկ հեղհեղուկ վիճակ։ Ի՞նչպիսի ստոր մարդ են ուզում ինձ դարձնել։ Ի՞նչ, դա նրա հետ պետք է կիսեմ... Սակայն կարող եմ արդյոք յերկմտել, քանի վոր ինքը Մանոնն է այդպես կարգադրել, և քանի վոր դա կարող եմ կորցնել նրան, յեթե չհամաձայնվեմ այդ նվաստացուցիչ առաջարկության հետ։ «Պարոն Լեսկո»,—բացականչեցի դա, աչքերս փակելով, կարծես այս ցավալի մտքերն ինձնից վանելու նպատակով,—«յեթե դուք մտադրվել եք ինձ ծառայություն մատուցել, ապա շնորհակալությունս եմ ձեզ հայտնում։ Իհարկե, դուք կարող եյիք այդ անել մի ուրիշ, ավելի աղնիվ ճանապարհով։ Բայց դա արդեն կատարվել է, այնպես չե՞։ Այժմ մեզ մնում է միայն խորհել, թե ինչպես ոգտվենք ձեր հոգատարությունից և ինչպես ոգտագործենք ձեր ծրագիրը»։

Լեսկոն, վորին իմ զայրույթն ու դրանից հետո տիրող յերկար լռությունը շփոթել եր, մեծապես ուրախացավ, լսելով իմ՝ իր սպասածից բոլորովին տարբեր՝ վճիռը, վորը նրան անշուշտ յերկյուղ եր պատճառել.

Նա բնավ քաջասիրտ չեր։ Հետագայում այդ մասին յես ամենահամոզիչ փաստեր ունեցա։ — «Այո՛, այո՛»,— պատասխանեց նա շտապ,—«յես շատ խոշոր ծառայություն մատուցեցի ձեզ, և կտեսնեք, վոր ապագայում դրանից մենք ավելի մեծ ոգուտ կքաղենք, քան դուք սպասում եք»։ Մենք սկսեցինք խորհրդակցել, թե ինչ կերպ կարելի կլիներ կանխել պ. Գ... Մ...ի կասկածները, վոր նա կարող եր ունենալ մեր ազգակցության վերաբերյալ, յերբ տեսներ, վոր յես ավելի բարձրահասակ եմ և թերևս ավելի տարիքոտ, քան նա պատկերացնում եր իրեն։ Մենք ուրիշ հնար չգտանք, քան նրա առաջ գավառացու միամիտ կերպարանք ընդունել և նրան հավատացնել, վոր յես դիտավորություն ունեմ հոգևորական դառնալու և այս նպատակով ամեն որ ճեմարան եմ գնում։ Բացի դրանից՝ մենք վորոշեցինք, վոր առաջին անգամ, յերբ պատիվ կունենամ նրան ներկայանալու, հնարավորին չափ վատ կհագնվեմ։

Պարոն դը Գ... Մ...ն քաղաք վերադարձավ յերեքչորս որից հետո։ Նա անձամբ Մանոնին ուղեկցեց իր կառավարչի վարձած և խնամքով կահավորած տունը։ Նրա վերադարձի մասին Մանոնն անմիջապես տեղեկացրեց Լեսկոյին, իսկ վերջինս հաղորդեց ինձ այդ լուրը և մենք յերկուսով մեկնեցինք Մանոնի մոտ։ Մեր սիրեկանն արդեն դուրս եր յեկել տանից։

Չնայած այն անտրտունջ խոնարհության, վորով յես հպատակվեցի Մանոնի ցանկություններին, այնուամենայնիվ չկարողացա զսպել սրտիս մորմոքը, յերբ նորից տեսա նրան։ Տխուր ու հոգեառանջ վիճակում ներկայացա նրան։ Նրան վերստին տեսնելու ուրախությունս բոլորովին չփարատեց իր անհավատարմությունից կրած իմ վիշտը։ Ընդհակառակը, ինքը կարծես հիացած եր ինձ նորից տեսնելու հաճույքից։ Նա ինձ կշտամբեց սառնության համար։ Յես չկարողացա ինձ զսպել և նրան նենգ ու սիրադրուժ անվանեցի. այս խոսքերը արտասանեցի հառաչանքով։

Նա նախ ծիծաղեց իմ անշուք արտաքինի վրա, սակայն յերբ տեսավ իր դեմքին հառած անթարթ հայացքս և իմ խոր վիշտը՝ կրած այս փոփոխության հետևանքով, վոր միանգամայն անհարիր եր իմ բնավորության և տենչանքներին; — նա լուռ առանձնացավ իր սենյակը։ Մի րոպե հետո յես հետևեցի նրան։ Նա դառն արտասվում եր։ Ցես հարցրի արտասվելու պատճառը։— «Քեզ դա լավ հայտնի պետք է լինի»,—պատասխանեց նա։ — «Կարող եմ արդյոք յես ապրել, յերբ իմ տեսքը քեզ ուրիշ բան չի ներշնչում, քան տխրություն ու վիշտ։ Ահա մի ժամ է, ինչ դու այստեղ ես, սակայն ինձ վոչ մի անգամ չդուրգուրեցիր, մինչդեռ իմ գգվանքներն ընդունեցիր սուլթանի վեհությամբ՝ կարծես թե սերայում»։

«Լսեցեք, Մանոնն»,— ասացի յես, գրկելով նրան.— «չեմ կարող ձեզնից թաքցնել, վոր իմ սիրտը մահացու խոցվել է։ Այժմ յես չեմ խոսում այն խոր վշտի մասին, վոր ինձ պատճառել է ձեր անսպասելի փախուստը, վոչ էլ այն անգթության մասին, վորով դուք առանց մխիթարական մի խոսքի լքեցիք ինձ՝ գիշերն ուրիշի անչկողնում անցկացնելով։ Ձեր ներկայության համայրն ընդունակ է ինձ ստիպել մոռանալու դեռ ավելին։ Բայց մթթե դուք կարծում եք, թե յես կարող եմ առանց հառաչանքի ու արցունքի»,—շարունակեցի յես լալագին,— «մտածել այն տխուր ու թշվառ կյանքի մասին, վորը յես այստեղ վարելու յեմ ձեր կամքի համաձայն։ Մի

կողմ թողնենք իմ ծագումն ու պատիվը, այս բոլորը չափազանց թույլ հիմքեր են, վորպեսզի կարենան մրցել իմ սիրո հետ։ Մթթե չեք պատկերացնում ձեզ, թե ինչպես սերը մորմոքում է, յերբ տեսնում է իրեն այդքան վատ վարձատրված կամ ավելի շուտ անգթորեն խաչտանգված՝ յերախտամոռ ու դաժան սիրուհուց»։

Նա ընդհատեց։ «Լսեցեք ասպետս», — ասաց նա, — «անոգուտ է ինձ տանջել կշտամբանքներով, վորոնք խոցում են սիրտս, յերբ դրանք ձեզանից եմ լսում։ Ցեսս տեսնում եմ, թե ինչն է ձեզ վիրավորում։ Ցեսս հույս ունեյի, թե դուք կհամաձայնվեք այն ծրագրի հետ, վոր կառուցել եյի մեր կարողությունը փոքր ինչ վերականգնելու համար և միայն ձեր փափկանկատությունը խնայելու նկատառումով յես սկսեցի այն իրագործել առանց ձեր մասնակցության. բայց յես դրանից հրաժարվում եմ, քանի վոր դուք չեք տալիս ձեր հավանությունը»։ Նա ավելացրեց, թե այժմ ինձանից խնդրում է միայն մի բան՝ համբերել մինչև յերեկո, վորովհետև ինքն արդեն յերկու հարյուր ալիստոլ ստացել է իր ծեր սիրեկանից, վորը նրան խոստացել է յերեկոյան բերել մի հրաշալի մարգարտյա մանյակ և ուրիշ գոհարներ, ապա նաև խոստացած տարեկան թոշակի կեսը։— «Ժամանակ տվեք ինձ», — ասաց նա, — «վոր յես ստանամ այս նվերները. յերդվում եմ ձեզ, վոր նա վոչ մի հիմք չունի պարծենալու, թե վայելել է իմ շնորհները, վորովհետև յես այդ նրան խոստացել եմ քաղաք վերադառնալուց հետո։ Ճիշտ է, նա միլիոն և ավելի անգամ համբուրել է իմ ձեռները և միանգամայն արդարացի յեն, վոր նա վճարի այդ հաճույքի համար. հինգ կամ վեց հազար ֆրանկ մի արտակարգ վճար չե՝ նկատի ունենալով նրա հարստությունն ու տարիքը»։

Նրա վորոշումն ինձ շատ ավելի հաճելի յեր, քան հինգ հազար ֆրանկ ստանալու հույսը։ Ցեսս առիթ ունեցա համոզվելու, վոր իմ սիրտը տակավին ամբողջապես չի կորցրել պատվի զգացումը, քանի վոր այդքան հրճվում է ամոթից խուսափելու համար։ Սակայն յես ծնված

եմ վաղանցուկ բերկրանքի և տևական տառապանքների համար։ Ճակատագիրն ինձ փրկեց մի վիհից՝ վորպեսզի նետի մի ուրիշ անդունդ։ Ցերբ հազար ու մի փաղաքշանքով յես իմ յերջանկությունը հայտնեցի Մանոնին նրա այդ շրջադարձի առթիվ, յես ավելացրի, վոր պետք է այս մասին տեղեկացնել պ. Լեսկոյին, վորպեսզի նրա հետ համաձայնեցնենք մեր անելիք քայլերը։ Սկզբում Լեսկոն փոքր ինչ մտմտաց. սակայն չորս-հինգ հազար ֆրանկ հնչուն դրամը դրդեցին նրան ուրախությամբ ընդունելու մեր առաջադրած ծրագիրը։ Վորոշեցինք, վոր բոլորս ել կգնանք ընթրիքի պ. դը Գ... Մ...ի մոտ, այդ ևս յերկու պատճառով. նախ՝ վորպեսզի մի քիչ զվարճանանք՝ ինձ ձևացնելով վորպես Մանոնի դպրոցական յեղբայրը, յերկրորդ՝ վորպեսզի թույլ չտանք ցոփ ծերուկին չափից դուրս ազատ վարվել սիրուհուս հետ, յենթադրելով՝ թե նա այդ իրավունքը գնել է իր այնքան առատ կանխավճարով։ Լեսկոն և յես պետք է հեռանայինք, յերբ Գ... Մ... ն բարձրանար իր սենյակը, հուսալով անցկացնել գիշերը, իսկ Մանոնը փոխանակ նրան հետևելու, խոստացավ մեր յետևից դուրս գալ տանից և գիշերն անցկացնել ինձ հետ։ Լեսկոն հանձն առավ ապահովել, վոր մեր կառքը ճիշտ վորոշված ժամին պատրաստ լինի դռան առաջ։

Ցերբ ընթրիքի ժամանակը հասավ, պ. դը Գ... Մ...ն իրեն յերկար սպասել չտվեց։ Լեսկոն քրոջ հետ դահլի-

ճում էր։ Ծերուկը վողջունեց իր գեղանի սիրուհուն՝ նվիրաբերելով նրան մի մարգարտյա մանյակ, ապարանջաններ, ողեր, վորոնք առնվազն հազար եկյու արժեին։ Այնուհետև նա հնչուն վոսկով հաշվեց յերկու հազար չորս հարյուր ֆունտ, վորը նշանակած թոշակի կեսն էր։ Նա իր ընծաները համեմեց բյուր հաճոյախոսություններով՝ հյուսված հին արքունի վոճով։ Մանոնը չկարողացավ նրան մերժել մի քանի համբույր. դրանով նա իրավունք էր ձեռք բերում այն դրամի վրա, վոր ծերուկը տալիս էր նրան։ Ցեսդրսում, դռան մոտ՝ ականջ եյի դնում սպասելով, վոր Լեսկոն ինձ նշան անի ներս մտնելու։

Նա յեկավ իմ յետևից և ձեռքիցս բռնած մտցրեց դահլիճ, յերբ Մանոնն արդեն ստացած դրամն ու զոհարները թաքցրել էր իր արկղիկում։ Նա ինձ տարավ պ. դը Գ... Մ...ի մոտ և՝ հրամայեց խոր գլուխ տալ։ Ցեսյերեք թե չորս անգամ խոնարհվեցի նրա առաջ։ «Ներողամիտ յեղեք, պարոն», — ասաց Լեսկոն, — «յերեխան տակավին բոլորովին անտաշ է։ Ինչպես տեսնում եք, նա դեռևս չի տիրապետում Փարիզի նիստ ու կացին. սակայն մենք հույս ունենք, վոր սովորությունը կկոկի նրան։—Դուք պատիվ պիտի ունենաք պարոնին հաճախ այստեղ տեսնելու», — ավելացրեց նա, շրջվելով դեպի ինձ, — «աշխատեցեք լավ ոգտվել այսպիսի մի աքանչելի որինակից»։

Ծեր սիրեկանը կարծես հաճույքով էր ինձ դիտում։ Նա յերկու թե յերեք անգամ թեթև շոյեց իմ այտերը, ասելով, վոր յես գեղադեմ տղա յեմ, ուստի Փարիզում միշտ պետք է զգույշ լինեմ, վորովհետև այստեղ յերիտասարդ տղամարդիկ շատ դյուրությամբ են անձնատուր լինում անառակությանն։ Լեսկոն նրան վստահացրեց, վոր յես ի բնե չափազանց պարկեշտ մի տղա յեմ և միայն տենչում եմ քահանա դառնալ. վոր իմ միակ հաճույքը գտնում եմ փոքրիկ մատուռներ կառուցելու խաղի մեջ։ — «Ցեստեսնում եմ, վոր նա նմանում է Մանոնին», — ասաց ծերուկը՝ ծնոտս բռնելով։

Յես նրան պատասխանեցի՝ դեմքիս միամիտ արտահայտություն տալով. — «այդ նրանից է պարոն, վոր մենք արյունակից ենք և յես սիրում եմ իմ քրոջն ինչպես սեփական անձս»։ — «Դուք լռում եք», — ասաց նա Լեսկոյին, — «խելոք տղա յես։ Ափսոս, վոր նա հասարակության մեջ քիչ է յեղել»։ — «Վոչ, պարոն», — առարկեցի յես, — «մեր յեկեղեցիներում մեծ բազմության հետ եմ շփվել և հավատացած եմ, վոր Փարիզում ինձնից տխմար շատ մարդիկ պիտի տեսնեմ»։ «Տեսնում եք», — ավելացրեց նա, միշտ խոսքն ուղղելով Լեսկոյին, — «դավառացի տղայի համար դա սքանչելի յե»։

Ընթրիքի ժամանակ մեր բոլոր խոսակցությունը դրեթե ընթացավ այս յեղանակով։ Զարաճճի Մանոնն իր անդուսպ քրքիջներով մի քանի անգամ քիչ մնայ խորտակեր մեր ծրագիրը։ Ընթրիքի ընթացքում յես առիթ գտա ծերունուն անելու իր սեփական պատմությունը և նրան սպառնացող չարաբաստիկ բախտը։ Լեսկոն և Մանոնը դողում էին իմ պատմած ժամանակ, մանավանդ, յերբ յես Գ... Մ...ի ճշգրիտ պատկերն էլի ուրվագծում. սակայն ինքնասիրությունն արգելք հանդիսացավ նրան այդ պատկերի մեջ ճանաչել իրեն և յես իմ պատմությունն այնպիսի ճարպկությամբ վերջացրի, վոր նա ինքն առաջինը նշեց, թե դա շատ զվարճալի յե։ Դուք հետագայում կտեսնեք, վոր այս արտակարգ դիպվածի մասին այսքան յերկար խոսելս անհիմն չե։

Վերջապես, երբ քնելու ժամանակը եկավ, ծերունին սկսեց խոսել սիրո և իր անհամբերության մասին։ Լեսկոն և յես հեռացանք։ Ծերունուն առաջնորդեցին իր սենյակը. իսկ Մանոնը տնից վորոշ պատրվակով դուրս գալով, յեկավ միացավ մեզ։ Ցերեկ-չորս տուն այդտեղից ցած մեզ սպասող կառքն ուղղվեց դեպի մեզ։ Մի ակնթարթում մենք հեռացանք այդ թաղից։

Թեպետ և իմ աչքում այս վարմունքն իսկական խաբեություն եր, այնուամենայնիվ դա ամենից անազնիվ արարքը չեր, վորի համար պարտավորվեյի ինձ կըշտամբելու։ Ինձ շատ ավելի մեծ խղճահարություն եր պատճառում այն դրամը, վոր տանում եյի թղթախաղում։ Ի դեպ, մենք վոչ մի ոգուտ չքաղեցինք վոչ մեկից և վոչ մյուսից և յերկինքն այնպես տնորինեց, վոր այս յերկու խարդախությունից փոքրագույնն ավելի խրատությամբ պատժվեց։

Պարոն դը Գ... Մ...ն շատ շուտ խելքի ընկավ, վոր ինքը խաբեության զոհ և յեղել։ Զգիտեմ՝ արդյոք հենց այն յերեկո նա դիմեց վորևե քայլի՝ մեզ գրտնելու համար. նա բավականին լայն կապեր ուներ, վորոնք ապահովում եյին նրա ճիգերի շուտափույթ հաջողությունը, իսկ մենք բավականին անխոհեմ գտնվեցինք, հույս դնելով Փարիզի մեծության և մեր ու ծերունու թաղերի միջև յեղած տարածության վրա։ Վոչ միայն նա տեղեկացավ մեր բնակավայրի և ներկա՝կացության մասին, այլ և իմացավ իմ ով լինելը, Փարիզում անցկացրած կյանքիս մասին, Մանոնի Բ... ի հետ ունեցած սիրային կապի և նրա դավաճանության մասին, մի խոսքով նա իմացավ մեր պատմության բոլոր խայտառակությունները։ Այս ամենից հետո նա վորոշեց մեզ ձերբակալել տալ և պահանջել, վոր մեզ դատեն վոչ իբրև քրեական հանցագործների, այլ վորպես անուղղելի անառակների։ Մենք տակավին անկողնումն եյինք, յերբ վոստիկանության մի սպա վեց պահակների հետ մտավ մեր սենյակը։ Նրանք ամենից առաջ խլեցին մեզ մոտ գտնված բոլոր դրամը, ավելի շուտ

պարոն դը Գ... Մ...ի դրամը, հետո կոպտությամբ մեզ անկողնից հանեցին և առաջնորդեցին դեպի փողոց, ուր յերկու կառք սպասում եյին մեզ. մեկի մեջ նստեցրին խեղճ Մանոնին, առանց վորևե բացատրության, իսկ մյուսով ինձ տարան Սեն-Լազար։

Մարդս ինքը պետք է ապրած լինի այսպիսի ձախորդություններ, վորպեսզի կարողանա դատել դրանցից առաջացած հուսահատության մասին։ Պահակն անգութ գտնվեց և թույլ չտվեց, վոր յես գրկեմ իմ Մանոնին և վոչ ել գոնե մի խոսք ասեմ նրան։ Ցերկար ժամանակ յես չգիտեյի՝ թե, ինչ է պատահել նրան։ Անտարակույս՝ ինձ համար յերջանկություն եր, վոր անմիջապես չիմացա նրա վիճակի մասին, վորովհետև այդպիսի մի սոսկալի աղետ կարող եր ինձ գրկել խելքից, թերևս և կյանքից։

Անբախտ սիրուհիս իմ աչքի առաջ հափշտակվեց և կալանավորվեց մի արգելատան մեջ, վորի անունն անդամ ինձ սարսափեցնում է։ Ի՞նչ վիճակ՝ մի չքնաղագեղ արարածի համար, վորը կարող եր աշխարհի առաջին գահը գրավել, յեթե բոլոր մարդիկ ունենային իմ աչքերն ու սիրտը։ Ճիշտ է, նրա հետ այնտեղ բարբարոսությամբ չվարվեցին. սակայն նա բանտարկվեց մի նեղ խուցում՝ միայնակ և դատապարտվեց ամենորյա աշխատանքի, վորպես անհրաժեշտ մի պայման՝ գարշելի կերակուր ստանալու համար։ Այս ցավալի մանրամասն-

նությունը յես իմացա շատ ժամանակ հետո այն որից-
ինչ ինքս մի քանի ամիս կրեցի տաժանակիր ու հոգե-
մաշ պատիժը։

Իմ պահակները նույնպես չասացին, թե ուր են
տանում ինձ և յես իմ վիճակն իմացա Սեն-Լազար բանտի
առջևում միայն։ Այդ բոպեին յես կգերադասեի մահն
այն դրությունից, որը, ինչպես յես եմի մտածում, շու-
տով վիճակվելու էր ինձ. այդ տան մասին յես զար-
հուրելի գաղափար ունեի։ Իմ սարսափը կրկնապատ-
կվեց, երբ այնտեղ մտնելիս պահակները կրկին անդամ
խուզարկեցին դրպանները, համոզվելու համար, որ ինձ
մոտ չկա վոչ զենք և վոչ էլ դիմադրության ուրիշ վո-
րևե գործիք։

Անմիջապես հայտնվեց վանահայրը, որին նախա-
զգուշացրել էին ինձ բերելու մասին։ Նա մեծ սիրա-
լիրությամբ վողջունեց ինձ։—«Հայր իմ,—ասացի յես
նրան,—«խնդրում եմ ինձ հետ վարվել առանց վիրա-
վորանքի. յես պատրաստ եմ հազար կյանք զոհաբե-
րելու, քան թե տանել վորևե անարժան վերաբեր-
մունք»։—«Վո՛չ, իհարկե, վո՛չ, պարոնս»,—պատասխա-
նեց նա ինձ. «դուք ձեզ վայելուչ կպահեք և մենք դո-
կմնանք միմյանցից»։ Նա խնդրեց ինձ բարձրանալ վերին
հարկը։ Առանց ընդդիմադրության յես հետևեցի նրան։
Պահակները մեզ ուղեկցեցին մինչև սենյակի դուռը-
վանականն ինձ հետ ներս մտավ և նրանց նշան արավ
հեռանալու։

«Ուրեմն յես ձեր գերին եմ»,—ասացի նրան։—
«Թող այդպես լինի, հայր իմ, սակայն ինչ եք մտադիր
անելու ինձ հետ»։—Նա պատասխանեց, որը շատ ուրախ
է տեսնելով իմ խանարհությունը. նրա պարտականու-
թյունն է ջանալ ինձ սեր ներշնչել դեպի առաքինու-
թյունն ու կրոնը, իսկ յես պարտավոր եմ ոգտվել
նրա հորդորներից և խրատներից. յեթե յես ընդառաջ
գնամ դեպի ինձ ունեցած իր սիրալիր ուշադրությանը,
ապա իմ մեղությանն մեջ հաճույքից բացի ուրիշ վո-
չինչ չպիտի զգամ։—«Ա՜հ, հաճույք զգալ»,—ասացի

յես. «դուք չեք ճանաչում, հայր իմ, այն միակ առարկան, վորն ընդունակ է ինձ հաճույք պատճառելու»։ Նրա պատասխանն ինձ համոզեց, վոր նա իրազեկ է իմ արկածներին և թերևս գիտե անունս։ Ցեսն նրան խնդրեցի ասել, թե ինչ գիտե իմ մասին։ Նա անկեղծորեն ասաց, վոր ամեն ինչ պատմել են իրեն։

Այս լուրը բոլոր պատիժներից ամենադաժանը յեղավ։ Ցեսն արցունքի հեղեղներ թափեցի և անձնատուր յեղա ամենասարսափելի հուսահատության։ Ցեսն վոչ մի կերպ չեյի կարող մխիթարվել այն նվաստացումից, վորը շուտով իմ բոլոր ծանոթների խոսակցության նյութ և իմ ընտանիքի ամոթը պիտի լիներ։ Այսպես յես անցկացրի ութ որ ամենամեծ վհատության մեջ, ի վիճակի չլինելով վորևե բան լսելու, վոչ ել ուրիշ բանի մասին մտածելու—բացի իմ նախատինքից։ Նույնիսկ Մանոնին հիշելը վոչինչ չեր ավելացնում իմ վշտին. թերևս դա միանում եր նրան վորպես մի զգացմունք, վորը ծագել եր իմ այս նոր ցավից, սակայն իմ հոգում տիրող հույզը սոսկ ամոթն ու վրդովմունքն եր։ Սակավաթիվ մարդիկ գիտեն սրտի այս առանձնահատուկ հույզերի զորությունը։ Մարդկանց մեծ մասը զգայուն է միայն հինգ կամ վեց զգացումների հանդեպ, վորոնց շրջանակում ընթանում է նրանց կյանքը և վորոնց հանդում են նրանց բոլոր հույզերը։ Խլեցեք նրանցից սերն ու ատելությունը, հաճույքն ու ցավը, հույսն ու վախը

և նրանք այլևս վոչինչ չեն զգա։ Սակայն ավելի բարձր ու ազնիվ բնության տեր մարդիկ կարող են հուզվել հազար ու մի այլ ձևերով. թվում է, թե նրանք ոժտված են հինգից ավելի զգայարաններով և վոր կարող են ստանալ գաղափարներ ու զգայություններ, վորոնք դուրս են բնության սովորական սահմաններից։ Եվ վորովհետև նրանք գիտակցում են այդ գերազանցությունը, վորն իրենց բարձր է դասում հասարակ մարդկանց մակարդակից, ապա նրանք վերին աստիճանի նախանձախնդիր են այդ հարցում։ Այս պատճառով է, վոր նրանք այնքան անհամբեր են նախատինքի ու ծաղրի ժամանակ և վոր ամոթը նրանց ամենաբուռն կիրքն է։

Այս չարտարատիկ առավելությունն յես ունեցի Սեն-Լազարում գտնված ժամանակ։ Իմ վիշտն այն աստիճան ծայրահեղ թվաց վանահորը, վոր վախենալով վատ հետևանքներից, նա վորոշեց ինձ հետ շատ ավելի մեղմ ու ներողամտորեն վարվել։ Նա որեկան յերկու թե յերեք անգամ այցելում եր ինձ։ Հաճախ նա ինձ իր հետ տանում եր պարտեզ զրոսանքի և իր յեռանդը տպառում՝ հորդորանքներ ու փրկարար խրատներ տալով ինձ։ Ցեսս դրանք ընդունում եյի խոնարհաբար և նույնիսկ շնորհակալություն եյի հայտնում. այս պարագան նրան հույս եր ներշնչում իմ բարոյական դարձի մասին։

«Դուք բնությամբ այնքան հեզահամբույր ու համակրելի յեք»,—ասաց նա մի որ,—«վոր չեմ կարող հասկանալ այն անառակությունը, վորում ձեզ մեղադրում են։ Յերկու բան ինձ զարմացնում է. նախ՝ ինչպես այսպիսի գերազանց բարեմասնություններ ունենալով հանդերձ դուք անձնատուր եք յեղել ծայրահեղ անառակության. յերկրորդ, վորով յես առավել ևս հիանում եմ, ինչպես դուք այսպիսի հաճույքով լսում եք իմ խորհուրդներն ու հորդորները՝ յերկար տարիներ զեղխ կյանք վարելուց հետո։ Եթե դա զղջման հետևանք և, դուք յերկնային գթասրտության նախընտրած մի մարդ եք. իսկ յեթե դա բղխում է ձեր բնածին բարությունից, ուրեմն դուք համենայն դեպս ոժտված եք մի գե-

բաղանց ընավորությամբ, վորն ինձ հույս է ներշնչում, թե կարիք չկա ձեզ յերկար պահելու մեզ մոտ, վորպեսզի վերադարձնենք աղնիվ ու արժանավայել կյանքիդ։

Ցես հիացմունքով լսեցի նրա կարծիքն իմ մասին։ Վորոշեցի այդ կարծիքն ամրացնել այնպիսի մի վարմունքով, վորը միանգամայն զոհացներ նրան, վորովհետև համոզված եյի, վոր դա ամենաապահով միջոցն է՝ կարճելու իմ բանտարկությունը։ Գրքեր խնդրեցի նրանից։ Նա շատ զարմացավ, վոր յես կանգ առա մի քանի լուրջ հեղինակների վրա, թեպետ ինձ ևր շնորհված ընտրության իրավունքը։ Ցես ձևացրի, թե միանգամայն տարվում եմ ուսումով և այսպես ամեն հարմար առիթին նրան ապացույցներ տվի իր սպասած փոփոխության վերաբերմամբ։

Սակայն դա Միայն արտաքուստ ևր այդպես։ Ամոթով պետք է խոստովանեմ, վոր յես Սեն-Լազարում յերկերեսանի անձի դեր եյի կատարում։ Սովորելու փոխարեն, յերբ մենակ եյի, յես միայն հեծեծում եյի իմ բախտի վրա։ Նղովում եյի իմ բանտն ու ինձ այնտեղ արգելափակող բռնակալությունը։ Տակավին յես չեյի ապաքինվել այն ցավից, վորով բռնված եյի, յերբ վերստին անձնատուր յեղա սիրս տառապանքներին։ Մանոնի բացակայությունը, նրա վիճակի անորոշությունը, նրան յերբեք չտեսնելու յերկյուղն իմ տխուր մտորումների միակ առարկան ևր։ Ցես նրան յերևա-

կայում եյի պ. դը Գ... Մ...ի գրկում, վորովհետև դա յեր իմ առաջին յենթադրությունը։ Ցեռ հեռու եյի այն մտքից, թե նա կարող է Մանոնի հետ վարվել այնպես, ինչպես ինձ հետ վարվեց, և համոզված եյի, վոր նա ինձ հեռացրել է նրան հանգիստ տիրանալու նպատակով։

Այսպես եյի անցկացնում որերն ու գիշերները, վորոնք ինձ անվերջ յերկար եյին թվում։ Իմ ամբողջ հույսը դրել եյի միայն իմ կեղծանքի հաջողության վրա։ Ցեռ ուշադրությամբ դիտում եյի վանահոր դեմքի արտահայտությունը և հետևում նրա խոսքերին, վորպեսզի իմանամ, թե նա ինչ է մտածում իմ մասին, և աշխատում եյի սովորել հաճոյանալու նրան, վորպես իմ բախտի դատավորին։ Դյուրությամբ նկատեցի, վոր նա իմ մասին լավ համարում ունի և համակրում է ինձ։ Այլևս վոչ մի տարակուսանք չունեյի, վոր նա պատրաստ է ինձ ծառայություն մատուցելու։

Մի անգամ յես համարձակություն ունեցա հարցնելու նրան, թե արդյոք իրենից է կախված իմ ազատությունը։ Նա ինձ ասաց, վոր դա բացարձակապես իրենից չի կախված։ Սակայն հույս ունի, վոր իր միջնորդությամբ պ. դը Գ... Մ...ն, վորի խնդրանքով վոստիկանության գլխավոր պետը հրամայել է ինձ բանտարկել, թերևս համաձայնվի ազատ արձակել։ — «Կմտրող եմ արդյոք հուսալ», — ասացի յես խոնարհաբար, — «վոր իմ կրած յերկամյա բանտարկությունը նա բավ կհամարի՝ իբրև իմ հանցանքների քավություն»։ Նա խոստացավ խոսել նրա հետ, յեթե յես ցանկամ։ Ցեռ նրան թախանձագին խնդրեցի մատուցել ինձ այդ բարի ծառայությունը։

Ցերկու որ հետո նա ինձ հաղորդեց, վոր պ. դը Գ... Մ...ն այն աստիճան է զգացվել իմ մասին հայտնած իր բարենպաստ կարծիքով, վոր վոչ միայն վորոշել է ինձ ազատություն շնորհել, այլ նաև մեծ ցանկություն է հայտնել ավելի մոտից ինձ ճանաչելու, և մտադիր է ինձ այցելել բանտում։ Թեև նրա այցելու-

թյունը չեր կարող հաճելի լինել ինձ, այնուամենայնիվ յես այդ համարեցի իմ ազատությունը մոտեցնող մի միջոց։

Հիրավի, նա յեկավ Սեն-Լազար։ Նա ինձ յերկայց ավելի պատկառելի և նվազ հիմար, քան Մանոնի տանն յեղած ժամանակ։ Ինձ մի քանի բարեմիտ խոսքեր ասաց իմ վատ վարքի նկատմամբ։ Այնուհետև ավելացրեց՝ անշուշտ իր սեփական անառակությունն արդարացնելու համար՝ վոր մարդկային թուլությանը թույլատրելի յե վայելել վորոշ հաճույքներ, վոր պահանջում է բնությունը, սակայն խաբեությունն ու խայտառակ արարքը արժանի յեն պատժի։

Յես նրան լսեցի խոնարհաբար, վորից և նա շատ դոհ մնաց։ Յես նույնիսկ չվիրավորվեցի նրա ծաղրանքներից, ուղղված իմ՝ Լեսկոյի և Մանոնի յեղբայրությանը և այն փոքրիկ մատուռների վերաբերյալ, վոր ինչպես նա յեր յենթադրում, յես մեծ քանակությամբ պետք է արդեն կառուցած լինեյի Սեն-Լազարում, քանի վոր այս բարեպաշտ զբաղմունքն ինձ այնքան հաճույք ներ պատճառում։ Սակայն նա՝ ի դժբախտություն իրեն և ինձ, անխոհեմություն ունեցավ ասելու, վոր անտարակույս Մանոնը ևս արդելատանը նույնպիսի գեղեցիկ մատուռիկներ պետք է վոր կառուցած լինի։ Չնայած արդելատան անվան ինձ ներշնչած սարսափին, յես ուժ ունեցա նրան հեզաբար խնդրելու, վոր բացատրի, թե

ինչ է ուզում ասել։ — «Այո», — պատասխանեց նա, — հանա յերկու ամիս է, ինչ ձեր Մանոնը գլխավոր արգելատանը վողջախոհություն է սովորում, և յես ցանկանում եմ, վոր նա ևս այնտեղ նույնքան ոգուտ քաղի, վորքան դուք՝ Սեն-Լազարում»։

Ցեռ՝ յեթե իմ աչքի առաջ ունենայի ցմահ բանտարկության կամ նույնիսկ մահվան սպառնալիքը՝ դարձյալ չպիտի կարողանայի սանձահարել իմ կատաղությունը, յերբ լսեցի այդ զարհուրելի լուրը։ Ցեռ այնպիսի բուռն մոլեգնությամբ հարձակվեցի նրա վրա, վոր զրկվեցի իմ ուժերի կեսից։ Բայց և այնպես տակավին բավականին ուժեղ գտնվեցի, վորպեսզի նրան գետին տապալեմ և կոկորդից բռնեմ։ Ցեռ սկսեցի նրան խեղդել. սակայն նրա ընկնելու աղմուկը և այն սուր ճիչը, վոր նա հազիվ կարողանում եր արձակել խզվող ձայնով, իմ սենյակը փութացրին վանահորը և բազմաթիվ վանականների։ Նրան ազատեցին իմ ձեռքից։

Ինքս գրեթե շնչակտուր և ուժասպառ եյի յեղել։ — «Ա՜խ, աստված իմ»,—գոչեցի յես, հառաչելով. «ո՜հ, յերկնային արդարադատություն, ինչպե՞ս կարող եմ ազատել այսպիսի մի ստոր վիրավորանքից հետո»։ Ցեռ ուզեցի վերստին նետվել բարբարոսի վրա, վորն ինձ մահացու խոցել եր։ Ինձ բռնեցին։ Իմ հուսահատությունը, ճիչերս ու արցունքներս գերազանցեցին ամեն մի յերևակայություն։ Ցեռ այնպիսի տարորինակ բաներ արի, վոր բոլոր ներկա յեղողները, չիմանալով իմ այդպես վարվելու պատճառը, յերկյուղով ու զարմացած նայեցին միմյանց։

Նույն միջոցին պ. դը Գ... Մ...ն հարդարում եր իր կեղծամն ու փողկապը։ Զայրացած իմ վատ վարմունքից՝ նա հրամայեց վանահորն ամենայն խստությամբ նորից բանտարկել ինձ և յենթարկել այն բոլոր խիստ պատիժներին, վորոնք գործադրվում են Սեն-Լազարում։ — «Վա՜յ, պարոն», — պատասխանեց նրան վանահայրը.— «պարոն ասպետի նման ազնվատոհմիկ մի անձնավորության հետ մենք այդ կերպ վարվել չենք

կարող։ Բացի դրանից՝ նա այնքան հեզահամբույր է ու աղնվաբարո, վոր դժվարանում եմ հավատալ, վոր նա իրեն թույլ տված լինի այսպիսի մի արտառոց վարմունք՝ առանց հիմնավոր պատճառի։ Այս պատասխանը բոլորովին շփոթեց պ. դը Գ... Մ...ին։ Նա դուրս յեկավ՝ ասելով, վոր ինքը միջոցներ ձեռք կառնի ստիպելու, վոր նրա կամքին խոնարհվենք՝ թե վանահայրը, թե յես և թե այն բոլոր անձինք, վորոնք կհամարձակվեն իրեն ընդդիմանալու։

Վանահայրը հրամայեց վանականներին Գ... Մ...ին առաջնորդել դեպի դուռը և ինքը մնաց ինձ հետ։ Նա ինձ թախանձեց իսկույն պատմել այս անկարգության պատճառը։ — «Ա՜խ, հայր իմ», — բացականչեցի յես, շարունակելով արտասվել յերեխայի նման — «Ցերևակայեցեք ամենասարսափելի անգթությունը, պատկերացրեք ձեզ ամենաքստմնելի բարբարոսությունը և դա կլինի այն արարքը, վոր ժպիրհ Գ... Մ...ն ստորություն ունեցավ իրեն թույլ տալու։ Ա՜հ, նա իմ սիրտը խոցեց։ Իմ ցաքն ամոքել անհնար է։ Ցեսս ուզում եմ ամեն ինչ պատմել ձեզ», — ավելացրի յես հեկեկալով։ «Դուք բարի յեք, դուք ինձ կկարեկցեք»։

Ցեսս համառոտակի պատմեցի նրան՝ դեպի Մանոնը տածած իմ յերկարատև ու անհաղթելի սիրո, մեր փարթամ կյանքի մասին՝ մինչ այն որը, յերբ մեր ծառաները կտրոպատեցին մեզ, Գ... Մ...ի իմ սիրուհուն արած

առաջարկությունների, նրանց գործարքի մասին և այն մասին, թե ինչպես դա խափանվեց։ Ճիշտն ասած, այս բոլոր հանգամանքները յես նրան պատկերեցի մեզ համար նպաստավոր գույներով։ —«Ահա», — շարունակեցի յես, — «թե ինչ աղբյուրից ե բղխում պ. դը Գ... Մ...ի յեռանդը դեպի իմ բարոյական դարձը։ Նրան հաջողվեց ինձ այստեղ բանտարկել տալ՝ սոսկ վրիժառության շարժառիթից դրդված։ Ցես այդ ներում եմ նրան. բայց, հայր իմ, սա դեռ բոլորը չե. նրան հաջողվեց ինձանից խլել իմ սեփական անձի ամենաթանկագին կեսը. նա անարդարաբար բանտարկել տվեց նրան արգելատնում. նա այնքան անամոթ գտնվեց, վոր ինքն իր բերանով այսոր ինձ հայտնեց այդ լուրը։ Արգելատուն, հայր իմ։ Ո՜հ յերկինք, իմ քնքշանույշ սիրուհին, իմ անգին թագուհին՝ արգելատունը՝ վորպես ամենանվաստը բոլոր արարածներից։ Վորտեղ գտնեմ բավականաչափ ուժ՝ չմեռնելու ցավից ու ամոթից»։

Բարեսիրտ հայրը, տեսնելով իմ ծայրահեղ վհատությունը, սկսեց սփոփել ինձ։ Նա ասաց, վոր յերբեք իմ արկածներն այնպես չի պատկերացրել իրեն, ինչպես հիմա յես պատմեցի իրեն։ Ճիշտ ե, նա իմացել և, վոր յես անվայել կյանք եմ վարել, բայց նա միշտ յենթադրել ե, թե պ. դը Գ... Մ...ն դեպի իմ վիճակը այդպիսի մի հետաքրքրություն ցուցաբերել և դրդված իմ ընտանիքի հանդեպ ունեցած բարեկամության ու հարգանքի կապերից։ Մինչ այժմ, նա հենց այդպես և հասկացել բոլոր իրադարձությունները։ Սակայն այն, ինչ յես իրեն պատմեցի, միանգամայն փոխելու յե իմ գործի ընթացքը, և նա չի տարակուսում, թե այն ճշգրիտ պատմությունը, վոր նա մտադիր ե անելու գլխավոր վոստիկանապետին, պիտի նպաստի իմ ազատությանը։

Այնուհետև նա հարցրեց, թե ինչու յես տակավին չեմ խորհել՝ իմ մասին տեղեկացնելու ընտանիքիս, քանի վոր նա վոչ մի մասնակցություն չի ունեցել իմ

յանտարկության դարձում։ Ցես աշխատեցի գոհացուցիչ պատասխան տալ նրա իրավացի հարցումին, ասելով, թե յես այդ չեմ արել՝ դրդված հորս վշտացնելու յերկյուղից և իմ սեփական ամոթանքի զգացումից։ Ի վերջո նա ինձ խոստացավ անմիջապես գնալ վոստիկանության գլխավոր պետի մոտ. — «յես գնում եմ»,— ավելացրեց նա, — «վոր գոնե խափանեմ պ. դը Գ... Մ...ի նոր, վատթարագույն մտադրությունները, վորովհետև նա այստեղից հեռացավ վերին աստիճանի դժգոհ. իսկ նա չափազանց մեծ իշխանություն ունի, վորպեսզի կարողանանք չվախենալ նրանից»։

Ցես սպասեցի վանահոր վերադարձին՝ հոգեկան այնպիսի ալեկոծ վիճակում, վորպիսին ապրում է միայն թշվառ դատապարտյալը մահապատժի վերջին ժամին։ Ինձ համար անսպասելի տանջանք եր Մանոնին յերևակայել արգելատան մեջ։ Այդ վայրի արգահատանքից բացի՝ ինձ անհայտ եր նաև, թե այնտեղ ինչպես են վարվում նրա հետ. իսկ սարսափի այդ տան մասին իմ լսած մանրամասնությունները վերհիշելիս ամեն րոպե նորոգվում եր մոլեգնությունս։ Ցես հաստատ վորոշել եյի ազատել նրան ինչ գնով ու միջոցներով ել վոր լինի, վորոշել եյի անգամ հրդեհել Սեն-Լազարը, յեթե ինձ համար անկարելի լինի այլ կերպ դուրս գալ այնտեղից։

Սկսեցի խորհել այն միջոցների մասին, վորոնց յես պետք է դիմեյի, յեթե՝ հակառակ իմ կամքի՝ վոստիկա-

նությանն գլխավոր պետը շարունակի ինձ պահել բանտում։ Ցեսը գործ դրի իմ վողջ հնարամտությունը, կշռադատեցի բոլոր հնարավորությունները։ Զգաստ և վոչ մի միջոց, վորն ապահովեր իմ անվրեպ փախուստը և յես վախեցա, թե ավելի խիստ բանտարկության կենթարկվեմ, յեթե անհաջող փորձի դիմեմ։ Մտաբերեցի իմ մի քանի բարեկամների անունները, վորոնց աջակցությունը կարող եյի հուսալ։ Սակայն՝ ինչպես տեղեկացնել իմ վիճակի մասին։ Վերջապես կարծեցի, թե կազմել եմ այնպիսի մի հնարամիտ ծրագիր, վորը կարող է հաջողությամբ պսակվել և յես դրա ավելի մանրամասն մշակումը հետաձգեցի մինչև վանահոր վերադարձը, յերբ նրա դիմումի անհաջողությունն անհրաժեշտ կդարձներ իմ ծրագրի իրագործումը։

Վանահայրը շուտով վերադարձավ։ Ցեսը նրա դեմքին չնկատեցի ուրախության այն նշանները, վորոնք ուղեկցում են բարի լուրերին։ — «Ցեսը խոսեցի վոստիկանության գլխավոր պետի հետ», — ասաց նա, — «սակայն խոսեցի շատ ուշ։ Պարոն դը Գ... Մ...ն այստեղից դուրս գալուց հետո ուղղակի նրա մոտ է գնացել և նրան այն աստիճան վատ է տրամադրել ձեր հանդեպ, վոր նա պատրաստվել եր նոր հրամաններ տալ՝ ձեզ ավելի խիստ պահելու համար։ Սակայն, յերբ յես նրան հայտնեցի ձեր պատմության բոլոր հանգամանքները, նա ըստ յերևույթին շատ փափկեց և փոքր ինչ ծիծաղելով ձեր պ. դ. Գ... Մ...ի անժուժկալության վրա, ասաց, վոր նրան բավարարելու նպատակով անհրաժեշտ է վեց ամիս ձեզ պահել բանտում, մանավանդ վոր այստեղ անցկացրած ժամանակն անպտուտ չպիտի անցնի ձեզ համար։ Նա ինձ հանձնարարեց ձեզ հետ վարվել արժանավայել կերպով. և յես վստահացնում եմ, վոր դուք յերբեք չպիտի գանգատվեք իմ վերաբերմունքից»։

Բարի վանահոր բացատրությունը բավականին յերկար տևեց, այնպես վոր յես ժամանակ ունեցա խորհելու իմ անելիքի մասին։ Ցեսը մտածեցի, թե պիտի

խորտակեմ ծրագիրս, յեթե չափազանց մեծ փութկոտություն ցույց տամ ազատության նկատմամբ։ Այս պատճառով վանահորը հավաստիացրի, ընդհակառակը, վոր բանտում մնալու անհրաժեշտության մեջ ինձ համար միակ քաղցր ոփոփանքը կլինի վայելել նրա հարգանքը։ Այնուհետև միանգամայն անկեղծ խնդրեցի ինձ մի չնչին շնորհ մատուցել, վորը կարող ե մեծապես նպաստել իմ անդորրությանը. յես նրան խնդրեցի լուր տալ իմ ծանոթներից մեկին՝ Սեն-Սյուլպիսում ապրող մի սրբաբարո յեկեղեցականի, թե յես գտնվում եմ Սեն-Լազարում և թույլատրել, վոր յերբեմն նա այցելի ինձ։ Նա առանց տպտանվելու տվեց ինձ այդ շնորհը։

Յես նկատի ունեյի իմ բարեկամ Տիբերժին, սակայն վոչ նրա համար, վոր հույս եյի տածում իմ ազատությանն անհրաժեշտ նրա՝ անմիջական ոգնության վրա, այլ ուզում եյի իրենից ծածուկ ոգտագործել նրան՝ վորպես անուղղակի մի գործիք՝ իմ նպատակին հասնելու համար։ Մի խոսքով՝ ահա իմ ծրագիրը. յես ուզում եյի գրել Լեսկոյին և խնդրել նրան մեր մյուս բարեկամների հետ ջանալ ինձ ազատելու։ Առաջին դժվարությունը՝ նամակս նրան ուղարկելն եր. սա Տիբերժը պիտի աներ։ Բայց վորովհետև նա գիտեր, վոր Լեսկոն իմ սիրուհու յեղբայրն ե, յես վախենում եյի, թե մի գուցե նա իր վրա չվերցնի այս հանձնա-

բարությունը։ Ցես մտածում եմ Լեսկոյին ուղարկելիք իմ նամակը ներփակել մի ուրիշ նամակի մեջ՝ ուղղված վորևե ազնիվ և անվանի մի ծանոթի, վերջինիս խնդրելով նամակն անմիջապես հանձնել ըստ պատկանելույն։ Իսկ վորովհետև ինձ համար անհրաժեշտ եր տեսնվել Լեսկոյի հետ՝ իմ ծրագրի գործադրման միջոցները մշակելու համար, յես ուզում եմ խնդրել նրան գալ Սեն-Լազար և տեսակցություն ունենալ ինձ հետ՝ իմ մեծ յեղբոր անվան տակ, վորը իբրև թե Փարիզ է յեկել հատկապես իմ գործի հետ ծանոթանալու նպատակով։ Ցես մտադիր եմ նրա հետ մշակել փախուստի ամենավստահելի և ամենաարագ միջոցառումները։ Վանահայրը Տիբերժին հայտնեց նրա հետ խոսակցելու իմ ցանկությունը։ Այս հավատարիմ բարեկամս ինձ յերբեք աչքաթող չեր արել և իրազեկ եր իմ այժմյան վիճակին. նա գիտեր, վոր յես Սեն-Լազարում եմ գտնվում և թերևս այս դժբախտությունը նրան այնքան էլ չեր վշտացրել, կարծելով թե դա կարող է ինձ պարտաճանաչության վերադարձնել։ Նա իսկույն ևեթ յեկավ իմ սենյակը։

Մեր խոսակցությունը համակված եր սիրալիր բարեկամությամբ։ Նա ցանկացավ իմանալ իմ դիտավորությունների մասին։ Առանց վերապահության յես նրա առջև բացի իմ սիրտը՝ թաքցնելով նրանից միայն փախուստի ծրագիրս։— «Ցես չեմ ուզում ձեր աչքերի առաջ, սիրելի բարեկամս», — ասացի նրան, — «ձևանալ այնպիսին, վորպիսին իսկապես չեմ։ Ցեթե դուք կարծում եք այստեղ տեսնել վողջամիտ ու իր տենչանքների մեջ զուսպ մի բարեկամի, յերկնային պատիժներից սթափված մի անառակի, մի խոռքով՝ սիրուց աղատված և Մանոնի հմայքներից հիասթափված մի սիրտ, ապա չափազանց բարենպաստ դատած կլինեք իմ մասին։ Դուք ինձ գտնում եք այնպես, ինչպես թողիք չորս ամիս առաջ, միշտ սիրահար ու միշտ անբախտ այն ճակատագրական սիրուց, ուր յես չեմ դադարում վորոնել իմ յերջանկությունը։

Նա պատասխանեց, վոր իմ խոստովանությունն ինձ նրա աչքում թողության անարժանի յե դարձնում. վոր կան բազմաթիվ մեղսագործ մարդիկ, վորոնք արբեցած մոլության կեղծ յերջանկությունից, դա ակներևորեն դերադասում են առաքինության իսկական յերջանկությունից. սակայն նրանք դեռևս հրապուրվում են յերևվակայական յերջանկությամբ և մոլորվում խաբուսիկ արտաքինով. բայց խոստովանել այնպես, ինչպես յես եմ խոստովանում, վոր իմ սիրո առարկան միայն ընդունակ և ինձ հանցավոր ու անբախտ դարձնելու և միևնույն ժամանակ հոժարակամ շարունակել ինձ նետել դժբախտության ու հանցանքի մեջ—վկայում և մտածողության ու վարմունքի հակասությունը, վոր պատիվ չի բերում իմ բանականությանը։

«Տիրերժ», — առարկեցի յես, — «վորքան ձեզ հեշտ և հաղթանակել, յերբ վոչ մի բան չի հակադրվում ձեր դինքերին։ Ինձ թույլ տվեք իմ հերթին դատողություններ անելու։ Դուք կարող եք պնդել, վոր այն, ինչ անվանում եք առաքինության յերջանկություն, զերծ և տառապանքներից, խոչընդոտներից, հոգսերից։ Դուք լինչ անուն կտաք բանտին, խաչելությանը, մահապատիժներին, բռնակալների տված մահու տանջանքներին։ Դուք համամիտ եք միստիկներին, վոր այն, ինչ չարչարում և մարմինը, հոգու համար յերջանկություն և։ Դուք չեք համարձակվի այդ ասելու, դա անապացու-

ցելի մի պարադոքս է։ Ուստի, այն յերջանկությունը, վոր դուք՝ ջատագովում եք, անբաժան է բյուր տանջանքից կամ ավելի ճիշտ ասած՝ դա դժբախտությունների մի հյուսվածք է; վորի միջոցով մարդիկ ձգտում են յերջանկության։ Ուստի, յեթե յերևակայության ուժն ոգնում է մեզ ցավերի մեջ իսկ հաճույք գտնելու, վորովհետև այդ ցավերը կարող են մեզ առաջնորդել դեպի տենչած յերջանիկ վախճանը, ապա ինչո՞ւ դուք հակասական ու անմիտ եք համարում նման մի տրամադրություն իմ վարմունքի մեջ։ Ցեսս սիրում եմ Մանոնին. բյուր ցավերի միջոցով յես ձգտում եմ յերջանիկ ու անդորը կյանք վայելել նրա հետ։ Ճանապարհը, վորով յես ընթանում եմ, տառասկոտ է. սակայն իմ տենչած վախճանին հասնելու հույսը մեղմացնում է ճանապարհի դառնությունը և յես ինձ հազար անգամ վարձահատույց կհամարեմ այն բոլոր ցավերի համար, վոր կրում եմ ի սեր Մանոնի, յերբ մի ակնթարթ անցկացնեմ նրա հետ։ Այսպես ուրեմն, բոլոր պատճառաբանությունները՝ ձեր ու իմ կողմից՝ ինձ թվում են համազոր կամ, յեթե դրանց մեջ կա վորևե տարբերություն, ապա դա հոգուտ ինձ է, վորովհետև իմ ակնկալած յերջանկությունը մոտալուտ է, իսկ մյուսը՝ հեռավոր։ Իմ յերանությունը նույն բնությունն ունի, ինչ և տառապանքները, այսինքն՝ զգալի յե մարմնին. մինչդեռ մյուս յերանության բնությունն անհայտ է և այդ վստահելի կարելի յե համարել միմիայն հավատի շնորհիվ։

Տիբերժը կարծես ահաբեկվեց այսպիսի մի դատողությունից։ Նա յերկու քայլ յետ գնաց և ամենայն լրջությամբ ասաց, վոր իմ խոսքերը վոչ միայն մեղանչում են առողջ դատողության դեմ, այլ վոր դա վոգբալի սոփեստություն է՝ պիղծ ու հակակրոնական. «Վորովհետև այս համեմատությունը»,—ավելացրեց նա,—«ձեր տառապանքների նպատակի և կրոնի մատնանշած վախճանի ամենաակներև և ամենահրեշավոր գաղափարներից մեկն է»։

«Ընդունում եմ», — համաձայնվեցի յես, «վոր դա ճիշտ չե. սակայն նկատեցեք, վոր իմ դատողության նպատակը դա չե։ Իմ մտադրությունն եր ձեզ բացատրել այն, վորի վրա դուք նայում եք իբրև հակասության, վորը գոյություն ունի անբախտ սիրո հարաբերության մեջ, և ինձ թվում է, յես միանգամայն համոզիչ կերպով ապացուցեցի, վոր յեթե կա իրոք այդպիսի հակասություն, ապա դուք ևս նմանապես զերծ չեք կարող լինել դրանից։ Միայն այս իմաստով յես ասացի, վոր մեր պատճառաբանությունները համազոր են և պնդում եմ, վոր դա իրոք այդպես է։

«Թերևս դուք առարկեք, վոր առաքինության վախճանն անչափ բարձր է սիրո վախճանից։ Ո՞վ է այդ ժխտում։ Սակայն մի՞թե հարցն այդ է։ Խոսքը վերաբերում է այն ուժին, վորով թե սերը և թե առաքինությունը տառապանքներ են կրում։ Դատեցեք ըստ հետևանքների. վո՞րքան շատ են անսասան առաքինության ուխտադրուժները և վո՞րքան սակավաթիվ սիրո դավաճանները։

«Թերևս դուք առարկեք նորից, վոր յեթե կան դժվարություններ առաքինության իրագործման ընթացքում, դրանք վո՛չ անխուսափելի յեն և վո՛չ իսկ անհրաժեշտ, վոր բռնակալներն ու խաչելությունները այլևս գոյություն չունեն, և վոր կարելի յե բաղմաթիվ առաքինի մարդկանց տեսնել՝ քաղցր ու անդորը կյանք վարելիս։

Ցեռ կարող եմ ձեզ նույնպես պատասխանել, վոր աշխարհումս կա և խաղաղ ու բարեբախտ սեր։ Ցեռ ուզում եմ նշել մի տարբերություն ևս, վորը գերազանցապես հոգուտ ինձ է խոսում, այն՝ վոր սերը թեպետ հաճախ է խաբում, սակայն դոնե հաճույք ու բերկրանք է պատճառում, մինչդեռ կրոնը պահանջում է տխուր ու նվաստացնող ծիսակատարություններ։

«Մի՞ք վրդովվիր», — ավելացրի յես, տեսնելով, վոր չնայած իր խանդաղատանքին՝ նա պատրաստ է վրդովվելու, — «միակ յեղրակացությունը, վոր ուզում եմ անել այստեղ, դա այն է, վոր չկա ավելի մի վատ յեղանակ սիրտը սիրուց հեռացնելու, քան ջանալ արատավորել սիրո քաղցրությունները և նրան ավելի մեծ յերջանկություն խոստանալ առաքինության կատարման մեջ։ Մենք այնպես ենք ստեղծված, վոր անտարակույս մեր յերանությունը դտնում ենք հաճույքների մեջ, սա անհերքելի յե և այլ կերպ մտածել չի կարելի. իսկ սիրտը յերկար խորհրդածելու կարիք չունի, վորպեսզի զգա, թե մեր բոլոր հաճույքներից ամենաքաղցրը սիրո հաճույքներն են։ Նա շատ շուտ է զգում, վոր նրան ուզում են խաբել, յերբ խոստանում են ուրիշ, ավելի հրապուրիչ վայելքներ և այս խաբեությունը տրամադրում է նրան հավատ չընծայել ամենահաստատ խոստումներին։

«Դուք, քարոզիչներդ, վոր ցանկանում եք ինձ վերադարձնել առաքինության դիրքը, ասացեք ինձ, վոր միանդամայն առաքինությունն անհրաժեշտ է, բայց ինձնից մի՞ք թաքցնի, վոր այդ դաժան է ու դժվարին։ Հաստատապես պնդեցեք, վոր սիրո վայելքներն անցողիկ են, վոր դրանք արգելված են, վոր դրանց հետևում են հավիտենական տանջանքները և, ինչ կարող է թերևս ավելի մեծ տպավորություն թողնել ինձ վրա, դա այն է, վոր վորքան ավելի քաղցր ու հրապուրիչ են դրանք, այնքան ավելի հոյակապ կլինի յերկնքի հատուցումը՝ այդպիսի մի խոշոր զոհաբերության համար։ Բայց խոստովանեցեք, վոր այն սրտերի համար, վոր մենք ունենք,

սիրո վայելքներն այս աշխարհում մեր ամենակատարյալ յերանության աղբյուրն են։

Իմ ճառի այս յեզրափակումը վերականգնեց Տիբերժի լավ տրամադրությունը։ Նա համաձայնվեց, որ իմ մտքերը վորոշ չափով վողջամիտ են։ Միակ առարկությունը, որ նա արեց, դա այն եր, թե ինչու յես չեմ հետևում իմ սեփական սկզբունքներին՝ զոհաբերելով սերս այն տենչած հատուցման, որի մասին այդպիսի բարձր կարծիք ունեմ։ — «Ո՜հ, սիրելի բարեկամս», — պատասխանեցի նրան,—«հենց այստեղ յես խոստովանում եմ իմ վոչնչությունն ու անզորությունը։ Ավա՜ղ, այո, իմ պարտքն է վարվել դատողության համաձայն. սակայն արդյոք յես ազատ եմ իմ վարմունքի մեջ։ Ինչպի՞սի ոգեության կարիքն ունեմ, որպեսզի կարողանամ մոռանալ Մանոնի հմայքը։—«Թող ների՝ ինձ ասված,—ասաց Տիբերժը,—«բայց ինձ թվում է, թե յես լսում եմ մի նոր յանսենիստի ճառը։ — «Զգիտեմ, թե յես ո՞վ եմ», առարկեցի նրան—«և ինձ համար այնքան էլ ակներև չէ, թե ո՞վ պետք է լինեմ. սակայն յես լավ եմ զգում յանսենիստների ասածի ճշմարտականությունը։

Այս զրույցը գեթ այն հետևանքն ունեցավ, որ վերականգնեց բարեկամիս կարեկցանքը դեպի ինձ։ Նա հասկացավ, որ իմ անառակության մեջ ավելի շատ թուլություն կա, քան չարություն։ Հետագայում նրա բարեկամությունն ավելի մեծ հոգատարությամբ ոգնեց

ինձ, առանց վորի յես չքավորությունից պիտի կործանվեյի։ Այնուամենայնիվ յես նրան բնավ չհայտնեցի Սեն-Լազարից փախչելու իմ դիտավորությունը։ Միայն խնդրեցի նամակս հանձնել իմ ծանոթին։ Նամակը յես պատրաստել եյի նախքան նրա գալը, և բազմաթիվ փաստերով նրան բացատրեցի այն գրելու անհրաժեշտությունը։ Նա ամենայն հավատարմությամբ ու ճշտապահությամբ կատարեց իմ խնդիրը և Լեսկոն յերեկոյան դեմ ստացել եր իրեն ուղղված նամակը։ Հետևյալ առավոտն ևեթ նա յեկավ ինձ տեսնելու և բարեհաջող կերպով ընդունվեց, վորպես իմ մեծ յեղբայրը։ Ուրախությունս անսահման յեղավ, յերբ նրան տեսա իմ սենյակում։ Դուռը ուշի ուշով փակեցի։ — «Զկորցնենք և վոչ մի վայրկյան»,—ասացի յես նրան. «նախապես պատմեցեք, թե ինչ լուրեր ունեք Մանոնի մասին և հետո խորհուրդ տվեք, թե յես ինչպես պետք և փշրեմ իմ շղթաները»։ Նա ինձ հավատացրեց, վոր քրոջը չի տեսել իմ ձերբակալության նախորյակից հետո, վոր Մանոնի և իմ վիճակի մասին տեղեկացել է շնորհիվ յերկար վորոնումների ու ջանքերի. վոր մի քանի անգամ ներկայացել է արգելատուն, սակայն Մանոնի հետ խոսակցելու թույլտվություն նրան չեն տվել։ — «Թշվառ Դ... Մ...»—բացականչեցի յես,—«դա քեզ թանկ կնստի»։

«Ինչ վերաբերում է ձեր ազատությանը»,—շարունակեց Լեսկոն,—«դա այնքան էլ հեշտ բան չէ, վորքան դուք կարծում եք։ Յերեկ յերեկոյան իմ յերկու բարեկամների հետ մենք հետազոտեցինք այս տան բոլոր արտաքին մասերը և յեկանք այս յեզրակացության. քանի վոր ձեր լուսամուտները դեպի բակն են նայում, վորը շրջապատված է ուրիշ շենքերով, ինչպես դուք նշել եյիք ձեր նամակում, ապա շատ դժվար կլինի ձեզ այստեղից դուրս հանելը։ Բացի դրանից, դուք յերրորդ հարկումն եք գտնվում և մենք չենք կարող այստեղ հասցնել վոչ պարան, վոչ էլ սանդուխք։ Ուստի յես վոչ մի հնար չեմ տեսնում ձեզ այդ յեղանակով ազատելու։ Անհրաժեշտ է վորևե միջոց գտնել հենց շենքի ներսից։

«Վո՜չ»,—առարկեցի յես,—«ամեն բան լավ եմ քննել, մանավանդ այն որից, յերբ՝ շնորհիվ վանահոր ներողամտության, ինձ նվազ խստությամբ են հսկում։ Իմ սենյակի դուռն այլևս բանալիով չեն փակում. յես թույլտվություն ունեմ զբոսնելու վանականների միջանցքներում. սակայն բոլոր սանդուխքների մուտքերը հաստ դռներ ունեն, և դրանք գիշեր ու ցերեկ պինդ փակված են, ուստի անկարելի յե, վոր յես միայն ճարպկությամբ կարողանամ ազատվել։

«Սպասեցեք», — շարունակեցի յես փոքր ինչ մի մտքի շուրջը խորհելուց հետո, իմ կարծիքով սքանչելի միտք, վորն անցավ իմ գլխով,—«դուք կարող եք ինձ մի ատրճանակ բերել»։—«Ցյուրությամբ»,—պատասխանեց Լեսկոն, — «սակայն մի՞թե ուզում եք վորևե մեկին սպանել»։ — Ցես վստահացրի նրան, վոր այնքան քիչ եմ մտածում սպանության մասին, վոր բնավ անհրաժեշտ չե, վոր ատրճանակը լցված լինի։—«Բերեք ինձ վաղն ևեթ», — ավելացրի յես,—«և յերեկոյան ժամի տասնմեկին մեր յերկու կամ յերեք բարեկամների հետ անձամբ յեղեք այս տան դեմ ու դեմ։ Հույս ունեմ, վոր ինձ կհաջողվի միանալ ձեզ»։ Նա զուր տեղը պահանջեց բացատրել իմ մտադրությունը։ Ցես նրան ասացի, վոր այնպիսի մի ձեռնարկություն, վորպիսին յես եմ հղացել, կարող է բանական համարվել միայն իր հաջող իրագործումից հետո։ Այնուհետև խնդրեցի նրան

կարճել իր այցելությունը, վորպեսզի հետևյալ որը հեշտությամբ կարողանա կրկին ձեռք բերել ինձ տեսնելու թույլտվությունը։ Նրան առանց դժվարության թողին ինձ մոտ, ինչպես և առաջին անգամ։ Նա պատկառելի տեսք ուներ և վոչ վոք չեր կարող նրան չհամարել աղնվաբարո մի անձնավորություն։

Հենց վոր զինվեցի իմ ազատության գործիքով, յես համարյա այլևս չեյի կասկածում ծրագրիս հաջողության վրա։ Այդ ծրագիրն արտասովոր եր ու հանդուգն. սակայն ինչ բանի յես ընդունակ չեյի այդ ըսպեյին ինձ վոգևորող շարժառիթների ազդեցության տակ։ Այնպրից, յերբ ինձ թույլատրել եյին դուրս գալ սենյակից և զբոսնել միջանցքներում, յես նկատել եյի, վոր ամեն յերեկո, յերբ բարապանը բոլոր դռների բանալիները բերում և հանձնում է վանահորը, դրանից հետո տան ներսում խորին լռություն է տիրում, վոր վկայում է, թե ամենքը քաշվել են իրենց խուցերը։ Յես անարգել կերպով կարող եյի իմ սենյակից միջանցքով գնալ վանահոր սենյակը։ Վորոշել եյի նրանից վերցնել բանալիները,—ատրճանակով ահաբեկելով նրան, յեթե նա հոժարակամ դրանք ինձ չտար, և դռները բանալով ինքս դուրս գալ փողոց։ Անհամբերությամբ սպասեցի որվա վերջին։ Բարապանը յեկավ սովորական ժամին, այսինքն՝ իններից քիչ առաջ։ Յես մի ժամ ևս սպասեցի, համոզվելու համար, վոր բոլոր վանականները և ծառաները քնած են։ Վերջապես ուղևորվեցի դեպի վանահոր սենյակը, հետս վերցնելով զենքս և մի վառած մոմ։ Նախ մեղմ բաղխեցի սենյակի դուռը, վորպեսզի առանց աղմուկի արթնացնեմ վանահորը։ Նա ինձ լսեց յերկրորդ բաղխումից հետո և անշուշտ կարծելով, թե հիվանդ և ոգնության կարոտ վանականներից մեկն է բաղխում, անկողնից յելավ դուռը բացելու։ Այնուամենայնիվ նա զգուշորեն դռան արանքից հարցրեց, թե ով է դուռը բաղխողը և ինչ է ուզում։ Յես ստիպված յեղա անունս տալ. բայց այդ արտասանեցի աղիողորմ ձայնով, վորպեսզի հասկացնեմ, թե ինձ վատ եմ զգում։—«Ա՜, այդ

դուք եք, սիրելի վորդյակ»,—ասաց նա դուռը բանալով։—«Ի՞նչն է ձեզ ստիպել այսպիսի ուշ ժամին ինձ մոտ գալուս։ Ցեռ սենյակ մտա և նրան դռան մոտից հեռացնելով մինչև սենյակի հակառակ ծայրը՝ հայտարարեցի, վոր ինձ համար այլևս անհնար է մնալ Սենհազարում, վոր դիշերը հարմար ժամանակ է աննկատելի դուրս գալու այնտեղից և յես դեպի ինձ տածած իր բարեկամությունից սպասում եմ, վոր նա կհամաձայնվի դռները բանալ կամ բանալիներն ինձ տալ, վոր յես ինքս բանամ։

Իմ սիրալիր խոսքերը զարմացրին նրան։ Մի քանի րոպե նա ինձ նայեց առանց պատասխանելու։ Սակայն, վորովհետև ամեն մի րոպեն ինձ համար թանկ եր և յես ժամանակ չունեյի կորցնելու, նորից սկսեցի խոսել, ասելով, վոր չափազանց զգացված եմ դեպի ինձ ցույց տված իր բարությունից ու սիրալիր ուշադրությունից, բայց վոր ազատությունը բոլոր բարիքներից ամենաթանկագինն է, մանավանդ ինձ համար, ինձ՝ վորից դա խլել են անարդարությամբ, և այդ պատճառով վորոշել եմ՝ ինչ գնով ել ուզում է լինի՝ հենց այդ գիշերը ձեռք բերել իմ ազատությունը։ Ցեվ յերկյուղելով, վոր նա կփորձի ձայնը բարձրացնել ոգնության կանչելու նպատակով, յես այնպես արի, վոր նա տեսնի լռությունն պատվիրող արժանի գործիքը, վորը գտնվում եր իմ պարեգոտում։—«Ատրճանակ»,—ասաց նա։—

«Ի՞նչպես, վորդյակ իմ, դուք ուզում եք ինձ կյանքից զրկել, վորպեսզի ձեր յերախտապարտությունը հայտնեք այն սիրալիրության համար, վոր յես ունեցել եմ ձեր հանդեպ։ — «Ասված չանի», — պատասխանեցի ես։ «Դուք բավականին խելացի յեք և բանիմաց, վորպեսզի չհարկադրեք ինձ դիմելու այդպիսի ծայրահեղ անհրաժեշտության. սակայն յես ուզում եմ ազատ լինել և իմ վորոշումն այն աստիճան անհողդողդ է, վոր յեթե ընդդիմանաք և ծրագիրս չհաջողվի ձեր պատճառով՝ ձեր բանը բուրդ է»։ — «Բայց, սիրելի վորդյակ», — պատասխանեց նա ահաբեկված ու գունաթափ, — «ի՞նչ եմ արել ձեզ, ի՞նչ հիմք ունեք իմ մահը ցանկանալու»։—«Վո՛չ, վո՛չ», — պատասխանեցի յես անհամբերությամբ,—«յես վոչ մի դիտավորություն չունեմ ձեզ սպանելու. ուզում եք ապրել՝ բացեք դուռը և յես ձեր ամենալավ բարեկամն եմ»։ Ցեսս տեսա, վոր բանալիները սեղանի վրա յեն. վերցրի դրանք և խնդրեցի նրան հետևել ինձ, վորքան կարելի յե քիչ աղմուկ բարձրացնելով։

Նա հարկադրվեց կատարել իմ հրամանը։ Մինչդեռ մենք առաջ եյինք գնում, նա մեկը մյուսի յետևից բացում եր դռներն ու հառաչանքով կրկնում. «Ա՜խ, վորդյակ իմ, ա՜խ, վորդյակ իմ, ո՞վ կարող եր յերբեք մտածել»։—«Առանց աղմուկի, հայր իմ»,—յես ևս կրկնում եյի իմ կողմից ամեն բոպե։ Վերջապես մենք հասանք դրսի մեծ դռների առաջ հաստատված ցանկապատին։ Ցեսս արդեն ինձ ազատ եյի համարում և կանգնել եյի վանահոր յետև, մի ձեռքով մոմը բռնած, մյուսով՝ ատրճանակը։

Մինչդեռ նա աշխատում եր բանալ դուռը, մի ծառա, վորը քնած եր մերձավոր փոքր սենյակում, լսելով սողնակի աղմուկը՝ վեր կացավ և գլուխը դուրս հանեց դռնից։ Բարեսիրտ հայրը, ըստ յերևույթին, մտածելով, թե ծառան կարող է ինձ բռնել, անխոհեմություն ունեցավ նրան հրամայելու, վոր ոգնության հասնի իրեն։ Դա մի հաղթանդամ յերիտասարդ եր, վորն աներեր

հարձակվեց ինձ վրա։ Առանց այլևայլության յես կրակեցի և գնդակը դիպավ ուղիղ նրա կրծքին։—«Ահա թե ինչի՞ պատճառը յեղաք դուք, հայր իմ»,—ասացի առաջնորդիս մի փոքր հպարտությամբ։ «Սակայն թող այս ձեզ արգելք չլինի կատարելու ձեր անելիքը»,—ավելացրի յես, հրելով նրան դեպի վերջին դուռը։ Նա չհանդգնեց հրաժարվել դուռը բանալուց։ Յես բարեհաջողորեն դուրս յեկա և չորս քայլի վրա գտա Լեսկոյին, վորը յերկու բարեկամների հետ սպասում եր ինձ՝ իր խոստման համաձայն։

Մենք հեռացանք այնտեղից։ Լեսկոն ինձ հարցրեց, թե կարող եր պատահել, վոր ինքը լսած լիներ ատրճանակի կրակոց։—«Մեղքը ձերն է»,—ասացի նրան,—«ինչու համար ինձ լցված ատրճանակ բերիք»։—Այնուամենայնիվ յես նրան շնորհակալություն հայտնեցի իր այդ շրջահայացության համար, առանց վորի անշուշտ յերկար ժամանակ պիտի մնայի Սեն-Լազարում։ Գիշերելու նպատակով մենք գնացինք մի պանդոկապետի մոտ, ուր յես մի փոքր կազդուրվեցի, համարյա յերեք ամիս բանտային վատ ու անբավարար սնունդ ունենալուց հետո։ Սակայն յես չկարողացա լիովին անձնատուր լինել իմ յերջանկությանը։ Ինձ անասելի տանջում եր Մանոնի վիճակը։—«Պետք է նրան ազատել»,—ասացի բարեկամներիս։—«Յես միայն այս նպատակի համար եյի փափագում իմ ազատությունը։ Ոգ-

Նեցեք ինձ ձեր հնարամտությամբ. իսկ յես պատրաստ եմ զոհաբերելու մինչև իսկ կյանքս։

Լեսկոն, վորը զուրկ չեր խելքից և վոչ իսկ խոհեմությունից, նկատեց, վոր անհրաժեշտ և շրջահայաց լինել։ Սեն-Լազարից իմ փախուստը և այնտեղից դուրս գալու ժամանակ պատահած դժբախտությունն անխուսափելիորեն աղմուկ կբարձրացնի. վոստիկանության դլխավոր պետն անպայման կարգադրություն կանի ինձ ձերբակալելու. իսկ նա ամենազոր է։ Վերջապես, յեթե յես չեմ ուզում յենթարկվել ավելի վատթար դրության, քան այն, ինչ ունեցել եմ Սեն-Լազարում, ապա անհրաժեշտ է, վոր մի քանի որ թաղնվեմ և սենյակում փակված մնամ, մինչև վոր մեղմանա իմ թշնամիների զայրույթի առաջին բռնկումը։ Նրա խորհուրդը վողջամիտ եր. սակայն դրան հետևելու համար անհրաժեշտ եր, վոր ինքս ել վողջախոհ լինեյի։ Այդքան դանդաղկոտություն ու խոհեմություն չեյին համակերպվում իմ բուռն կրքի հետ։ Այնուամենայնիվ յես դիջեցի, համաձայնվելով հետևյալ ամբողջ որը միայն քնով անցկացնել։ Նա ինձ փակեց իր սենյակում, վորտեղ և յես մնացի մինչև յերեկո։

Այս ժամանակի մի մասը յես գործադրեցի ծրագիրներ կազմելով և հնարներ մտածելով՝ Մանոնին ազատելու համար։ Ցեսս միանգամայն համոզված եյի, վոր նրա բանտն ավելի անթափանցելի յե, քան իմը։ Բռնություն և ուժ գործ դնելու մասին մտածել իսկ չեր կարելի. պետք եր հնարամտություն։ Սակայն ինքը՝ հնարագիտության աստվածուհին անդամ չգիտեր, թե գործն ինչից պետք եր սկսել։ Ցեսս վոչ մի կերպ չկարողացա պարզել անելիքս, ուստի բարվոք համարեցի հետաձգել վորոնումները, մինչև վոր տեղեկություններ հավաքեմ արքելատան դիրքի և ներքին կարգ ու կանոնի մասին։

Հենց վոր գիշերն ինձ ազատություն բերեց, յես խնդրեցի Լեսկոյին ուղեկցելու ինձ։ Մեզ հաջողվեց դրուցել բարապաններից մեկի հետ, վորը մեզ թվաց վորպես բանիմաց մի մարդ։ Ցեսս ինձ ձևացրի ոտարա-

կան, վորին մեծ գովասանքով պատմել են ընդհանուր արգելատան և այնտեղ տիրող կարգերի մասին։ Ցեսնրան հարց ու փորձ արի ամենաչնչին մանրամասնություններին վերաբերյալ և քայլ առ քայլ հասա վարչապետներին, վորոնց անունները և բարեմասնությունները խնդրեցի հայտնել ինձ։ Բարապանի պատասխաններն իմ վերջին հարցին գլխումս մի միտք հղացրին, վորն ինձ բոլորովին դերեց և վորի իրագործումն յես անմիջապես ձեռնարկեցի։ Ցեսնրան հարցրի նաև,— վորպես թե դա իմ հետազոտության համար եյական կարևորություն ունեցող մի մանրամասնություն եր,— թե այդ պարոնները չունեն արդյոք յերեխաներ։ Նա պատասխանեց, թե այդ մասին չի կարող ինձ հավաստի տեղեկություններ տալ, սակայն ինչ վերաբերում է պ. դը Տ...ին, վորը գլխավոր վարչապետներից մեկն է, ապա նա գիտե, վոր այդ պարոնը հասունացած մի վորդի ունի, վորը բազմիցս հոր հետ յեկել է արգելատուն։ Այս տեղեկությունն ինձ համար բավական եր։

Ցեսնրան անմիջապես ընդհատեցի մեր խոսակցությունը և, տուն վերադառնալով, Լեսկոյին հաղորդեցի հղացած մտադրությունս.— «Ցեսնրան յենթադրում եմ»,— ասացի նրան,— «վոր պարոն դը Տ...ի վորդին, վորը հարուստ ու լավ ընտանիքից է, ինչպես իր հասակի յերիտասարդների մեծամասնությունը, սիրում է վա-

յելքներ։ Չի կարող պատահել, որ նա կնատյաց լինի, վոչ էլ այն աստիճան անմիտ, որ իր ծառայությունը մերժի սիրային մի գործում։ Ցեռ մտադիր եմ նրան շահագրգռել Մանոնի աղատությամբ։ Ցեթե նա աղնիվ մարդ է և զուրկ չէ զգացմունքներից, մեծահոգությունից դրդված նա իր աջակցությունը մեզ ցույց կտա։ Ցեթե նա անընդունակ է այսպիսի շարժառիթով վարվելու, ապա գոնե մի բան կանի գեղատեսիլ մի աղջկա համար, թեկուզ նրա շնորհներին արժանանալու հույսով։ Ցես չեմ ուզում հետաձգել իմ տեսակցությունը նրա հետ»,— ավելացրի յես,— «դա կլինի վոչ ուշ, քան վաղը։ Իմ ծրագիրն անչափ վոգևորում է ինձ և յես հավատացած եմ, թե սա լավ նշան է»։

Լեսկոն ինքն էլ համաձայնվեց, որ իմ մտքերը շատ հավանականություններ ունեն և մենք կարող ենք վորոշ հաջողություն ակնկալել այդ ճանապարհով։ Այդ գիշերը յես անցկացրի անխռով և սփոփված։

Ցերը լույսը բացվեց, յես՝ վորքան ներում եր իմ այն ժամանակվա ընչազուրկ դրությունը, հնարավորին չափ մաքուր հագնվեցի, կառք վարձեցի և գնացի պ. դը Տ...ի տունը։ Իրեն անծանոթ մի մարդու այցելությունը նրան շատ զարմացրեց։ Նրա դեմքի ու սիրալիր վերաբերմունքից դատելով լավ եյի նախադուշակել նրա մասին։ Նրա հետ յես բացատրվեցի ամենայն անկեղծությամբ և վորպեսզի հրահրեմ նրա բնական զգացումները, պատմեցի նրան՝ իմ սիրո և սիրուհուս արժանիքների մասին, իբրև յերկու բաների, վորոնք միմյանց համազոր են։ Նա ասաց, որ թեպետ Մանոնին յերբեք չի տեսել, սակայն լսել է նրա մասին, յեթե միայն խոսքն այն աղջկան է վերաբերում, վորը ծեր Գ... Մ...ի սիրուհին է յեղել։ Ցես բնավ չկասկածեցի, վոր նրան հայտնի յե այն մասնակցությունը, վոր յես ունեցել եմ սույն արկածում, և վորպեսզի իմ վստահությամբ միանգամայն շահեմ նրա բարյացակամությունը, պատմեցի նրան Մանոնի և ինձ հետ պատահած յեղելության բոլոր մանրամասնությունները։—

«Դուք տեսնում եք», — շարունակեցի յես, — «վոր իմ կյանքի և սրտի յերջանկությունը ձեր ձեռքումն է։ Ինձ համար մեկը մյուսից ավելի թանգ չէ։ Յես ձեզ հետ խոսում եմ միանգամայն անկեղծ, առանց մի բան թաքցնելու, վորովհետև ինձ հայտնի յե ձեր վեհանձնությունը. բացի այդ, մեր հասակների նմանությունն ինձ դրդում է հուսալ, վոր նույնպիսի նմանություն կա և մեր հակումների մեջ։

Ըստ յերևույթին նա շատ զգացված եր իմ անկեղծ ու անմեղ բացատրությունից։ Նա պատասխանեց վորպես աշխարհիկ և զգացմունքների տեր մի մարդ, զգացմունքներ, վոր բարձր հասարակությունը միշտ չի տալիս մարդուս, սակայն ստիպում է հաճախ կորցնել դրանք։ Նա ասաց, վոր իմ այցելությունը համարում է մի մեծ շնորհ, իսկ իմ բարեկամությունը՝ իր յերջանիկ նվաճումներից մեկը և թե ինքը պիտի ջանա արժանանալ իմ մտերմությանը՝ ինձ ծառայություն մատուցելու իր բուռն ցանկությամբ։ Նա չխոստացավ Մանոնին վերադարձնել. ինձ, վորովհետև, ասաց նա, իր հեղինակությունը չնչին է ու անհուսալի. սակայն նա ինձ հնարավորություն առաջարկեց՝ Մանոնին տեսնելու հաճույքն ունենալու և անելու այն ամենը, ինչ ներում են իր ուժերը, վորպեսզի նրան իմ գիրկը վերադարձնի։ Իր համեստ հեղինակության խոստովանությունն ավելի մեծ բավականություն պատճառեց ինձ, քան

յեթե նա անվերապահորեն խոստանար կատարել իմ բոլոր ցանկությունները։ Իր առաջարկությունների չափավորության մեջ յես տեսա նրա անկեղծության արտահայտությունը և դա մեծապես հիացրեց ինձ։ Մի խոսքով՝ յես կատարյալ վստահությամբ բոլոր հույսերս նրա վրա դրի։ Մանոնին տեսնելու հնարավորությունն ընձեռելու միակ խոստման փոխարեն յես պատրաստ եյի ամեն կերպ ընդառաջելու նրան։ Ինձ համակող այս զգացմունքները յես այնպիսի մի յեղանակով արտահայտեցի, վոր նա համոզվեց, թե յես ընությամբ չար չեմ։ Մենք զորովանքով գրկախառնվեցինք և դարձանք բարեկամներ՝ մեր սրտի բարության և բնական հակման հիմքով, վոր դրդում է քնքույշ և աղնիվ մարդուն սիրել իր նմանին։

Իր հարգանքի նշանները նա շատ ավելի հեռուները հասցրեց, վորովհետև մտածելով իմ արկածների մասին և դատելով, վոր Սեն-Լազարից դուրս գալուց հետո յես անհրաժեշտաբար դրամական նեղություն ունեմ, նա ինձ առաջարկեց իր քսակը և պնդեց, վոր ընդունեմ այն։ Սակայն յես չընդունեցի և ասացի նրան. «Դուք չափազանց բարի յեք, սիրելի պարոնս։ Յեթե ձեր բարության ու բարեկամության շնորհիվ յես բախտ ունեմ նամ տեսնելու իմ թանկագին Մանոնին, իմ ամբողջ կյանքում ձեզ յերախտապարտ կլինեմ։ Իսկ, յեթե դուք բոլորովին ինձ վերադարձնեք այդ սիրելի արարածը, ապա յես առհավետ ձեզ պարտական կմնամ, անգամ յեթե ձեզ համար թափելու լինեմ իմ ամբողջ արյունը»։

Մենք բաժանվեցինք, նշելով մեր հետևյալ տեսակցության վայրն ու ժամը։ Նա այնքան բարի գտնվեց, վոր չհետաձգեց մեր տեսակցությունը յերկար ժամանակով և առաջարկեց հանդիպել նույն որը՝ կեսորից հետո։

Յես սպասեցի նրան մի սրճարանում, ուր նա յեկավ ժամի չորսին և մենք միասին ուղևորվեցինք դեպի արգելատուն։ Իմ ծնկները դողում եյին, յերբ յես անցնում եյի բակով։ «Ո՜հ, սիրո ամենաղոր աստված», —

ասում էր յես,—«ուրեմն պիտի տեսնեմ իմ սրտի կուռքը, ամենքան արցունքների ու հույզերի առարկան։ Ցերկինք, ուժ տուր ինձ՝ նրա մոտ հասնելու և այնու հետև ինչ ուզում ես արա իմ բախտի ու կյանքի հետ. քեզնից ուրիշ շնորհ չեմ աղերսում»։

Պարոն դը Տ...ն խոսեց մի քանի բարապանների հետ, վորոնք բոլորն էլ շտապեցին պատրաստակամություն հայտնել՝ իրենց հնարավորության սահմաններում նրան ծառայելու։ Նա խնդրեց ցույց տալ միջանցքը, վորտեղ գտնվում էր Մանոնի խուցը, և ծառաներից մեկը մեզ առաջնորդեց դեպի այն կողմը՝ ձեռքին բռնած ահռելի մեծությամբ մի բանալի, վորով պիտի բացեր խցի դուռը։ Ցես հարցրի մեզ առաջնորդող սպասավորին, վորի հոգատարության տակ էր գտնվում Մանոնը, թե նա ինչպես է անցկացրել իր ժամանակը արգելատան մեջ։ Սպասավորը պատասխանեց, վոր նա հրեշտակի նման հեզահամբույր է. ինքը յերբեք նրանից վոչ մի անվայել խոսք չի լսել. իր բանտարկության առաջին վեց շաբաթվա ընթացքում նա անընդհատ արտասվել է. սակայն հետագայում կարծես ավելի մեծ համբերությամբ է տարել իր դժբախտությունը և այժմ առավոտից մինչև յերեկո ասեղնագործությամբ է զբաղված, բացառությամբ մի քանի ժամերի, վոր նվիրում է ընթերցանության։ Ցես նույնպես հարցրի նրան, թե արդյոք տանելի պայմաններում է ապրում Մանոնը։

Սպասավորը վստահացրեց, որ նրան յերբեվիցե չեն զրկել անհրաժեշտ բաներից։

Մենք մոտեցանք Մանոնի խցիկին։ Իմ սիրտը բաբախում եր ուժգնորեն։ Յես ասացի պ. դը Տ... ին. «Դուք մենակ մտեք և իմ այցի մասին նախապատրաստեք նրան, վորովհետև յես յերկյուղ եմ կրում, վոր ինձ հանկարծակի տեսնելով նա կարող է չափազանց հուզվել»։ Դուռը բացվեց։ Յես մնացի միջանցքում։ Այնուամենայնիվ յես լսեցի նրանց խոսակցությունը։ Պարոն դը Տ...ն Մանոնին ասաց, վոր յեկել է նրան փոքր ինչ սփոփելու. վոր ինքն իմ բարեկամներից է և մեծապես շահագրգռված է մեր յերջանկությամբ։ Մանոնը մեծ փութկոտությամբ հարցրեց նրան, թե նա արդյոք կարող է լուրեր հաղորդել իմ վիճակի մասին։ Պարոն դը Տ...ն խոստացավ ինձ ներկայացնել նրան նույնքան քնքույշ ու հավատարիմ, վորպիսին նա տենչում է տեսնել ինձ։ «Իսկ յերբ», — հարցրեց Մանոնը։ «Այսոր եթե», — պատասխանեց պ. դը Տ...ն,— «այդ յերջանիկ րոպեն հեռու չէ. ձեր ապաստը հենց այժմ կներկայանա, յեթե դուք ցանկաք»։ Մանոնը հասկացավ, վոր յես միջանցքումն եմ։ Յերբ յես ներս մտա, նա արագաբար դեպի դուռն եր նետվում։ Մենք գրկախառնվեցինք այն սիրաղեղ քնքշությամբ, վորի թովչանքը միմյանցից յերեք ամսով բաժանված իսկական սիրեկանները միայն կարող են զգալ։ Մեր հառաչանքները, ընդհատվող բացականչությունները, հազար ու մի սիրո անուններ, վոր մենք կրկնում եյինք քնքշանվաղ ձայնով, քառորդ ժամվա ընթացքում մի հուզող տեսարան ստեղծեցին պ. դը Տ...ի ներկայությամբ։—«Դուք իմ նախանձն եք շարժում»,— ասաց նա, հրավիրելով մեզ նստել, — «չկա մի ըղձալի վիճակ, վորը յես գերադասելի այսպիսի մի համայիչ ու գորովագին սիրուհուց»։ «Հենց դրա համար ել»,—պատասխանեցի նրան,—«յես կարհամարհեմ աշխարհի բոլոր կայսրությունները միայն թե իմ սիրուհուց սիրված լինելու ապահովությունն ունենամ»։

Ինստ ցանկալի այս զրույցը լի յեր անհուն քնքշ-

քշությամբ։ Խեղճ Մանոնը և յես միմյանց պատմեցինք մեր արկածները։ Մենք դառն արտասվեցինք՝ անդրադառնալով այն վիճակին, որի մեջ ապրում է նա և այն դրությանը, որից յես նոր դուրս եյի յեկել։ Պարոն դը Տ... ն մեզ մխիթարեց, նորից խոստանալով յեռանդուն գործել, որպեսզի վերջ դնի մեր տառապանքներին։ Նա մեզ խորհուրդ տվեց շատ չերկարել այս առաջին խոսակցությունը, որպեսզի ինքը հնարավորություն ունենա դյուրությամբ ձեռք բերել հետագա տեսակցությունների թույլտվությունը։ Շատ դժվարությամբ նրան հաջողվեց մեզ համոզելու հետևել իր խորհրդին։ Առանձնապես Մանոնն անզոր եր ինձնից բաժանվելու։ Հարյուր անգամ յես տեղից բարձրացա, հարյուր անգամն ել նա ինձ կրկին նստեցրեց։ Նա կառչում եր իմ զգեստներից ու ձեռքերից։ — «Ավաղ, ինչպիսի վայրում եք ինձ թողնում», — ասում եր նա։ «Ո՞վ կարող է յերաշխավորել, որ յես կրկին կտեսնեմ ձեզ»։

Պարոն դը Տ...ն խոստացավ ինձ հետ միասին հաճախակի այցելել նրան։ — «Ինչ վերաբերում է վայրին», — ավելացրեց նա սիրալիր, — «այսուհետև այն չպետք է անվանել արգելատուն. սա — Վերսայլն է այն օրից, յերբ այստեղ արգելափակվեց մի գեղեցկուհի, որն արժանի յե բոլոր սրտերի տիրապետությանը»։

Յերբ դուրս յեկանք, Մանոնին սպասավորող ծառային մի փոքր գումար տվի, որպեսզի խրախուսեմ

Նրան հոգատար յեռանդով սիրունուս ծառայել։ Այս սպասավորը նվազ ստոր, նվազ քարասիրտ մարդ եր, քան իր նմանները։ Նա ներկա յեր յեղել մեր տեսակցությանը։ Սրտաշարժ պատկերը հուզել եր նրան։ Ինձնից ստացած մի վոսկին նրան միանգամայն հոգուտ ինձ տրամադրեց։ Ցերը իջնում եյինք սանդուղքներից, նա ինձ մի կողմ տարավ։ «Պարոն», — ասաց նա, — «յեթե դուք կկամենաք ինձ ձեզ մոտ ծառայության վերցնել, կամ պատշաճորեն վարձատրել՝ այստեղից պաշտոնս կորցնելու դեպքում, յես կարծում եմ, վոր դյուրությամբ կարող եմ որիորդ Մանոնին ազատել»։

Ցես մեծ ուշադրությամբ ունկնդրեցի նրա այս առաջարկությանը և թեպետ զրկվել եյի իմ ամբողջ կարողությունից, բայց խոստացա շատ ավելի բան, քան ինքն եր պահանջում։ Ցես մտածում եյի, թե դժվար չի լինի վարձատրել այդ կարգի մի մարդու։ — «Համոզված յեղիր, բարեկամս», — ասացի նրան, «վոր չկա մի բան, վեր յես չանեմ քեզ համար և վոր քո բարեկեցությունը նույնպես ապահովված է, ինչպես և իմը»։ Ցես կամեցա իմանալ, թե նա ինչ միջոցներ է ուզում գործ դնել։ — «Դա շատ պարզ է», — պատասխանեց նա. — «յերեկոյան յես որիորդ Մանոնի խցիկի դուռը կբանամ և իրեն կբերեմ մինչև փողոցի դռները, ուր դուք պատրաստ պետք է լինեք նրան ընդունելու»։ Ցես հարցրի, թե չկա արդյոք վտանգ, վոր միջանցքներում կամ բակում պատահական հանդիպողը ճանաչի նրան։ Նա խոստովանեց, վոր այդ կողմից, իհարկե, վտանգ կա. սակայն, ավելացրեց նա, առանց դրան գործը գլուխ չի գա։

Թեպետ յես հիացած եյի, տեսնելով նրան այսպես վճռականորեն տրամադրված, այնուամենայնիվ կանչեցի պ. դը Տ...ին և նրան հայտնեցի այդ ծրագիրը և այն միակ հանգամանքը, վորը կարող է դա կասկածելի դարձնել։ Նա շատ ավելի դժվարություններ մատնանշեց, քան յես։ Նա լիովին համաձայնվեց, վոր Մանոնը կարող է այդ յեղանակով փախչել։ — «Սակայն,

յեթե նրան ճանաչեն», — շարունակեց նա, — «և ձերբակալեն փախչելիս, հավանականաբար նա իր ազատությունը կկորցնի միանգամ ընդմիշտ։ Բացի այդ, դուք իսկույն ևեթ ստիպված պիտի լինեք հեռանալ Փարիզից, վորովհետև ձեզ յերբեք չի հաջողվի միշտ խուսափել ձերբակալվելուց, աչքի առաջ ունենալով, վոր վորոնումները պիտի կրկնապատկվեն թե ձեր և թե նրա նկատմամբ։ Տղամարդու համար, յեթե նա մենակ է, հեշտ է խույս տալ հետապնդումից. բայց նրա համար գրեթե անկարելի յե անհայտ մնալ մի գեղեցիկ կնոջ հետ»։

Վորքան էլ այս դատողությունը հաստատուն հիմունքներ ունենար, այնուամենայնիվ դա չկարողացավ հաղթահարել իմ մտքում ծագած հույսը՝ Մանոնին շուտով ազատել բանտարկությունից։ Ցեսս հայտնեցի իմ կարծիքը պ. դը Տ...ին, խնդրելով, վոր նա ների իմ այդ փոքրիկ անխոհեմությունն ու հանդգնությունը, վոր սերը ներշնչում է ինձ։ Ցեսս ավելացրի, վոր իրոք մտադիր եմ հեռանալ Փարիզից, վորպեսզի բնակվեմ շրջակա գյուղերից մեկում, ինչպես այդ արել եմ արդեն մի անգամ։

Այսպես ուրեմն, մենք պայմանավորվեցինք սպասավորի հետ շատ չհետաձգել իր ծրագրի իրագործումը և հենց հետևյալ որը ձեռնարկել այն։ Իսկ վորպեսզի մեր ձեռնարկի հաջողությունն հաստատուն լինի, մենք

վորոշեցինք վերցնել տղամարդու զգեստներ՝ արգելատից դուրս գալը դյուրացնելու նպատակով։ Շատ էլ հեշտ բան չէր այդ զգեստները ներս տանելը, սակայն յես բավականաչափ հնարամիտ յեղա մի յելք գտնելու համար։ Ցես միայն պ. դը Տ...ին խնդրեցի հետևյալ որը հագնել յերկու թեթև վերնազգեստ. իսկ մնացածը ինքս հանձն առա։

Հաջորդ առավոտ մենք վերադարձանք արգելատուն։ Մանոնի համար յես վերցրել եյի սպիտակեղեն, գուլպաներ և այլն, իսկ կիսաբաճկոնիս վրայից հագել եյի մի սյուրտուկ, վորը ծածկում եր իմ ուռած գրպանների բավանդակությունը։ Մանոնի սենյակում մենք միայն մի րոպե մնացինք։ Պարոն դը Տ...ն նրան թողեց իր վերնազգեստներից մեկը. յես էլ տվի կիսաբաճկոնս. դուրս գալու համար ինձ բավական եր սյուրտուկս։ Ամեն ինչ կարգին եր նրա զգեստավորման տեսակետից, բացառությամբ միայն անդրավարտիքը, վորը յես դժբախտաբար մոռացել եյի։

Այդ անհրաժեշտ առարկայի մոռացումը մեզ ծիծաղ պիտի պատճառեր, յեթե նվազ լուրջ լիներ այն դժվարին կացությունը, վորի մեջ մեզ դցում եր դա։ Ցես հուսահատվեցի, վոր այդպիսի մի չնչին բան կարող է խափանել մեր ծրագրի իրագործումը։ Ի վերջո վորոշեցի ինքս դուրս գալ առանց անդրավարտիքի՝ այն թողնելով Մանոնին։ Սյուրտուկս յերկար եր և յես մի քանի գծդասեղների օգնությամբ այնպես հարմարեցրի զգեստս, վոր կարողացա վայելուչ կերպով դուրս գալ դռներից։

Որվա մնացած ժամերն ինձ անտանելի յերկար թվացին։ Վերջապես հասավ գիշերը և մենք կառքով մեկնեցինք դեպի արգելատուն և կանգ առանք դարպասից փոքր ինչ հեռու։ Ցերկար չսպասեցինք, Մանոնը շուտով իր առաջնորդի հետ հայտնվեց։ Կառքի դռնակները բաց եյին, յերկուսն էլ շտապով ներս մտան։ Ցես բաղուկներիս մեջ ընդունեցի իմ թանկագին սիրուհուն։ Նա դողում եր ինչպես մի տերև։ Կառապանն ինձ հարցրեց՝ թե ուր ենք գնալու։—«Քշիր մինչև աշխարհի ծայրը»,—

պատասխանեցի յես,—«տար ինձ մի այնպիսի տեղ, որ յես այլևս յերբեք չբաժանվեմ իմ Մանոնից»։

Հույզի ազդեցության ներքո ասած այս խոսքերը՝ հույզի, որին յես չեյի տիրապետում քիչ մնաց, որ փորձանք բերեր գլխիս։ Իմ բացականչությունը կառապանին կասկածի մեջ ձգեց և յերբ հետո յես նրան անվանեցի այն փողոցը, ուր ուզում եյինք գնալ, նա պատասխանեց, որ վախենում է անախորժ պատմության մեջ խճճվելուց։ Նա ասաց, որ կռահում է, թե Մանոն կոչված տղամարդը մի դեռատի աղջիկ է, որին յես փախցնում եմ արգելատնից և ինքը բնավ տրամադրված չե՛ի սեր ինձ իրեն վտանգի յենթարկելու։

Այդ անզգամի փափկանկատությունն առաջ եր գալիս ինձնից ավելի մեծ կառավարձ կորզելու ցանկությունից։ Մենք տակավին շատ մոտ եյինք արգելատանը, որպեսզի կամենայինք հակաճառության բռնվել նրա հետ։—«Լռիր միայն»,—ասացի յես նրան.—«և դու կվաստակես մի վոսկի»։ Այս իմ խոստումից հետո նա ինձ կոչներ հրդեհելու մինչև իսկ վողջ արգելարանը։ Մենք հասանք Լեսկոյի բնակած տունը։ Ժամանակն ուշ լինելու պատճառով պ. դը Տ... ն մեզանից հեռացավ, խոստանալով այցելել մյուս որը։ Արգելատան սպասավորը մնաց մեզ հետ։

Յես այնպես պինդ եյի սեղմել Մանոնին իմ բազուկներում, որ մենք յերկուսով մի տեղ եյինք գրավում կառքի

մեջ։ Նա լալիս էր ուրախությունից և չես զգում էր, թե նրա արցունքները ինչպես են թրջում իմ այտերը։

Ցերբ մենք հասանք Լեսկոյի տունն և դուրս չեկանք կառքից, չես նորից կառապանի հետ վեճի բռնվեցի. վոր հետևանքները կործանարար հանդիսացան։ Ցես զըղջացի, վոր նրան խոստացել եմ մի վոսկի վոչ միայն նրա համար, վոր պարգևը չափից դուրս մեծ էր, այլ մի ուրիշ հիմքով, այսինքն՝ վճարելու անկարողությանս պատճառով։ Ցես մարդ ուղարկեցի Լեսկոյի չետևից։ Նա իջավ իր սենյակից և դուրս չեկավ փողոց։ Ցես նրա ականջին ասացի, թե ինչ դժվար կացության մեջ եմ գտնվում։ Նա չափազանց կոպիտ բնավորություն ուներ և բնավ վարժված չէր քաղաքավարությամբ խոսել կառապանների հետ, ուստի ինձ պատասխանեց, թե չես չերևի ծիծաղում եմ։—«Մի վոսկի՞»,—ավելացրեց նա,—«քսան գավազանի հարված պետք է տալ այս անպիտանին»։— Իզուր չես ճգնեցի մեղմացնել նրա զայրույթը, ասելով, վոր նա մեզ կկործանի. նա ձեռիցս խլեց գավազանը՝ կառապանին ծեծելու մտադրությամբ։ Այս վերջինս, վորը չերևի արդեն բազմիցս գործ էր ունեցել գվարդիականների կամ մուսկետավորների հետ, վախից փախուստի դիմեց իր կառքով՝ գոռալով, վոր չես խաբել եմ իրեն և սպառնալով, թե մենք դեռ կտեսնվենք։ Իզուր չես կանչում էի նրան կանգ առնել։

Նրա փախուստը ծայր աստիճան անհանգստացրեց ինձ։ Ցես բնավ չէի տարակուսում, վոր նա կգնա կոմիսարին հայտնելու։—«Դուք ինձ կործանում եք»,—ասացի չես Լեսկոյին.—«ձեզ մոտ չես ապահով չեմ կարող լինել. անհրաժեշտ է, վոր մենք անմիջապես հեռանանք այստեղից»։ Ցես ձեռքս մեկնեցի Մանոնին, խնդրելով քայլել և մենք հապճեպ հեռացանք սույն վտանգավոր փողոցից։ Լեսկոն հետևեց մեզ։

Ապետ դե Գրիյոյի այս պատմությունը տևեց մի ժամից ավելի։ Ցեսլ խնդրեցի նրան փոքր ինչ դադար առնել և ընկերակցել մեզ՝ ընթրիք անելու։ Մեր լարված ուշադրությունից նա հասկացավ, որ հաճույքով ենք լսել իրեն։ Նա վստահացրեց, որ իր պատմության շարունակությունն ավելի հետաքրքրական ու ուշադրավ պիտի լինի մեզ համար և, յերբ վերջացրինք ընթրիքը, նա շարունակեց հետևյալ խոսքերով։

ՄԱՆՈՆ ԼԵՍԿՈ

ՅԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ



ՅԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

Զարմանալի յե, թե նախախնամությունն ինչպես ե կապակցում դեպքերը։ Հազիվ մենք քայլել եյինք հինգվեց րոպե, յերբ մի մարդ, վորի դեմքը յես չկարողացա տեսնել, ճանաչեց Լեսկոյին։ Անկասկած նա սոսկ չարամիտ դիտավորությամբ եր փնտրում նրան իր տան մոտերքում, վորը և իսկույն իրագործեց։ — «Սա Լեսկոն ե», — ասաց նա, ատրճանակը կրակելով նրա վրա։ «Նա այսոր կգնա հրեշտակների հետ ընթրելու», և մի ակնթարթում անհետացավ։ Լեսկոն ընկավ անկենդան։ Ցեսս ստիպեցի Մանոնին փախչել, վորովհետև մեր ոգևորությունն ապարդյուն եր մի դիակի համար և բացի այդ, վախենում եյի, թե մեզ կարող ե ձերբակալել դիշե-

լային պահապանը, որն անտարակույս շուտով պիտի հայտնվեր։ Սպասավորի և Մանոնի հետ յես անմիջապես անցա առաջին հատող նրբափողոցը։ Մանոնն այնպես եր հուզված, որ յես հազիվ եյի կարողանում նրան վոտքի վրա պահել։ Վերջապես նրբափողոցի ծայրում մի կառք նկատեցի։ Մենք նստեցինք այդ կառքը, սակայն յերբ կառապանն ինձ հարցրեց, թե ուր ենք ուզում գնալ, յես չիմացա՝ ինչ ասեմ։ Վոչ վստահելի ապաստարան ունեյի, վոչ ել հավատարիմ բարեկամ, որին կարողանայի ապավինել։ Յես չունեյի և դրամ, հազիվ կես պիստոլ կար քսակումս։ Վախն ու հոգնածությունն այնպես հուզել ու ուժասպառ եյին արել Մանոնին, որ նա՝ համարյա ուշաթափ՝ թեքվել եր ինձ վրա։ Բացի դրանից, Լեսկոյի սպանությունը կաշկանդել եր յերևակայությունս և յես տակավին վախենում եյի գիշերային պահապանից։ Ի՞նչ վորոշել։ Բարեբախտաբար հիշեցի Շայոյի պանդոկը, վորտեղ մի քանի որ անց եյի կացրել Մանոնի հետ, յերբ գնացել եյինք այդ գյուղում բնակություն հաստատելու։ Յես հույս ունեյի, որ այնտեղ թե ապահովություն կգտնեմ և թե կարող կլինեմ վորոշ ժամանակ ապրել, առանց ստիպված լինելու անմիջապես վճարելու։ «Տար մեզ Շայոյ»,— ասացի կառապանին։ Նա հրաժարվում եր ուշ գիշերով մեզ տանել այնտեղ, յեթե չվճարեմ մի պիստոլ. մտատանջության նոր առիթ։ Վերջապես համաձայնվեցինք վեց ֆրանկով. քսակումս յեղած ամբողջ գումարն այդ եր։

Ճանապարհին յես մխիթարում եյի Մանոնին, մինչդեռ սրտիս խորքում հուսահատություն եր տիրում։ Յես հազար անգամ ինքնասպան կլինեյի, յեթե բազուկներիս մեջ չլիներ այն միակ եյակը, որն ինձ կապում եր կյանքին։ Սույն միտքը միայն պահում եր արիությունս։— «Համենայն դեպս, իմ Մանոնն ինձ հետ եռ»,—ասում եյի յես. «նա սիրում է ինձ. նա իմն է։ Թող Տիբերժն ինչ ուզում է ասի — յերջանկությունը պատրանք չե։ Թող կործանվի վողջ աշխարհը, իսկ յես

անտարբեր կմնամ։ Ինչու։ Վորովհետև բացի իմ սիրուց ինձ վոչինչ չի հետաքրքրում այս աշխարհումդ։

Այս զգացումը միանգամայն անկեղծ եր. սակայն մինչդեռ ինքս այսպես չնչին նշանակություն եյի տալիս յերկրավոր բարիքներին, յես զգում եյի, վոր ինձ հարկավոր է դոնե այդ բարիքների մի անհշան մասն ունենալ, վորպեսզի ավելի վեհանձնորեն կարողանամ արհամարհել մնացածը։ Սերն ամեն կարգի բարիքներից, բոլոր գանձերից ու հարստություններից ամենաթանկագինն է. այնուամենայնիվ սերը շատ հաճախ դրանց կարիքն ունի և վոչ մի բան ավելի հուսահատական չե նրբազգաց մի սիրեկանի համար, քան՝ հակառակ իր կամքի՝ տեսնել իրեն ստոր մարդկանց կոպտության յենթակա։

Ժամի տասնմեկն եր, յերբ հասանք Շայու Պանդոկում մեզ ընդունեցին վորպես նախկին ծանոթների։ Մանոնի տղամարդու շորերը վոչ վոքի չզարմացրին, վորովհետև Փարիզում և նրա շրջակայքում վարժված են կանանց տեսնել ամեն ձևի հագուստներով։ Յես կարգադրեցի, վոր նրան ամեն տեսակ ծառայություն մատուցեն, և վոր նա վոչ մի բանի պակասություն չզդա, իրը թե դրամի կողմից յես ամենափայլուն վիճակումն եմ։ Մանոնը չգիտեր իմ դրամական նեղ դրությունը։ Յես չեյի ուզում, վոր նա գիտենա այդ մասին և վորոշել եյի հետևյալ որն ևեթ վերադառնալ

Փարիզ, այնտեղ այս անախորժ հիվանդության դեմ վորևե բուժիչ միջոց վորոնելու համար։

Ընթրիքի ժամանակ նա ինձ թվաց գունատ ու նիհարած։ Այդ յես չեյի նկատել արդելատանը, վորովհետև սենյակը, ուր տեսել եյի նրան, բավականին լուսավորված չեր։ Յես հարցրի նրան, թե գուցե դա հետևանք է այն սարսափի, վորին նա յենթարկվեց, յերբ իր աչքի առաջ սպանեցին յեղբորը։ Նա հավատացրեց ինձ, վոր թեպետ այդ դեպքը ծայր աստիճան հուզել է իրեն, սակայն իր գունատությունը հետևանք է այն բանի, վոր նա յերեք ամիս չի տեսել ինձ։—«Ուրեմն դու այդպես բուռն ես ինձ սիրում»,— ասացի յես։— «Հազար անգամ ավելի, քան այդ կարողանում եմ արտահայտել»։—«Ուրեմն ինձ այլևս չես լքի»,—ավելացրի յես։—«Վոչ, յերբեք»,—բացականչեց նա։ Յեվ այս հավաստիացումը հաստատեց այնպիսի փաղաքշանքներով ու յերդումներով, վոր իրոք ինձ թվաց, թե անհնար է, վոր նա կարողանա յերբևիցե մոռանալ դրանք։ Յես միշտ հավատացած եմ յեղել, վոր նա անկեղծ եր. ինչ դրդապատճառ ուներ իրեն այդ աստիճան կեղծավոր ցույց տալու։ Սակայն Մանոնն անչափ թեթևամիտ եր կամ ավելի շուտ՝ նա միանգամայն գլուխը կորցնում եր, յերբ տեսնում եր, վոր իր աչքի առաջ ուրիշ կանայք ճոխության մեջ են ապրում, մինչդեռ ինքը խարխափում է չքավորության ու կարիքի մեջ։ Յես շուտով ստացա Մանոնի այսպիսի անկայուն խառնվածքի վերջին ապացույցը, վորը գերազանցեց բոլոր մյուսներին և առաջ բերեց ամենաանորինակ արկածը, վորպիսին հազիվ թե յերբևե պատահած լինի իմ ծագման ու կարողության տեր մի մարդու հետ։

Լավ դիտենալով Մանոնի բնավորությունը, մյուս առավոտ յես շտապեցի դեպի Փարիզ։ Նրա յեղբոր մահը, ինձ ու նրա համար սպիտակեղեն ու շորեր ձեռք բերելու անհրաժեշտությունը միանգամայն հարգելի պատճառներ եյին, վորպեսզի ստիպված լինեմ ուրիշ պատրվակների դիմելու։ Պանդոկից յես դուրս յեկա այն

մտադրությամբ, ինչպես ասացի Մանոնին ու պանդոկապետին, վոր կառք վարձեմ, բայց դա միայն պարծենկոտություն եր. կարիքն ինձ ստիպում եր վոտքով գնալ։ Ցես արագ քայլեցի դեպի Կուր-լա-Ռեն, ուր մտադիր եյի կանգ առնել։ Ինձ անհրաժեշտ եր գեթ մի բոպե առանձնանալ, վորպեսզի կարողանամ հանդարտ խորհել ու կշռադատել, թե ինչ պիտի անեմ Փարիզում։

Ցես նստեցի կանաչի վրա և խորասուզվեցի մտքերի ու դատողությունների ծովը, հոգետանջ մտքեր, վորոնք կամաց-կամաց հանգան յերեք դլխավոր կետերի։ Ինձ անհապաղ ոգնություն եր պետք՝ ներկայումս անհետաձգելի իմ բազմաթիվ կարիքների համար։ Ցես պետք ե վորոնեյի իմ ապագայի նկատմամբ հույս ներշնչող ուղի. և թե՝ պակաս կարևոր չեր, ինձ անհրաժեշտ եր տեղեկություններ ձեռք բերել ու միջոցների դիմել՝ Մանոնի և իմ անվտանգությունն ապահովելու համար։ Ցերեք կետերից կազմված այս ծրագրի ու կոմբինացիաների վրա ուժասպառ լինելուց հետո, յես այնուամենայնիվ բարվոք համարեցի հրաժարվել վերջին յերկուսից։ Մենք կարող կլինենք մեզ միանգամայն ապահով զգալ, ապրելով Շայոյում վարձած մի սենյակում. իսկ ինչ վերաբերում ե մեր ապագա կարիքներին, ապա յես յենթադրում եյի, թե դեռ ժամանակ կունենամ այդ մասին խորհելու, յերբ կբավարարեմ մեր ներկա կարիքները։

Ուստի հիմա հարցն այն եր, թե ինչպես լցնեմ իմ քսակը։ Պարոն դը Տ...ն վեհանձնաբար առաջարկել եր իրենը. սակայն ինքս նրան այդ մասին հիշեցնելու մտքից անգամ սաստիկ խորշում եյի։ Ի՞նչ մարդ պետք է լինեյի յես, վոր մի ստորականի պատմելով իմ թշվառությունը, խնդրեյի նրան ինձ մասնակից անել յուր կարողությանը։ Միայն ստորաքարշ մարդն է ընդունակ այդ անելու՝ շնորհիվ իր նվաստության, վորն արգելք է հանդիսանում նրան զգալու իր վարմունքի ստորությունը, կամ մի խոնարհ քրիստոնյա՝ շնորհիվ իր անչափ մեծահոգության, վորը նրան բարձր է դասում ամոթի զգացումից։ Ցես վոչ ստորաքարշ մարդ եյի, վոչ ել մոլեռանդ քրիստոնյա. արյանս կեսը կտայի, միայն թե խուսափեյի այդպիսի նվաստացումից։

«Տիբերժը»,—ասացի յես ինձ, — «իմ բարի Տիբերժը, մի՞թե պիտի մերժի այն, ինչ հնարավորություն ունի ինձ տալու։ Վա՜յ, իմ թշվառությունը կշարժի նրա սիրտը։ Սակայն նա ինձ կսպանի իր բարոյախոսությամբ։ Պետք է կրել նրա կշտամբանքները, հորդորները, սպառնալիքները. նա այնքան թանկ կծախի իր ոգնությունը, վոր յես ավելի շուտ արյանս մի մասն ել կտամ, քան թե կհամաձայնվեմ ինձ յենթարկել այդպիսի դառն փորձության, վորն իմ սրտում նոր հույզեր ու խոցեր պիտի առաջացնի։ Լավ»,—շարունակեցի յես իմ խորհրդածությունները,—«պետք է, հետևաբար, հրաժարվել վորևե հույսից, քանի վոր ուրիշ յելք չեմ տեսնում և յես այնքան հեռու յեմ այդ յերկու կետերն ընդունելուց, վոր ամենամեծ հոժարությամբ արյանս կեսը կթափեմ, քան կգնամ այդ ճանապարհներից վորևե մեկով, այսինքն՝ յես կթափեմ իմ ամբողջ արյունը, քան կգնամ այդ յերկու ճանապարհով։ Այո՛, իմ ամբողջ արյունը»,—ավելացրեցի յես փոքր ինչ մտածելուց հետո,—«կասկած չկա, վոր յես ավելի սիրով կթափեմ արյունս, քան ինձ թույլ կտամ ստորացնող աղերսանքներ անելու»։

«Սակայն մի՞թե հարցը վերաբերում է իմ արյանը։

Հարցը վերաբերում է Մանոնի կյանքին ու գոյությանը։ Հարցը վերաբերում է իմ սիրուն և Մանոնի հավատարմությանը։ Ի՞նչով կարող եմ ես վարձահատույց լինել նրան։ Մինչև հիմա վոչ մի բանով ես չեմ կարողացել այդ անել. նա ինձ համար փոխարինում է փառքը, երջանկությունը, հարստությունը։ Անշուշտ շատ բաներ կան, վորոնց համար ես կյանքս կզոհաբերեմ, վորպեսզի ձեռք բերեմ դրանք կամ խուսափեմ դրանցից. սակայն մի բան մեծարել ավելի, քան իմ կյանքը՝ դա դեռ չի նշանակում այն մեծարել ՝ավելի, քան Մանոնին»։

Այս խորհրդածությունից հետո ես հանդա մի վորոշման։ Շարունակեցի ճանապարհս, վճռելով նախ գնալ տեսնել Տիբերժին և ապա պ. դը Տ... ին։

Փարիզ մտնելով՝ ես մի կառք վարձեցի, թեև նրան վճարելու համար վոչինչ չունեցի. հույսս դրել եյի այն ոգնության վրա, վորը գնում եյի հայցելու։ Կառապանին հրամայեցի ինձ տանել Լյուքսեմբուրգյան պալատեզը և այնտեղից լուր տվի Տիբերժին, վոր սպասում եմ նրան։ Նա իր արագությամբ կարճեց իմ անհամբերությունը։ Առանց այլևայլության ես նրան պատմեցի իմ ծայրահեղ կարիքի մասին։ Նա հարցրեց, թե արդյոք բավական է այն հարյուր պիստոլը, վոր ես վերադարձրել եյի նրան. և առանց վորևե առարկության իսկույն ևեթ գնաց այդ դրամը բերելու՝ վոչինչ չմերժելու

այն սրտաբաց պատրաստակամությամբ ու հաճույքով, վորը հատուկ է միայն սիրո և ճշմարիտ բարեկամության։

Թեպետ և յես վոչ մի կասկած չունեյի իմ խնդրանքի հաջողության վրա, այնուամենայնիվ չեյի սպասում, թե այդքան եժան գնով կկարողանամ ձեռք բերել այն, այսինքն՝ առանց վոր նա կշտամբի ինձ՝ մեղա չգալուս համար։ Բայց սխալվում եյի, կարծելով, թե միանգամայն ազատ պիտի լինեմ նրա հանդիմանությունից, վորովհետև դրամը համբերելուց հետո, յերբ յես պատրաստվում եյի հեռանալ նրանից, նա խնդրեց գնալ փոքր ինչ զբոսնել ծառուղիում։ Մանոնի մասին վոչինչ չեյի ասել նրան։ Նա չգիտեր, վոր նա ազատված է, այս պատճառով նրա բարոյական խրատները դարձան Սեն-Լազարից կատարած իմ հանդուգն փախուստի և այն յերկյուղի շուրջը, թե Սեն-Լազարում ինձ ավանդված խոհեմության դասերից ոգտվելու փոխարեն յես կարող եմ դարձյալ անառակ կյանքի ուղին բռնել։

Նա ասաց, վոր իմ փախուստի հաջորդ որն ինձ այցի գնալով Սեն-Լազար, նա անասելի սարսափել է, յերբ իմացել է իմ այնտեղից դուրս գալու յեղանակը։ Այս մասին խոստկցություն է ունեցել վանահոր հետ, վորը սարսափից տակավին սթափված չի յեղել։ Այնուամենայնիվ այդ բարեսիրտ վանահայրը վոստիկանության գլխավոր պետից մեծահոգությամբ թաքցրել է իմ փախուստի հանգամանքը և ջանացել, վոր բարապանի մահվան լուրը չտարածվի դրսում։ Այսպիսով այս կողմից կարող եմ չանհանգստանալ։ Սակայն, յեթե տակավին յես պահել եմ իմաստության ամենաչնչին մասնիկն անգամ, ապա յես պետք է ոգտվեմ իմ գործերի սույն յերջանիկ ընթացքից, վոր տալիս է յերկինքը։ Յես պարտավոր եմ անմիջապես հոր գրել և վերահաստատել իմ հարաբերությունները նրա հետ։ Իսկ յեթե գեթ մի անգամ կամենում եմ հետևել իր՝ Տիրերժի խորհրդին, ապա նրա կարծիքով յես պետք է թողնեմ Փարիզը և վերադառնամ իմ ընտանիքի գիրկը։

Ցեռ մինչև վերջը լսեցի նրա խոսքերը։ Նրանց մեջ ինձ համար շատ գոհացուցիչ բաներ կային։ Նախ և առաջ անսահման ուրախ եյի, որ կարող եմ Սեն-Լազարի կողմից վոչ մի յերկյուղ չունենալ։ Կարծես թե Փարիզի փողոցներն ինձ համար դարձան մի ազատ յերկիր։ Յերկրորդ, յես հրճվում եյի, որ Տիբերժը վոչինչ չգիտե Մանոնի ազատության և ինձ մոտ վերադառնալու մասին։ Յես նույնիսկ նկատեցի, որ նա խուսափում է Մանոնի մասին խոսելուց, յերևի կարծելով, թե նա այլևս քիչ տեղ է դրավում իմ սրտում, քանի որ յես այդքան հանդիստ ու անտարբեր եմ նրա վիճակի նկատմամբ։ Յես վորոշեցի, յեթե չվերադառնալ իմ ընտանիքը, գոնե գրել հորս, ինչպես Տիբերժն եր խորհուրդ տալիս և հայտնել, որ պատրաստ եմ կատարելու վորդիական իմ պարտականությունը և հնազանդվել նրան։ Յես հույս ունեյի, թե այսպիսով կկարողանամ նրանից դրամ ստանալ՝ ակադեմիայում իմ դասընթացքը շարունակելու պատրվակով. վորովհետև ինձ համար դյուրին չեր լինի համոզել նրան, որ մտադիր եմ հոգևոր դաս վերադառնալու։ Յեվ հիրավի. իմ սրտի խորքում յես բնավ հեռու չեյի անելիք խոստումս իրագործելու մտքից։ Ընդհակառակը, յես շատ ուրախ կլինեյի զբաղվել վորևե պատվաբեր ու արժանավայել գործով, յեթե միայն այս դիտավորությունս կարողանար համակերպվել իմ սիրո հետ։ Յես մտածում եյի ապրել Մանոնի հետ և միև-

նույն ժամանակ սովորել ակադեմիայում։ Մեկը մյուսին բնավ չեր խանգարում։

Ցեռ այն աստիճան գոհ եյի այս բոլոր մտքերից, վոր Տիբերժին խոստացա նույն որն ևեթ մի նամակ ուղարկել հորս։ Նրանից բաժանվելով, յես իրոք մտա փոստատուն և այնպիսի մի սրտառուչ ու խոնարհ նամակ գրեցի, վոր յերբ ինքս կարդացի այն, հաստատապես համոզվեցի, վոր նորից պիտի նվաճեմ հորս սիրտն ու գորովանքը։

Թեպետ այժմ՝ Տիբերժից հեռանալուց հետո՝ յես ի վիճակի եյի կառապան վարձել և վճարել նրան, այնուամենայնիվ յես ուզեցի ինձ հաճույք պատճառել, վոտքով հպարտ քայլելով դեպի պարոն դը Տ...ի տունը։ Ցեռ մեծ բավականություն եյի զգում այսպես համարձակ վայելել իմ ազատությունը, վորի մասին կարող եյի այլևս վոչ մի յերկյուղ չունենալ, ինչպես վստահացրել եր ինձ բարեկամս։ Սակայն իմ մտքով հանկարծ անցավ, վոր նրա հավաստիացումները վերաբերում են սոսկ Սեն-Լազարին, մինչդեռ ինձ վրա բացի նրանից ծանրացած է նաև արգելատնից Մանոնին հափշտակելու հանգամանքը, չհաշված Լեսկոյի մահը, վորին յես մասնակից եյի գոնե վորպես վկա։ Այս միտքն ինձ այն աստիճան սարսափեցրեց, վոր յես թաքնվեցի առաջին պատահած ծառուղիում և այնտեղից կառք կանչեցի։ Կառապանին հրամայեցի ինձ ուղիղ տանել պ. դը Տ...ի մոտ, վորին զվարճացրի իմ յերկյուղի պատմությամբ։ Դա ինձ ևս ծիծաղելի յերևվաց, յերբ նա հաղորդեց, վոր վոչ արգելատան կողմից և վոչ ել Լեսկոյի սպանության առիթով յես հիմք չունեմ վախենալու։ Նա ինձ ասաց, վոր յերկյուղելով, թե մի գուցե կարող են կասկածել, վոր ինքն ել է մասնակցել Մանոնի հափշտակմանը, նա հենց նույն առավոտ գնացել է արգելատուն և խնդրել, վոր իրեն թույլ տան այցելելու նրան, ձևացնելով, թե վոչինչ չգիտե պատահածի մասին։ Վոչ միայն արգելատանը վոչ վոք չի մտածում մեղադրել իրեն կամ ինձ, այլ

ընդհակառակը, այնտեղ շտապել են նրան հայտնելու այդ դեպքը վորպես մի արտակարգ նորություն։ Բոլորին զարմացրել է այն հանգամանքը, վոր Մանոնի նման մի սիրուն աղջիկ վճռել է փախչել մի սպասավորի հետ։ Նա այս ամենին պատասխանել է սառնությամբ, վոր ինքը դրան բնավ չի զարմանում և վոր հանուն աղատության մարդ վոչ մի միջոցի առաջ կանգ չի առնի։

Նա շարունակեց պատմել, վոր արգելատնից գնացել է Լեսկոյի մոտ՝ ինձ և իմ գեղեցիկ սիրուհուն այնտեղ գտնելու հույսով, սակայն տանտերը, վորը կառեթագործ է, հայտնել է, թե նա չի տեսել վոչ Մանոնին, վոչ էլ ինձ, բայց զարմանալի չել չէ, վոր մենք չենք չեղել իր մոտ, վորովհետև քանի վոր Լեսկոյին պիտի հանդիպեցինք, ապա անկասկած պետք է և լսած լինեյինք, վոր Լեսկոն սպանվել է մոտավորապես նույն ժամանակին։ Ըստ վորում, տանտերը չի հրաժարվել բացատրելու, վոր ինքը գիտե այդ սպանության պատճառն ու հանգամանքները։ Մոտավորապես դրանից յերկու ժամ առաջ Լեսկոյի բարեկամ գվարդիականներից մեկը յեկել է նրա մոտ և առաջարկել թուղթ խաղալ։ Լեսկոն թղթախաղում այնքան արագ է տարել, վոր մի ժամվա ընթացքում մյուսը զրկվել է իր հարյուր եկյուից, այսինքն՝ մոտը բոլորովին փող չի մնացել։ Այդ թշվառականն առանց մի սուի մնալով, խնդրել

և Լեսկոյին տանուլ տված դումարի կեսը իրեն փոխ տալ, և այս առթիվ ծագած տարաձայնությունից նրանք սկսել են մի կատաղի կռիվ։ Լեսկոն հրաժարվել է դուրս գալ փողոց՝ սուսերով մենամարտելու համար, իսկ մյուսը հեռանալիս յերդվել է նրա գլուխը ջախջախել առաջին իսկ հանդիպումին, վոր և կատարել է հենց նույն յերեկո։ Պարոն դը Տ...ն սիրալիրությամբ ավելացրեց, վոր նա խիստ անհանգստացել է մեզ համար և շարունակեց իր ծառայություններն առաջարկել մեզ։ Ցես վոչ մի բոպե չտատանվեցի՝ հայտնելու նրան մեր ապաստարանի տեղը։ Նա իմ բարեհաճ թույլտվությունը խնդրեց՝ մեզ հետ ընթրելու։

Ցես պետք է միայն սպիտակեղեն ու հագուստներ վերցնեյի Մանոնի համար, ուստի ասացի նրան, վոր կարող ենք հենց նույն ժամին մեկնել, յեթե միայն նա կհաճի ինձ հետ մի բոպե կանգ առնել վաճառատներում։ Զգիտեմ, մտածեց նա արդյոք, վոր յես այդ առաջարկությունն անում եմ նրա առատաձեռնությունից ոգտվելու նպատակով, կամ գուցե դա բղխում եր իր մեծ հոգու դրդումից, բայց՝ համաձայնվելով հենց նույն բոպեյին մեկնելու, նա ինձ տարավ իրեն հայթայթող վաճառականների մոտ։ Նա ինձ ընտրել տվեց զանազան կտորեղեններ, վորոնց գինը շատ ավելի մեծ եր, քան յես տրամադիր եյի վճարելու և, յերբ ուզեցի հաշիվ տեսնել, նա բացարձակապես արգելեց վաճառականներին ստանալ ինձնից թեկուզ մի սու։ Այս սիրալիրությունը նա ցույց տվեց այնպիսի մի շնորհալի հոժարակամությամբ, վոր յես մտածեցի, թե կարող եմ առանց ամոթի ընդունել այն։ Մենք միասին բռնեցինք Շայոյի ճանապարհը, ուր յես հասա նվազ մտատանջ, քան մեկնել եյի այնտեղից։

Իմ ներկայությունը և պ. դը Տ...ի սիրալիր վերաբերմունքը բոլորովին փարատեցին Մանոնի թախիծը։— «Մոռանանք մեր անցած սարսափները», — ասացի յես նրան տուն վերադառնալով, — «և վերսկսենք մի նոր, ավելի յերջանիկ կյանք։ Վերջիվերջո, սերը մի բարի

տնորեն է. ճակատագիրը չի կարող այնքան վշտեր պատճառել մեզ, որքան հաճույքներ սերն է պատճառում»։ Մեր ընթրիքը վերածվեց իսկական տոնախմբության։

Իմ Մանոնի հետ ու հարյուր պիստոլով յես ինձ ավելի հպարտ ու յերջանիկ եյի զդում, քան Փարիզի ամենահարուստ վաճառականը՝ իր դիզած գանձերով։ Հարստություն պետք է համարել այն միջոցները, որոնք բավարարություն են տալիս մեր ցանկություններին։ Մինչդեռ յես այլևս չունեյի չիրագործված ցանկություն։ Անգամ ապագան քիչ եր անհանգստացնում ինձ։ Յես դրեթե վստահ եյի, որ հայրս դժվարություն չի հարուցի ինձ միջոցներ հայթայթելու՝ Փարիզում պատվավոր կերպով ապրելու համար, որովհետև լինելով քսան տարեկան, յես ստանում եյի մորս կարողությունից ինձ հասանելիք ժառանգության իրավունքները։ Յես Մանոնից չթաքցրի, որ իմ հարստությունը կազմում է հարյուր պիստոլ։ Այս գումարը բավական եր, որպեսզի մենք հանդարտ սպասենք ավելի լավ որերի, որոնք, ինձ թվում եր, անկասկած պիտի հասնեյին, աչքի առաջ ունենալով իմ ժառանգական իրավունքները կամ թղթախաղից ստացածներս։

Այսպես, առաջին շաբաթների ընթացքում յես ուրիշ հոգս չունեյի, քան իմ անդորը վիճակի պարգևած վա-

յելքները։ Եվ վերջիվերջ մի կողմից պատվի զգացումը և մյուս կողմից վոստիկանության վախն ինձ ստիպում էր որեցոր հետաձգել Տրանսիլվանյան խաղատան ընկերակիցներիս հետ կապ վերահաստատելը, ապա յես քավականացա խաղալ նվազ վատահամբավ ժողովարաններում, ուր բախտի բերումն ինձ ազատեց խարդախության դիմելու նվաստացումից։

Ցեռճաշյա ժամանակի մի մասը յես անց եյի կացնում քաղաքում և Շայո վերադառնում ընթրելու, շատ հաճախ պ. դը Տ...ի ընկերակցությամբ, վորի բարեկամությունն որըստորե ամրանում էր։

Մանոնը գտավ իր ձանձրույթը փարատելու միջոցը։ Նա մտերմացավ մի քանի ջահել հարևանուհիների հետ, վորոնց դյուղ էր գրավել գարունը։ Նրանք ժամանակն անց եյին կացնում զբոսանքով ու իրենց սեռին հատուկ զբաղմունքներով։ Թուղթ եյին խաղում կանխորոշված գումարի սահմաններում և տարած դրամով հոգում կառեթի ծախսերը։ Թարմ ոդ շնչելու համար գնում եյին Բուլոնյան անտառ և յես յերեկոյան վերադարձիս Մանոնին տեսնում եյի ավելի գեղեցիկ, ավելի կենսուրախ, ավելի գորովալից, քան յերբևե։

Այնուամենայնիվ իմ կյանքի յերկնակամարում սև ամպեր կուտակվեցին, վորոնք կարծես սպառնում եյին խորտակել յերջանկության շենքը։ Սակայն դրանք շուտով իսպառ փարատվեցին և Մանոնի չարաճճի բնավորությունն այնպիսի մի զավեշտական լուծում տվեց դրանց, վոր մինչև հիմա էլ ինձ համար քաղցր է վերականգնել իմ մտքում նրա սրտի քնքշությունն ու հրապույրներն արտացոլող այդ հիշողությունը։

Միակ ծառան, վոր սպասարկում էր մեզ մի անգամ ինձ մի կողմ հրավիրեց և մեծ շփոթմունքով ասաց, վոր կարևոր գաղտնիք ունի հաղորդելու։ Ցիս քաջալերեցի նրան՝ առաջարկելով ազատ խոսել։ Սկզբում նա մի քանի կցկտուր խոսքեր արտասանեց և ի վերջո հասկացրեց, վոր մի ինչ-վոր ոտարերկրացի սինյոր, ըստ

յերևույթին սաստիկ հրապուրվել է որիորդ Մանոնի դեղեցկությամբ։ Ցես իմ բոլոր յերակներում զգացի արյանս բորբոքումը։ «Իսկ Մանոնը, նա ՞ել է հրապուրվել», — ընդհատեցի յես նրան խիստ սաստկությամբ, քան պահանջում եր խոհեմությունը՝ լուսաբանությունը չխափանելու համար։

Իմ դյուրաբորբոքությունը սարսափեցրեց սպասավորին։ Նա շփոթված պատասխանեց, վոր իր տեղեկություններն այդքան ել հեռու չեն գնում։ Սակայն մի քանի որ շարունակ նկատելով, վոր այդ ոտարականը համառությամբ գալիս է Բուլոնյան անտառ, իջնում իր կառքից և առանձնանալով հեռավոր ծառուղիներում բացահայտորեն առիթ է փնտրում տեսնելու կամ հանդիպելու Մանոնին, ապա ինքը վորոշում է ծանոթություն հաստատել ոտարականի ծառաների հետ՝ նրանց տիրոջ անունն իմանալու նպատակով։ Ծառաներն ասել են, թե նա իտալացի իշխան է և, թե իրենք ել կասկածում են, վոր այստեղ իրոք սիրային մի արկածախնդրություն կա։ Սպասավորն ավելացրեց, վոր իրեն չի հաջողվել ուրիշ տեղեկություն ձեռք բերել, վորովհետև այդ վայրկյանին իշխանը դուրս է յեկել անտառից, մտերմորեն մոտեցել է իրեն ու հարցրել անունը։ Այնուհետև յերևի գուշակելով, վոր նա մեր ծառան է, իշխանը շնորհավորել է իրեն, վոր նա սպասավորում է աշխարհի ամենահրաշալի տիկնոջը։

Ցեսն անհամբեր սպասում էր այս պատմության շարունակությանը։ Նա վերջացրեց այն՝ յերկյուղած ներողություն խնդրելով, որը յես վերագրեցի իմ անխոհեմ վրդովմունքին։ Իզուր հորդորում էր նրան շարունակել և վոչինչ չթագցնել։ Նա յերդվեց, որ այլևս վոչ մի բան չգիտե և որովհետև այն ամենը, ինչ պատմել է, պատահել է նախընթաց որը միայն, ուստի նա ժամանակ չի ունեցել կրկին տեսնելու իշխանի սպասավորներին։ Ցեսն նրան քաջալերեցի վոչ միայն գովասանքներով, այլև առատաձեռն վարձատրությամբ և առանց վորևե անվստահություն ցույց տալու Մանոնի նկատմամբ, ավելի հանգիստ խոսելով հանձնարարեցի նրան հետևել ոտարականի յուրաքանչյուր քայլին։

Այնուամենայնիվ իմ սրտի խորքում նրա յերկյուղը սարսափելի կասկածներ հարուցեց։ Վախի ազդեցության տակ նա կարող եր թաղցնել ճշմարտության մի մասը։ Սակայն, փոքր ինչ խորհելուց հետո, յես այն ատիճան ազատվեցի ինձ ճնշող տագնապից, որ մինչև իսկ ղղջացի ցուցաբերած թուլությանս այդ նշանի համար։ Արդարև, յես չեյի կարող մեղադրել Մանոնին, որ ուրիշները սիրում են նրան։ Ամենայն հավանականությամբ նա վոչինչ չգիտե իր հաղթանակի մասին։ Յեվ ապա՝ ինքս ինչ կյանք պիտի վարեմ, յեթե խանդն այդքան դյուրությամբ մուտք է գործում իմ սիրտը։

Հետևյալ որը յես վերադարձա Փարիզ մի մտադրությամբ՝ արագացնել իմ հարստացումը մեծ գումարախաղով, որպեսզի ի վիճակի լինեմ առաջին իսկ փորձանքի դեպքում հեռանալ Շայոյից։ Այդ յերեկո իմ հանգիստը վրդովող վոչինչ չիմացա։ Ոտարականն ելի յեկել եր Բուլոնյան անտառ և նախընթաց որը հաստատած բարեկամության իրավունքից ոգտվելով, մոտեցել եր իմ հավատարմատար սպասավորին և խոսել իր սիրո մասին, սակայն այնպիսի արտահայտություններով, որոնք Մանոնի կողմից վոչ մի փոխադարձություն չեն ցուցաբերել։ Ոտարականը հարց ու փորձ է

արել հազար ու մի մանրամասնություններին մասին. ի վերջո նա փորձել է մեծ խոստումներով կաշառել սպասավորին և գրպանից հանելով նախորոք պատրաստած մի նամակ, իզուր առաջարկել է նրան մի քանի վոսկի՝ նամակն իր տիրուհուն հանձնելու համար։

Ցերկու որ անցավ առանց այլ պատահարների։ Ցերրորդ որն ավելի փոթորկալից յեղավ։ Բավական ուշ քաղաքից տուն վերադառնալով յես իմացա, վոր Մանոնը զբոսանքի պահին միառժամանակ հեռացել է իր ընկերուհիներից և, յերբ նրան քայլ առ քայլ հետևող ոտարականը մոտեցել է նրա աղջանշանին, մի նամակ և տվել նրան, վորը նա ընդունել է մեծ հրճվանքով։ Ոտարականը կարողացել է իր բերկրանքը հայտնել միայն քնքշանքով համբուրելով նամակը, վորովհետև Մանոնն իսկույն հեռացել է։ Սակայն որվա ճնացած բոլոր ժամերին Մանոնը յեղել է անսովոր ուրախ և այդ զվարթ տրամադրությունը նա պահել և նաև տուն վերադառնալուց հետո։ Իհարկե այս պատմության յուրաքանչյուր խոսքն ինձ սարսռեցրեց։ — «Դու վստահ ես», — տխրագին հարցրի յես սպասավորին, — «վոր քո աչքերը չեն խաբել քեզ». նա յերկինքը վկա կանչեց, վոր իր ասածը զուտ ճշմարտություն է։

Ցես չգիտեմ, թե ինչ կատիպեր ինձ անելու սրտիս մորմոքը, յեթե Մանոնը, վորը լսել եր իմ վերադարձը,

չդար ինձ դիմավորելու՝ անհամբեր ու դանդաղվելով իմ ուշացման համար։ Առանց սպասելու իմ պատասխանին, նա ինձ հեղեղեց փաղաքշանքներով և, յերբ մենակ մնացինք, խստությամբ հանդիմանեց, վոր սովորություն եմ դարձրել միշտ այդպես ուշ վերադառնալ։ Իմ լռությունը նրան թույլ եր տալիս ազատ շարունակելու և նա ասաց, վոր ահա յերեք շաբաթ և, ինչ յես վոչ մի որ լրիվ չեմ անցկացրել իր հետ։ Նա հայտարարեց, վոր այլևս չի կարող տանել այդպիսի յերկար անջատումներ և խնդրում և գոնե իմ բացակայություններն ընդմիջել մի-մի որով իրեն նվիրելու համար և թե հենց վաղվանից նա ցանկանում և առավոտից մինչև յերեկո ինձ իր մոտ տեսնել։

«Կլինեմ, կարող եք չկասկածել»,— պատասխանեցի յես փոքր ինչ կտրուկ։ Նա քիչ ուշադրություն դարձրեց իմ տխրության վրա, և միանգամայն համակված անզուսպ ուրախությամբ, վորն իրոք ինձ արտակարգ թվաց, նա հազար ու մի զվարճալի պատկերներով նկարագրեց, թե ինչպես և անցկացրել որը։ «Տարորինակ աղջիկ»,—ասում եյի ինքս ինձ. «արդյոք ի՞նչ և սպասում ինձ այս նախերգանքից հետո»։ Իմ մտքովն անցավ մեր առաջին անջատման արկածի հիշողությունը։ Սակայն ինձ թվաց, թե նրա ուրախությունն ու փաղաքշանքները տոգորված են անկեղծությամբ և ներդաշնակ են իրենց արտաքին արտահայտությանը։

Տխրությունս, վորը չեյի կարողանում հաղթահարել ընթրիքի ժամանակ, հեշտությամբ յես վերագրեցի իրը թե թղթախաղում ունեցած անախորժ կորուստիս։ Իսկ այն, վոր նա ինքը խնդրեց հետևյալ որը չհեռանալ Շայոյից, չափից դուրս ձեռնտու յեր ինձ։ Այդպիսով յես ժամանակ ունեցա խորհրդածելու իմ անելիքի մասին։ Իմ ներկայությունը վերացնում եր յուրաքանչյուր կասկած այդ որվա նկատմամբ։ Եթե չնկատեմ վոչ մի բան, վորը ստիպի ինձ արտահայտել իմ ստացած տեղեկությունները, ապա վորոշել եյի հետևյալ որն ևեթ նրա հետ տեղափոխվել քաղաք և հաս-

տասվել մի թաղում, ուր ազատ կլինեմ իտալացի իշ-
խաններին հանդիպելու անախորժությունից։ Այս վո-
րոշման հետևանքով գիշերը յես անցկացրի հանգիստ,
թեպետ և դա ինձ չփրկեց մի նոր անհավատարմու-
թյան սարսափից։

Առավոտյան, յերբ արթնացա, Մանոնն ինձ ասաց,
թե նա չի պահանջում, վոր ամբողջ որը տանն անց-
կայնելով հանդերձ յես անփույթ լինեմ իմ արտաքինի
նկատմամբ, և վոր նա ցանկանում է իր ձեռքով հար-
դարել իմ մազերը։ Ցեսս հրաշալի մազեր ունեյի։ Նա
բաղմիցս մեծ բավականությամբ հարդարել եր դրանք։
Սակայն այդ որը նա սովորականից ավելի խնամք
դրած դրեց։ Ցեսս ստիպված յեղա դիջել նրան ու նստել
իր զարդասեղանի առաջ և տանել այն բոլոր մանրա-
կրկիտ աշխատանքը, վորով նա հարդարում եր իմ մա-
զերը։ Աշխատանքի ընթացքում նա հաճախ իմ յերեսը
շրջում եր դեպի իրեն և յերկու ձեռով ուսերիս հեն-
վելով նայում ինձ անհագուրդ մի հետաքրքրությամբ։
Այնուհետև յերկու-յերեք համբույրով իր բավականու-
թյունն արտահայտելով, նա վերստին ստիպում եր ինձ
նախկին դիրքն ընդունել՝ իր գործը շարունակելու
համար։

Այս գվարճախաղը մեզ զբաղեցրեց մինչև ճաշ։ Այս
խաղով նրա հրապուրվելն ինձ թվում եր այնքան
բնական և ուրախությունն այնքան սրտաբուղխ, վոր

չկարողանալով հաշտեցնել այսքան հարատև անկեղծության արտաքին արտահայտությունը մի սև դավաճանության ծրագրի հետ, յես բաղմիցս պատրաստ եյի նրան բացել իմ սիրտը և աղաչել մատանջության այն բեռից, որը ճնշում եր ինձ։ Սակայն ամեն անգամ յես սպասում եյի, որ նա ինքը կսկսի իր սրտաբաց բացատրությունը, և նախորդք պատրաստվում եյի ճաշակել հաղթանակի քաղցրությունը։

Մենք վերադարձանք նրա առանձնասենյակը։ Նա սկսեց նորից հարդարել իմ մազերը և յես ամենայն սիրալիրությամբ զիջում եյի նրա բոլոր ցանկություններին, յերբ հանկարծ հայտնեցին, որ իշխան դը...ն կամենում է նրան տեսնել։ Այս անունը բորբոքեց իմ կատաղությունը։— «Ի՞նչպես»,— գոչեցի յես, յետ հրելով նրան. «Ավ. ինչ իշխանն։ Նա իմ հարցերին չպատասխանեց։ — «Ներս հրավիրեցեք պարոնին», — սառն ասաց նա սպասավորին, և դեպի ինձ դառնալով, ավելացրեց դյութող ձայնով. — «Թանկագին իմ սիրեկան, պաշտելիս, աղաչում եմ, մի վայրկյան սիրալիր յեղիր, մի վայրկյան, միայն մի վայրկյան. յես քեզ հազար անգամ ավելի կսիրեմ. ամբողջ իմ կյանքում յերախտապարտ կմնամ քեզ»։

Զայրույթն ու անակնկալությունը կաշկանդեցին իմ լեզուն։ Նա կրկնում եր իր թախանձանքը, իսկ յես պատշաճ խոսքեր եյի փնտրում՝ արհամարհանքով այն մերժելու համար։ Սակայն, յերբ նա լսեց, որ նախասենյակի դուռը բացին, մի ձեռքով բռնեց ուսերիս ալիք-ալիք փռված իմ մազերից, իսկ մյուսով վերցրեց զարդասեղանի հայելին. նա իր բոլոր ուժը լարեց ինձ այս տարորինակ վիճակում քաշ տալու մինչև սենյակի դուռը, որը բացեց ծնկով և աղմուկի պատճառով սենյակի մեջտեղում կանգնած ոտարականին ցույց տվեց մի տեսարան, որը հավանորեն նրան քիչ չզարմացրեց։ Մեր առջև կանգնած եր մի վերին աստիճանի լավ հագնված մարդ, սակայն բավականին տգեղ դեմքով։

Այս տեսարանը նրան ծայր աստիճան շփոթեցրեց. այնուամենայնիվ նա չհրաժարվեց խոնարհել գլուխը։ Մանոնը նրան ժամանակ չտվեց մի բառ անգամ արտասանելու։ Նա նրան մեկնեց հայելին.— «Նայեցեք, պարոն»,— ասաց նա. «լավ դիտեցեք ձեզ և ճշմարիտ յեղեք։ Դուք խնդրում եք իմ սերը։ Ահա այն մարդը, վորին յես սիրում եմ և յերդվել եմ սիրել իմ ամբողջ կյանքում։ Ինքներդ համեմատեցեք։ Յեթե դուք դոնում եք, վոր կարող եք նրա հետ մրցակցել իմ սրտին տիրանալու համար, ապա ցույց տվեք, թե ինչ հիմունքով, վորովհետև յես հայտարարում եմ, վոր ձեր ամենախոնարհ սպասավորուհու աչքում Իտալիայի բոլոր իշխանները չարժեն մեկն այն մաղերից, վոր յես ահա բռնել եմ ձեռքովս»։

Այս անհեթեթ խոսքերից հետո, վորոնք նա անշուշտ մտածել եր նախորոք, յես ապարդյուն ճիգ եյի թափում ազատվել նրա ձեռքից և կարեկցելով այդ ականավոր մարդուն, պահանջ եյի զգում քաղաքավարությամբ մեղմել նրան հասցրած չնչին վիրավորանքը։ Սակայն նա շատ շուտ ինքն իրեն հավաքեց և նրա պատասխանը, վոր փոքր ինչ կոպիտ թվաց, ինձ ստիպեց փոխել իմ մտադրությունը։— «Որիորդ, որիորդ», ասաց նա Մանոնին, բռնադրոսիկ մի ժպիտ դեմքին. «յես իրոք բացում եմ աչքերս և տեսնում, վոր դուք շատ ավելի փորձված եք, քան յես յենթադրում եյի»։

Նա անմիջապես հեռացավ, առանց Մանոնին նայելու և ցած ձայնով ավելացնելով, որ Ֆրանսիայի կանայք Իտալիայի կանանցից ավելի չարժեն։ Սրանից հետո յես վոչ մի ցանկություն չեյի զգում նրան ստիպել, որ ավելի լավ կարծիք ունենա գեղեցիկ սեռի մասին։

Մանոնը բաց թողեց մազերս, նստվեց բազկաթոռի վրա և սենյակը լցրեց անզուսպ ու յերկար քրքիջով։ Չեմ թաքցնում, որ մինչև սրտիս խորքը զգացվեցի սույն զոհաբերությամբ, որը միայն սիրո զգացմունքին կարող եյի վերագրել։ Սակայն այս ծաղրը չափից դուրս վիրավորական թվաց ինձ։ Ցես նրան հանդիմանեցի այդ առթիվ։ Նա պատմեց, որ իմ աքոյանը մի քանի որ Բուլոնյան անտառում իրեն անդադար հետապնդելուց և իր զգացումները ծամածռություններով հասկացնելուց հետո, վորոշում է բացահայտորեն դրանց խոստովանությունն անել մի նամակով, որը նա ստորագրել է իր իսկական անունով բոլոր տիտղոսների հետ միասին և նամակն իրեն հասցրել կառապանի միջոցով, որը նրան իր ընկերուհիների հետ միշտ տանում եր անտառ։ Նամակի մեջ նա խոստանում է փայլուն դիրք, հոյակապ կարողություն և հարատև սեր Ալպյան լեռների այն կողմում, ուր իր յերկիրն է։ [Ինքը՝ Մանոնը վերադարձել է Շայո այդ արկածն ինձ հաղորդելու դիտավորությամբ, սակայն մտածելով, որ մենք կարող ենք այդ մեր զվարճության առարկան դարձնել, նա չի հրաժարվել իր հղացած մտքից։ Խոստումնալից մի պատասխանով նա առաջարկել է իտալացի իշխանին այցելության գալ մեզ մոտ, և ավելորդ անգամ բավականություն է պատճառել իրեն՝ ինձ ևս մտցնելով իր ծրագրի մեջ՝ առանց այդ մասին իմ մեջ վորևե կասկած հարուցելու։ Ցես վոչ մի խոսք չասացի Մանոնին այն տեղեկությունների մասին, որ ստացել եյի ուրիշ ճանապարհով և հաղթական սիրո արբեցումից դրդված՝ հավանություն տվի նրա բոլոր արարքներին։

Իմ ամբողջ կյանքում նկատել եմ, որ յերկինքն իր ամենադաժան պատիժներին յենթարկել է ինձ հենց այն բոլեներին, յերբ իմ յերջանկությունն առանձնապես հաստատուն է թվացել։ Ցեսս այն աստիճան ինձ յերջանիկ եյի զգում պարոն դը Տ...ի բարեկամությամբ և Մանոնի քնքշությամբ, որ անկարելի յեր հավատացնել ինձ, թե որևե մի նոր դժբախտություն կարող է սպառնալ ինձ։ Մինչդեռ շատ շուտով չարաբաստիկ մի հարված նետեց ինձ այն ծանր կացության մեջ, որում դուք տեսաք Պասսիում և աստիճանաբար այնպիսի ցավալի ծայրահեղություններին հասցրեց, որ դուք դժվար թե հավատաք իմ ճշմարիտ պատմությանը։

Մի անգամ, յերբ պարոն դը Տ...ն ընթրիքի յեր նստել մեզ հետ, աղմուկ լսվեց՝ փողոցով ընթացող մի կառքի, որը կանգ առավ հյուրանոցի առաջ։ Հետաքրքրությունը մեզ դրդեց իմանալու, թե ո՞վ կարող եր գալ այդ ժամին։ Մեզ ասացին, որ դա յերիտասարդ Գ... Մ...ն է, այսինքն մեր ամենավոխերիմ թշնամու՝ այն տուփասեր ծերուկի որդին, որն ինձ բանտարկել եր տվել Սենլազարում, իսկ Մանոնին՝ արդելատանը։ Նրա անունը լսելիս արյունը գլուխս խփեց։ «Ցերկինքն և դրան ուղարկել ինձ մոտ», — ասացի պարոն դը Տ... ին, «վորպեսզի նա կրի իր հոր ստորության պատիժը։ Նա չի կարող ինձնից խուսս տալ մինչև որ մեր սրերը չբախվեն միմյանց»։ Պարոն դը Տ...ն, որը նրան ճանաչում

եր և նրա լավագույն բարեկամներից եր, աշխատեց ինձ ուրիշ զգացմունքներ ներշնչել դեպի նա։ Նա հավատացրեց ինձ, վոր յերիտասարդ Գ... Մ...ն մի շատ հաճելի անձնավորություն յե, և պարզապես վոչ մի առնչություն չի կարող ունենալ իր հոր արարքի հետ և, յեթե յես գեթ մի վայրկյան տեսնեմ նրան, չեմ կարող չհարգել նրան և չցանկալ նրա փոխադարձ հարգանքը։ Հոգուտ նրան ուրիշ շատ բաներ ավելացնելուց հետո նա խնդրեց թույլ տալ, վոր գնա նրան առաջարկի՝ գալ մեզ հետ ընթրելու։ Առարկությունը, թե Մանոնը կարող ե վտանգի յենթարկվել, յեթե նրա բնակավայրը հայտնի լինի մեր թշնամու վորդուն, նա կանխեց, հոմոզելով իր պատվով ու հավատով, վոր յեթե յերիտասարդ Գ... Մ... ն մեզ ճանաչի, նա կդառնա մեր ամենաջերմ պաշտպանը։ Այսպիսի հավաստիացումներից հետո յես այլևս վոչ մի արդելք չհարուցեցի։

Նախքան նրան մեզ մոտ բերելը պարոն դը Տ...ն հարցրել եր մեր ով լինելը։ Նա ներս մտավ այնպիսի մի տեսքով, վոր մեզ իրոք հոգուտ իրեն տրամադրեց։ Նա դրկախառնվեց ինձ հետ. մենք նստեցինք սեղանի շուրջը։ Նա սքանչացավ Մանոնով, ինձնով, մեր վողջ կահավորմամբ և կերավ մի այնպիսի ախորժակով, վորը պատիվ եր բերում մեր ընթրիքին։

Ընթրիքից հետո, յերբ սեղանը հավաքեցին, խոսակցությունն ավելի լուրջ բնույթ ստացավ։ Նա աչքերը դետին հառեց և խոսեց իր հոր՝ մեր դեմ գործ դրած՝ ծայրահեղ միջոցների մասին։ Նա մեզնից խոնարհաբար ներողություն խնդրեց։ — «Յես կկարճեմ իմ ներողությունը խնդրելը»,—ասաց նա,—«վորպեսզի իմ մեջ չարթնացնեմ ամոթ հարուցող մի հիշողություն»։ Յեթե սկզբից նա անկեղծորեն ներողություն եր խնդրում, ապա հետագայում նրա անկեղծությունն ավելի ակնհայտնի դարձավ, վորովհետև հազիվ ինչ կես ժամ եր անցկացրել մեզ հետ զրուցել, յերբ յես նկատեցի Մանոնի հմայքի թողած տպավորությունը։ Նրա հայացքն ու վարվեցողությունը հետզհետե քնքշացան։ Այսուհանդերձ, խո-

սելիս նա վոչ մի ակնարկ չարեց իր կրած այդ տպավորության մասին։ Սակայն չխանդելով հանդերձ, յես բավական փորձառություն ունեյի սիրո խնդիրներում, վորպեսզի հասկանայի, թե ինչ է առաջ գալիս սիրուց։

Նա մեզ հետ անցկացրեց գիշերվա մի մասը և բաժանվելուց առաջ իր գոհունակությունն հայտնեց մեզ հետ ծանոթանալու առթիվ և խնդրեց թույլ տալ յերբեմն հաճախել և վերանորոգել մեզ ծառայելու իր պատրաստակամությունը։ Առավոտյան դեմ նա մեկնեց պարոն դը Տ...ի հետ, վորը նստեց նրա կառքը։

Ինչպես ասացի, յես բնավ հակամետ չեյի խանդին։ Ավելի, քան յերբևե յես հավատում եյի Մանոնի յերդումներին։ Սույն չքնաղ արարածն այնպես բացարձակորեն եր տիրացել իմ հոգուն, վոր դեպի նա ունեցած իմ ամենափոքր զգացումն անդամ համակված եր հարգանքով ու սիրով։ Հեռու այն մտքից, վոր Մանոնը մեղապարտ է՝ յերիտասարդ Գ... Մ...ին դուր գալով, յես աքանչանում եյի նրա հմայքի ներգործությամբ և գերազանցապես գոհ ու հպարտ եյի, վոր ինձ սիրում է մի աղջիկ՝ զմայլելի բոլորի համար։ Ցեսս նույնիսկ անտեղի համարեցի նրան հաղորդել իմ կասկածները։ Մի քանի որ մենք զբաղված եյինք նրա զգեստները կարգի բերելու հոգսով և միտք անելով այն մասին, թե արդյոք կարող ենք առանց ճանաչվելու յերկյուղի գնալ

թատրոն։ Մի շաբաթ անց պ. դը Տ...ն նորից յեկավ մեզ այցելությյան. մենք հարցրինք նրա կարծիքն այդ մասին։ Նա տեսավ, վոր ստիպված եր «այո» ասելու՝ ի հաճույս Մանոնին։ Մենք վորոշեցինք բոլորս միասին հենց այդ յերեկո գնալ թատրոն։

Սակայն այդ վորոշումը չկարողացանք իրագործել, վորովհետև պ. դը Տ...ն խսկույն մի կողմ հրավիրեց ինձ և ասաց. «Մեր վերջին տեսակցությունից հետո յես մեծ անհանդստության մեջ եմ գտնվում և այսորվա իմ այցելության դրդապատճառը հենց այդ է։ Գ... Մ...ն սիրում է ձեր գեղեցկությունն. նա ինքը խոստովանեց այդ։ Ցես նրա մտերիմ բարեկամն եմ և պատրաստ եմ ամեն կերպ ծառայելու նրան։ Սակայն յես նմանապես և՛ ձեր բարեկամն եմ։ Ցես կարծում եմ, վոր նրա մտադրություններն անազնիվ են և դատապարտում եմ դրանք։ Ցես կպահեյի նրա գաղտնիքը, յեթե նա մտադրվեր միայն սովորական միջոցներ գործ դնել՝ անձնապես դուր դալու համար. սակայն նա լավ տեղյակ է Մանոնի բնավորության։ Նա իմացել է, չգիտեմ ինչպես, վոր Մանոնը սիրում է փարթամ կյանք և հաճույքներ, և վորովհետև նա արդեն մեծ կարողության տեր է, ապա ինձ հայտնեց, վոր կամենում է վորևե խոշոր նվերով և տաս հազար ֆունտ թոշակի առաջարկությամբ գերել նրան։ Ուրիշ հավասար պայմաններում յես թերևս մեծ ճնշում գործ դնեյի ինձ վրա՝ նրան մատնելուս համար. սակայն արդարությունը խոսում է հոգուս՝ ձեր բարեկամության, մանավանդ վոր յես ինքս անխոհեմաբար պատճառ յեղա նրա կրքին՝ ձեր տունը հրավիրելով նրան, ուստի և պարտավոր եմ կանխել ձեզ պատճառած չարիքի հետևանքները»։

Ցես շնորհակալությունս հայտնեցի պ. դը Տ...ին այդպիսի մի կարևոր ծառայության համար և լիակատար վստահություն տածելով դեպի նա խոստովանեցի, վոր իրոք Մանոնի բնավորությունն այդպիսին է, ինչպես պատկերացնում է իրեն Գ... Մ...ն, այսինքն՝ նա չի կարող տանել չքավորության անունն անգամ։ «Բայց

և այնպես», — ասաց նա յետ, — «երբ հարցը շատի կամ քչի մասին է, յետ չեմ կարծում, որ նա ընդունակ լինի ինձ թողնել՝ մի ուրիշի համար։ Հիմա յետ ի վիճակի յեմ հոգալու, որ նա ոչնչի կարիք չզգա և հույս ունեմ, որ որեցոր պիտի աճի իմ կարողությունը։ Միայն մի բանից եմ վախենում», ավելացրի յետ, — «Գ... Մ...ն դիտենալով մեր բնակատեղին, կարող է վատ ծառայություն մատուցել մեզ»։

Պարոն դը Տ...ն վստահացրեց ինձ, որ այդ կողմից կարող եմ միանգամայն հանգիստ լինել։ Գ... Մ...ն ընդունակ է դիմելու սիրային վորևե խելագար ծայրահեղության, սակայն նա ընդունակ չե ստորության։ Ցեթե նա նույնիսկ իրեն թույլ տա վորևե ստոր արարք, ապա ինքը՝ պ. դը Տ...ն առաջինը կպատժի նրան և այդպիսով կհարթի մեզ պատճառած դժբախտության հետևանքները։ — «Ձեր այս բարեկամական զգացմունքը մեծապես պարտավորեցնում է ինձ», — պատասխանեցի յետ։ «Սակայն այդ դեպքում չարիքը կատարված կլինի, մինչդեռ բուժումը խիստ տարակուսելի յե։ Ուստի, ավելի խելացի կլինի դժբախտությունը կանխել, հեռանալով Շայոյից՝ մի ուրիշ տեղ բնակություն հաստատելու համար»։ «Այո», — ասաց պ. դը Տ...ն, — «սակայն ձեզ դժվար կլինի այդ անել անհրաժեշտ արագությամբ, վորովհետև Գ... Մ...ն կեսորին այստեղ կլինի. նա այդ մասին ինձ ասաց յերեկ և դա յե, որ ինձ դրդել է այսպես վաղ

առավոտյան դալ ձեզ հաղորդելու նրա մտադրությունը։ Որպես առ որպես նա կարող է հայտնվելը։

Այս վրդովեցուցիչ լուրն ինձ ստիպեց ավելի լուրջ մտածելու խնդրին։ Մտածելով, որ արդեն անկարելի չէ խուսափել Գ... Մ...ի այցելությունից և անշուշտ անհնարին կլինի նաև արգելել նրան՝ իր սիրո խոստովանությունը Մանոնին անելու, չես վորոշեցի իմ նոր ախոյանի դիտավորության մասին ինքս ղդուշացնել Մանոնին։ Ցես յենթադրում եյի, վոր յեթե նա գիտենա, վոր յես իրազեկ եմ այն առաջարկություններին, վորոնք իրեն պիտի անի Գ... Մ...ն և դրանք պիտի լսի իմ ունկի առաջ, ապա նա բավականաչափ կամքի ուժ կունենա նրան մերժելու։ Իմ միտքը յես հայտնեցի պ. դը Տ...ին, վորը պատասխանեց, թե դա շատ փափուկ հարց և։ — «Ձեզ հետ համաձայն եմ», — ասացի յես,— «սակայն այն բոլոր հիմունքները, վոր կարելի չէ ունենալ իր սիրուհու վրա վստահ լինելու համար, յես ունեմ, վորպեսզի հաստատապես համոզվեմ, թե նա սիրում է ինձ։ Նրան կարելի կլինի շլացնել միայն ամենամեծ առաջարկություններով և յես ձեզ ասացի, վոր շահախնդրությունը միանգամայն անհայտ է նրան։ Մանոնը սիրում է ունենալ կյանքի լայն հարմարությունները, սակայն նա սիրում է և՛ ինձ. իսկ հիմա գործերս այնպիսի մի դրության մեջ են, վոր յես հավատացած եմ, թե նա ինձ կգերադասի մի մարդուց, վորի հայրը իրեն արգելատուն է նետել։ Մի խոսքով՝ յես հաստատ մնացի իմ մտադրության մեջ և մի կողմ կանչելով Մանոնին, ամենայն անկեղծությամբ պատմեցի այն ամենը, ինչ յես հենց հիմա լսել եյի։

Մանոնն ինձ շնորհակալություն հայտնեց իր մասին ունեցած լավ կարծիքիս համար և խոստացավ այնպես ընդունել Գ... Մ...ի առաջարկությունները, վոր նա այլևս ցանկություն չունենա դրանք կրկնելու։ — «Վաչ», — ասացի յես,— «չպետք է նրան գրգռել կոպտությամբ, նա կարող է մեզ վնասել։ Սակայն առանց այդ ել դու գիտես, չարաճճի», — ավելացրի յես ծիծաղելով, —

«Թե ինչպես պետք է ազատվել մի անախորժ կամ անհարմար յերկրպագույից։ Մի քիչ մտածելուց հետո նա պատասխանեց.— «Գլխումս մի սքանչելի միտք ծագեց և յես հիացած եմ դրանով. Գ... Մ... ն մեր ամենավոխերիմ թշնամին է. հոր՝ մեզ հասցրած վիրավորանքի վրեժը մենք պետք է առնենք վոչ թե վորդուց, այլ նրա քսակից։ Յես ուշադրությամբ կլսեմ նրան, կընդունեմ նրա նվերները և կծիծաղեմ նրա վրա»։

«Հիանալի ծրագիր է»,— ասացի յես. «սակայն, իմ խեղճ մանկիկ, միթե՞ դու բնավ չես մտածել այն մասին, վոր դա մեզ ուղղակի արգելատուն տանող ճանապարհն է»։ Իզուր յես ճիգ թափեցի մատնանշելու նրան այդ մտադրության վտանգները։ Նա ասաց, վոր հարկավոր է միայն նախազգուշական միջոցներ ձեռք առնել, և առ վոչինչ համարեց իմ բոլոր առարկությունները։ Ցույց տվեք ինձ մի սիրեկան, վորը կուրորեն չհավանի իր պաշտած սիրուհու բոլոր քմայքներին և յես կհամաձայնեմ, վոր սխալվել եմ, յերբ այդպես դյուրությամբ զիջեցի նրան։ Մեր վորոշումն յեղավ՝ ծանակել ու խաբել Գ... Մ... ին, սակայն իմ ճակատագրի խաղով այնպես պատահեց, վոր խաբվեցի յես։

Գ... Մ... ի կառեթը յերևաց մոտավորապես ժամը տասնմեկին։ Նա նուրբ հաճոյախոսություններով խնդրեց ներել իրեն՝ մեզ մոտ ճաշի գալու համար։ Նա չզարմացավ, վոր մեզ մոտ հանդիպում է պ. դը Տ...ին, վորը

Դժվարությունը՝ մեկն առանց մյուսի ձեռք բերելն էր։ Մենք վճռեցինք սպասել Գ... Մ...ի ծրագրի լիակատար լուսաբանությանն այն նամակում, որ նա խոստացել էր գրել Մանոնին։ Հիրավի, Մանոնը նամակն ստացավ մի սպասավորի միջոցով, որը յեկել էր առանց համազգեստի և մեծ ճարպկությամբ հարմար բոպն գտել նրա հետ յերես առ յերես խոսելու։ Մանոնը հրամայեց սպասավորին սպասել իր պատասխանին և իսկույն ինձ բերեց նամակը։ Մենք միասին բացինք այն։

Սովորական քնքշալի խոսքերից բացի, նամակը բովանդակում էր իմ աղոյանի խոստումների մանրամասն պարզաբանումը։ Նա իր ծախսերը չի սահմանափակում որոշ շրջանակներում։ Պարտավորվում է Մանոնին տալ տաս հազար ֆրանկ հենց որ նա դառնա առանձնատան տիրուհին և այնպես լրացնել գումարի հետզհետե պակասելը, որ Մանոնն իր տրամադրության տակ միշտ կանխիկ ունենա այն։ Առանձնատուն հանդիսավոր մուտք գործելու որը հեռու չեր։ Նա խնդրում էր իրեն յերկու որ ժամանակ տալ՝ անհրաժեշտ պատրաստությունների համար և մատնանշում էր փողոցի ու առանձնատան անունները, ուր նա խոստանում էր սպասել Մանոնին յերկրորդ որը՝ կեսորին, յեթե նա կարողանա մի հնարքով պրծնել իմ ձեռքից։ Սա միակ կետն է, որի մասին նա աղաչում է հանգստացնել իրեն։ Մնացած բոլորը նա միանգամայն ապահով է համարում. սակայն ավելացնում էր, որ յեթե ինձնից հեռանալը դժվար է, ապա ինքը մի միջոց կգտնի դյուրացնելու նրա փախուստը։

Գ... Մ...ն իր հորից ավելի խորամանկ էր։ Նա ուզում էր նախ տիրանալ իր վորսին, ապա նոր համբել դրամը։ Մենք քննեցինք, թե Մանոնն ինչ վարմունք պետք է ունենա։ Ցես նորից աշխատեցի նրա մտքից հանել այս ծրագիրը և ցույց տվի դրա վտանգները. վոչինչ չկարողացավ տատանել նրա վորոշումը։

Նա մի կարճ պատասխան գրեց Գ... Մ...ին վստահացնելով, որ առանց դժվարության սահմանած որը

կլինի Փարիզում, և վոր նա կարող է ապահով սպասել իրեն։

Այնուհետև մենք վճռեցինք, վոր յես իսկույն ևեթ կմեկնեմ և մի նոր բնակարան կվարձեմ մեզ համար վորևե գյուղում՝ Փարիզի այն կողմում, և ինձ հետ կվերցնեմ մեր համեստ գույքը. իսկ Մանոնը հետևյալ որը կեսորից հետո, ուղիղ վորոշված ժամին, կգնա Փարիզ։ Գ... Մ... ից նվերներ ստանալուց հետո նա թախանձագին խնդրելու յե թատրոն տանել իրեն և իր հետ վերցնելու յե այնքան դրամ, վորքան կարող է, իսկ մնացածը հանձնելու յե սպասավորին, վորը համաձայն Մանոնի ցանկության պիտի ուղեկցեր նրան։ Այդ սպասավորը հենց նա յեր, վորը Մանոնին աղատեց արգելատնից և վորը հիմա միանգամայն նվիրված եր մեզ։ Ցեսպեսք է վարձու. կառքով գտնվեյի Սենտ-Անդրե-դեզ-Առ փողոցի անկյունում և յերեկոյան ժամի յոթի մոտերքը կառքն այդտեղ թողած, մթնով պետք է ուղևորվեյի դեպի թատրոնի մուտքը։ Մանոնն ինձ խոստանում եր պատրվակ գտնել՝ թատրոնից մի րոպեյով դուրս գալու և միանալու ինձ։ Ծրագրի մնացած մասի իրագործումը վոչ մի դժվարություն չեր ներկայացնում։ Մենք մի րոպեյում կհասնեյինք իմ թողած կառապանին և Փարիզից կհեռանայինք Սենտ-Անտուան արվարձանով, վորը դեպի մեր նոր բնակավայրն եր տանում։

Այս ծրագիրը, վորքան և արտասովոր լիներ, մեզ թվաց

միանգամայն լավ կշռադատված։ Սակայն իրականում անմտություն եր յերևակայել, վոր ամենարարենպաստ հաջողության դեպքում անգամ մենք ընդմիշտ կարող կլինենք խուսափել դրա հետևանքներից։ Այնուամենայնիվ մենք մեզ վտանգի յենթարկեցինք ամենահանդուգն ինքնավստահությամբ։

Մանոնը մեկնեց Մարսելի հետ — այսպես եյին կոչում մեր սպասավորին։ Ցես տրամադրեց ճանապարհ դրի և գրկելով նրան, ասացի.—«Մանոն, չեք խարում, արդյոք, հավատարիմ կմնաք ինձ։— Նա քնքշանքով գանգատվեց իմ կասկածամտությունից և մի անգամ ևս կրկնեց իր բոլոր յերդումները։

Նրա հաշվով ինքը Փարիզ պիտի հասներ ժամի յերեքին։ Նրա յետևից մեկնեցի և յես։ Որվա մնացած ժամանակը գնացի սպասելու Ֆերե սրճարանում, վորը Սեն-Միշել կամուրջի մոտ է գտնվում։ Այստեղ մնացի մինչև մութն ընկնելը։ Այնուհետև դուրս յեկա սրճարանից և մի կառք վարձեցի, վորը մեր ծրագրի համաձայն թողի Սենտ-Անդրե-դեզ-Առ փողոցի անկյունում. իսկ ինքս վոտքով ուղղվեցի դեպի թատրոնի մուտքը։ Ցես զարմացա, վոր Մարսելն այնտեղ չէ, վորովհետև նա թատրոնի դռան մոտ պետք է սպասեր ինձ։ Մի ամբողջ ժամ յես համբերությամբ սպասեցի՝ խառնվելով սպասավորների բազմությանը և ուշադրությամբ նայելով բոլոր անցորդներին։ Վերջապես, յերբ ժամի յոթը խփեց և տակավին վոչ մի նշան չկար, վոր առնչություն ունենար մեր մտադրության հետ, յես մի տոմս վերցրի՝ պարտերում նստելու, վորպեսզի տեսնեմ, թե արդյոք վորևե ոթյակում չեն գտնվում Մանոնը և Գ... Մ...ն։ Վոչ մեկը և վոչ մյուսը չկային։ Ցես փողոց վերադարձա և քառորդ ժամ նորից սպասեցի՝ սաստիկ հուզված անհամբերությունից և անհանգստությունից։ Դարձյալ վոչ վոք չերևաց և յես գնացի դեպի իմ կառքը, առանց հանդելու վորևե վորոշման։ Ինձ տեսնելով, կառապանս մի քանի քայլ առաջ յեկավ և խորհրդավոր տեսքով ասաց, թե ահա

մի ժամ է, ինչ մի սիրուն աղջիկ կառքում ինձ է սպասում։ Այդ աղջիկը նրան հարցրել է իմ մասին, հայտնելով իմ արտաքինի և հագուստի մասին, որոնց շնորհիվ հասկացել է, թե ում է վերաբերում խոսքը և յերբ իմացել է նրանից, որ յես շուտով պիտի վերադառնամ, ասել է, թե համբերությամբ կսպասի ինձ։

Յես իսկույն մտածեցի թե դա Մանոնն է։ Մոտեցա կառքին։ Սակայն այնտեղ տեսա փոքրիկ, դեղեցիկ մի դեմք, որը բնավ նման չեր Մանոնին։ Դա մի անծանոթ աղջիկ եր, որը նախ և առաջ ինձ հարցրեց, թե արդյոք պատիվ չունի՞ խոսելու պարոն ասպետ դը Դրիյոյի հետ։ Ասացի, որ իրոք այդպես է իմ անունը.— «Մոտս մի նամակ կա ձեզ հանձնելու»,— ասաց նա,— «այդ կբացատրի, թե ինչու համար եմ յեկել ձեզ մոտ և ինչ առնչությամբ պատիվ եմ ունեցել իմանալու ձեր անունը»։ Յես խնդրեցի նրան ժամանակ տալ՝ հարևան գինետան մեջ նամակը կարդալու։ Նա կամեցավ հետևել ինձ այնտեղ և խորհուրդ տվեց առանձին սենյակ վերցնել։ — «Ո՞ւմից է այդ նամակը»,— հարցրի յես նրան, սանդուխքներով բարձրանալիս։ Պատասխանի տեղ նա ինձ հանձնեց նամակը, հրավիրելով կարդալ այն։

Յես ճանաչեցի Մանոնի ձեռագիրը։ Ահա թե մոտավորապես ինչ եր նա գրում.

«Գ... Մ...ն նրան ընդունել է սպասածից ավելի շքեղ և սիրալիր քաղաքավարությամբ։ Անհաշիվ նվեր-

ներ է տվել և թագուհու կյանք խոստացել։ Այնուամենայնիվ նա հավատացնում է ինձ, որ այդ նոր փարթամության մեջ նա ինձ չի մոռացել։ Բայց վերջին հետև չի կարողացել համոզել Գ... Մ...ին՝ նույն յերեկո իրեն թատրոն տանելու, նա մի ուրիշ որվա յե հետաձգում ինձ տեսնելու հաճույքը։ Իսկ, վերջերսի փոքր ինչ մեղմի այն ցավը, որ՝ ինչպես ինքը նախատեսում է, ինձ պիտի պատճառի այդ տեղեկությունը, նա հնարավորություն է ունեցել ինձ մոտ ուղարկելու Փարիզի ամենագեղեցիկ աղջիկներից մեկին, որն ինձ պետք է հանձնի իր յերկտողը։ Ստորագրված եր՝ ձեր հավատարիմ սիրուհի՝ Մանոն Լեսկոյ։

Այս նամակում մի ինչ որ անողոք, վիրավորական բան կար ինձ համար. զայրույթն ու ցավը միաժամանակ համակեցին իմ վողջ եությունը և յես կորցրի դատելու կարողությունս։ Հետո փորձեցի մի ճիգ անել՝ մեկ ընդմիշտ մոռանալու իմ ապերախտ և ուխտադրուժ սիրուհուն։ Ցեսս մի հայացք նետեցի առջևս կանգնած աղջկա վրա։ Նա չափազանց սիրունիկն եր և յես կցանկանայի, որ նրա գեղեցկությունն այնպիսին լիներ, որ ինձ ևս դրդեր ուխտադրուժ և անհավատարիմ դառնալու։ Սակայն նրանում յես չգտա այն նրբագեղ ու քնքշանվաղ աչքերը, այն աստվածային բարեկազմությունը, այն՝ սիրո աստծուց ստացած՝ յերանգավորումը, վերջապես այն անհատնում հրապույրները, որոնցով բնությունը շռայլել եր նենգ Մանոնին։ — «Վա՜հ, վա՜հ», — ասացի յես այդ աղջկան, դադարելով նրան նայելուց, — «ձեզ ուղարկող յերախտամոռը լավ գիտեր, որ ձեր քայլերն ապարդյուն կլինեն։ Վերադարձեք նրա մոտ և իմ կողմից ասացեք նրան, որ նա թող վայելե իր հանցանքը, և յեթե հնար է, առանց խղճի խայթի թող վայելե այն։ Ցեսս անդարձ լքում եմ նրան և միաժամանակ հրաժարվում բոլոր կանանցից, որոնք չեն կարող նույնքան հրապուրիչ լինել, որքան նա յե և որոնք անկասկած նույնքան ստոր ու նենգ են, որքան և նա»։

Այդ բոպեին յես պատրաստ եյի դուրս նետվել սենյակից և մեկ ընդմիշտ հեռանալ՝ բոլորովին ձեռք քաշելով Մանոնից։ Ցեվ վորովհետև սիրտս խոշտանգող մահացու խանդը փոխվեց թախծոտ ու մռայլ անդորրության, իմ ամոքումը մոտալուտ թվաց ինձ, քանի վոր յես չեյի զգում վոչ մեկն այն բուռն հույզերից, վորոնք ինձ վրդովում եյին նման դեպքերում։ Ավաղ, յես սիրտ խաբեյության զոհն եյի, ինչպես նաև զոհն եյի Գ... Մ...ի և Մանոնի խաբեյության։

Տեսնելով, վոր յես պատրաստ եմ սանդուխքներից ցած իջնել ու հեռանալ, նամակ բերող աղջիկը հարցրեց, թե ինչ եմ ցանկանում հաղորդել իր միջոցով պ. դը Գ... Մ...ին և նրա մոտ տեսած տիկնոջը։ Լսելով այս հարցը յես նորից սենյակ մտա, և հանկարծ կարծեցյալ անդորրությունից ամենաահռելի կատաղության մոլուցքի մեջ ընկա մի այնպիսի սաստկությամբ, վորն անհավատալի պիտի թվա բոլոր նրանց, ովքեր յերբեք չեն ապրել բուռն կրքեր։—«Գնա»,—ասացի յես նրան,—«և հաղորդիր դավաճան Գ... Մ...ին ու նրա նենգ սիրուհուն, թե ինչպիսի վհատության մեջ գցեց ինձ քո բերած նզովյալ նամակը. սակայն հայտնիր նաև, վոր նրանք յերբեք չպիտի հրճվեն ու ծիծաղեն ինձ վրա և վոր յերկուսն ել իմ ձեռքով դաշունահար պիտի լինեն»։

Ցես նետվեցի աթոռի վրա։ Գլխարկս ընկավ մի կողմ, ձեռնափայտս՝ մյուս կողմ։ Արտասուքի յերկու

վտակներ հոսեցին իմ աչքերից։ Կատաղության մուլուցքը, վոր դեռ նոր եր համակել ինձ, տեղի տվեց խորը վշտի։ Այլևս յես միայն լալիս եյի, հառաչանքներ ու հեկեկանքներ արձակելով։ — «Մոտեցիր, մանկիկս, մոտեցիր ինձ», — ասացի յես խոսքս ուղղելով ջահել աղջկան. «մոտեցիր, քանի վոր քեզ են ուղարկել ինձ մխիթարելու համար։ Ասա ինձ, դու գիտես, թե ինչպես պետք է սփոփել վհատությունը, ցասումը, և ինքնասպան լինելու ցանկությունը՝ յերկու ապրելու անարժան դավաճանների սպանությունից հետո։ Այո, մոտեցիր ինձ», — ավելացրի յես տեսնելով, վոր նա մի քանի յերկչոտ ու անվստահ քայլ է անում դեպի ինձ։ «Ցեկ, սրբիր իմ արտասուքները, յեկ, վերադարձրու ինձ իմ հոգեկան անդորրությունը, յեկ, ասա, թե դու սիրում ես ինձ, վորպեսզի յես ընտելանամ մի այլ եյակի սիրուն՝ յերբ չունեմ իմ անհավատարիմ գեղեցկուհուսերը։ Դու լավիկն ես, թերևս յես էլ քեզ կարողանամ սիրել»։ Այս խեղճ մանկիկը, վոր հազիվ տասնվեց-տասնյոթ տարեկան եր և ըստ յերևույթին ավելի ամոթխած, քան իր նմանները, չափից դուրս զարմացած եր այսպիսի մի անսովոր տեսարանից։ Այնուամենայնիվ նա մոտեցավ և ուզեց փաղաքշել ինձ. սակայն յես խլուցն ձեռքով յետ մղելով հեռացրի նրան։ — «Ի՞նչ ես ուզում ինձնից», — ասացի յես։ — «Ա՜խ, դու կին ես, դու մի սեռից ես, վորն ատում եմ յես և վորն այլևս անտանելի յե ինձ համար։ Քո յերեսի քնքշությունը տակավին ինձ դավաճանություն է սպառնում։ Հեռացիր և այստեղ ինձ մենակ թող»։ Նա գլուխը խոնարհեց իմ առջև, առանց համարձակվելու մի բան արտասանել և յերեսը դեպի դուռը շրջեց՝ դուրս գալու համար։ Ցեկ ասացի, վոր կանգ առնի։ «Սակայն դոնե ասա ինձ», — ավելացրի յես, — «ինչու, ինչպես և ինչ նպատակով են քեզ ինձ մոտ ուղարկել։ Ի՞նչպես դու իմացար իմ անունը և վայրը, ուր կարող եյիր ինձ գտնել»։

Նա ասաց, վոր վաղուց է ճանաչում պ. դը Գ... Մ...ին։ Վերջինս իր մոտ մարդ է ուղարկել ժամի հինգին։ Նա

հետևել է սպասավորին և յեկել է մի մեծ տուն, ուր դտել է Գ... Մ...ին՝ մի գեղեցիկ տիկնոջ հետ պիկե խաղալիս։ Նրանք յերկուսով հանձնարարել են նրան բերել այն նամակը, վորը նա հանձնեց ինձ, բացատրելով, թե ինքը ինձ կգտնի Սենտ-Անդրե փողոցի անկյունում՝ կառքի մեջ նստած։ Ցես նրան հարցրի, թե նրանք ուրիշ վոչինչ չեն ասել արդյոք։ Կարմրելով նա պատասխանեց, վոր նրանք հուսադրել են, թե յես իր հետ հաճելի ժամանց կունենամ։ — «Քեզ խաբել են, խեղճ աղջիկս», — ասացի յես, — «քեզ խաբել են։ Դու կին ես և քեզ տղամարդ է հարկավոր, սակայն մի տղամարդ, վորը հարուստ և յերջանիկ լինի, մինչդեռ այստեղ այդպիսին չես գտնի։ Վերադարձիր, վերադարձիր պ. դը Գ... Մ...ի մոտ։ Նա ունի այն ամենը, ինչ հարկավոր է, վորպեսզի նվաճի գեղեցկուհիների սիրտը։ Նա կարող է կահավորված առանձնատներ և կառեթներ ընծայել։ Ինչ ինձ է վերաբերում, յես միայն սեր կարող եմ առաջարկել և սիրո մեջ՝ հավատարմություն. կանայք սակայն արհամարհում են իմ չքավորությունը և իմ միամտությունը դարձնում իրենց զվարճության առարկան»։

Ցես նորից հազար ու մի խոսք ասացի՝ մերթ թախծոտ, մերթ փոթորկալից, նայած թե ինձ փոխ առ փոխ հուզող կրքերից վորն եր տեղի տալիս կամ գերիշխում։ Բայց և այնպես ինձ յերկար տանջելուց հետո

կատաղությանս մոլուցքը մեղմացավ և տեղի տվեց տագնապալից խոհերի։ Այս վերջին դժբախտությունը յես համեմատեցի նույն կարգի դժբախտությունների հետ, որ արդեն կրել եյի և յեկա այն յեզրակացությյան, թե այժմ վոչ մի հիմունք չունեմ ինձ ավելի մեծ վհատության մատնելու, քան առաջ։

Յես ճանաչում եյի Մանոնին. ինչու վշտանալ մի դժբախտությունից, որը պետք է նախատեսեյի։ Ինչու չդրաղվել բուժիչ միջոցների վորոնումով։ Դեռ ուշ չե. համենայն դեպս պետք է գործ դնեմ իմ բոլոր ջանքերը, յեթե չեմ ուզում ինքս ինձ հանդիմանել, վոր անփութությամբս նպաստում եմ սեփական տանջանքներիս։ Ըստ վորում, յես սկսեցի կշռադատել այն բոլոր միջոցները, վորոնք կարող կլինեն ճանապարհ հարթել դեպի հույսը։

Փորձել Մանոնին բռնությամբ հափշտակել Գ... Մ...ի ձեռքից — դա մի հուսահատական քայլ կլինի, վորը կարող է միայն կործանել ինձ և վոչ մի հաջողություն չի խոստանում։ Սակայն ինձ թվում եր, վոր յեթե յես կարողանամ նրա հետ ունենալ թեկուզ ամենակարճ մի տեսակցություն, ապա անխուսափելիորեն կնվաճեմ նրա սրտի մեկ բեկորը։ Յես այնպես լավ գիտեյի այդ սրտի բոլոր զգայուն լարերը։ Յես այնքան վստահ եյի, վոր նա սիրում է ինձ։ Սակայն սույն քմայքը՝ ինձ մխիթարելու համար մի սիրուն աղջիկ ուղարկելը՝ դրազ կարող եյի գալ, նրա միտքն եր և դա հետևանք եր դեպի ինձ տածած իր կարեկցանքի։

Յես վորոշեցի իմ ամբողջ հնարամտությունը գործադրել, նրան տեսնելու համար։ Բազմաթիվ միջոցներ մեկը մյուսի յետևից քննելուց հետո յես կանգ առա հետևյալի վրա. պարոն դը Տ...ն հենց մեր ծանոթության օրից սկսել եր ինձ ծառայություն մատուցել այնպիսի մի. սիրալիր պատրաստակամությամբ, վոր յես մի բոպե անգամ չեյի կասկածում նրա անկեղծությունը և դեպի ինձ տածած բարեկամությունը։ Մտա-

դրվեցի անհապաղ գնալ նրա մոտ և խնդրել, որ նա վորևե կարևոր գործի պատրվակով իր տուն հրավիրի Գ... Մ...ին։ Ինձ կես ժամ ևր պետք Մանոնի հետ զրուցելու համար։ Իմ դիտավորությունն ևր մտնել նրա սենյակը և յես մտածում եյի, թե դա դյուրին կլինի Գ... Մ...ի բացակայության դեպքում։

Այս վորոշումն ինձ հանգստացրեց և յես առատաձեռն վարձատրեցի այն դեռատի աղջկան, վորը տակավին սպասում ևր։ Իսկ վորպեսզի նրան զրկեմ իրեն ուղարկողների մոտ վերադառնալու ցանկությունից, յես վերցրի նրա հասցեն, հույս ներշնչելով, թե կգնամ դիշերը նրա հետ անցկացնելու։ Ցես կառք նստեցի և կառապանին հրամայեցի ամենայն արագությամբ ինձ տանել պ. դը Տ...ի մոտ։ Բարեբախտաբար նա տանն ևր. ճանապարհին յես յերկյուղ եյի կրում դրանից։ Մի քանի խոսքով նրան պատմեցի իմ հոգեկան տառապանքների մասին և հասկացրի, թե ինչպիսի ծառայություն եմ խնդրում նրանից։

Նա այնպես ապշեց, յերբ լսեց, թե Գ... Մ...ն կարողացել է դայթակղեցնել Մանոնին և չիմանալով, որ ինքս ել եմ մասնակցել ինձ հարվածող այդ դժբախտության՝ մեծահոգությամբ առաջարկեց հավաքել բոլոր իր բարեկամներին, վորպեսզի նրանց բաղուկների ու սուսերների ոգնությամբ ազատենք իմ սիրուհուն։ Ցես նրան հասկացրի, վոր այդ ձեռնարկն աղմուկ

կբարձրացնի և վոր դա կարող է կորստաբեր լինել թե Մանոնի և թե ինձ համար։

«Մնայենք մեր արյունը», — ասացի յես նրան, — «ավելի ծայրահեղ դեպքի համար։ Յես մտածում եմ մի ավելի մեղմ միջոցի մասին, վորը հույս ունեմ քիչ հաջողություն չպիտի ունենա»։

Նա պարտավորվեց առանց վերապահության անել այն ամենը, ինչ յես կպահանջեմ իրենից։ Յեվ յերբ յես կրկնեցի, թե նրանից լոկ խնդրում եմ իր մոտ կանչել պ. դը Գ... Մ...ին, վորպես թե զրույցի համար և նրան մեկ-յերկու ժամ պահել իր տանը, նա անմիջապես մեկնեց ինձ հետ, իմ խնդիրը բավարարելու համար։

Մենք սկսեցինք խորհել, թե ինչ պատրվակի դիմենք՝ Գ... Մ...ին այդքան յերկար պահելու համար։ Յես նրան խորհուրդ տվի նախ յերկտող գրել, հրավիրելով Գ... Մ...ին անհապաղ դալ մի գինետուն՝ շատ կարևոր և անհետաձգելի գործով։— «Յես կսպասեմ», — ավելացրի յես, — «մինչև վոր նա դուրս դա և առանց դժվարության կմտնեմ տուն, ուր ինձ ճանաչում են միայն Մանոնը և Մարսելը, իմ սպասավորը։ Իսկ դուք այս բոլոր ժամանակ մնալով Գ... Մ...ի հետ, կարող եք նրան ասել, վոր այն կարևոր գործը, վորի մասին ցանկանում եք հետը խոսել, մի դրամական կարիք է։ Կասեք, վոր խաղի միջոցին դուք ձեր ունեցած բոլոր դրամը տանուլ եք տվել և թե նույն անհաջողությամբ շարունակելով խաղալ ձեր պատվի խոսքի վրա, ավելի մեծ գումար եք կորցրել։ Վորպեսզի նա ձեզ տանի այնտեղ, ուր իր դրամի արկղն է, նրան ժամանակ է պետք և դա բավ է ինձ՝ մտադրությունս իրագործելու համար»։

Պարոն դը Տ...ն կետ առ կետ կատարեց իմ ասածները։ Յես նրան թողեցի գինետանը, ուր նա հապճեպ գրեց իր նամակը։ Յես գնացի սպասելու՝ Մանոնի տնից մի քանի քայլ հեռավորության վրա. տեսա, յերբ նամակաբերը հայտնվեց և մի բոպե անց Գ... Մ...ն մի սպասա-

վորի ուղեկցությամբ դուրս յեկավ տնից։ Ցես ժամանակ տվի, վոր նա հեռանա և ուղղվեցի դեպի սիրուհուս տունը, և չնայած իմ ամբողջ ցասման՝ ակնածանքով բաղխեցի դուռը, ասես տաճարի դուռն եյի բաղխում։ Բարեբախտաբար դուռը բացողը Մարսելն եր։ Նշան արի նրան, վոր լռի. թեպետ յես առիթ չունեյի վախենալու մյուս ծառաներից, այնուամենայնիվ բոլորովին ցած ձայնով հարցրի նրան, թե նա կարող ե. ինձ առաջնորդել Մանոնի սենյակն այնպես, վոր վոչ վոք չնկատի ինձ։ Նա պատասխանեց, վոր դա դյուրին ե. միայն պետք ե կամացուկ բարձրանալ գլխավոր սանդուխքով։ — «Ուրեմն շուտ գնանք», — ասացի յես նրան, — «և աշխատիր թույլ չտալ, վոր վորևե մեկը բարձրանա, քանի դեռ այստեղ եմ»։ Անարգել յես մտա Մանոնի սենյակը։

Նա ընթերցանությամբ եր զբաղված։ Այստեղ առիթ ունեցա մի անգամ ևս ապշել ու զմայլել այս տարորինակ աղջկա բնավորությամբ։ Նա վոչ ահաբեկվեց, վոչ էլ շփոթվեց, յերբ ինձ տեսավ, այլ միայն թեթև զարմանք արտահայտեց, վորն անխուսափելի յե, յերբ հանկարծ տեսնում ես մի մարդու, վորին հեռու եյիր կարծում։ — «Ո՞, այդ դուք եք, սեր իմ», — ասաց նա սովորական քնքշությամբ գրկելով ինձ։ — «Ասվածիմ, վորքան հանդուգն եք։ Ո՞վ կարող եր այսոր ձեզ այստեղ սպասել»։ — Ցես դուրս պրծա նրա գրկախառ-

նությունից. հեռու նրա փաղաքշանքներին պատասխանելու տրամադրությունից, յես արհամարհանքով հրեցի նրան և մի քանի քայլ յետ-յետ գնացի։ Իմ շարժումը նրան շփոթեցրեց։ Նա քարացավ իր կանգնած տեղում և աչքերը սևեռեց ինձ վրա՝ դեմքը գունաթափ։

Իմ սրտի խորքում յես այն աստիճան հիացած եյի նրան տեսնելով, վոր բարկության այդքան արդարացի պատճառներով հանդերձ, յես հազիվ ուժ ունեյի նրան կշտամբելու։ Սակայն սիրտս արյուն եր ծորում ինձ հասցրած նրա սուր վիրավորանքից։ Այդ վիրավորանքը կենդանի պատկերացրի իմ հիշողության մեջ, վորպեսզի դրգռեմ կայրությս և յես աշխատում եյի իմ աչքերում ցոլացնել մի այլ կրակ, քան թե սիրո կրակը։ Ցես միառժամանակ լուռ մնացի, և նա զգաց իմ հուզմունքը. յես նկատեցի, վոր նա սարսեց, ըստ յերևույթին վախի աղդեցության տակ։

Ցես չկարողացա տանել այս տեսարանը։ — «Ո՜հ, Մանոն», — ասացի նրան քնքշանքով, — «ուխտադրուժ ու անհավատարիմ Մանոն։ Ինչից սկսեմ իմ դանդատները։ Ցես ձեզ տեսնում եմ դունատ ու դողդոջուն, և տակավին այնքան զգայուն եմ ձեր ամենաթեթև տառապանքների հանդեպ, վոր վախենում եմ ձեզ չափից դուրս վշտացնել իմ կշտամբանքներով։ Սակայն, Մանոն, հավատացնում եմ ձեզ, վոր իմ սիրտը խոցվել և ձեր դավաճանության ցավով։ Այդպես չեն հարվածում սիրեկանին, յեթե կանխապես չեն վորոշել նրա մահը։ Սա արդեն յերրորդ անգամն է, Մանոն. յես լավ եմ հաշվել. սա յերրեք չի մոռացվում։ Անհրաժեշտ է, վոր դուք հենց այս բոպեին վորոշեք, թե այսուհետև ինչպես եք վարվելու. վորովհետև իմ վշտահար սիրտն այլևս չի կարող տանել նման դաժան հարվածներ։ Զգում եմ, վոր սիրտս ուժասպառ է և շուտով կտոր-կտոր կլինի ցավից։ Ցես այլևս չեմ կարող դիմանալ», — շարունակեցի ասելիքս, նստելով աթոռի վրա. «հազիվ ի վիճակի յեմ խոսելու և կանգնած մնալու»։

Նա վոչինչ չպատասխանեց, բայց յերբ յես նստեցի, նա ծունկ չոքեց և գլուխը հենեց իմ ծնկներին՝ յերեսը ծածկելով ձեռներով։ Անմիջապես զգացի, վոր նա իր արցունքներով թրջում է ձեռներս։ Ատվածներ, ինչ հույզերով ասես, վոր յես չհամակվեցի։ «Ո՜, Մանոն, Մանոն», — շարունակեցի յես հառաչանքով. «շատ ուշ են հորդում ձեր արցունքները, յերբ արդեն մահ եք պատճառել ինձ։ Դուք տրտմություն եք ձևացնում, վորն իրոք չեք զգում։ Ձեր վշտերից մեծագույնն անկասկած իմ ներկայությունն է, վորը միշտ խոչընդոտ է հանդիսացել ձեր հաճույքներին։ Բացեք ձեր աչքերը։ Նայեցեք, ինչ եմ դարձել. այդքան ջերմ արցունք չեն թափում մի թշվառականի համար, յերբ նրան դավաճանել են և, յերբ նրան լքում են այդքան անգթորեն»։

Նա համբուրում եր ձեռները՝ ճնալով ծնկաչոք։— «Սիրադրուժ ու փոփոխամիտ Մանոն», — շարունակեցի յես. «յերախտամոռ ու անհավատարիմ աղջիկ, ուր են ձեր խոստումները ու յերդումները։ Բյուր անգամ թե-թևամիտ ու անողորմ սիրուհի, ինչ արիր դու այն սերը, վորով դեռ այսոր յերդվում եյիր ինձ։ Արդար յերկինք»,— ավելացրի յես, — «ահա թե ինչպես է քեզ ծաղրում մի անհավատարիմ կին՝ սրբությամբ և ակնածանքով քեզ վկա կանչելուց հետո։ Այսպես ուրեմն, ուխտադրժությունը պարգևատրվում է, իսկ հավատարմությանը և հարատևությանը սպասում են լքում ու վհատություն»։

Այս խոսքերից հետո այնպիսի դառն խոհեր ունեցա, որ աչքերս արցունքով լցվեցին։ Մանոնն այդ նկատեց ձայնիս փոփոխումից։ Վերջապես նա խզեց լռությունը։ — «Ցերևի շատ մեղավոր եմ», — ասաց նա տրխրագին, — «քանի որ կարողացել եմ այդքան վիշտ ու հուզմունք պատճառել ձեզ։ Սակայն թող ինձ պատժի յերկինքը, յեթե յես դիտակցել կամ կշռադատել եմ իմ մեղքը»։

Այս խոսքերն այն աստիճան զուրկ թվացին վողջամտությունից ու արժանահավատությունից, որ յես չկարողացա զսպել ամենասաստիկ դայրույթիս բորբոքումը։

«Զարհուրելի կեղծություն», — գոչեցի յես. «ավելի ակներևորեն եմ տեսնում հիմա, քան յերբևե, որ դուսոսկ մի խաբեբա և նենգ կին ես։ Այժմ գիտեմ քո ստորաքարշ բնավորությունը։ Մնաս բարով, անարգ արարած», — շարունակեցի յես վոտքի կանգնելով։ «Ցեսս գերադասում եմ հազար անգամ մեռնել, քան թե այս որվանից վորևե առնչություն ունենալ քեզ հետ։ Թող յերկինքը պատժի ինձ, յեթե յես յերբևե քեզ արժանացնեմ իմ ամենաթեթև հայացքին։ Մնա՛ քո նոր սիրեկանի հետ, սիրիր նրան, արհամարհիր ինձ, ձեռք քաշիր պատվից, վողջամտությունից. յես ծիծաղում եմ քո վարմունքի վրա. ինձ համար վողջը մեկ է»։

Նա այն աստիճան սարսափեց իմ կատաղությունից, որ տակավին ծունկ չոքած աթոռի մոտ, վորից յես վեր եյի կացել, դողդողալով ինձ եր նայում, առանց համարձակվելու մինչև իսկ շունչ քաշել։ Ցեսս մի քանի քայլ ևս արի դռան ուղղությամբ, գլուխս շրջած դեպի նա և աչքերս սևեռած նրա վրա։ Սակայն պետք է կորցրած լինեյի մարդկային վերջին զգացումը, վորպեսզի անզգա ու անդրդվելի մնայի նրա համբերի առաջ։

Ցեսս այնքան հեռու եյի այդ բարբարոս ու քարսիրտ անզգայությունից, որ հասնելով հանկարծ հակադիր ծայրահեղության, վերադարձա, կամ ավելի շուտ դեպի նա նետվեցի առանց մտածելու... Ցեսս նրան իմ գիրկն

տուա, հազար քնքույշ համբույր տվի, իմ կատաղության համար ներում խնդրեցի, խոստովանեցի, վոր կոպիտ եմ յեղել և վոր արժանի չեմ նրա նման մի աղջկանից սիրվելու յերջանկությանը։

Ցես նրան նստեցրի և իմ հերթին ծունկ չոքելով, աղաչեցի այդ դիրքով ունկնդրելու ինձ։ Ապա ներողության հայցումիս մեջ հակիրճ կերպով բովանդակեցի այն բոլոր հարգալիր ու քնքույշ խոսքերը, վոր մի հլու և գորովալիր սիրեկան ի վիճակի յե հնարելու։ Ցես նրան խնդրեցի շնորհ անել ասելու, թե ներում ե ինձ։ Նա իր ձեռները դրեց իմ ուսերին, ասելով, վոր ինքը կարող ե իմ բարությանը, վորպեսզի կարողանա ինձ մոռացնել տալ իր պատճառած ցավերը, և վոր նա հիմա յերկյուղի մեջ ե վոչ պակաս հիմունքով, վոր այն, ինչ նա ուզում ե ասել իր արդարացման համար՝ ինձ դուր չպիտի գա։ «Ցեռ»,—ընդհատեցի նրան անմիջապես.—«ո՞, յես ձեզնից վոչ մի արդարացում չեմ պահանջում։ Իմ հավանությունն եմ տալիս ձեր բոլոր արարքներին։ Ցես վոչ մի իրավունք չունեմ ձեզնից բացատրություն պահանջելու ձեր վարմունքի վերաբերյալ։ Ցես չափազանց ուրախ կլինեմ և յերջանիկ, յեթե անգին Մանոնս ինձ չզրկի իր սրտի քնքշությունից։ Սակայն», — շարունակեցի յես, չմտածելով իմ կացության վրա,—«ամենակարող Մանոն, դուք, վոր ձեր քմահաճությամբ բերկրանք ու տառապանք եք պատճա-

ռում ինձ, արդյոք թույլ կտանք նվաստացումով ու զզվելումով ձեզ բավարարելուց հետո, խոսել իմ վշտի ու տանջանքի մասին։ Կլսեմ արդյոք ձեզնից, թե այսոր վիճն ե լինելու իմ վիճակը և թե արդյոք վճռել եք անդարձ ստորագրելու իմ մահվան դատավճիռը, գիշերն անցկացնելով իմ ախոյանի հետ»։

Նախքան պատասխանելը նա փոքր ինչ մտածեց։— «Ասպետս»,—ասաց նա, վերստին հանդարտված,—«եթե դուք հենց սկզբից բացատրված լինեիք այսպես պարզությամբ, դուք ձեզ զերծ կպահեիք բյուր հուզումներից, իսկ ինձ՝ անչափ ցավալի մի տեսարանից։ Քանի վոր ձեր վիշտը բղխում ե խանդից, ապա յես այդ կամոքեմ, առաջարկելով հենց այս ժամին հետևել ձեզ թեկուզ աշխարհի ծայրը։ Բայց յես կարծեցի, թե ձեր դառնության պատճառն այն նամակն ե, վոր յես գրեցի ձեզ պ. դը Գ... Մ... ի աչքի առջև և այն աղջիկը, վորին մենք ուղարկեցինք ձեզ մոտ։ Ցեսս մտածեցի, թե մի դուցե դուք իմ նամակն ընդունել եք իբրև ծաղր, և կարծել, թե այդ աղջկան յես ձեզ մոտ ուղարկել եմ վորպես խոստովանություն, թե հրաժարվում եմ ձեզնից, Գ. Մ...ի հետ կապվելու համար։ Ահա այս միտքն ե, վոր ընկճել եր ինձ հանկարծ, վորովհետև թեպետ անմեղ եյի, այնուամենայնիվ մտածելով իմ վարմունքի մասին, դատնում եյի, վոր արտաքուստ դեպքերն աննպաստ եյին ինձ համար. սակայն»,— ավելացրեց նա,—«յես ուզում եմ, վոր դուք իմ դատավորը լինեք, յերբ ձեզ կբացատրեմ իրերի բուն յեղելությունը»։

Այն ժամանակ նա ինձ պատմեց այն ամենը, ինչ պատահել եր իրեն Գ... Մ... ի հետ հանդիպելուց հետո, վորը նրան սպասել եր հենց այն տանը, ուր հիմա մենք գտնվում եյինք։ Գ... Մ...ն, հիրավի, նրան ընդունել եր վորպես աշխարհիս ամենաանվանի մի իշխանուհու։ Նա ցույց եր տվել բոլոր սենյակները, վորոնք զարմանալի ճաշակով ու մեծ խնամքով եյին կահավորված։ Իրեն հատկացված առանձնասենյակում նա տվել եր նրան տաս հազար ֆունտ և բացի դրանից նվիրել եր մի քանի գո-

հարներ, վորոնց թվում և այն մարգարտե ապարանջաններն ու մանյակը, վորոնք մի անգամ արդեն ինքը ստացել եր Գ... Մ...ի հորից։ Այնուհետև նրան առաջնորդել եր դեպի մի դահլիճ, վորն ինքը Մանոնը տակավին չեր տեսել և ուր ճոխ ու ընտիր ճաշ եր սպասում նրան։ Ճաշին սպասարկել եյին նոր ծառաները, վորոնց նա վարձել եր հատկապես Մանոնի համար, հրամայելով նրանց, վոր այսուհետև նրան ընդունեն վորպես իրենց տիրուհին. ի վերջո ցույց եր տվել կառեթը, ձիերը և ճեպացած բոլոր նվերները, վորից հետո առաջարկել եր թուղթ խաղալ մինչև ընթրիք։

«Զոստովանում եմ», — շարունակեց նա, — «խելքս կորցրի այս հոյակապ փարթամությունից։ Ցեսս մտածեցի, թե ափսոս է միանգամից զրկվել այսքան բարիքներից, բավականանալով միայն ինձ հետ տաս հազար ֆրանկ ու զոհարները տանելուց, թե այս ամենը պատրաստի մի կարողություն է ձեզ և ինձ համար, և թե մենք կկարողանանք հաճելի կյանք վարել Գ... Մ... ի հաշվին։

«Փոխանակ առաջարկելու թատրոն գնալ, իմ մտքով անցավ նրան հարց ու փորձ անել ձեր մասին, իմանալու համար, թե վորքան դյուրությամբ մենք կարող կլինենք տեսնվել միմյանց հետ իմ ծրագիրն իրագործվելու դեպքում։ Ցեսս համոզվեցի, վոր նա հեզաբարո և դյուրաբեկ բնավորություն ունի։ Նա ինձ հարցրեց, թե ինչ եմ

մտածում ձեր մասին և ափսոսում եմ արդյոք, վոր լքել եմ ձեզ։ Ցես պատասխանեցի, վոր դուք այնքան քնքուշ եք յեղել և միշտ այնպես աղնվաբար վարվել ինձ հետ, վոր անբնական կլիներ, յեթե ձեզ ատեյի։ Նա խոստովանեց, վոր դուք իրոք մեծ արժանիքներ ունեք և թե ինքը ցանկացել է ձեզ հետ մտերմություն հաստատել։

«Նա կամեցավ գիտենալ, թե իմ կարծիքով դուք ինչ վերաբերմունք պիտի ցույց տաք իմ մեկնումին, մանավանդ, յերբ իմանաք, վոր յես նրա մոտ եմ։ Ցես պատասխանեցի, վոր մեր սերը հին պատմություն է և արդեն փոքր ինչ սառել է. բացի այդ, ասացի, թե դուք այժմ դժվար պայմաններում եք գտնվում և թերևս ինձ կորցնելը ձեր աչքում մեծ դժբախտություն չերևա, քանի վոր դա ձեզ ազատում է մի ճնշող բեռից։ Այնուհետև ավելացրի, վոր յես այն աստիճան համոզված եմ ձեր քաղցրաբարո ու խաղաղասեր բնավորության մեջ, վոր մի րոպե անգամ չեմ տատանվել ձեզ ասելու, թե գործով եմ գնում Փարիզ. վոր դուք վոչ մի դժվարություն չեք հարուցել և թույլ եք տվել ինձ մեկնելու. հետո, յերբ ինքներդ ել յեկել եք ու լսել, վոր ձեզ լքել եմ, առանձնապես մեծ անհանգստություն չեք ցուցաբերել։

«Յեթե յես գիտենայի», — ասաց նա, — «թե ձեր ասպետը հակամետ և ինձ հետ հաշտ ապրելու, ինքս առաջինը կառաջարկեյի նրան իմ ծառայությունն ու բարեկամությունը»։ — Ցես նրան վստահացրի, վոր ճանաչելով ձեր բնավորությունը, բնավ չեմ կասկածում, վոր դուք ամենայն անկեղծությամբ կընդունեք նրա առաջարկությունը, մանավանդ, — ավելացրի յես, — «յեթե նա կարողանա ձեզ ոգնել ձեր դործերում, վորոնք ծայր աստիճան ձախողվել են այն որից ի վեր, յերբ դուք ընդհարվել եք ձեր ընտանիքի հետ»։ Գ... Մ...ն ինձ ընդհատեց, հայտարարելով, վոր նա պատրաստ է ձեզ մատուցել ամեն տեսակ ծառայություն, ինչ կախված է իրենից, և վոր յեթե դուք ցանկանաք սիրային նոր

կապ հաստատել, ապա նա ձեզ կտրամադրի մի գեղեցկուհի, որին թողել և հանուն իմ սիրու։

«Ցեսս հավանություն տվի այս մտքին»,—ավելացրեց Մանոնը,—«Վորպեսզի լիովին կանխեմ նրա բոլոր կասկածները. և ավելի ու ավելի ամրապնդվելով իմ մտադրության մեջ, յես սոսկ տեսնում եյի մի հնար գտնել՝ ձեզ այս ամենի մասին իրազեկ դարձնելու համար, որովհետև վախենում եյի, թե դուք չափից դուրս կհուզվեք, յեթե ինձ չտեսնեք ժամադրված վայրում։ Հենց այս նպատակով եր, որ յես առաջարկեցի նույն յերեկոն ևեթ ձեզ մոտ ուղարկել այդ նոր սիրուհուն, վորպեսզի առիթ ունենամ ձեզ գրելու. յես ստիպված յեղա դիմել այս խորամանկությանը, չունենալով վոչ մի հույս, որ նա թեկուզ մի ակնթարթ մենակ կթողնի ինձ։

«Նա ծիծաղեց իմ առաջարկության վրա, կանչեց իր սպասավորին ու հարցրեց, թե կարող ե արդյոք իսկույն ևեթ գտնել իր նախկին սիրուհուն, և ուղարկեց քաղաքի բոլոր մասերում վորոնելու նրան։ Գ... Մ... ն կարծում եր, թե այդ աղջիկը ձեզ կգտնի Շայոյում։ Սակայն յես նրան հաղորդեցի, որ ձեզանից հեռանալիս խոստացել եմ ձեզ հանդիպել թատրոնում կամ, յեթե որևե պատճառ արգելք հանդիսանա ինձ այնտեղ լինելու, դուք ինձ պիտի սպասեք կառեթում՝ Սենտ-Անդրե փողոցի անկյունում։ Ցեվ որ հետևաբար ավելի լավ կլինի այնտեղ ել ուղարկել ձեր նոր սիրուհուն՝ հենց թեկուզ

այն նպատակով, վոր գիշերը տաղտկալի չանցնի ձեզ համար։ Ցեսս նրան ասացի նաև, վոր հարկավոր է մի յերկտող գրել ձեզ՝ հայտնելու սույն փոփոխությունը, վորն առանց դրան դուք դժվար կհասկանաք։ Նա համաձայնվեց, սակայն յես հարկադրված եյի գրել նրա ներկայությամբ և զգուշացա նամակումս ակնհայտնի բացատրությունից։

«Ահա թե իրերն ինչ ընթացք ստացան»,— ավելացրեց Մանոնը։—«Ցեսս ձեզնից վոչինչ չեմ թաքցնում, վոչ իմ վարմունքը և վոչ ել դիտավորությունները։ Ջահել աղջիկը հայտնվեց. նա ինձ գեղեցիկ թվաց և վորովհետև յես բնավ չեյի կասկածում, վոր իմ բացակայությունը ձեզ վիշտ կպատճառի, ապա անկեղծորեն ցանկանում եյի, վոր նա գեթ մի քանի րոպե կարողանա ձեր ձանձրույթը փարատել և զվարճացնել ձեզ, վորովհետև իմ տենչած հավատարմությունը՝ վոր դուք ևս ունենաք, դա սրտի հավատարմությունն է։ Ցեսս մեծ հաճույք զգացած կլինեյի, յեթե կարողանայի Մարսելին ուղարկել ձեզ մոտ։ Սակայն ինձ չհաջողվեց մի հարմար րոպե գտնել նրան ասելու այն, ինչ ուզում եյի ձեզ հաղորդել»։ Վերջապես նա ավարտեց իր պատմությունը, հայտնելով ինձ, թե Գ... Մ... ն վորքան եր վրդովվել, ստանալով պ. դը Տ... ի նամակը։ — «Նա վարանեց», — շարունակեց Մանոնը, — «թե արդյոք պետք է ինձ թողնի գնա, և վստահացրեց, վոր առանց հապաղելու կվերադառնա. հենց դրա համար ել ձեր ներկայությունը հիմա ինձ անհանգստացնում է և ձեր գալուստը զարմացրեց ինձ»։

Ցեսս մեծ համբերությամբ լսեցի նրա պատմությունը։ Դրանում ինձ համար բազմաթիվ անողոք ու վիրավորական խոսքեր կային, վորովհետև նրա անհավատարմության դիտավորությունն այն աստիճան ակներև եր, վոր նա մինչև իսկ չջանաց այն թաքցնելու։ Նա չեր կարող հուսալ, վոր Գ... Մ... ն ամբողջ գիշեր նրան մենակ կթողնի իբրև վեստալուհի։ Ուրեմն նա վորոշել եր Գ... Մ...ի հետ գիշերն անցկացնել։ Ինչ խոստովանու-

թյուն մի սիրեկանի համար։ Սակայն մտածեցի, թե մասամբ յես եմ նրա հանցանքի պատճառը, քանի վոր յես եյի նրան պատմել Գ... Մ... ի դեպի նա ունեցած զգացմունքների մասին և այնքան թույլ գտնվել, վոր կուրորեն համաձայնվել եյի մասնակցելու նրա արտաքոց ու հանդուգն ծրագրի իրագործմանը։ Բացի այդ, շնորհիվ իմ դյուրազգաց բնության սիրտս փափկեց նրա անկեղծ ու անպաճույճ պատմությունից և այն բարի ու սրտաբաց յեղանակից, վորով նա պատմում եր մինչև անգամ ինձ համար ամենավիրավորական հանգամանքները։ Մանոնը մեղանչում է առանց չարամտության, ասում եյի ինքս ինձ. նա թեթևամիտ է ու անխոհեմ. սակայն՝ շիտակ ու անկեղծ։ Ավելացրեք և այն, վոր իմ սերը բավական եր, վոր ստիպեր ինձ փակել աչքերս նրա բոլոր հանցանքների հանդեպ։ Յես չափից դուրս զոհ եյի հենց նույն յերեկո նրան իմ ախոյանից հափշտակելու հույսից։ Այնուամենայնիվ ասացի նրան. «Իսկ գիշերը, ում հետ դուք պետք է անցկացնեյիք գիշերը»։ Տխուր ձայնով արած այս հարցը նրան շփոթեցրեց։ Նա ինձ պատասխանեց կցկտուր բառերով—«սակայն», «յեթե»...

Նա տանջվում եր իմ հարցումից. յես խղճացի նրան և ընդհատելով մեր զրույցը՝ կտրուկ հայտարարեցի վոր սպասում եմ նրա վերադարձմանը՝ անմիջապես ինձ հասնելու։—«Ամենայն սիրով», ասաց նա,—«սակայն մի՞թե դուք չեք հավանում իմ ծրագրին»։—«Ա՜խ, բավական

չէ՞ միթե»,— առարկեցի յես,— «վոր հավանում եմ այն ամենը, ինչ դուք արել եք մինչև հիմա»։—«Ի՞նչ, մթթե մենք չպիտի վերցնենք այն տաս հազար ֆրանկը», — հարցրեց Մանոնը. «նա ինքն է տվել. դրանք իմն են»։ Ցես նրան խորհուրդ տվի ամեն ինչ թողնել և միայն մտածել այն մասին, թե ինչպես շուտափույթ հեռանանք. վորովհետև թեպետ յես միայն կես ժամ եր, ինչ նրա մոտ եյի, բայց և այնպես յերկյուղ եյի կրում Գ... Մ...ի վերադարձից։ Սակայն նա այնպիսի բուռն թախանձանքով ջանաց ինձ համոզել՝ չհեռանալ դատարկ ձեռներով, վոր ի վերջո յես պարտք համարեցի վորևե բանում տեղի տալ նրան՝ անհամեմատ շատ զիջումներ նրանից ստանալուց հետո։

Մինչդեռ մենք մեկնումի պատրաստություն եյինք տեսնում, յես լսեցի, վոր փողոցի դուռը բաղխեցին։ Ցես բնավ չեյի տարակուսում, վոր դա — Գ... Մ...ն է. այդ միտքն ինձ խիստ անհանգստություն պատճառեց և յես դրա ազդեցության տակ Մանոնին ասացի, վոր յեթե Գ... Մ...ն մտնի սենյակ՝ նա կենդանի չի մնա։ Հիրավի, յես դեռևս բոլորովին չեյի սթափվել իմ կատաղությունից, վորպեսզի կարողանայի նրա ներկայությամբ զսպել ինձ։ Մարսելը վերջ տվեց իմ մտատանջությանը, հանձնելով ինձ մի նամակ, վորը նա ստացել եր շքամուտքի դռանը։ Ցերկտողը պ. դը Տ...ից եր։

Նա ինձ գրում եր, թե քանի դեռ Գ... Մ...ն գնացել է տուն իր համար դրամ բերելու, նա ոգտվում է նրա բացակայությունից, վորպեսզի մի շատ զվարճալի միտք հաղորդի ինձ։ Նրան թվում է, վոր յես կարող եմ վրեժս առնել իմ ախոյանից ավելի մի հաճելի յեղանակով՝ ուտելով նրա ընթրիքը, և հենց նույն գիշերը պառկելով այն անկողնում, վորում նա հույս ուներ անցկացնել իմ սիրուհու հետ։ Նրա կարծիքով այս ծրագիրը դյուրությամբ կարելի յե իրագործել, յեթե միայն յես կարողանամ ապահովել յերեք կամ չորս մարդու աջակցությունը, վորոնք բավականին վճռականություն ու-



նենան Գ... Մ...ին վողոցում կանգնեցնելու, և բավակա-նաչափ հավատարմություն՝ մինչև առավոտ նրան աչքից չհեռացնելու։ Իսկ ինչ վերաբերում է իրեն, նա խոստա-նում է առնվազը մի ժամ նորից նրան զբաղեցնել զրույցով՝ զանազան նյութերի շուրջը, վոր նա արդեն նախապատրաստել է նրա վերադարձի համար։

Սույն յերկտողը յես ցույց տվի Մանոնին և հաղորդեցի նրան, թե ինչպիսի խորամանկության եմ դիմել՝ նրա մոտ ազատ մտնելու համար։ Թե իմ և թե պարոն դը Տ...ի հնարամտությունը մեծ հիացմունք պատճառեց Մանոնին։ Մենք մի քանի բոպե սրտագին ծիծաղեցինք այդ առթիվ, սակայն յերբ յես պ. դը Տ... ի վերջին ծրագրի մասին խոսեցի վորպես կատակ, ապշած մնացի, վոր նա լրջորեն պնդում եր իրագործելու այդ առաջարկությունը, վորի միտքը սքանչացնում եր նրան։ Իզուր յես հարցնում եյի, թե նրա կարծիքով միանգամից վորտեղ գտնել մարդիկ, վորոնք ընդունակ լինեն բռնել Գ... Մ...ին և ազատ չթողնել։ Նա ինձ պատասխանեց, թե համենայն դեպս պետք է փորձել, քանի վոր պ. դը Տ...ն մեզ ապահովում է մի ժամ ևս, և իբրև պատասխան իմ մյուս առարկություններին, ինձ հայտարարեց, թե յես բռնակալի պես տանջում եմ։ և բնավ չեմ կամենում հաճոյանալ իրեն։ Այս ծրագիրը ծայր աստիճան հրապուրիչ եր թվում նրան։ — «Ընթրիքին դուք կնստեք նրա տեղը», — կրկնեց նա ինձ, — «դուք

կքնեք նրա անկողնում և վաղ լուսադեմին կհափշտակեք նրա սիրուհուն ու դրամը։ Դուք կատարելապես ձեր վրեժն առած կլինեք թե հորից և թե վորդուց»։

Ցեսը զիջեցի նրա թախանձանքներին, չնայած սրտիս դաղտնի վայրիվերումներին, վորոնք ասես ինձ չարաբաստիկ աղետ եյին նախագուշակում։ Ցեսը տանից դուրս յեկա այն դիտավորությամբ, վոր գնամ խնդրեմ յերկույերեք գվարդիականների, վորոնց հետ ինձ ծանոթացրել եր Լեսկոն, վոր հանձնառու լինեն Գ... Մ...ի բռնելու հոդսը։ Ցեսը տանը միայն մեկին գտա. սակայն դա մի յեռանդուն ու նախաձեռնող մարդ եր, վորը գործի յեղելությունն իմանալով, իսկույն յերաշխավորեց դրա հաջողությունը։ Նա ինձնից ընդամենը տաս պիստոլ խնդրեց՝ վարձատրելու գվարդիայի յերեք զինվորներին, վորոնց նա վորոշեց հրավիրել իր դլխավորությամբ մասնակցելու մեր ձեռնարկին։

Ցեսը խնդրեցի նրան ժամանակ չկորցնել։ Քառորդ ժամ չանցած նա հավաքեց այդ զինվորներին։ Ցեսը նրան սպասում եյի իր տանը և յերբ նա վերադարձավ ընկերակիցների հետ, յես անձամբ նրան առաջնորդեցի դեպի այն փողոցի անկյունը, վորով անհրաժեշտաբար պիտի անցներ Գ... Մ...ն՝ Մանոնի յեղած փողոցը մտնելու համար։ Գվարդիականին պատվիրեցի վատ չվարվել Գ... Մ...ի հետ և միայն աչալուրջ ու ապահով պահել մինչև առավոտյան ժամի յոթը, վորպեսզի յես հանգիստ լինեմ, վոր նա վոչ մի հնարավորություն չունի փախչելու։ Գվարդիականն ինձ ասաց, վոր մտադիր է նրան իր սենյակը տանելու և ստիպելու շորերը հանել կամ մինչև իսկ պառկել իր անկողնում, մինչդեռ ինքը և իր կտրիճները գիշերը պիտի անցկացնեն կոնծաբանելով ու թըղթախաղով։

Ցեսը նրանց հետ մնացի մինչև վոր յերևաց մոտեցող Գ... Մ...ն և այն ժամանակ միայն այնտեղից փոքր ինչ հեռացա դեպի ցած՝ մի մութ տեղ, վորպեսզի վկա լինեմ այդպիսի արտասովոր մի տեսարանի։ Գվարդիականն ատրճանակը ձեռին մոտեցավ նրան և քաղաքավարու-

թյամբ բացատրեց, որ նա վոչ նրա կյանքին է սպառնում, վոչ էլ քսակին. սակայն, յեթե նա առանց ընդդիմադրության և հոժարակամ չհետևի իրեն, կամ փորձի ոգնություն կանչել, ապա ինքը իսկույն կգնդակահարի նրան։ Գ... Մ...ն տեսնելով, որ գվարդիականի հետ յերեք զինվորներ ևս կան և անշուշտ վախենալով լիք ատրճանակից, չընդդիմադրեց։ Յես տեսա թե ինչպես զինվորները վոչխարի նման տարան նրան։

Յես անհապաղ վերադարձա Մանոնի մոտ և, որպեսզի ծառաները վոչ մի կասկած չտանեն, ներս մտնելով ասացի, որ պ. Գ... Մ...ին չպետք է սպասել ընթրիքի, որ անակնկալ գործեր նրան թույլ չեն տվել վերադառնալու և թե նա ինձ խնդրել է գալ իր ներողությունը հայտնելու և տիկնոջ հետ ընթրելու, որը յես մեծ յերջանկություն եմ համարում ինձ համար՝ մանավանդ, որ տիկինն անասելի գեղեցիկ է։ Մանոնը մեծ ճարպկությամբ ոգնեց իմ մտադրության իրագործմանը։ Մենք սեղան նստեցինք։ Քանի դեռ ծառաները մեզ սպասարկում էին՝ մենք լուրջ ու վայելուչ տեսք ունեյինք։ Վերջապես նրանց արձակելով, մենք անցկացրինք մեկը մեր կյանքի ամենասքանչելի յերեկոներից։ Մանոնից գաղտնի յես հրամայեցի Մարսելին մի կառեթ վորոնել և պատվիրել կառապանին, որ հետևյալ որը առավոտյան ժամի վեցին սպասի տան առաջ։ Կես գիշերի մոտերքը յես ձևացրի, թե բաժանվում եմ Մանոնից.

սակայն կամացուկ կրկին Մարսելի ոգնությամբ սենյակ վերադառնալով՝ պատրաստվեցի դրավել Գ... Մ...ի անկողինը, ինչպես քիչ ժամանակ առաջ նստել էի նրա տեղ՝ սեղանի շուրջը։

Մինչդեռ՝ չար բախտը կործանում եր պատրաստել մեզ համար։ Մենք անձնատուր յեղանք հեշտալի վայելքներին, սակայն ուրն արդեն կախված եր մեր գլխին։ Այդ պահող թելը կտրվելու վրա յեր։ Բայց, վորպեսզի հասկանալի լինի մեր կործանման բոլոր հանգամանքները, պետք է լուսաբանել դրա պատճառը։

Գ... Մ... ին ուղեկցում եր մի սպասավոր, յերբ գվարդիականը նրան բռնեց։ Այս տղան՝ ահաբեկված իր տիրոջ գլխին յեկած փորձանքից, փախուստի յե դիմել և տիրոջն ոգնելու նրա առաջին քայլն յեղել է՝ դնալ պատահածի մասին իմաց տալ ծեր Գ... Մ... ին։

Այդպիսի մի անախորժ լուր չեր կարող սաստիկ չանհանգստացնել ծերուկին։ Ցերիտասարդ Գ... Մ...ն նրա միակ վորդին եր, ինկ ինքն չնայած իր տարիքին, դեռ ևս ժիր ու կայտառ մի մարդ եր։ Նա ամենից առաջ սպասավորից պահանջել է ասել, թե վորդին ինչպես է անցկացրել յերեկոն. արդյոք կռվի չի՞ բռնվել վորևե մեկի հետ. արդյոք ուրիշի կռվին չի՞ խառնվել, կամ վորևե կասկածելի տուն չի՞ հաճախել։ Սպասավորը կարծելով, թե իր տերը ծայրահեղ վտանգի մեջ է գտնվում և յենթադրելով, վոր ինքը վոչ մի բան չպիտի խնայի տիրոջն ոգնելու համար, ծեր հորը պատմել է իր բոլոր գիտեցածը՝ վորդու դեպի Մանոնն ունեցած սիրո և նրա համար արված բոլոր ծախսերի մասին. նա նրան հաղորդում է, թե իր տերն ինչպես և անցկացրել ժամանակը կեսորից հետո՝ մինչև ժամի ինների մոտերքը, ինչպես է դուրս յեկել տանից և վերադարձին ինչ դժբախտություն է պատահել նրան։ Այս տեղեկությունը բավական եր, վորպեսզի ծերուկը կասկածեր, թե իր վորդու արկածը սիրային ընդհարման հետևանք է։ Թեպետ ժամը տասն անց եր կես, նա առանց տատանվելու անմիջապես գնում է պարոն

վոստիկանապետի մոտ. նրանից խնդրում է բոլոր դիշերապահ պահակախմբերին հատուկ հրամաններ ու հրահանգներ տալ։ Այնուհետև վոստիկանապետի թույլատվությամբ իր հետ վերցնելով մի պահակախումբ, նա շտապում է դեպի այն փողոցը, ուր բռնել էին իր վորդուն։ Նա լինում է քաղաքի բոլոր մասերում, վորտեղ հույս է ունենում գտնել նրան, և վոչ մի տեղ նրա հետքը չգտնելով, հրամայում է իրեն առաջնորդել վորդու սիրուհու տունը, ուր՝ նրա կարծիքով, նա յերևի արդեն կարողացել է վերադառնալ։

Ցեռ պատրաստվում էր անկողին մտնել, յերբ նա յեկավ։ Մեր սենյակի դուռը փակ լինելու պատճառով յես չեյի լսել փողոցի դռան դաղխումը։ Սակայն նա ներս մտավ յերկու պահակների ընկերակցությամբ և իր վորդու վիճակի մասին արած հարց ու փորձից հետո կամեցավ տեսնել իրեն ուղեկցող պահակների հետ նրա սիրուհուն՝ վորևե տեղեկություն ստանալու նպատակով։ Նա բարձրացավ սանդուխքով։ Մենք պատրաստվել էինք անկողին մտնելու. նա բացեց դուռը և յերբ մենք նրան տեսանք, արյունը սառեց մեր յերակներում։ «Ա՜խ, ասաված իմ, ծեր Գ... Մ...ն է»,—ասացի Մանոնին։ Ցեռ նետվեցի դեպի իմ սուսերը. դժբախտաբար՝ այն պինդ մխրճվել էր պատյանում։ Տեսնելով իմ շարժումը, պահակներն իսկույն մոտեցան ինձ բռնելու։ Հազին միայն մի շապիկ մարդն անկարող է դի-

մաղրելու։ Նրանք ինձ ղրկեցին պաշտպանվելու բոլոր միջոցներից։

Թեպետ Գ... Մ...ն գլուխը կորցրել եր այս տեսարանից, այնուամենայնիվ նա իսկույն ճանաչեց ինձ։ Առավել դյուրությամբ նա ճանաչեց և Մանոնին։— «Մթթե պատրանք է սա», — ասաց նա մեզ խստորեն։ «Մթթե յես տեսնում եմ ասպետ դը Գրիյոյին և Մանոն Լեսկոյին»։ Ցեսս այն աստիճան կատաղել եյի ամոթից ու վշտից, վոր վոչինչ չպատասխանեցի նրան։ Միառժամանակ թվաց, թե նա զանազան խոհեր է կշռատուում իր մտքում, և հանկարծ դրանք ասես բռնկեցին նրա զայրույթը և նա գոռաց, խոսքն ինձ ուղղելով. — «Ո՜, թշվառական, հալատացած եմ, վոր դու ես սպանել իմ վորդուն»։ Այս մեղադրանքը սաստիկ խոցեց իմ սիրտը։ — «Մեր ավազակ», — հպարտ պատասխանեցի նրան,— «յեթե յես հարկ ունենայի սպանել քո ընտանիքի անդամներից վորևե մեկին, ապա քեզնից կսկսեյի»։ — «Դրան պինդ պահեցեք», — դիմեց նա պահակներին. — «յես դրան կստիպեմ պատմելու, թե ինչ է պատահել իմ վորդուն, յես դրան վաղն ևեթ կախաղան կհանեմ, յեթե հիմա իսկույն չասի, թե ինչ է արել վորդուս»։ — «Դու ինձ կախել կտաս», — գոռացի յես։ «Անզգամ, քո նմաններին պետք է կախաղան հանել։ Իմացիր, վոր յես ավելի աղնիվ, ավելի զտարյուն տոհմի զավակ եմ, քան դու։ Այո՛», — ավելացրի յես, — «ինձ հայտնի յե, թե ինչ է պատահել քո վորդու հետ, և յեթե դու շարունակես ինձ զայրացնել, ապա յես կհրամայեմ, վոր վաղն ևեթ այդերացին նրան խեղդեն և քեզ ել նույն վիճակն եմ խոստանում նրանից հետո»։

Ցեսս անխոհեմություն արի խոստովանելով, վոր գիտեմ նրա վորդու ուր լինելը. սակայն ծայրահեղ բարկությունն ինձ դրդեց այս անզգույշ քայլն անելու։ Նա անմիջապես կանչեց հինգ թե վեց պահակների, վորոնք սպասում եյին դռան մոտ, և նրանց հրամայեց տան բոլոր ծառաներին ձերբակալել։

«Ո՜, պարոն ասպետ», — ասաց նա ծաղրանքով, — «դուք գիտեք, թե ուր է իմ վորդին և կհրամայեք, վոր նրան խնդրեն, ասում եք։ Հավատացած յեղեք, մենք կկանխենք ձեր դիտավորությունը։ Ցեսխսկուն հասկացա գործած սխալս։

Ծեր Գ... Մ...ն մոտեցավ Մանոնին, վորն անկողնում նստած լաց եր լինում, և մի քանի հեգնոտ հաճոյաբանություններ ասաց հոր և վորդու վրա նրա ունեցած իշխանության նկատմամբ և այն լավ չարաշահելու մասին։ Այս ծեր անժուժկալ հրեշն ուզեց ընտանեվարի վարվել Մանոնի հետ։ — «Փորձիր միայն նրան դիպչելդ», — գոչեցի յես. «չկա վոչ մի սրբություն, վոր կարողանա քեզ փրկել իմ ձեռքից»։ Նա դուրս յեկավ, թողնելով սենյակում յերեք պահակների, վորոնց հրամայեց ստիպել մեզ՝ շուտափույթ հագնելու մեր շորերը։

Չգիտեմ, թե այդ միջոցին նա ինչ դիտավորություն ուներ մեր նկատմամբ։ Թերևս մենք ձեռք կբերեյինք մեր ազատությունը, յեթե հայտնեյինք նրա վորդու ուր լինելը։ Շորերս հագնելիս յես խորհում եյի, թե գուցե ամենալավ յելքը դա լիներ. սակայն, յեթե նա այդպիսի դիտավորություն ուներ մեզնից հեռանալիս, ապա այն բոլորովին փոխվել եր, յերբ սենյակ վերադարձավ։ Նա գնացել եր հարց ու փորձ անելու Մանոնի սպասավորներին, վորոնց ձերբակալել եյին պա-

հակները։ Նա վոչ մի բան չեր կարողացել իմանալ իր վորդու՝ Մանոնի համար վարձած սպասավորներից. սակայն յերբ իմացել եր, վոր Մարսելը մեզ սպասարկել է նաև անցյալում, ստիպել եր նրան խոսելու՝ սպառնալիքներ տալով։

Մարսելը մի հավատարիմ սպասավոր եր. սակայն՝ պարզամիտ ու անտաշ։ Արդելատնից Մանոնին ազատելու իր վարմունքի հիշողությունը և Գ... Մ...ի ներշնչած ահաբեկությունը այնպիսի մի տպավորություն եյին գործել նրա թույլ մտքի վրա, վոր նա կարծել եր, թե իրեն ահա կտանեն կախելու կամ անիվահարելու։ Նա խոստովանում է հայտնելու այն ամենը, ինչ գիտեր, յեթե միայն իր կյանքը խնայեն։ Գ... Մ...ն այս խոսքերից դալիս է այն յեզրակացության, վոր մեր արարքները շատ ավելի լուրջ են ու հանցավոր, քան ինքը պատկերացրել է իրեն մինչ այդ։ Նա Մարսելին խոստանում է վոչ միայն կյանքը խնայել, այլև վարձատրել իր խոստովանության համար։

Այս թշվառ արարածը նրան պատմում է մեր ծրագրի մի մասը, վորի շուրջը մենք առանց քաշվելու խոսակցել եյինք նրա ներկայությամբ, վորովհետև վորոշ չափով նա ևս պիտի մասնակցեր դրա իրագործմանը։ Ճիշտ է, նրան միանգամայն անհայտ եյին այն փոփոխությունները, վորոնց յենթարկվել եր մեր ծրագիրը Փարիզում։ Սակայն Շայոյից հեռանալու պահին նա տեղյակ եր մեր ձեռնարկի ծրագրին և գիտեր, թե ինքն ինչ դեր պիտի խաղա նրա իրագործման մեջ։ Ուստի նա հայտնում է Գ... Մ...ին, վոր մեր մտադրությունն է յեղել՝ խաբել նրա վորդուն, վոր Մանոնը պետք է ստանար կամ արդեն ստացել է տաս հազար ֆրանկ, վորոնք, ըստ մեր դիտավորության, յերբեք չպիտի ընկնեյին Գ... Մ...ի տոհմի ժառանգների ձեռքը։

Այս խոստովանությունից հետո կատաղած ծերուկն անմիջապես մեր սենյակը բարձրացավ։ Առանց մի խոսք ասելու նա մտավ առանձնասենյակ, ուր և հեշտությամբ գտավ դրամը և գոհարները։ Կարմրատակած

դեմքով նա վերադարձավ մեր սենյակը և ցույց տալով՝ ինչպես ինքը կամեցավ անվանել, մեր կողոպուտը, նա մեր գլխին թափեց իր վիրավորական կշտամբանքները։ Նա Մանոնի աչքերին մատնացրեց մարգարտե մանյակն ու ապարանջանները։—«Դուք ճանաչում եք սրանք»,— ասաց նա հեգնական ժպիտով։ Առաջին անգամը չէ, որ դուք տեսնում եք։ Իսկ և իսկ նրանք են, աղնիվ խոսք։ Դրանք ձեզ դուր են գալիս, գեղեցկուհիս, այժմ յես հեշտությամբ համոզվում եմ դրանում. «Ահեղ յերեխաներ»,— ավելացրեց նա. «Իրավ, յերկուսն ել դեմքով հրաշալի յեն, սակայն ընությամբ՝ փոքր ինչ խարերա»։

Այս վիրավորական խոսքերից իմ սիրտը պատառ-պատառ եր լինում։ Միայն մի ակնթարթ ազատ լինելու համար յես կտայի... Ո՜, արդար յերկինք, ինչեր չեյի տա։ Վերջապես յես բռնություն գործ դրի ինձ վրա և ասացի զսպված զայրույթով, որը ցասման նուրբ արտահայտություն եր.—«Վերջ դնենք, պարոն, այս տմարդի և անբարտավան ծաղրին։ Ինչի մասին ե խոսքը։ Ի՞նչ եք մտադիր անելու մեզ հետ»։—«Իմ ասածն այն ե, պարոն ասպետ»,—պատասխանեց նա,— «Որ ձեզ անմիջապես Շաթելե պետք ե ուղարկեմ։ Վաղն առավոտյան մենք ավելի դյուրին կլուսաբանենք յեղելությունը և յես հույս ունեմ, որ դուք ի վերջո շնորհ կանեք ասելու, թե որտեղ ե իմ որդին»։

Առանց յերկար մտածելու յես հասկացա, վոր Շաթելեյում բանտարկվելը մեզ համար սարսափելի հետևանքներ կունենա։ Սարսուռով յես նախազգացի բոլոր վտանգները։ Իմ բոլոր հպարտությամբ հանդերձ յես ըմբռնեցի, վոր պետք է հոժարակամ կրել բախտի ծանրությունը և շողոքորթել ամենավոխերիմ թշնամուս՝ իմ հեզությամբ նրանից մի բան ստանալու համար։ Քաղաքավարությամբ յես նրան խնդրեցի մի րոպե լսել ինձ։

«Ցեսս դիտակցում եմ իմ հանցանքը, պարոն», — ասացի նրան. — «Խոստովանում եմ, վոր յերիտասարդությունն ինձ ստիպեց մեծ սխալներ գործել, վորոնք ձեզ ել այն աստիճան վիրավորել են, վոր տեղի յեն տվել ձեր արդար դանդատներին։ Սակայն, յեթե ձեզ անհայտ չե սիրո ուժը, յեթե դուք ի վիճակի յեք դատելու այն մասին, թե ինչ ե կրում մի խեղճ, թշվառ պատանի, վորից խլում են նրա սիրո առարկան, դուք թերևս ինձ թողության արժանի կհամարեք՝ մի չնչին վրեժխնդրության բավարարությունը փնտռած լինելուս համար, կամ թերևս առնվազը բավականաչափ պատժված կհամարեք ինձ՝ հենց այստեղ հասցրած նախատինքով։ Հարկ չկա դիմելու վոչ տանջանքների և վոչ ել բանտարկության՝ ինձ ստիպել ասելու, թե վորտեղ ե գտնվում ձեր վորդին։ Նրան վոչ մի վտանգ չի սպառնում։ Իմ մտադրությունը չի յեղել նրան ինչասել, վոչ ել ձեզ վիրավորել։ Ցեսս պատրաստ եմ ձեզ հայտնելու այն վայրը, ուր նա անվտանգ կանցկացնի ե գիշերը, յեթե դուք բարի լինեք ինձ ազատություն շնորհելու»։

Մեր վագրը, վոր բնավ չզգացվեց իմ աղերսանքից, ծիծաղելով թիկունքն ինձ դարձրեց։ Նա շրթներից միայն մի քանի խոսք թոցրեց՝ ինձ հասկացնել տալու, թե մեր դիտավորությունը նա գիտե իր սկզբնավորությունից։ Ինչ վերաբերում ե իր վորդուն, կոպտությամբ ավելացրեց անողորմ ծիրուկը, նա շուտով կգտնվի, քանի վոր յես չեմ սպանել նրան։ — «Դրանց տարեք փոքր Շաթելեյ»,—ասաց նա պահակներին, «և զգուշացեք, վոր

ասպետը ձեր ձեռքից չի խլի։ Նա խորամանկ է և մի անգամ արդեն փախել է Սեն-Լազարից»։

Նա դուրս եկավ սենյակից և ինձ թողեց՝ կարող եք երևակայել՝ ինչ վիճակում։ — «Ո՜ երկինք»,—բացականչեցի ես, — «հլու-հնազանդ կընդունեմ բոլոր քո հրամանները. սակայն այն, որ մի թշվառական ու ապիկար ծերուկ այսպես բռնությամբ ե վարվում ինձ հետ, ծայրահեղ հուսահատության ե մատնում ինձ»։ Պահակները խնդրեցին մեզ փութալ։ Դրսում կառեթն արդեն սպասում եր։ Սանդուխքներից իջնելիս ես բռնեցի Մանոնի ձեռքը։ — «Գնանք, իմ սիրելի թագուհի»,— ասացի ես նրան,—«գնանք հնազանդվելու մեր դժբախտին։ Թերևս երկինքը բարեհաճի մեզ ավելի երջանիկ օրեր շնորհել»։

Մենք միասին մեկնեցինք միևնույն կառեթով։ Մանոնն ընկավ իմ գիրկը։ Նա մի խոսք անգամ չեր արտասանել Գ... Մ...ի դալուց ի վեր։ Սակայն, երբ ինձ հետ մենակ մնաց, հազար քնքուշ խոսքեր ասաց, անդադար հանդիմանելով իրեն, թե ինքն ե եղել իմ դժբախտության պատճառը։ Ցես հավատացրի նրան, որ երբեք պիտի չգանգատվեմ իմ բախտից, քանի դեռ նա չի դադարել ինձ սիրելուց։

«Դուք չպետք ե անհանգստանաք ինձ համար ու խղճաք ինձ»,—ավելացրի ես։—«Մի քանի ամսվա բանտարկությունն ամենևին չի սարսափեցնում ինձ և

յես բոլոր դեպքերում Շաթելեն կգերադասեմ Սեն-Լազարից։ Սակայն քո վիճակը, անգին հոգյակս, անհանգստացնում է ինձ ու խոցում սիրտս։ Վերպիսի վիճակ այսքան չքնաղ մի արարածի համար։ Ո՜հ, յերկինք, ինչպես ես դու կարողանում այդպես դաժան վարվել քո ամենակատարյալ ստեղծագործության հետ։ Ինչու՞ ի բնե մեզ չեն տրված մեր թշվառ վիճակին համապատասխանող հատկություններ։ Մեզ շնորհել են խելք, ճաշակ, նրբազգացություն. ավա՜ղ, վորքան տխուր պարագաներում ենք կիրառում դրանք, մինչդեռ մեր այս վիճակին արժանի՝ բազմաթիվ ստոր հոգիներ վայելում են բախտի բոլոր շնորհները»։

Սույն խորհրդածությունները խորին վշտով համակեցին ինձ։ Սակայն այս բոլորը վոչինչ եր՝ համեմատած սպագայի մասին ունեցած իմ խոհերի հետ, վորովհետև յես տոչորվում եյի Մանոնի վիճակի նկատմամբ։ Նա մի անգամ արդեն յեղել եր արգելատանը և թեպետ նրան հաջողվել եր այնտեղից ազատվել՝ սակայն յես գիտեյի, վոր այս կարգի մի կրկնություն չափազանց մեծ վտանգների հետ է կապված։ Ուզում եյի նրան հաղորդել իմ մտավախությունը, բայց յերկյուղում եյի չափից դուրս վհատեցնել նրան։ Ցեսդ դողում եյի նրա համար, չհամարձակվելով զգուշացնել նրան սպառնացող վտանգի մասին։ Հառաչելով գրկում եյի նրան՝ գոնե հավաստիացնելու համար իմ սերը, միակ զգացումը, վոր յես համարձակվում եյի արտահայտել։ «Մանոնն», — ասում եյի յես նրան. «անկեղծ ասացեք, մի՞շտ պիտի սիրեք ինձ»։ Նա պատասխանեց, վոր ինքը չափազանց անբախտ է համարում իրեն, վոր յես կասկածում եմ այդ մասին։ — «Լավ», — ավելացրի յես, — «այլևս չեմ կասկածում և վստահությամբ արհամարհում եմ բոլոր վտանգներն ու չեմ վախենում մեր թշնամիներից։ Ցեսդ կդիմեմ իմ ընտանիքի աջակցությանը, վորպեսզի դուրս գամ Շաթելեյից և իմ բոլոր արյունը վոչ մի արժեք չպիտի ունենա, յեթե անմիջապես չփրկեմ ձեզ, յերբ ինքս ազատվեմ բանտարկությունից»։

Մենք հասանք բանտ։ Մեզ տեղավորեցին առանձին խցերում։ Այս հարվածն ինձ բոլորովին չշշմեցրեց, վորովհետև յես նախատեսել եյի այն։ Բարապանին հանձնարարեցի հոդ տանել Մանոնին, հասկացնելով նրան, վոր յես բարձր դիրքի տեր մարդ եմ, և խոստանալով մեծ վարձատրություն։ Ցես գրկեցի իմ անդին սիրուհուն, նախքան նրանից անջատվելը, թախանձեցի չափից դուրս չվշտանալ և վոչ մի բանից չվախենալ, քանի դեռ յես կենդանի յեմ։ Մոտս բավականաչափ դրամ ունեյի. մի մասը Մանոնին տվի, իսկ մնացածից մի մեծ դումար՝ ավելի քան մեր ամսական ծախսը՝ նախապես վճարեցի բարապանին — ինձ և Մանոնին սպասարկելու համար։ Իմ դրամը մեծ ազդեցություն գործեց. ինձ մի մաքուր սենյակ հատկացրին և հավատացրին, վոր Մանոնին ել նույնպիսի սենյակում են տեղավորել։

Ցես անմիջապես սկսեցի խորհել, թե ինչ միջոցներով արագացնեմ իմ ազատությունը։ Պարզ է, վոր իմ գործում իրոք վոչ մի հանցավոր արարք չկա, և անդամ յեթե յենթադրենք, վոր մեր գողության դիտավորությունն ապացուցվել է Մարսելի վկայությամբ, այնուամենայնիվ լավ գիտեյի, վոր գողության սուսկ դիտավորությունը չի պատժվում։ Ցես վորոշեցի մի շտապ նամակ գրել հորս, խնդրելով նրան անձամբ գալ Փարիզ։ Ինչպես ասացի, ինձ համար ավելի քիչ ամոթալի յեր լինել Շաթելեյում, քան Սեն-Լազարում։ Բացի

այդ, թեև իմ մեջ վառ էր մնացել հարգանքը դեպի հայրական հեղինակությունը, այնուհանդերձ տարինների փորձառությունը զգալի չափով պակասեցրել էին իմ յերկչոտությունը։ Անմիջապես նամակը գրեցի։ Շաթելեյում դժվարություն չհարուցեցին՝ այն ուղարկելու թույատվության խնդրում։ Սակայն յես նեղություն չեյի կրի այդ անելու, յեթե իմանայի, որ հաջորդորն իսկ հայրս ժամանելու յե Փարիզ։

Նա ստացել էր մի շաբաթ առաջ գրած իմ նամակը և չափազանց ուրախացել։ Սակայն, չնայած պարտաճանաչ դառնալու իմ հուսատու խոսքերին, նա յերևի մտածել էր, թե սոսկ խոստումներին չի կարելի հավատ ընծայել։ Նա վորոշել էր անձամբ գալ Փարիզ, համոզվելու իմ վարք ու բարքի փոփոխության և զղջման անկեղծության մեջ և ըստ այնմ վարվել ինձ հետ։ Իմ բանտարկության հետևյալ որը նա քաղաք էր ժամանել։

Ամենից առաջ նա այցելել էր Տիբերժին, վորին խնդրել եյի ուղղել իր պատասխանը։ Տիբերժից նա վոչինչ չէր կարողացել իմանալ — վոչ իմ բնակատեղի հասցեն, վոչ էլ ներկա վիճակիս մասին։ Նրանից իմացել էր միայն իմ գլխավոր արկածները Սեն-Սյուլպիսից փախչելուց հետո։ Տիբերժը մեծ զոհունակությամբ էր խոսել մեր վերջին տեսակցության միջոցին իմ ցուցաբերած բարի ու ջերմեռանդ դիտավորությունների մասին։ Նա ավելացրել էր, վոր իր կարծիքով յես խզել եմ բոլոր իմ կապերը Մանոնի հետ, սակայն նրան զարմացնում է այն, թե ինչու ահա ութ որ է, ինչ յես նրան վոչ մի լուր չեմ հաղորդում իմ մասին։ Հայրս միամիտ մարդ չէր։ Նա իսկույն հասկանում է, վոր իմ լռությունը, վորից գանգատվում էր Տիբերժը, ինչ վոր բան է թաքցնում, վորը վրիպել էր բարեկամիս կորովամտությունից և նա այնքան ճիգ է թափում իմ հետքը գտնելու համար, վոր իր ժամանումից յերկու որ հետո իմանում է իմ Շաթելեյում լինելը։

Նրա այցելությունից առաջ, վորին յես բնավ չեյի սպասում, ինձ մոտ յեկավ վոստիկանության պետը կամ,

եթե իրերն իրենց իսկական անունով կոչենք, սա յենթարկվեցի հարցաքննության։ Նա փոքր ինչ հանդիմանեց ինձ, սակայն վոչ խիստ և վոչ էլ վիրավորական ձևով։ Մեղմաբար ասաց, վոր ցավում է իմ վատ վարքի համար և վոր սա անզգույշ եմ վարվել՝ պարոն դը Գ... Մ... ի պես մարդուն դարձնելով իմ թշնամին. ճիշտ է, ավելացրեց նա, իմ գործում ավելի շատ անխոհեմություն և թեթևամտություն կա, քան չար դիտավորություն։ Սակայն, ահավասիկ յերկրորդ անգամն է, վոր սա յենթարկվում եմ նրա դատաստանին, մինչդեռ ինքը հուսացել է, վոր Սեն-Լազարում անցկացրած յերկու-յերեք ամիսն ինձ խելքի կբերեն։

Անսահման ուրախացած, վոր գործ ունեմ մի վողջախոհ դատավորի հետ, սա նրան բացատրություններ տվի այնքան հարգալիր ու համեստ կերպով, վոր կարծես նա շատ դոհ մնաց իմ պատասխաններից։ Նա ինձ հորդորեց այնքան էլ չվշտանալ և ասաց, վոր ինքը պատրաստ է ինձ վորոշ ծառայություն մատուցելու՝ իսկ իմ տոհմի ու յերիտասարդության։ Ցես համարձակությունն ունեցա նրա ուշադրությունը հրավիրել Մանոնի վիճակի վրա, գովասանքով խոսելով նրա հեզության ու քաղցրաբարո բնավորության մասին։ Նա ծիծաղելով ինձ պատասխանեց, վոր ինքը դեռևս չի տեսել այդ աղջկան, սակայն լսել է, վոր նրան շատ վտանգավոր մի անձնավորություն են համարում։ Այս խոսքերն այնպիսի մի

քնքշանք առաջացրին իմ մեջ, որ ես հազար ու մի ջերմ խոսքեր ասացի խեղճ սիրուհուս պաշտպանության համար, և մինչև իսկ չկարողացա ինձ զսպել լաց լինելուց։ Նա հրամայեց նորից բանտ տանել ինձ։ «Սեր, սեր», — բացականչեց այս պատկառելի դատավորն իմ յետևից, — «մի՞թե դու յերբեք հաշտ չպիտի ապրես իմաստության հետ»։

Ցեսն անձնատուր յեղա իմ տխուր ստքերին և խորհում եյի վոստիկանապետի հետ ունեցած խոսակցությանս մասին, յերբ լսեցի սենյակիս դռան բաղխումը. դա՝ հայրս եր։ Թեպետ յես պետք է պատրաստ լինեյի նրա այցելությանը, քանի որ նրան սպասում եյի մի քանի որով ուշ, այնուամենայնիվ այն աստիճան հուզվեցի, որ դետնի խորքը ինձ նետած կլինեյի, յեթե դա բացվեր իմ վոտքերի առաջ։ Մեծ շփոթությամբ յես գրկեցի նրան։ Նա անխոս նստեց. լուռ եյի և յես։

Ցեսս կանգնել եյի նրա առջև՝ աչքերս դետին հառած, գլուխս բաց։ — «Նստեցեք, պարոն», — ասաց նա ինձ լրջորեն, — «նստեցեք։ Շնորհիվ ձեր անառակ կյանքի և խարդախությունների բարձրացրած աղմուկի՝ յես իմացա ձեր ոթևանի տեղը։ Ձեր արարքներն այն առավելությունն ունեն, որ անհայտ մնալ չեն կարող. դուք ուղիղ ճանապարհով եք գնում դեպի համբավ։ Պետք է հուսալ, որ ձեր վարմունքը շուտով ձեզ Գրեվի հրապարակը կտանի և դուք, հիրավի, կհասնեք ձեր փառքին՝ ի սքանչացումն բոլոր ժողովրդի այնտեղ ցուցադրվելով»։

Ցեսս վոչինչ չպատասխանեցի։ Նա շարունակեց. «Ո՞հ, վորքան դժբախտ է այն հայրը, որը գորովանքով սիրել է իր վորդուն և վոչ մի բան չի խնայել նրան բարեկիրթ մարդ դարձնելու, և, որը ի վերջո հանձինս այդ վորդու գտնում է իրեն անպատվող մի խաբեբայի։ Կարելի յե մխիթարվել չար բախտի պատճառած դժբախտությունից։ Ժամանակը մոռացնում է այն և վիշտը մեղմացնում. սակայն, ՞ւր գտնել բուժիչ միջոցներ այն չարիքի դեմ, որն որեցոր մեծանում է, մի չա-

ՐԻՔ՝ վորպիսին առաջանում է պատվո դղացումը լիովին կորցրած արատավոր վարդու անկարգություններից։ Դու լռում ես, թշվառականդ,— ավելացրեց նա։ «Դիտեցեք այս կեղծ համեստությունը, այս խորամանկ հեղությունը. ասես ձեր առաջ կանգնել է իր տոհմի ամենապատվավոր ներկայացուցիչը»։

Թեպետ յես ստիպված յեղա ընդունել, վոր մասամբ արժանի յեմ այս վիրավորանքներին, այնուամենայնիվ ինձ թվաց, վոր դրանք չափից ավելի խիստ են։ Յես կարծեցի, վոր ինձ թույլատրելի յե անկեղծորեն և պարզ բացատրել իմ միտքը։

«Հավատացնում եմ ձեզ, պարոն»,— ասացի յես,— «վոր իմ համեստությունը բնավ կեղծ չե. դա բնական է և հատուկ մի աղնվատոհմիկ մարդու, վորն անսահման հարգում է իր հորը և առավել ևս՝ իր զայրացած հորը։ Յես հավակնություն չունեմ ինձ համարելու մեր տոհմի ամենապատվավոր ներկայացուցիչը։ Խոստովանում եմ, վոր արժանի յեմ ձեր կշտամբանքներին. սակայն, թախանձում եմ ձեզ, փոքր ինչ ավելի բարի յեղեք դեպի ինձ և մի վարվեք վորպես բոլոր մարդկանցից ամենանվաստի հետ։ Յես արժանի չեմ այդքան դաժան խոսքերի։ Բոլոր իմ սխալների պատճառը սերն է, դուք այդ դիտեք։ Ճակատագրական սեր։ Ավաղ, միթե ձեզ հայտնի չե դրա ուժը։ Միթե ձեր արյունը, վորն իմ արյան աղբյուրն է, յերբեք կրքի բռնկումներ չի

ունեցել։ Սերն ինձ դարձրեց չափազանց քնքույշ, չափազանց գորովալիր, առավել հավատարիմ և թերևս անչափ հաճոյակատար՝ իմ չքնաղ սիրուհու ցանկությունների հանդեպ. ահա իմ հանցանքները։ Դրանցից վերն և ձեզ անպատվում։ Սիրելի հայրս, — ավելացրի յես քնքշագին. «մի փոքր խղճացեք ձեր վորդուն, վորը միշտ հարգանք ու սեր և տածել դեպի ձեզ, վորը յերբեք չի հրաժարվել, ինչպես դուք եք կարծում, պատվից և պարտաճանաչությունից, և վորը հազար անգամ արժանի յե կարեկցանքի, քան դուք կարող եք յերևակայել»։ Այս խոսքերը յես վերջացրի արտասվաթոր։

Հայրական սիրտը բնության ստեղծագործության գլուխ գործոցն է. նա այնտեղ իշխում է, այսպես ասած, վորպես արդար դատավոր, և կառավարում է նրա բոլոր հույզերը։ Իսկ իմ հայրը, բացի այդ, լինելով խելացի ու նրբաճաշակ մի մարդ, այնքան զգացվեց արդարացումներիս մասին լսած խոսքերից, վոր չկարողացավ թագցնել իր տրամադրության փոփոխությունը։

«Ցեկ, իմ խեղճ ասպետ», — ասաց նա ինձ. — «յեկ, գրկիր ինձ. յես քեզ խղճում եմ»։ Ցես գրկեցի նրան։ Զգալով, թե ինչ ջերմությամբ է հայրս ինձ սեղմում իր կրծքին, յես կարողացա դատել, թե ինչ է կատարվում նրա սրտում։

«Սակայն, ինչ միջոցների պետք է դիմել», — շարունակեց նա, — «վորպեսզի քեզ այստեղից ազատենք։ Պատմիր ինձ քո բոլոր գործերի մասին, առանց մի բան թագցնելու»։ Իմ արարմունքի մեջ, յեթե այն համեմատենք վորոշ կարգի աշխարհիկ յերիտասարդների արարքների հետ, վերջին հաշվով վոչ մի այնպիսի բան չկար, վորն ինձ միանգամայն անպատվեր։ Ցեվ քանի վոր մեր դարում սիրուհի ունենալն ամոթալի բան չի համարվում, ինչպես նաև թղթախաղում ճարպկորեն բախտն իր կողմը թեքելը — ապա յես ամենայն անկեղծությամբ հորս պատմեցի իմ կյանքի բոլոր մանրամասնությունները։ Ցուրաքանչյուր մեղքիս խոստովանության հետ յես որինակ եյի բերում վորևե ակա-

նավոր մարդու արարքը՝ իմ ամոթալի հանցանքը մեղմացնելու նպատակով։

«Ցես ապրում եմ մի սիրուհու հետ», — ասացի հորը,— «առանց ամուսնական ծիսակատարության։ Պարոն դուքս ...ը վողջ Փարիզի աչքի առաջ յերկու սիրուհի յե պահում, իսկ պարոն ...ն ահա տաս տարի յե, ինչ ապրում է մի սիրուհու հետ, վորին այնպիսի մի հավատարմությամբ է նվիրված, վորը յերբեք չի ունեցել իր կնոջ նկատմամբ։ Ֆրանսիայի ազնվատոհմիկ մարդկանց յերկու-յերրորդ մասը պատիվ են համարում սիրուհի ունենալը։ Ցես թղթախաղում խարդախություն գործադրեցի. պարոն մարկիզ ...ի և կոմս ...ի յեկամուտները նույն աղբյուրներն ունեն. պ. իշխան ...ը և պ. դուքս ...ը ասպետախմբի նույնպիսի մի ընկերության պարագլուխներն են»։ Ինչ վերաբերում է յերկու Գ... Մ...ների քսակի նկատմամբ նյութած իմ ծրագրներին, ապա ինձ դժվար չեր ապացուցել, վոր այս դեպքում ես ունեցել եյի որինակներ։ Սակայն յես բոլորովին պատվազուրկ չեյի, վորպեսզի ի վիճակի չլինեյի ինձ հետ դատապարտելու բոլոր նրանց, ովքեր որինակ եյին հանդիսացել ինձ։ Այդ պատճառով յես խնդրեցի հորս ներել սույն իմ թուլությունը, վորը հետևանք եր ինձ համակած յերկու բուռն կրքերի՝ վրեժխնդրության և սիրու։

Նա հարցրեց, թե արդյոք չեմ կարող միջոցներ նշել, վորոնց շնորհիվ կարելի լինի ամենակարճ ժամանակում

աղատվել, միաժամանակ և խուսափելով անցանկալի աղմուկից։ Ցեռ նրան հաղորդեցի վոստիկանապետի դեպի ինձ տածած բարեհաճ զգացումների մասին։ — «Եթե դուք դիմումներ անելիս վորևե դժվարության հանդիպեք»,—ասացի յես նրան.—«ապա դա միայն Գ... Մ...ները կարող են ձեզ պատճառել. ուստի և ինձ թվում է, վոր անհրաժեշտ է նեղություն կրել նրանց տեսնելու»։— Նա խոստացավ այդպես վարվել։

Ցեռ չհամարձակվեցի խնդրել նրան միջնորդել նաև Մանոնի համար։ Այդ յես չարի վոչ թե համարձակության պակասությունից, այլ վախի աղդեցության տակ, յենթադրելով, թե այդպիսի մի առաջարկությամբ կարող եմ նրան վրդովել և վորևե կործանարար միտք ներշնչել իմ և Մանոնի նկատմամբ։ Մինչև այսոր էլ յես չգիտեմ, թե արդյոք այս յերկյուղը չէր իմ ամենամեծ դժբախտությունների պատճառը, մի յերկյուղ, վորն արդելք հանդիսացավ ինձ փորձել հորս տրամադրելու՝ հոգուտ իմ թշվառ սիրուհու և ջանալ բարենպաստ մի վերաբերմունք ներշնչել դեպի նա։ Թերևս մի անգամ էլ ինձ հաջողվեր շարժել նրա գութը։ Այսպիսով, յես նրան կնախազգուշացնեցի հավատ ընծայել Գ... Մ...ի ասածներին, վորոնց տպավորության տակ նա ընկավ ամենայն դյուրությամբ։ Ո՛վ գիտե, թերևս իմ չար բախտը խափաներ բոլոր ջանքերս և դրանք ապարդյուն դարձներ. սակայն յես, իմ դժբախտության մեջ, համենայն դեպս կմեղադրեցի միայն չար բախտս ու թշնամիներիս անդթությունը։

Ինձնից հեռանալով, հայրս գնաց այցելելու պարոն դը Գ... Մ...ին։ Հոր մոտ է լինում նաև յերիտասարդ Գ... Մ...ն, վորին գվարդիականն աղնվաբար արձակել էր։ Ցեռ յերբեք չիմացա նրանց զրույցի մանրամասնությունները. սակայն դժբախտաբար հեշտությամբ կարողացա դատել այդ խոսակցության մասին՝ շնորհիվ դրա մահացու հետևանքների։ Նրանք՝ յերկու հայրերը՝ միասին գնում են վոստիկանապետի մոտ, վորից յերկու բան են խնդրում. նախ՝ անմիջապես ինձ աղատ արձա-

կել Շաթելեյից. յերկրորդ՝ Մանոնին ցմահ բանտարկության յենթարկել կամ արտաքսել Ամերիկա։ Հենց այդ ժամանակները սկսել եյին մեծ թվով անհայտ ու կասկածելի մարդկանց Միսսիսիպի աքսորել։ Վոստիկանապետը նրանց խոստանում է առաջին իսկ մեկնող նավով Մանոնին ուղարկել Ամերիկա։

Պարոն դը Գ... Մ...ն և հայրս իսկույն յեկան ինձ մոտ՝ հաղորդելու իմ ազատության լուրը։ Պարոն դը Գ... Մ...ն քաղաքավարությամբ խնդրեց անցյալի վիրավորանքները մոռանալ, ինձ շնորհավորեց այդպիսի մի հայր ունենալուս համար և հորդորեց ազատվել նրա խրատներից և որինակից։ Հայրս ինձ հրամայեց ներողություն խնդրել Գ... Մ... ից՝ այն կարծեցյալ վիրավորանքի համար, վոր յես իբր թե պատճառել եմ նրա ընտանիքին, և շնորհակալություն հայտնել ազատությունս ձեռք բերելու գործում նրա ցույց տված աջակցության համար։

Մենք բոլորս միասին դուրս յեկանք, առանց մի խոսքով հիշելու Մանոնին։ Նրանց ներկայությամբ յես նույնիսկ չհամարձակվեցի նրա մասին խոսել բարեպաշտների հետ։ Ավաղ, միևնույն է, իմ սրտահույզ խոսքերն անոգուտ պիտի մնային։ Աքսորի դաժան ու անագորույն հրամանը ստացվել եր իմ ազատության հրամանի հետ միասին։ Մի ժամ հետո այս անբախտ աղջկան տարան արգելատուն, վորտեղ նա միացավ

նույն վիճակին դատապարտված մի քանի թշվառ կանանց խմբին։

Հայրս ինձ ստիպեց հեռանալու իրեն՝ դեպի իր իջևանատեղը, և միայն յերեկոյան ժամի վեցին ինձ հաջողվեց հարմար րոպե գտնել ու հեռանալ նրա մոտից՝ Շաթելե վերադառնալու համար։ Ցեռ մտադիր եյի միայն մի քիչ ուտելիք տանել Մանոնին և հանձնարարել նրան բարապանի խնամքին, վորովհետև վոչ մի հույս չունեյի, թե կարող եմ նրան անձամբ տեսնելու թույլտվություն ստանալ։ Նույնպես և դեռ ժամանակ չեյի ունեցել խորհել նրան ազատելու միջոցների մասին։

Ցեռ խնդրեցի կանչել բարապանին։ Իմ առատաձեռնությունից ու բարի վերաբերմունքից նա շատ գոհ եր մնացել. ուստի միանգամայն պատրաստ լինելով ինձ ծառայություն մատուցել, նա Մանոնի վիճակի մասին խոսեց այլևս վորպես մի կատարված դժբախտության մասին, վորը մեծապես անհանգստացրել է իրեն, քանի վոր դա չի կարող չվշտացնել և ինձ։ Ցեռ գլխի չընկա, թե նա ինչ է ասում ինձ։ Մի քանի րոպե մենք զրուցում եյինք առանց միմյանց հասկանալու։ Ի վերջո, յերբ նա համոզվեց, վոր յես վոչինչ չգիտեմ, և թե անհրաժեշտ է ճիշտ տեղեկություն տալ, նա ինձ հաղորդեց այն, ինչ արդեն յես ձեզ պատմեցի սարսափով, և վորի կրկնումը նույնպես սարսափ է պատճառում ինձ։

Նույնիսկ ամենաուժգին կաթվածը բնավ չի ունեցել այնպիսի մի հանկարծական ու սոսկալի ներգործություն, վորպիսին յես ապրեցի այս լուրը լսելիս։ Սիրտս այնպես ցավագին ճմլվեց, վոր յերբ յես ուշաթափ վայր ընկա, կարծեցի, թե առհավետ զրկվում եմ կյանքից։ Այս միտքը դեռևս հարատևում եր իմ մեջ, յերբ ուշքի յեկա։ Նայեցի շուրջս, սենյակի պատերին, նայեցի և ինձ վրա, վորպեսզի համոզվեմ, թե արդյոք տակավին կենդանի՞ յեմ։ Ճիշտն այն է, վոր հեռանալով սոսկ տառապանքներից ազատվելու բնական մղման, ինձ համար՝ հուսահատության ու սարսափի այս վայր-

կյանքին՝ ավելի քաղցր և ցանկալի բան չկար, քան ինքը մահը։ Մինչև իսկ կրոնը չեր կարող ինձ պատկերել հանդերձյալ աշխարհում ավելի անտանելի տանջանքներ, քան այն ծանր ցնցումները, որոնք խոշտանգում եյին իմ հոգին։ Այնուամենայնիվ շնորհիվ սիրո կատարած հրաշքի, յես շուտով բավականաչափ ուժ ունեցա շնորհակալ լինելու յերկնքին՝ գիտակցությունս ու բանականությունս վերադարձնելու համար։ Մահս կարող եր ոգտակար և ցանկալի լինել միմիայն ինձ համար։ Մինչդեռ իմ կյանքը պետք եր Մանոնին՝ նրան ազատելու, ոգնելու և նրա վրեժն առնելու համար։

Բարապանն ինձ այնպիսի ոգնություն ցույց տվեց, որը կարելի յե սպասել միայն ամենամտերիմ բարեկամից։ Նրա ծառայությունն ընդունեցի ամենաջերմ շնորհակալությամբ։ — «Ավդ», — ասացի նրան, — «ուրեմն իմ տառապանքները դուք այդքան մոտ եք ընդունում ձեր սրտին։ Բոլորն ինձ լքում են. անգամ հայրս մեկն է իմ ամենաանգութ հալածողներից։ Վոչ վոք ինձ չի կարեկցում. դաժանության ու բարբարոսության այս վայրում միայն դուք եք ցավակցում բոլոր մարդկանցից ամենաթշվառին»։ Նա ինձ խորհուրդ տվեց փողոցում չերևալ, քանի դեռ չի մեղմել իմ հուզումը։ — «Հոգ չե՛, հոգ չե՛», — ասացի յես դուրս գալով, — «մենք նորից միմյանց հետ կտեսնվենք և ավելի շուտ, քան դուք

կարծում եք։ Պատրաստեցեք ձեր խուցերից ամենախա-
վարը. ես կաշխատեմ արժանանալ դրանց։

Հիրավի, իմ առաջին միտքը եղավ սպանել երկու Գ... Մ... ներին և վոստիկանապետին, և այնուհետև զին-
ված հարձակում գործել արգելատան վրա՝ բոլոր այն մարդկանց ոգնությամբ, վորոնց կհաջողվի գրավել իմ կողմը։ Տարված իմ արդար վրեժխնդրությամբ, ես հոբս անգամ չպիտի խնայեի, վորովհետև բարապանն ինձ հաղորդել եր, վոր հայրս և Գ... Մ...ն եյին իմ կորըստյան հեղինակները։

Սակայն, յերբ ես մի քանի քայլ արի փողոցում և ոդը փոքր ինչ զովացրեց արյունս և հանգստացրեց ինձ, իմ ցասումը տեղի տվեց ավելի վողջամիտ զգացումների։ Մեր թշնամիների մահը վոչ մի ոգուտ չպիտի բերեր Մանոնին, մինչդեռ, անկասկած, ինձ պիտի զրկեր նրան ոգնելու հնարավորությունից։ Բացի այդ, արդյոք ես ընդունակ եյի ստոր սպանության դիմելու։ Ուրիշ ինչ ուղի կարող եյի ընտրել իմ վրեժխնդրության համար։ Ցեսս բոլոր ուժերս ու արիությունս հավաքեցի, վորպեսզի նախ ջանամ ազատել Մանոնին և միայն այս կարևոր ձեռնարկության հաջողությունից հետո մտածել հետագա քայլերի մասին։

Մոտս քիչ դրամ կար։ Այնինչ, ամեն բանի անհրաժեշտ հիմքը դա յեր, վորից և պետք եր սկսել։ Ցեսս միայն յերեք անձնավորություն գիտեյի, վորոնք կարող եյին ինձ դրամական ոգնություն ցույց տալ. պ. դը Տ...ն, հայրս և Տիբերժը։ Քիչ հավանականություն կար վորևե բան ստանալ վերջին յերկուսից. իսկ ես ամաչում եյի նորից առաջինին դիմել բազմիցս կրկնված մի այսպիսի խնդրանքով։ Սակայն հուսահատությունը հարկադրում և մարդուս խեղդել պատվասիրության ամեն զգացում։ Ցեսս անմիջապես ուղևորվեցի դեպի Սեն-Սյուլպիսի սեմինարիան, առանց վախենալու, վոր այնտեղ ինձ կարող են ճանաչել։ Ցեսս դուրս կանչեցի Տիբերժին։ Նրա առաջին իսկ խոսքերից հասկացա, վոր նա տակավին տեղյակ չե իմ վերջին արկածների մասին։ Այս հանգամանքը

ստիպեց փոխել իմ դիտավորությունը՝ շարժել նրա կարեկցանքը դեպի ինձ։ Ցես նրա հետ խոսեցի ընդհանրապես հորս տեսնելու իմ ուրախության մասին և հետո խնդրեցի փոխարինաբար մի փոքր գումար տալ ինձ պատրվակ բերելով, թե Փարիզից մեկնելուց առաջ ես ուզում եմ հատուցել մի քանի պարտքեր, որոնք ցանկալի չեր, որ անհայտ մնային։ Նա իսկույն ևեթ իմ տրամադրության տակ դրեց իր քսակը։ Ցես այնտեղ յեղած վեց հարյուր ֆրանկից վերցրի հինգ հարյուրը։ Առաջարկեցի ստացական. նա չափազանց վեհանձն դտնվեց այն չընդունելու համար։

Այնտեղից յես գնացի պ. դը Տ...ի մոտ։ Նրանից յես վոչինչ չթաքցրի։ Պատմեցի նրան իմ դժբախտություններին և տանջանքների մասին. սակայն նա արդեն իսկ տեղյակ եր իմ պատմության ամենաչնչին հանգամանքներին, վորովհետև հետևել եր յերիտասարդ Գ... Մ...ի արկածախնդրության բոլոր դեպքերին։ Այնուամենայնիվ նա լսեց իմ պատմածը և շատ կարեկցեց։ Իսկ յերբ նրան խորհուրդ հարցրի Մանոնին ազատելու միջոցների մասին, նա տխրությամբ պատասխանեց, թե վոչ մի յելք չի տեսնում և թե պետք է հրաժարվել այդ մտքից, յեթե միայն յերկինքը չոգնի մի արտասովոր ու անսպասելի յեղանակով։ Նա ավելացրեց, վոր ինքը դիտմամբ արդելատուն է գնացել Մանոնի բանտարկությունից հետո, սակայն մինչև իսկ իրեն թույլ չեն

տվել նրան տեսնելու, վորովհետև վոստիկանապետի հրամանն այդ մասին չափազանց խիստ է. բացի այդ՝ ի լրումն բոլոր դժբախտությունների՝ այն վողորմելի իմբակը, վորին միացրել են Մանոնին, յերրորդ որը պիտի մեկնի։

Ցեսայն աստիճան ընկճված եյի նրա պատասխանից, վոր նա կարող եր ժամերով խոսել, վոր յես ի վիճակի լինեյի ընդհատել նրան։ Նա շարունակեց պատմել, թե ինքը չի յեկել ինձ Շաթելեյում տեսնելու, վորպեսզի հարկ յեղած դեպքում ավելի դյուրությամբ կարողանա ծառայություն մատուցել, յերբ վոչ վոք չի կասկածի մեր բարեկամության մասին։ Նա ասաց, վոր մի քանի ժամ հետո իմանալով իմ ազատության լուրը, նա շատ է ցավել, վոր չգիտե իմ վորտեղ գտնվելը, վորովհետև ցանկացել է շուտափույթ տեսնել՝ ինձ հաղորդելու միակ խորհուրդը, վորից թերևս կարելի լինի վորևե փոփոխություն ակնկալել Մանոնի համար. սակայն այդ խորհուրդը վերին աստիճանի վտանգավոր է, ուստի նա խնդրում է ինձ հավիտյանս գաղտնի պահել, վոր ինքն է դրա հեղինակը։ Նա խորհուրդ է տալիս գտնել մի քանի խիզախ մարդիկ, վորոնք արիություն ունենան հարձակվելու Մանոնի պահակների վրա, յերբ սրանք Փարիզից դուրս կգան արտաքսվող աղջիկների հետ։ Նա ժամանակ չտվեց խոսելու իմ չքավորության մասին։

«Ահա հարյուր պիստոլ»,— ասաց նա, առաջարկելով իր քսակը,—«վորոնք կարող են ձեզ վորոշ ոգնություն ցույց տալ. դուք ինձ կվերադարձնեք այդ գումարը, յերբ բախտը կհարթի ձեր գործերը»։ Նա ավելացրեց, վոր յեթե իր բարեհամբավի մտահոգությունը թույլ տար իրեն անձամբ ձեռնարկել սիրուհուս ազատությունը, ապա նա իմ տրամադրության տակ կդներ իր բազուկն ու սուրը։

Նրա բացառիկ մեծահոգությունն արտասվելու չափ հուզեց ինձ։ Ցեսիմ յերախտագիտությունը հայտնեցի նրան այնպիսի մի ջերմությամբ, վորը թույլ եր տա-

լիս իմ վիշտը։ Ցես նրան հարցրի, թե չկա արդյոք վորևե հույս՝ միջնորդել վոստիկանության պետի առաջ։ Նա պատասխանեց, վոր ինքն արդեն մտածել է այդ մասին, սակայն այս ուղին նրան անհուսալի յե թվում, վորովհետև չի կարելի դիմել առանց լուրջ հիմունքի այդպիսի մի միջնորդության և ինքը չգիտե, թե ինչպես պետք և հիմնավորել նման մի խնդրանք, յեթե հայցելու լինի ակնավոր ու հզոր մի անձի միջնորդությունը։ Ցեթե այս ուղիով կարելի լինի վորևե բան ձեռք բերել, ապա դա պետք է անել միայն այն դեպքում, յեթե հաջողվի ստիպել պ. Գ... Մ...ին և իմ հորը՝ փոխելու իրենց վորոշումն ու համոզել նրանց, վոր իրենք դիմեն վոստիկանապետին, խնդրելով նրան դատավճռի վերացումը։ Նա խոստացավ ամեն մի ջանք գործ դնել՝ հոգուտ մեզ տրամադրելու յերիտասարդ Գ... Մ...ին, թեպետ իրեն թվում է, թե այս վերջինս՝ կասկածելով, վոր ինքը վորոշ մասնակցություն է ունեցել մեր գործում, փոքր ինչ սառել է իր նկատմամբ։ Այնուհետև պ. դը Տ...ն ինձ հորդորեց վոչ մի բանի առաջ կանգ չառնել՝ հորս սիրտը մեղմացնելու համար։

Սակայն այս պատվերն այնքան էլ հեշտ չեր ինձ համար։ Ցես աչքի առաջ ունեյի վոչ միայն հորս համառությունը հաղթահարելու միանգամայն բնական դժվարությունը, այլ նաև մի ուրիշ հանգամանք, վորն ստիպում եր ինձ վախենալ նրան դիմելուց. յես նրա

բնակարանը թողել եյի հակառակ իր հրամանի ու նրանից թաքուն, և հիմա լսելով Մանոնի տխուր վիճակի մասին, հաստատապես վորոշել եյի այլևս չվերադառնալ այնտեղ։

Ցեսս հիմք ունեյի յերկյուղելու, վոր նա կարող է, հակառակ իմ կամքի, ինձ տանը պահել և թերևս բռնի իր հետ գավառ տանել։ Իմ անդրանիկ յեղբայրը մի անգամ անցյալում արդեն այդպես վարվել եր ինձ հետ։ Ճիշտ է, այժմ յես ավելի հասուն եյի. բայց տարիքը թույլ պատճառաբանություն է ույժի դեմ։ Այնուամենայնիվ յես գտա մի այլ ուղի, վորն ինձ ազատում եր վտանգից. յես մտածում եյի ուրիշի անվան տակ հոբս կանչել վորևե հասարակական վայր և այնտեղ հայտնվել նրան։ Ցեսս անմիջապես կանգ առա այս վորոշման վրա։ Պարոն դը Տ...ն գնաց Գ... Մ...ի մոտ, իսկ յես դիմեցի դեպի Լյուքսեմբուրգյան պարտեզ, վորտեղից մարդ ուղարկեցի հոբս հայտնելու, վոր մի աղնվական խոնարհաբար սպասում է նրան պարտեզում։ Ցեսս յերկյուղում եյի, թե նա չի կամենա նեղություն կրել գալու, վորովհետև որն արդեն մթնում եր։ Սակայն մի քիչ անց նա յեկավ մի սպասավորի ուղեկցությամբ։ Ցեսս նրան խնդրեցի առանձնանալ ծառուղիում, ուր կարող եյինք յերես առ յերես խոսել։ Մոտ հարյուր քայլ առաջ գնացինք, առանց մի բառ անգամ արտասանելու։ Նա, ի հարկե, հասկանում եր, վոր այսքան զգուշություն ձեռք է առնվում անկասկած մի վորևե կարևոր մտադրության համար։ Նա սպասում եր իմ խոսքերին, իսկ յես կշռադատում եյի դրանք։

Վերջապես խոսեցի։ «Պարոն»,—ասացի դողդողալով, — «դուք բարի հայր եք, դուք առատորեն շնորհներ եք տվել ինձ և բաղմիցս ներել իմ անթիվ սխալները. ուստի, յերկինքը վկա, յես դեպի ձեզ տածում եմ բոլոր այն զգացումները, վորոնք վայել են ամենաքնքույշ և ամենահարգալիր վորդուն։ Սակայն, ինձ թվում է, թե... ձեր խստասրտությունը...

«Լավ, հետո, իմ խստասրտությունն ինչ»,—ընդհա-

տեց հայրս, անշուշտ գտնելով, որ յես չափազանց դանդաղ եմ խոսում՝ նկատի առնելով իր անհամբերությունը։

«Ա՜խ, պարոն»,— շարունակեցի յես,— «ինձ թվում է, թե ձեր խստասրտությունը, որը պատճառ յեղավ դժբախտ Մանոնի անարդար դատապարտին, չափազանց դաժան է։ Դուք հավատ եք ընծայել պ. Գ... Մ... ի հերյուրանքներին։ Դրդված ատելությունից նա ձեզ ամենամռայլ գույներով է պատկերացրել նրան։ Դուք նրա մասին սոսկալի վատ կարծիք եք կազմել։ Մինչդեռ Մանոնը ամենաքնքույշ և ամենադուրեկան արարածն է, որը յերբևէ ստեղծվել է աշխարհում։

«Ո՜, ինչու յերկինքը չբարեհաճեց գեթ մի ակնթարթ սիրուհուս տեսնելու ցանկություն ներշնչել ձեզ։ Որքան յես համոզված եմ, որ նա մի չքնաղ ու հմայիչ աղջիկ է, նույնքան և հավատացած եմ, որ դուք ևս նրան այդպիսին կգտնեք և անկասկած, հոգուտ նրա կտրամադրվեք. դուք կարհամարհեք Գ... Մ...ի սև խարդավանքները. կարեկցությամբ կհամակվեք դեպի ինձ և նա։ Ավաղ, յես վստահ եմ դրանում։ Ձեր սիրտը անզգա չէ. ի տես նրա դրավչության դուք չեք կարող անտարբեր մնալ»։

Նա կրկին ընդհատեց ինձ, տեսնելով, թե յես ինչպիսի յեռանդով եմ խոսում, որն ինձ թույլ չպիտի տա շուտով վերջացնելու։ Նա կամեցավ իմանալ, թե վերն է իմ վոգեշունչ խոսքերի բուն նպատակը։

«Կյանք եմ հայցում ձեզնից», — պատասխանեցի նրան, — «կյանք, վորից իսկույն կզրկվեմ, յեթե Մանոնը մեկնի Ամերիկա»։

«Վոչ, վոչ», — ասաց նա խստությամբ, — «յես դերբաղասում եմ քեզ տեսնել մեռած, քան՝ պատվազուրկ ու խելակորույս»։

«Այդ դեպքում հեռու չգնանք», — գոչեցի յես բռնելով նրա ձեռքը, — «զրկեցեք ինձ կյանքից, զրկեցեք այս ատելի ու անտանելի կյանքից։ Վորովհետև դուք ինձ այնպիսի մի վհատության մեջ եք նետում, վոր մահը մի շնորհ է ինձ համար, հայրական ձեռքին արժանի մի շնորհ»։

«Ցեսս քեզ շնորհում եմ այն, ինչին արժանի յես», — պատասխանեց նա. — «յես բազմաթիվ հայրեր գիտեմ, վորոնք այսքան յերկար չպիտի սպասեին՝ քո դահիճը լինելու համար։ Սակայն իմ անսահման բարեսրտությունը կործանեց քեզ»։

Ցեսս ծունկ չոքեցի նրա առաջ. — «Ո՜, յեթե ձեր սրտում գեթ մի փոքր բարություն կա դեպի ինձ», — ասացի յես, համբուրելով նրա ծնկները, — «անողոք մի լինեք իմ արցունքների հանդեպ։ Մտածեցեք, վոր յես ձեր վորդին եմ։ Ավաղ, հիշեցեք իմ մորը։ Դուք այնպիսի քնքշանքով եյիք սիրում նրան։ Մի՞թե կարող եյիք հանդուրժել, վոր նրան խլեն ձեր բաղուկներից։ Դուք մինչև ձեր վերջին շունչը կպաշտպանեյիք նրան. և մի՞թե կարծում եք, թե ուրիշը չի կարող ձեր սրտի նման սիրտ ունենալ։ Մի՞թե մարդ կարող է այսքան բարբարոս լինել, յերբ ինքը գեթ մի անգամ զգացել է իսկական քնքշությունն ու վիշտը»։

«Մի խոսիր քո մոր մասին», — ասաց նա ցասկոտ ձայնով. — «նրա հիշատակը բորբոքում է իմ զայրույթը։ Քո անառակությունները վշտից կմահացնեյին նրան, յեթե կենդանի մնար և տեսներ դրանք։ Վերջ դնենք մեր խոսակցությանն», — ավելացրեց նա, — «դա անհաճո յե ինձ համար և չի կարող ստիպել՝ փոխելու իմ վորոշումը։ Ցեսս տուն եմ վերադառնում և քեզ ել հրամայում եմ հետևել ինձ»։

Այն չոր ու հատու շեշտը, վորով նա արձակեց այս հրամանը, ինձ համոզեց, վոր նրա սիրտն անդրդվելի յե։ Ցես մի քայլ հեռացա նրանից, վախենալով, թե թերևս նա կփորձի իր իսկ ձեռքերով բռնել ինձ։

«Մի՛ք խորացնի իմ վհատությունը», — ասացի յես, — «հարկադրելով ինձ չհնազանդվել ձեզ։ Ցես չեմ կարող հետևել ձեզ։ Ինձ համար նաև անհնարին է ապրել՝ դեպի ինձ ցուցաբերած ձեր քարսրտությունից հետո։ Ուստի առհավետ հրաժեշտ եմ տալիս ձեզ։ Իմ մահը, վորի մասին շուտով կլսեք», — ավելացրի յես տրտմությամբ, — «թերևս վերստին հայրական զգացումներ արթնացնի ձեր մեջ։ Ցերբ յես շրջվեցի, վոր հեռանամ նրանից, նա զայրույթով գոչեց. — «Ուրեմն դու չե՞ս կամենում հետևել ինձ. գնա, փութա՛ դեպի քո կործանումը։ Գնա՛ս բարով, ապերախտ և ըմբոստ վորդի»։

«Մնա՛ք բարով», — ասացի յես մոլեգին, — «մնա՛ք բարով, տմարդ ու բարբարոս հայր»։

Ցես անմիջապես դուրս յեկա Լյուքսեմբուրգյան պարտեզից։ Խելագարի պես փողոցներում թափառելով հասա պ. դը Տ...ի տունը։ Քայլելիս յես աչքերս ու ձեռքերս վեր եյի բարձրացնում, դիմելով յերկնային զորության ոգնության։ — «Ո՜ յերկինք», — ասում եյի յես, — «մի՞թե դու ել այնքան անողորմ ես, վորքան մարդիկ։ Քեզանից բացի ուրիշ վոչ վոքից յես ոգնություն չեմ ակնկալում»։

Պարոն դը Տ...ն տակավին չէր վերադարձել տուն։ Սակայն մի քանի րոպե անց նա յեկավ։ Նրա բանակցությունը ևս վոչ մի հաջողություն չէր ունեցել։ Այդ մասին նա վշտահար դեմքով պատմեց ինձ։ Ցերիտասարդ Գ... Մ...ն թեպետ հորից սակավ եր չարացած Մանոնի և իմ դեմ, այնուամենայնիվ չեր կամեցել հանձն առնել հոր առաջ մեր մասին բարի միջամտություն անելու հոգսը։ Նա չեր համաձայնվել մեզ պաշտպանել, վորովհետև ինքն ևս վախենում եր վրեժխնդիր ծերուկից, վորն առանց այդ ել սաստիկ բարկացած եր վորդու վրա, հանդիմանելով նրան Մանոնի հետ սիրային կապեր հաստատելու դիտավորություն ունենալու մեջ։

Ուստի, ինձ մնում եր միայն գնալ բռնի ույժի ճանապարհով, վորի ծրագիրն ուրվագծել եր պ. դը Տ...ն։ Իմ ամբողջ հույսը դա յեր։

«Զափազանց անորոշ ու կասկածելի յե այդ ուղին», — ասացի յես պարոն դը Տ...ին, — «սակայն ամենահաստատ և ամենամիթիթարական հույսն ինձ համար՝ պայքարում կործանվելն ե»։ Ցես հեռացա պարոն դը Տ...ից, խնդրելով, վոր նա իր բարեմաղթություններով նպաստի իմ հաջողությանը. յես սկսեցի մտածել միայն այն մասին, թե վիրտեղից ընկերներ գտնեմ, վորոնց կարողանայի գեթ մի կայծ ներշնչել իմ անվեհերությունից ու վճռականությունից։

Ամենից առաջ իմ մտքով անցավ հենց այն գվարդիականը, վորին հանձնարարել եյի ձերբակալել Գ... Մ...ին։ Ի դեպ, յես մտադիր եյի նրա մոտ անցկացնել և՛ գիշերը, վորովհետև որվա ընթացքում բնավ ազատ ժամանակ չեյի ունեցել բնակարան ճարելու մասին մտածելու։ Ցես նրան գտա տանը՝ միայնակ։ Նա իր ուրախությունը հայտնեց Շաթելեյից ազատվելուս առթիվ և ամենայն սիրալիրությամբ առաջարկեց ինձ իր ծառայությունը։ Ցես նրան բացատրեցի, թե ինչպիսի ծառայություն պետք ե ինձ մատուցի։ Նա բավական բանիմաց մարդ եր, վորպեսզի իսկույն գլխի ընկներ այդ

ձեռնարկության դժվարությունների մասին։ Սակայն նա նույնպես բավական մեծահոգի յեր, վորպեսզի համաձայնվեր ձեռնարկել՝ հաղթահարելու այդ դժվարությունները։

Գիշերվա մի մասն անցկացրինք խորհելով ու կշռադատելով իմ ծրագիրը։ Նա ինձ հետ խոսեց այն յերեք զվարդիական զինվորների մասին, ներկայացնելով նրանց իբրև փորձված կտրիճների, վորոնք ոգնել եյին նրան Գ... Մ...ի ձերբակալության միջոցին։ Պարոն դը Տ...ն ինձ ճշտիվ տեղեկացրել եր Մանոնին ուղեկցող պահակների թվի մասին, վորոնք ընդամենը վեց հոգի եյին։ Հինգ խիզախ ու վճռական, մարդիկ բավական եյին յերկյուղ ազդելու այդ թշվառականներին, վորոնք անընդունակ են ազնվաբար պաշտպանելու իրենց, յերբ կարող են ստոր վախկոտությամբ խուսափել կռվի վտանգներից։

Քանի վոր դրամի պակասություն չունեյի, զվարդիականն ինձ խորհուրդ տվեց վոչինչ չխնայել մեր հարձակման հաջողությունն ապահովելու համար։

«Մեզ հարկավոր են», — ասաց նա, — «ձիեր, ատրճանակներ և ամեն մեկիս մի-մի մուսկետ։ Ցեսս հանձն եմ առնում այս բոլորը պատրաստել վաղվա համար։ Բացի այդ, անհրաժեշտ է յերեք ձեռք քաղաքացիական հագուստ մեր զինվորների համար, վորովհետև նրանք չեն համարձակվի այս կարգի գործում յերևալ զորա-

գնդի համազգեստով»։ — Պարոն դը Տ...ից ստացած հարյուր պիստոլը յես տվի նրան։ Հաջորդ որն այդ բոլոր դրամը մինչև վերջին սուն ծախսվեց։ Ցերեք զինվորներին զորադետի հրավիրեցի ու մեծամեծ խոստումներով վոգևորեցի. և վորպեսզի նրանց անվստահությունը փարատեմ, ամենից առաջ յես նրանց նվիրեցի տաս-տաս պիստոլ։

Ցերը հասավ ծրագիրն իրագործելու որը, վաղ առավոտյան զինվորներից մեկին ուղարկեցի արգելատուն, անձամբ իմանալու թե պահակները յերը պիտի ճանապարհ ընկնեն իրենց զոհերի հետ։ Թեպետ յես մտատանջությունից ու նախատեսությունից դրդված դիմել եյի այս զգուշության, այնուամենայնիվ պարզվեց, վոր դա միանգամայն անհրաժեշտ եր։ Ցես հավատ եյի ընծայել այն մի քանի սխալ տեղեկանքներին, վոր ինձ տվել եյին նրանց յերթուղու վերաբերյալ, և համոզված լինելով, վոր այն վոդորմելի խմբակը Լա-Ռոշելում նավ պիտի նստեցնեն, յես իզուր նրանց պիտի սպասեյի Որլեյանի ճանապարհին։ Այնինչ, գվարդիական զինվորի ձեռք բերած տեղեկությունից յես իմացա, վոր խմբակը Նորմանդիայի ճանապարհը պիտի բռնի և Հավրդը-Գրասում նավ նստի՝ Ամերիկա մեկնելու համար։

Մենք անմիջապես ուղղվեցինք դեպի Սեն-Հոնորեյի դռները. զգուշության համար ցրվեցինք և գնացինք տարբեր փողոցներով, իսկ քաղաքի արվարձանի ծայրում վերստին միացանք։ Կայտառ ու ժիր առաջ եյին ընթանում մեր ձիերը։ Շուտով յերևացին վեց պահակները ու այն յերկու խղճուկ սայլակները, վորոնց դուք պատահեցիք Պասսիյում սրանից յերկու տարի առաջ։ Սույն տեսարանը քիչ մնաց ինձ զրկեր ուժից ու գիտակցությունից։ — «Ո՜, ճակատագիր»,—բացականչեցի յես, — «դաժան ճակատագիր, գեթ այժմ ինձ շնորհիր մահ կամ հաղթանակ»։

Մի բոպե մենք խորհրդակցեցինք հարձակման յեղանակի մասին։ Հազիվ միայն չորս հարյուր քայլի վրա պահակները գնում եյին մեր առաջից և մենք կկարո-

ղանայինք կտրել նրանց ճանապարհը, սրընթաց անցնելով մի փոքրիկ դաշտի լայնքով, որի շուրջը պատված էր մեծ ճամբան։ Գվարդիականը համամիտ էր հենց այս յեղանակին, որպեսզի անսպասելիորեն հարձակվելով պահակների վրա, հանկարծակիի բերենք նրանց։

Ցես իմ համաձայնությունը տվի նրա ծրագրին և առաջինը ինքս խթանեցի ձիս։ Սակայն ճակատագիրն անողորմաբար մերժեց իմ աղերսանքները։

Ցերը պահակները տեսան հինգ ձիավորների դեպի իրենց սուրալը, բնավ չկասկածեցին, որ դա հարձակման նպատակով է։ Նրանք վճռական կերպով պատրաստվեցին պաշտպանության՝ սվիններն ու հրացանները ձեռներին։

Կռվի այս պատրաստակամությունը, որ միանգամայն վոգևորեց ինձ ու գվարդիականին, հանկարծ արիությունից զրկեց մեր յերեք վախկոտ ընկերներին։ Նրանք յերեքն էլ միաժամանակ կանգ առան, ասես նախապես արված համաձայնությամբ, և միմյանց հետ փոխանակելով մի քանի խոսք, որ յես չկարողացա լսել, ձիերի գլխները շրջեցին և սրարշավ ընթացան Փարիզի ուղղությամբ։

«Ասված իմ», — բացականչեց գվարդիականը, որը կարծես ինձնից պակաս շփոթված չեր այս խայտառակ փախուստից, — «ինչ ենք անելու այժմ, միայն յերկուսս մնացինք»։

Զայրույթից ու զարմանքից յես կորցրի ձայնս։ Կանգ առա՝ չիմանալով անելիքս և մտածելով թե արդյոք չպետք է իմ վրեժխնդրությունն առաջին հերթին ուղղել այն վախկոտների դեմ, որոնք լքում էին ինձ։ Ցեսդիտում էի նրանց փախուստը և մյուս կողմից հայացքս ուղղում դեպի պահակները։ Եթե կարողանայի յերկու կտոր լինել, ապա միաժամանակ կհարձակվեյի իմ ցասման այս յերկու առարկաների վրա, որոնց խժռում էի աչքերովս։

Գվարդիականը, որը անվճռականության մասին դատում եր իմ շվարած ու թափառուն հայացքից, խնդրեց ինձ ունկնդրել իր խորհրդին։ — «Անմտություն է»,— ասաց նա,— «յերկուսով հարձակվել վեց մարդու վրա, որոնք մեզնից վատ չեն զինված և ըստ յերևույթին պատրաստ են անվեհերությամբ դիմադրելու։ Պետք է Փարիզ վերադառնալ և չանալ ավելի արիասիրտ ընկերներ ընտրել։ Պահակներն իրենց յերկու ծանր սայլակներով չեն կարող մեծ տարածություն կտրել, և մենք վաղը առանց դժվարության կհասնենք նրանց»։

Մի ըսպե յես միտք արի այս առաջարկության վրա, սակայն ամեն կողմից միայն հուսահատության պատճառներ տեսնելով, իրոք հուսահատական մի վորոշում կայացրի, այն է՝ շնորհակալություն հայտնել իմ հավատարիմ ընկերոջը իր ծառայության համար, և թողնելով պահակների վրա հարձակվելու միտքը, վորոշեցի գնալ նրանցից խոնարհաբար խնդրել՝ ինձ իրենց խմբակում ընդունել և թույլ տալ Մանոնին մինչև Հավրը-Գրաս ուղեկցելու ու այնտեղից նրա հետ գնալու անդրովկիանոսյան յերկիրը։

«Բոլորն ինձ հալածում են կամ դավաճանում»,— ասացի գվարդիականին. «այլևս վոչ մի հիմք չունեմ հավատ ընծայելու վորևե մեկին. յես վոչինչ չեմ սպասում վոչ ճակատագրից, վոչ էլ մարդկանց ոգնությունից. իմ տանջանքների բաժակը լցվել է. ինձ մնում է միայն համակերպվել իմ վիճակին. ուստի և այլևս վոչ



մի հույս չունեմ։ Թող յերկինքը վարձատրի ձեր մեծահոգությունը։ Մնաք բարով։ Ցեսդնում եմ ոգնելու իմ չար բախտին՝ ավարտել իմ կործանումը, հոժարակամ ընդառաջելով նրան»։

Նա ապարդյուն ջանաց համոզել ինձ Փարիզ վերադառնալու։ Ցեսն նրան խնդրեցի թույլ տալ ինձ հետևվել իմ վորոշումներին և շուտով հեռանալ ինձնից, վորովհետև վախենում եյի, թե պահակները կարող են կարծել, վոր մենք տակավին մտադիր ենք հարձակվել իրենց վրա։

Ցեսուղղվեցի դեպի նրանք՝ մեն-մենակ, դանդաղ ձիս քշելով և այնպիսի մի ընկճված դեմքով, վոր իմ մոտեցումը վոչ մի ահ կամ կասկած չեր կարող ներշնչել նրանց։ Այնուամենայնիվ նրանք իրենց պաշտպանողական դիրքը պահեցին։

«Հանգստացեք, պարոններ», — ասացի մոտենալով նրանց, — «յես մտադիր չեմ ձեզ վրա հարձակվելու. գալիս եմ ձեզնից մի շնորհ հայցելու։ Ցեսխնդրեցի նրանց առանց կասկածանքի շարունակել իրենց ճամբան և ճանապարհին հայտնեցի, թե ինչպիսի շնորհ եմ սպասում նրանցից։

Նրանք խորհրդակցեցին միմյանց հետ, վորոշելու թե, ինչպես պիտի ընդունեն իմ առաջարկությունը։ Ամբի ավագը բոլորի անունից խոսեց ինձ հետ։ Նա ասաց, վոր թեպետ իրենց շատ խստիվ հրամայված է

աչալուրջ հսկել կալանավորներին, այսուհանդերձ նա ինձ համարում է գեղեցկադեմ ու դուրեկան մի յերիտասարդ և դրա համար ել ինքը և իր ընկերները պատրաստ են փոքր ինչ շեղվել իրենց պարտականությունից. սակայն յես պիտի հասկանամ, որ սա ինձ բոլորովին ձրի չի տրվում։ Իմ քսակում մնացել եր մոտավորապես տասնհինգ պիստոլ. յես անկեղծորեն ասացի նրանց, թե վորքան է իմ ամբողջ կարողությունը։

«Լավ», — պատասխանեց պահակը, — «մենք բարեխղճորեն կոգտագործենք ձեր կարողությունը։ Մի ժամվա դրությունն այս աղջիկներից յուրաքանչյուրի հետ՝ ըստ ձեր ընտրության՝ ձեզ կարժենա մի եկյու. սա Փարիզի սովորական գինն ե»։

Յես նրանց հետ առանձնապես չեյի խոսել Մանոնի մասին, վորովհետև չեյի կամենում, որ նրանք իմանան իմ սիրո մասին։ Նրանք նախ կարծել եյին, թե իմ ցանկությունը սոսկ յերիտասարդ մի տղամարդու քմահաճույք է, վորը դրդում է ինձ զվարճալի ժամանց փնտրել այս կարգի աղջիկների հետ. սակայն հենց վոր գլխի ընկան իմ սիրո մասին, այն ստիճան իրենց մատուցած ծառայության գինը բարձրացրին, որ յերբ մենք դուրս յեկանք Մանտ քաղաքից, ուր գիշերել եյինք Պասսի հասնելուց առաջ, իմ քսակն արդեն դատարկվել եր։

Պատմեմ արդյոք ճանապարհին Մանոնի հետ ունեցած իմ տխուր զրույցի կամ այն տպավորության մասին, որ թողեց նրա կերպարանքը, յերբ յես պահակներից թույլտվություն ստացա նրա սայլակին մոտենալու։

Ո՜հ, խոսքերը չնչին չափով միայն կարող են արտահայտել սրտի զգացումները։ Ցերևակայեցեք իմ խեղճ սիրուհուն մեջքից շղթայված, նստած մի բուռ հարդի վրա, գլուխը հոգեառանջ հենած սայլակի մի կողքին, յերեսը գունատ ու վողողված արցունքների վտակներով, վորոնք հոսում եյին նրա արտևանունքների արանքից, թեև աչքերը շարունակ փակ եյին։ Մինչև իսկ հետա-

քրքրությունը չեր սիրել նրան բանալու աչքերը, յերբ լսել եր հարձակումից յերկյուղած պահակների աղմկալի պատրաստությունները։ Նրա սպիտակեղենը կեղտոտ եր ու անկանոն։ Ներքակերտ ձեռները յենթարկվել եյին արևի և քամու ներգործությանը. մի խոսքով՝ նրա ամբողջ հրաշագեղ կերպարանքը, դեմքը, վորը կարող եր պաշտամունքի առարկա լինել համայն աշխարհի համար, իրենից ներկայացնում եր անկարգության ու լքվածության մի անասելի տեսարան։

Մի քանի րոպե յես նայեցի նրան՝ համրաքայլ ընթանալով նրա սայլակի կողքով։ Յես այն աստիճան կորցրել եյի ինձ, վոր քանիցս քիչ մնաց վայր ընկնեյի ձիուց։ Իմ հառաչանքներն ու անվերջ բացականչությունները ի վերջո գրավեցին նրա ուշադրությունը և նա նայեց իմ կողմը։ Նա իսկույն ճանաչեց ինձ, և յես նկատեցի, վոր նրա առաջին շարժումը յեղավ փորձել դուրս գալ սայլակից ու դեպի ինձ նետվել, սակայն շղթայից կաշկանդված՝ յետ ընկավ իր նախկին տեղը։

Յես խնդրեցի պահակներին կարեկցել և գեթ մի րոպե կանգ առնել. նրանք համաձայնվեցին՝ ագահությունից դրդված։ Յես ձիուց իջա և նստեցի Մանոնի կողքին։ Նա այն աստիճան նվաղած եր և ուժասպառ, վոր յերկար ժամանակ չկարողացավ վոչ խոսել, վոչ էլ շարժվել։ Յես իմ արցունքներով թրջեցի նրա ձեռքերը և վորովհետև ինքս նույնպես անընդունակ եյի բան

անգամ արտասանելու, ապա մենք յերկուսս ել գտնը-
վում եյինք անորինակ ու աննախընթաց մի տխուր վի-
ճակում։ Պակաս տխուր չեյին մեր խոսքերը, յերբ ի վի-
ճակի յեղանք խոսելու։ Մանոնը քիչ խոսեց. կարծես
ամոթն ու վիշտը աղճատել եյին նրա ձայնը՝ այնպես
թույլ եր այն ու դողդոջուն։

Նա ինձ շնորհակալություն հայտնեց, վոր չեմ մո-
ռացել և այժմ ուրախություն եմ պատճառում իրեն,—
ավելացրեց նա հառաչանքով, — միանգամ ևս ինձ տես-
նելու և վերջին հրաժեշտը տալու։ Սակայն, յերբ յես
նրան վստահացրի, վոր վոչ մի բան չի կարող ինձ ան-
ջատել նրանից և վոր յես պատրաստ եմ թեկուզ մինչև
աշխարհի ծայրը հետևել նրան, վորպեսզի գուրգուրեմ,
սպասարկեմ, սիրեմ նրան և առհավետ ու անքակտելի-
որեն իմ չար բախտը կապեմ նրա բախտի հետ, այս
խեղճ աղջիկը համակվեց այնպիսի քնքույշ ու վշտալից
զգացումներով, վոր յես յերկյուղեցի, թե այսքան բուռն
հուզումը կարող է վտանգել նրա կյանքը։

Նրա հոգու բոլոր հույզերը կարծես կուտակվել եյին
աչքերում, վոր անթարթ հառել եր յերեսիս։ Մի քանի
անգամ նա սկսեց խոսել, սակայն ույժ չեր ունենում
ասելիքը վերջացնելու։ Այնուամենայնիվ նրան հաջող-
վեց մի քանի բառ արտասանել, վորոնք արտահայ-
տում եյին իր սքանչանքը իմ սիրո հանդեպ, քըն-
քույշ հանդիմանանք՝ իմ ծայրահեղ սիրո համար, կասկ-
կած՝ թե իրոք ինքն այնքան յերջանիկ է, վոր կարո-
ղացել է ինձ այդ աստիճան կատարյալ մի սեր ներշն-
չելու. այդ խոսքերն արտահայտում եյին նաև թախան-
ձանք՝ վոր յես հրաժարվեմ իրեն հետևելու մտադրու-
թյունից և մի այլ տեղ վորոնեմ ինձ արժանի նոր յեր-
ջանկություն, վորն, ինչպես նա յեր ասում, յես չեյի
կարող ունենալ իր հետ։

Հակառակ ամենադաժան ճակատագրի, յես իմ յերան-
նությունը գտնում եյի նրա հայացքում և այն վստա-
հության մեջ, վոր ունեյի նրա սիրո նկատմամբ։ Ար-
դարև, յես կորցրել եյի այն ամենը, ինչ սովորական մար-



դիկ հարգում ու մեծարում են։ Սակայն յես տիրապետում եյի Մանոնի սրտին, միակ բարիքը, վոր մեծարում եյի։ Ի՞նչ հոգ թե վորտեղ ապրել, Ցեվրոպայում թե Ամերիկայում, յեթե յես վստահ եմ իմ յերջանկության վրա՝ սիրուհուս հետ ապրելով։ Մի՞թե վոչչ աշխարհը յերկու հավատարիմ սիրեկանների հայրենիքը չե՞։ Մի՞թե նրանք միմյանց մեջ չեն տեսնում հայր ու մայր, ազգականներ ու բարեկամներ, հարստություն ու յերանություն։

Ցեթե կար մի հանգամանք, վոր անհանգստություն եր պատճառում ինձ, դա՝ Մանոնին զրկանքի մեջ տեսնելու վախն եր։ Ցես արդեն ինձ յերևակայում եյի նրա հետ մի անմշակ յերկրում, ուր վայրենիներ են ապրում։

«Հավատացած եմ», — ասում եյի ինքս ինձ,—«վոր նրանց մեջ չկա գեթ մեկն այնքան անողորմ, վորքան անողորմ են Գ... Մ... ն և իմ հայրը։ Նրանք գոնե մեզ թույլ կտան խաղաղ ապրելու։ Ցեթե նրանց մասին լսած պատմություններս ճիշտ են, ապա նրանք ապրում են բնության որենքների համաձայն։ Նրանց անհայտ է թե. ագահության մոլուցքը, վորը տիրում է Գ... Մ...ին, և թե պատվի խելացնոր գաղափարը, վորն ինձ դարձրեց հորս թշնամին։ Այդ՝ վայրենիները չեն վրդովի յերկու սիրեկանների, վորոնք նույնպիսի պարզ կյանք պիտի վարեն, ինչպիսին իրենք են վարում։ Ուստի այս կողմից յես հանգիստ եյի։

Սակայն յես խաբուսիկ յերազանքներով չեյի տարվում կենցաղային ամենորյա կարիքների նկատմամբ։ Յես բազմիցս զգացել եյի, վոր պահանջներ կան, վորոնց չբավարարելն անտանելի յե, առանձնապես մի քնքույշ աղջկա համար, վորը վարժվել ե հարմարությունների ու փարթամ կյանքի։ Հուսահատությունը պատում եր ինձ, քանի վոր յես զուր տեղը վատնել եյի քսակումս յեղած դրամը, իսկ այն աննշան գումարը, վորը տակավին մնացել եր մոտս, շուտով ինձնից պիտի հափշտակվեր անզգամ պահակների կողմից։ Յես կշռադատում եյի, վոր մի փոքրիկ գումարով ի վիճակի կլինեմ Ամերիկայում՝ ուր դրամը հազվագյուտ ե՝ վոչ միայն մի առ ժամանակ հոգալ մեր ամենաանհրաժեշտ և ամենաանհետաձգելի կարիքները, այլ նույնիսկ ձեռնարկել վորևե գործ՝ կայուն բնակություն հաստատելու համար։

Այս խորհրդածությունն ինձ մի միտք ներշնչեց, այն ե՝ նամակ գրել Տիբերժին, վորը միշտ և անհապաղ իր բարեկամական ոգնության ձեռքն եր կարկառել ինձ։ Յես նրան գրեցի մեր անցած առաջին իսկ քաղաքից։ Իմ խնդիրքը հիմնավորելու համար, յես այլ պատճառների չդիմեցի, քան այն ծայրահեղ կարիքը, վորն, ինչպես կանխատեսում եյի, պիտի կրեյի Հավր-դե-Գրասում, ուր՝ խոստովանեցի նրան՝ գնում եյի Մանոնին ուղեկցելու։ Յես նրանից հարյուր պիստոլ եյի խնդրում։ «Ուղարկեցեք ինձ այդ գումարը Հավր՝ փոստով», — գրում եյի յես նրան։— «Ինչպես տեսնում եք այս վերջին անգամն ե, վոր ձեզ ձանձրացնում եմ իմ դիմումներով և վորովհետև դժբախտ սիրուհիս առհավետ հափշտակվում ե ինձնից, յես չեմ կարող թողնել, վոր նա հեռանա, առանց վորոշ ոժանդակություն ցույց տալու՝ փոքր ինչ թեթևացնելու նրա անբախտ վիճակն ու իմ մահացու խոցերը»։

Պահակները հենց վոր իմացան իմ բուռն սիրո մասին, այն աստիճան ժպիրհ ու անամոթ դարձան, վոր շարունակ կրկնապատկելով իրենց ամենաչնչին ծառա-

յութիւնների արժեքը, շուտով ինձ հասցրին հետին չքավորութիւն։ Մյուս կողմից սերն ինձ թույլ չեր տալիս խնայելու իմ քսակը։ Առավոտից մինչև յերեկո յես ճնում եյի Մանոնի մոտ և ժամանակն ինձ համար այլևս հաշվվում եր վոչ թե ժամերով, այլ ամբողջ որով։ Վերջապես իմ քսակը բոլորովին դատարկվեց և յես յենթարկվեցի վեց անդգամների քմահաճույքին ու կոպտութիւնը, անդգամների, վորոնք ինձ հետ անհանդուրժելի անբարտավանութիւնամբ եյին վարվում։ Այդ դուք տեսաք Պասսիյում։ Ձեր հանդիպումը մի յերջանիկ ժամանակավոր հանդիստ եր, վոր ինձ շնորհեց ճակատագիրը։ Ձեր կարեկցանքը գեպի տանջանքներս՝ յեղավ իմ միակ յերաշխիքը ձեր մեծահոգի սրտի առաջ։ Ձեր այնքան առատաձեռնորեն ցույց տված ողնութիւնը թույլ տվեց ինձ հասնել Հավը, և պահակներն իրենց խոստումը կատարեցին շատ ավելի մեծ բարեխղճութիւնամբ, քան յես սպասում եյի։

Մենք ժամանեցինք Հավը։ Ամենից առաջ յես գնացի վոստ։ Տիբերժը տակավին ժամանակ չեր ունեցել պատասխանելու։ Յես տեղեկացա, թե յերբ կարող եյի ստանալ նրա նամակը. դա կարող եր ինձ հասնել յերկուորից հետո միայն և իմ չար բախտի տարորինակ նախասահմանումով այնպես պատահեց, վոր մեր նավը պիտի մեկներ հենց նույն որվա առավոտը, յերբ յես կարող եյի ստանալ բարեկամիս նամակը։

Անզոր եմ ձեզ նկարագրելու իմ վհատությունը։ — «Ի՞նչ», — բացականչեցի յես, — «ճակատագիրն ինձ անդթաբար հալածում է մինչև իսկ իմ դժբախտությունների մեջ»։ Մանոնը պատասխանեց. — «Ավաղ, արժի՞ միթե այսպիսի մի դժբախտ կյանքի համար այդքան հոգս ու ցավ կրել։ Մեռնենք հենց Հավրում, իմ սիրելի ասպետ։ Թող մահը միանգամից վերջ դնի մեր տառապանքներին։ Հարկ է մեզ գնալ մի անհայտ յերկիր՝ ծանրաբեռնված այս տառապանքներով, մի յերկիր, ուր անկասկած ծայրահեղ սարսափներ են սպասում մեզ, քանի վոր իբրև պատժավայր դա յե նշանակված ինձ համար։ Մեռնենք», — կրկնեց նա, — «կամ գոնե սպանիր ինձ և ինքդ գնա, այլ վիճակ վորոնիր մի ավելի յերջանիկ սիրուհու բաղուկներում»։ — «Վո՛չ, վո՛չ», — ասացի յես նրան. «ձեզ հետ դժբախտ լինելն ինձ համար նախանձի արժանի մի վիճակ է»։

Նրա խոսքերն ինձ սարսափեցրին։ Հասկացա, վոր նա չափազանց ընկճվել է իր ցավերից։ Յես չանացի մի ավելի հանդիստ տեսք ընդունել, վորպեսզի վանեմ նրանից մահվան ու վհատության այդ մռայլ մտքերը։ Վորոշեցի նույն վարմունքն ունենալ և ապագայում. հետո արդեն համոզվեցի, վոր վոչ մի բան այնքան ի վիճակի չե կնոջն արիություն ներշնչելու, վորքան իր սիրած տղամարդու անվեհերությունը։

Կորցնելով Տիբերժից ոգնություն ստանալու հույսը յես ծախեցի ձիս։ Ստացած դրամն՝ ավելացրած ձեր առատաձեռնությունից մնացած դրամի հետ՝ մի փոքրիկ գումար կազմեց, տասնյոթ պիստոլ։ Դրանցից յոթով յես մի քանի բաներ գնեցի, վորոնք անհրաժեշտ եյին Մանոնի ամենաանհետաձգելի կարիքները հոգալու համար, իսկ մնացած տասը խնամքով պահեցի, վորպես հիմք Ամերիկայում մեր ակնկալած բարեկեցության։

Առանց դժվարության ինձ տեղ տվին նավում։ Այն ժամանակները յերիտասարդ տղամարդիկ եյին վորոնում, վորոնք պատրաստ լինեյին հոժարակամ դաղութ գնալու։ Ճանապարհածախսը և սնունդն ինձ համար ձրի

յեր։ Հաջորդ որը փոստը պիտի մեկներ Փարիզ և յես մի նամակ գրեցի Տիբերժին։ Այդ նամակը հուզիչ ու սրտառուչ եր և անկասկած ընդունակ՝ ծայր աստիճան նրա դուքը շարժելու, քանի վոր այդ դրդեց նրան կայցնելու մի վորոշում, վորը կարող եր առաջ գալ մի դժբախտ բարեկամի հանդեպ ունեցած անսահման քընքշությունից ու մեծահոգությունից միայն։

Նավի առագաստները պարզեցինք։ Քամին մինչև վերջ նպաստում եր մեզ։ Յես նավապետից մի առանձին խուց ստացա Մանոնի և ինձ համար։ Նա այնքան բարի գտնըվեց, վոր մեզ ուրիշ աչքով եր նայում, քան մեր թշվառ ուղեկիցներին։ Հենց առաջին որը յես նրան մի կողմ հրավիրեցի, վերպետքի ավելի հարգալիր վերաբերմունք ներշնչեմ դեպի մեզ. նրան պատմեցի իմ դժբախտությունների մի մասը։ Յես մտածեցի, վոր ամոթալի սուտ ասած չեմ լինի, յեթե նրան հայտնեմ, վոր Մանոնը և յես ամուսիններ ենք։ Նա ձևացրեց, թե հավատում է և ինձ շնորհեց իր հովանավորությունը։ Մենք այն վայելեցինք ամբողջ նավարկության ժամանակ։ Նա հոգաց, վոր մենք լավ ու բավարար սնունդ ստանանք և նրա սիրալիր ուշադրությունը դեպի մեզ՝ ստիպեց մեր անբախտության ընկերներին հարգանքով վերաբերվել մեզ։

Յես անդադար հոգ եյի տանում, վոր Մանոնն ամենաչնչին անհարմարություն անգամ չզգա։ Նա այդ լավ եր նկատում. տեսնելով այդ ու գիտակցելով, թե յես՝

հանուն նրա սիրո՝ ինչպիսի ծայրահեղ դժբախտության եմ ինձ մատնել, նա անչափ քնքույշ ու գորովալիր եր դեպ ինձ, անչափ ուշադիր իմ ամենաանհրաժեշտ պահանջներին. այնպես վոր նրա և իմ միջև առաջացել եր փոխադարձ ծառայությունների ու սիրո հարատև մի մրցակցություն։ Ցեսս բնավ չեյի ափսոսում, վոր թողել եմ Ցեվրոպան. ընդհակառակը, վորքան ավելի եյինք մոտենում Ամերիկային, այնքան ավելի եյի զգում, վոր սիրտս թեթևանում է ու հանգստանում։ Ցեթե յես կարողանայի ապահով լինել, վոր այնտեղ ի վիճակի կլինեմ մեր կենսական ամենաանհրաժեշտ պահանջները բավարարելու, ապա իմ շնորհակալությունը պիտի հայտնեյի ճակատագրին՝ մեր դժբախտություններին այդքան բարենպաստ ընթացք տված լինելու համար։

Ցերկու ամսվա նավարկությունից հետո վերջապես մոտեցանք ցանկալի ափին։ Առաջին հայացքից յերկիրը մեզ անհրապույր թվաց։ Մեր առաջ փռված եյին անբերրի ու անբնակ դաշտավայրեր, ուր հազիվ կարելի յեր նկատել հատ ու կենտ բուսած յեղեգներ և քամուց մերկացած ծառեր։ Վոչ մի հետք՝ վոչ մարդու, վոչ անասունների։ Այնուամենայնիվ, յերբ նավապետը հրամայեց մի քանի զարկ տալ թնդանոթներից, քիչ անց մենք տեսանք Նոր-Որլեյանի քաղաքացիների մի խումբ, վոր ուրախության բուռն նշաններով մեզ եր մոտենում։ Մենք չեյինք նկատել քաղաքը. մի փոքրիկ բլուր ծածկում եր այն մեր աչքերից։ Մեզ ընդունեցին վորպես յերկնքից առաքված անձերի։

Այս խեղճ բնակիչները փութացին հազար ու մի հարց տեղալ Ֆրանսիայի և այն զանազան դավառների մասին, վորտեղ իրենք ծնվել եյին։ Նրանք մեզ դրկում եյին վորպես՝ իրենց յեղբայրների և վորպես սիրելի ընկերների, վորոնք յեկել են կիսելու իրենց թշվառությունն ու մենակությունը։

Մենք նրանց հետ բռնեցինք քաղաքի ճանապարհը. սակայն յերբ մոտեցանք դրան, զարմանքով տեսանք, վոր այն, ինչ մեզ գովել եյին իբրև բարեկեցիկ քաղաք,

վոչ այլ ինչ է, յեթե վոչ մի քանի անշուք խրճիթների հավաքույթ։ Դրանց մեջ բնակվում էին հինգ թե վեց հարյուր մարդ։ Նահանգապետի տունը մյուսներից փոքր ինչ աչքի չեր ընկնում իր բարձրությամբ ու դիրքով։ Մի քանի հողաշեն ամրություններ, վորոնց շուրջը մի լայն փոս եր ձգվել, պաշտպանում էին այդ տունը։

Մեզ ամենից առաջ ներկայացրին նահանգապետին։ Նա յերկար ժամանակ առանձին խոսեց նավապետի հետ և վերադառնալով դեպի մեզ՝ մեկը մյուսի յետևից նայեց բոլոր աղջիկներին, վորոնք յեկել էին նավով։ Դրանք յերեսուն հոգի էին, վորովհետև Հավրում մենք հանդիպել էինք մի ուրիշ խմբի, վորը միացավ մեզ։ Նրանց յերկար քննելուց հետո նահանգապետը հրամայեց, վոր կանչեն քաղաքի յերիտասարդներին, վորոնք սիրատոչոր՝ կանայք էին սպասում իրենց համար։ Ամենագեղեցիկները նա տվեց գաղութի ավագներին, իսկ մնացածներին վիճակով բաժանեց։ Նա դեռևս չեր խոսել Մանոնի հետ, սակայն մյուսներին հրամայելով հեռանալ, Մանոնին և ինձ խնդրեց մնալ իր մոտ։

«Ցես նավապետից իմացա, վոր դուք ամուսիններ եք», — ասաց նա, — «և թե ճանապարհին նա համոզվել է, վոր դուք վողջամիտ ու պատվավոր մարդիկ եք։ Ցես չեմ ուզում քննել ձեր դժբախտության պատճառները, սակայն, յեթե հիրավի դուք այդքան արժանիք ունեք, վորքան վկայում է ձեր դեմքը, յես վոչ մի բան

չեմ խնայի, վորպեսզի թեթևացնեմ ձեր վիճակը. իսկ դուք ձեր կողմից կաշխատեք փոքր ինչ զվարճացնել ինձ այս վայրենի ու ամայի վայրում»։

Ցես նրան պատասխանեցի այնպիսի խոսքերով, վորոնք, ինձ թվում է, ընդունակ էին ամրացնել նրա մեր մասին կազմած կարծիքը։ Նա կարգադրություն արեց, վոր քաղաքում մեզ բնակարան հատկացնեն և մեզ իր մոտ ընթրիքի հրավիրեց։ Վորպես դժբախտ վտարանդիների պետ՝ նա չափազանց սիրալիր ու քաղաքավարի յեր։ Ընթրիքի ժամանակ ուրիշների ներկայությամբ նա հարցուփորձ չարեց մեր արկածների մասին։ Խոսակցությունն ընդհանուր բնույթ ունեցավ, և չնայած մեր տրտմության ու տխուր վիճակին, Մանոնն ու յես ջանացինք այն ավելի հաճելի դարձնել։

Ցերեկոյան նա հրամայեց, վոր մեզ առաջնորդեն մեզ համար պատրաստված բնակարանը։ Դա մի վողորմելի խրճիթ եր՝ տախտակամած ու ցեխածեփ, բաղկացած յերկու թե յերեք դետնափոր սենյակներից, վերևում՝ ձեղունահարկով։ Նահանգապետը կարգադրել եր այնտեղ բերել վեց աթոռ և մի քանի ուրիշ հարմարություններ։

Մանոնը կարծես սարսափեց, տեսնելով այս խղճուկ բնակարանը։ Նա վշտանում եր ավելի շուտ ինձ, քան իր համար։ Ցերը մենք մենակ մնացինք, նա նստեց և սկսեց դառն արտասվել։ Ցես նախ փորձեցի մխիթարել նրան, սակայն յերբ նա ասաց, վոր միայն ինձ համար է մորմոքում, և մեր ընդհանուր դժբախտությունների մեջ նրան հուզում են լոկ իմ կրելիք տանջանքները, ապա յես արիասիրտ ու մինչև իսկ ուրախ ձևացրի ինձ, վորպեսզի նույն արիությունն ու ուրախությունը ներշնչեմ և՛ նրան։

«Ինչի՞ մասին պիտի ցավեմ»,— ասացի նրան. «յես ունեմ այն բոլորը, ինչ ցանկանում եմ։ Դուք ինձ սիրում եք, այնպես չե։ Ուրիշ էլ ի՞նչ յերջանկություն եմ տենչացել յերբևե։ Ցերկնքին թողնենք մեր բախտի ընթացքը։ Դա բոլորովին հուսահատական չի թվում ինձ։ Նահանգապետը քաղաքավարի մարդ է. նա սիրա-

լիր ուշադրություն ցույց տվեց մեր նկատմամբ, նա չի հանդուրժի, որ մենք զրկանքներ կրենք։ Իսկ ինչ վերաբերում է մեր խրճիթի վաղորմելիությանն ու կահկարասիքի կողտությանը, դուք ինքներդ կարողացաք նկատել, թե որքան քիչ մարդիկ այստեղ մեզ պես լավ ընակարան ու հարմարություններ ունեն. իսկ բացի դրանից՝ դու հրաշալի ալքիմիկոս ես».—ավելացրի յես նրան զրկելով.—«դու ամեն ինչ վոսկու ես վերածում»։

«Այդ դեպքում դուք աշխարհի ամենահարուստ մարդը կլինեք», — պատասխանեց նա, — «վորովհետև, յեթե յերբեք ձեր սիրո նմանը չի յեղել, ապա նույնպես անհնար է, որ յերբևէ-վորևէ մեկը այնքան քընքշորեն սիրված լինի, վորքան դուք։ Ցես միանգամայն արդարացիորեն զգում եմ», — շարունակեց նա, — «վոր յերբեք չեմ արժանացել այն արտասովոր սիրուն, վորը դուք տածում եք դեպի ինձ։ Ցես ձեզ այնպիսի տառապանքներ պատճառեցի, վոր դուք կարողացել եք ներել միայն շնորհիվ ձեր անսահման բարության։ Ցես թեթևամիտ յեղա ու. դյուրաթեք իմ վարքում, և ձեզ միշտ խելահեղորեն սիրելով հանդերձ, ապերախտ գտնվեցի ձեր նկատմամբ։ Սակայն դուք չեք կարող հավատալ, թե վորքան փոխվել եմ յես։ Արցունքները, վոր յես այնքան հաճախ թափել եմ Ֆրանսիայից մեկնելուց ի վեր, վոչ մի անգամ չեն բղխել իմ սեփական տառապանքներից։ Ցես դադարեցի դրանք զգալուց, հենց վոր դուք սկսեցիք

մասնակից լինել իմ տանջանքներին։ Ցեսս արտասվել եմ միայն դեպի ձեզ զգացած քնքշությունից և կարեկցանքից։ Ցեսս վոչ մի կերպ չեմ կարող սփոփել ինձ, վոր իմ կյանքում թեկուզ մի բոպե վշտացրել եմ ձեզ։ Ցեսս անդադար հանդիմանում եմ ինձ իմ անկայունության համար և անդադար սքանչանում, թե սերը դեպի մի անբախտ արարած ինչ զորություն է ներշնչել ձեզ, մի արարած, վորը արժանի չէ դրան և վորն անզոր է իր ամբողջ արյունով անգամ հատուցելու», — ավելացրեց նա հորդառատ արցունքներ թափելով,— «կեսն այն տառապանքների, վոր նա պատճառել է ձեզ»։

Նրա արցունքները, խոսքերը և արտահայտության յեղանակն այնպիսի մի զարմանալի տպավորություն գործեցին ինձ վրա, վոր թվաց, թե հոգիս յերկատվում է։

«Զգույշ կաց»,— ասացի յես նրան,—«զգույշ կաց, սիրելի Մանոն. յես բավականաչափ ուժ չունեմ տանելու քո սիրո այդպիսի ջերմ արտահայտությունը. յես բնավ սովոր չեմ ուրախության այդպիսի բուռն զեղման։ Ո՜, ասուած», — բացականչեցի յես, — «այլևս վոչինչ չեմ ազերսում ձեզնից։ Ցեսս վստահ եմ Մանոնի սրտի վրա. դա հենց այնպիսին է, վորպիսին յես տեսնում եմ՝ յերջանիկ լինելու համար, և հիմա յես միանգամայն յերջանիկ եմ առհավետ։ Իմ յերջանկությունը գտնված է»։

«Հիրավի, ձեր յերջանկությունը գտնված է», — ասաց Մանոնը, — «յեթե դուք այդ կապում եք ինձ հետ. յես ել լավ գիտեմ, թե մշտապես ուր կարող եմ գտնել իմ սեփական յերջանկությունը»։

Ցեսս պառկեցի քնելու՝ տոգորված այս քաղցր խոհերով, վորոնք իմ խրճիթը վերածեցին մի պալատի՝ արժանի աշխարհի առաջին թագավորին։ Այնուհետև Ամերիկան ինձ թվաց վայելքների մի վայր։—«Պետք է Նոր-Որլեան գալ», հաճախ ասում եմ Մանոնին, — «յերբ ուզում ես ճաշակել սիրո իսկական քաղցրությունը։ Այստեղ մարդ կարող է սիրել առանց շահախնդրության, առանց խանդի և հարատևորեն։ Մեր հայրենակիցները գալիս են այստեղ վոսկի փնտրելու։ Նրանք չեն յերևա-

կայում, վոր մենք այստեղ գտել ենք վոսկուց շատ ավելի թանգարժեք գանձեր»։

Մենք փուքաջան յեռանդով բարեկամական հարաբերություն եյինք պահպանում նահանգապետի հետ։ Նա այնքան բարի գտնվեց, վոր մեր ժամանումից մի քանի շաբաթ անց բերդում մի ազատ պաշտոն տվեց ինձ։ Թեև այդ պաշտոնն ինքնին բավականին աննշան եր, այնուամենայնիվ յես այն ընդունեցի իբրև յերկնային մի շնորհ։ Դա ինձ թույլ եր տալիս ապրել առանց ուրիշին բեռ լինելու։ Ցեռ մի սպասավոր վարձեցի ինձ և մի աղախին՝ Մանոնի համար։ Մեր տնային մանրմունր գործերը հարթվեցին և կյանքը կանոնավորվեց։ Ինքս համեստ ու չափավոր կյանք եյի վարում, նույնը և Մանոնը։ Մենք վոչ մի առիթ բաց չեյինք թողնում մեր հարևաններին ծառայություն մատուցելու և բարիք անելու։ Իմ պաշտոնական դիրքի և մեր քաղցրաբարո վարվեցողության շնորհիվ մենք ձեռք բերինք բոլոր գաղութի վստահությունն ու սերը։ Կարճ միջոցում մենք այն աստիճան աչքի ընկանք, վոր Ն ահանգապետից հետո առաջին դեմքերն եյինք քաղաքում։

Մեր անմեղ զբաղումները և այն անդորր կյանքը, վորում ապրում եյինք հարատև, անդգալիորեն մեր մեջ վերականգնեցին կրոնի գաղափարը։ Մանոնը յերբեք չեր դադարել բարեպաշտ լինելուց. նույնպես և յես նման չեյի այն մոլի աղատախոհներին, վորոնք փառք

են համարում զուգորդել անկրոնությունն իրենց բարքերի ապականության հետ։ Մեր անկարգությունների պատճառը յեղել է սերն ու յերիտասարդությունը։ Կյանքի տարիների փոխարեն մենք փորձառություն ունեյինք. դա մեզ տվեց այն, ինչ կարող եյին միայն տալ յերկար տարիները։ Մեր խորիմաստ զրույցներն աննկատելիորեն մեզ դրդեցին առաքինի ու որինավոր սեր տենչալու։ Առաջինը յես Մանոնին առաջարկեցի որենքով սրբագործել մեր սերը։ Ինձ հայտնի եյին նրա սրտի նվիրական տենչերը։ Նա անկեղծ ու բնական եր իր զգացումների արտահայտության մեջ, մի հատկություն, վորը մարդուն միշտ դեպի առաքինություն է տրամադրում։ Ցես նրան հասկացրի, վոր մեր յերջանկության համար մի բան պակասում է. — «դա — յերկնքի հավանությունն է», — ասացի յես նրան։ «Մեր հոգիները չափազանց հրաշալի յեն և սրտերը գերազանցորեն բարեմիտ, վորպեսզի կարենանք գիտակցաբար ապրել պարտազանցության մեջ։ Թող Ֆրանսիայում այդպես ապրած լինենք, ուր մենք վոչ կարող եյինք դադարել միմյանց սիրելուց, վոչ ել որինավոր ուղիով բավարարել մեր սերը։ Սակայն Ամերիկայում, ուր մենք մեզանից բացի վոչ վոքից կախում չունենք, ուր կարող ենք հաշվի չառնել հասարակական դիրքի ու կեղծ բարեվայելչության կամայական որենքները, ուր մեզ արդեն ամուսիններ են համարում, ինչն է մեզ արգելում իրապես դառնալ այդպիսիք և կրոնի սահմանված յերդումներով աղնվացնել մեր սերը։ Ինչ վերաբերվում է ինձ, վոչինչ նոր բան չեմ առաջարկում ձեզ՝ առաջարկելով իմ սիրտն ու ձեռքը. սակայն յես պատրաստ եմ՝ վերստին զոհասեղանի առաջ դրանք ձեզ նվիրաբերելուց»։

Ինձ թվաց, թե իմ խոսքերը ցնծությամբ համակեցին սիրուհուս։ — «Կհավատամք ինձ», — ասաց նա, — «վոր յես նույնպես բազմիցս այդ մասին մտածել եմ այն որից ի վեր, ինչ մենք Ամերիկայում ենք։ Ձեզ տհաճություն պատճառելու յերկյուղն ինձ ստիպեց սրտումս թաղցնել

այդ ցանկությունը։ Ես միամտություն չունեմ տեսնելու՝ լինել ձեր ամուսինը»։

«Ա՜հ, Մանոն», — բացականչեցի ես, — «դու թագավորի ամուսին կլինեիր, եթե երկինքը ցանկար, որ ես թագավոր ծնված լինեի։ Զատատանվենք. վրդ մի խոչընդոտ մեզ չի սպառնում։ Ես հենց այսօր ուզում եմ խոսել նահանգապետի հետ և խոստովանել, որ մենք նրան խաբել ենք մինչ հիմա։ Թող գռեհիկ սիրեկանները վախենան ամուսնական անքակտելի շղթաներից։ Նրանք բնավ դրանցից վախ չպիտի զգան, եթե հաստատ լինեն մեզ պես, թե կրում են սիրո կապանքները»։

Մանոնը սաստիկ հրճվեց, լսելով իմ այս վորոշումը։ Ես համոզված եմ, որ աշխարհումս վոչ մի ազնիվ մարդ չպիտի զլանա իր հավանությունը տալ իմ մտադրություններին այն հանգամանքներում, վորոնց մեջ ես եյի գտնվում, այսինքն՝ երբ ճակատագրականորեն ստրկացած եյի մի անհաղթելի կրքից և պարտված՝ անասելի խղճի խայթից։

Սակայն ով կարող է ինձ մեղադրել, որ իմ տըրտունջներն անարդարացի են, երբ ես գանգատվում եմ երկնքի խստությունից, վորով նա վանեց իրեն հաճոյանալու իմ դիտավորությունը։ Ավաղ, ինչու ես եմ ասում, թե նա վանեց իմ դիտավորությունը, երբ նա վորպես մի հանցանք պատժեց այն։ Երկինքը համբերությամբ հանդուրժել եր ինձ, մինչ ես կուրորեն

քայլում էի մոլության ու մեղքի ճանապարհով. սակայն նա ինձ վերապահել էր իր դաժան պատիժները, հենց վոր սկսեցի իմ դարձը դեպի առաքինություն։ Ցես վախենում եմ, թե ույժ չեմ ունենա ավարտելու այն չարաբաստ դեպքի պատմությունը, վորը յերբևե պատահել է աշխարհում։

Ցես գնացի նահանգապետի մոտ, ինչպես պայմանավորվել էի Մանոնի հետ, խնդրելու նրա համաձայնությունը մեր ամուսնության արարողության համար։ Ցես այդ մասին յերբեք չէի խոսի վոչ նրա և վոչ էլ մեկ ուրիշի հետ, յեթե վստահ լինեի, վոր բերդի քահանան, վորը քաղաքի միակ քահանան էր, առանց նահանգապետի գիտության ինձ կմատուցի սույն ծառայությունը։ Սակայն չհամարձակվելով հուսալ, վոր քահանան լռություն կպահպանի, յես վճռեցի դործել բացահայտորեն։

Նահանգապետը մի յեղբորորդի ուներ՝ Սինելլե անունով, վորին նա շատ էր սիրում։ Դա յերեսուն տարեկան մի տղամարդ էր՝ կտրիճ, սակայն տաքարյուն ու դյուրաբորբոք։ Նա տակավին ամուրի յեր։ Մանոնի գեղեցկությունը մեր ժամանումի հենց առաջին որից գրավել էր նրա ուշադրությունը և բազմաթիվ առիթները, վոր նա ունեցել էր՝ ինչը թե տաս ամսվա ընթացքում նրան հանդիպելու, այնպես բորբոքել էին նրա կիրքը, վոր նա թագուն հյուծվում էր Մանոնի համար։ Սակայն իր հորեղբոր և ամբողջ քաղաքի հետ համողված լինելով, վոր յես իսկապես Մանոնի ամուսինն եմ, նա այն աստիճան զսպել էր իր սերը, վոր մինչև իսկ չէր ցուցաբերել այն, և դեռ ավելին՝ բազմիցս իր խանդաղատանքն էր հայտնել ինձ՝ մատուցելով զանազան ծառայություններ։

Ցերբ յես բերդ հասա, Սիննելլեն իր հորեղբոր մոտ էր։ Ցես վոչ մի հիմք չունեի նրանից թաքցնելու իմ մտադրությունը։ Ուստի, առանց քաշվելու, նրա ներկայությամբ բացատրեցի իմ խնդիրը։ Նահանգապետն ինձ լսեց իր սովորական բարեսրտությամբ։ Ցես նրան

արի իմ պատմության մի մասը, որը նա ունկընդրեց հաճույքյամբ և յերբ նրան խնդրեցի ներկա լինել իմ ամուսնության ծիսակատարությանը, նա մեծահոգությամբ խոստացավ իր վրա վերցնել բոլոր ծախսերը։ Ցեսն չափազանց գոհ հեռացա նրանից։

Մի ժամ անց ինձ մոտ յեկավ քահանան։ Ցեսն կարծեցի, թե նա յեկել է իմ ամուսնության առթիվ ինձ խրատներ տալու. սակայն սառը բարևելուց հետո նա յերկու խոսքով ասաց, որ նահանգապետն ինձ արգելում է մտածել անգամ իմ ամուսնության մասին, և թե նա ուրիշ դիտավորություններ ունի Մանոնի նկատմամբ։

«Ուրիշ դիտավորություններ Մանոնի նկատմամբ»,— ասացի յես սրտի մահաբեր սարսուռով։ «Այդ ինչ դիտավորություններ են, հայր իմ»։

Նա պատասխանեց, թե յես լավ դիտեմ, որ այս գաղութում նահանգապետն է տնորենը։ Մանոնին Ֆրանսիայից տարագրել են այստեղ, ուստի և նա գտնվում է նահանգապետի լիակատար տնորինության տակ։ Մինչ այսոր նա վոչ մի կարգադրություն չի արել նրա մասին, յենթադրելով, թե Մանոնն իրոք ամուսնացած է։ Սակայն ինձնից իսկ իմանալով, որ դա այդպես չէ, նա հարմար է գտնում Մանոնին տալ Սիննելեյին, որը նրա վրա սիրահարված է։

Իմ խոհեմությունը չկարողացավ զսպել զայրույթս։ Հպարտ տեսքով յես հրամայեցի քահանային հեռանալ

իմ տնից՝ յերդվելով, վոր վոչ նահանգապետը, վոչ Սինն-նելեն և վոչ ել ամբողջ քաղաքը չեն համարձակվի ձեռք բարձրացնել իմ կնոջ կամ սիրուհու վրա, ինչպես ել վոր նրանք կամենան անվանել նրան։

Ցես իսկույն Մանոնին հաղորդեցի հենց նոր ընդունած չարագույժ այցի մասին։ Մենք այն յեղրակացությյան յեկանք, վոր իմ հեռանալուց հետո Սիննելեյին յերևի հաջողվել ե համոզել հորեղբորը փոխել իր մտադրությունը, և ուրեմն դա հետևանք ե նախորոք նյութված չարամիտ դիտավորության։ Նրանք մեզանից ուժեղ եյին։ Ապրելով Նոր-Որլեանում, դա նույն ե թե գտնվում ենք ծովի մեջտեղում, այսինքն՝ անջատված ահագին տարածությամբ մնացած աշխարհից։ Ո՞ւր փախչել անհայտ ու ամայի մի յերկրում, ուր միայն գազաններն ու նույնքան բարբարոս վայրենիներն են բնակվում։ Քաղաքում ինձ հարգում եյին. սակայն յես չեյի կարող հուսալ, վոր ինձ կհաջողվի այն աստիճան հարուցել բնակչության գութը դեպի ինձ, վորպեսզի նրանից մեզ սպառնացող չարիքին համազոր ոգնություն ստանայի։ Դրա համար անհրաժեշտ եր դրամ ունենալ, իսկ յես աղքատ եյի։ Բացի այդ, ժողովրդական հուզմունքի հաջողությունն անորոշ եր. և յեթե բախտը մեզանից յերես շրջեր, մեր դժբախտությունն անամոքելի կդառնար։

Այս բոլոր մտքերն անցան իմ գլխում։ Դրանից մի մասը յես հաղորդում եյի Մանոնին. դեռ նրա պատասխանը չլսած յես նոր մտքեր եյի հղանում. ընդունում եյի մի վճիռ, հետո այն թողնում՝ մի ուրիշին հանգելու համար. խոսում եյի ինքս ինձ հետ, ինքս ել բարձրաձայն պատասխանում իմ խոհերին. վերջապես ինձ այնպիսի մի հուզմունք պատեց, վոր յես այն չեմ կարող համեմատել ուրիշ վոչնչի հետ, վորովհետև յերբեք վոչ վոք չի ապրել դրա նմանը։

Մանոնն անթարթ աչքերն ինձ վրա յեր հառել. իմ վրդովմունքից նա դատում եր վտանգի մեծության մասին. սարսափից դողդողալով,— ավելի շուտ ինձ, քան



իրեն համար, — այս քնքուշ աղջիկը չեր համարձակ վում մի խոսք անգամ արտասանել՝ իր մտատանջությունն արտահայտելու համար։

Անվերջ ու հոգետանջ խորհրդածություններից հետո յես յեկա այն յեզրակացության, վոր անհրաժեշտ է գնալ նահանգապետի մոտ և ջանալ նրա մեջ պատվո զգացում հարուցել և շարժել նրա գութը, հիշեցնելով նրան իմ հարգալիր վերաբերմունքը դեպի ինքը և իր սիրալիր ուշադրությունը՝ իմ նկատմամբ։ Մանոնը չեր ուզում վոր յես գնամ. արտասուքն աչքերին նա ասում եր. «Դուք մահվան դեմ եք գնում, նրանք կսպանեն ձեզ. յես այլևս չեմ տեսնի ձեզ. յես ուզում եմ ձեզանից առաջ մեռնել»։ Հարկ յեղավ մեծ ճիգ թափել նրան համոզելու, վոր ինձ անհրաժեշտ է գնալ, ինչպես և իրեն անհրաժեշտ է տանը մնալ։ Յես նրան խոստացա շատ շուտ վերադառնալ։ Նա չգիտեր, ինչպես և յես, վոր հենց իրեն պիտի հարվածեին յերկնքի զայրույթն ու մեր թշնամիների կատաղությունը։

Յես գնացի բերդը. նահանգապետը քահանայի հետ եր։ Նրա կարեկցանքը շարժելու համար յես ինձ թույլ տվի այնպիսի նվաստացուցիչ աղերսանքներ, վոր յուրաքանչյուր այլ դեպքում կգերադասեի գերեզման մտնել։ Յես գործ դրի բոլոր այն հնարները, վորոնք անշուշտ պետք է շարժեին ամեն մի սիրտ, յեթե միայն այն չպատկաներ ամեհի ու դաժան վագրին։

Իմ բոլոր աղերսներին այս բարբարոսը միայն յերկու պատասխան տվեց, վոր հարյուր անգամ կրկնեց. Մանոնը, ասում եր նա, իր իշխանության տակ է գտնըվում, և նա խոսք է տվել յեղբոր վորդուն։ Ցես վորոշել եյի ինձ զսպել անգամ ամենածայրահեղ դեպքում. բավարարվեցի միայն ասելով, թե նրան համարում եմ իմ մեծ բարեկամը, ուստի նա չեր կարող ցանկալ իմ մահը, վորին յես համաձայն եմ յենթարկվելու, քան զրկվել իմ սիրուհուց։

Ցես նրանից հեռացա միանգամայն համոզված, վոր վոչ մի բան չի կարելի հուսալ սույն համառ ծերուկից, վորը պատրաստ է իր յեղբորվորդու համար հազար անգամ հոգին ծախել սատանային։ Այնուամենայնիվ յես մտադիր եյի մինչև վերջը հնազանդության տեսք տալ դեմքիս, վճռելով հանդերձ, վոր յեթե անարդար ծայրահեղ միջոցների դիմեն իմ թշնամիները, յես Ամերիկային յուրց կտամ ամենաարյունոտ և ամենայեղերական մի տեսարան, վոր յերբևիցե սերը հարուցել է։

Ցես տուն եյի վերադառնում խորհելով սույն մտադրության մասին, յերբ ճակատագիրը, վորը կամենում եր արագացնել կործանումս, ինձ յերես առ յերես հանդիպեցրեց Սիններելեյի հետ։ Իմ աչքերում նա կարդաց մտքերիս մի մասը։ Ցես արդեն առիթ ունեցա ասելու, վոր նա արիասիրտ մի տղամարդ եր. նա մոտեցավ ինձ.— «Դուք ինձ չեք փնտրում», — ասաց նա։ «Գիտեմ, վոր իմ դիտավորությունները ձեզ վիրավորում են, և յես լավ եմ նախատեսում, վոր մեզ համար անհրաժեշտ է մեր սրերը չափել. տեսնենք՝ ով ավելի յերջանիկ կլինի»։

Ցես նրան պատասխանեցի, վոր նա իրավացի յե, և վոր միայն իմ մահը կարող է վերջ դնել մեր թշնամությանը։

Մենք հարյուր քայլ հեռացանք քաղաքից։ Մեր սուսերները խաչաձևվեցին. յես նրան վիրավորեցի ու գրեթե միաժամանակ զինաթափ արի։ Նա այն աստիճան կատաղեց իր անհաջողության համար, վոր հրաժարվեց

խնդրել՝ խնայել իր կյանքը և ձեռք քաշել Մանոնից։ Թերևս յես իրավունք ունենայի նրան պրկել թե կյանքից և թե Մանոնից։ Սակայն ազնիվ արյունը յերբեք չի դավաճանում իրեն։ Յես նրան նետեցի իր սուսերը։— «Նորից սկսենք», — ասացի յես. «սակայն իմացեք, որ այս անգամ կռիվն անխնա պիտի լինի»։ Անասելի մոլեգնությամբ նա հարձակվեց ինձ վրա։ Պետք է խոստովանեմ, որ սուսերամարտում յես վարժ չեյի, որովհետև միայն յերեք ամիս եյի մարզվել Փարիզում։ Սերն ել շարժում իմ սուրը։ Սիննելեյի սուսերն ընդթափ անցավ իմ բազուկով. սակայն յես ել ոգտվեցի հարմար րոպեյից և այնպիսի մի ուժգին հարված հասցրի նրան, որ նա անշարժ ընկավ իմ վոտքերի մոտ։

Չնայած այն ուրախությանն, որը տալիս է մահացու կռվի հաղթանակը, յես անմիջապես սկսեցի խորհել այդ մահվան հետևանքների մասին։ Յես բնավ չեյի կարող հուսալ, որ ինձ կշնորհվի ներում կամ մահապատժի հետաձգում։ Դիտենալով նահանգապետի սերը դեպի իր յեղբորորդին, յես համոզված եյի, որ մահվան պիտի յենթարկվեմ՝ Սիննելեյի ոպանության լուրը նահանգապետին հասնելուց մի ժամ հետո։ Վորքան ել տագնապալից լիներ այս վախը՝ այնուամենայնիվ դա չեր իմ անհանգստության պատճառը։ Մանոնը և նրա վիճակը, նրան սպառնացող վտանգն ու նրան կորցնելու անխուսափելիությունն այն աստիճան հուզում եյին ինձ,

վոր աչքերս մթագնում էին և չես անկարող էի իմանալ, թե վորտեղ եմ գտնվում։ Ցես նախանձում էի Սիննելեյի վիճակին. վաղահաս մահն ինձ թվում եր վորպես իմ տառապանքների միակ դարմանը։

Սակայն հենց այս միտքն ինձ ուշքի բերեց և ընդունակ դարձրեց մի վորոշում։ կայացնելու։ «Ի՞նչ, չես ուզում եմ մեռնե՞լ»,—բացականչեցի չես,—«վորպեսզի վերջ դնեմ իմ ցավերին։ Ուրեմն կա մի բան, վոր ինձ համար ավելի՞ սարսափելի չե, քան սիրուհուս կորուստը։ Ա՜հ, թող չես կրեմ ամենատաժանելի չարչարանքներն իմ սիրուհուն ոգնելու համար, և թող մեռնեմ այն ժամանակ միայն, չերբ իմ կրած տանջանքներն ապարդյուն լինեն»։

Ցես վերադարձա քաղաք և հասա տուն։ Մանոնին դատա սարսափից ու անհանգստությունից կիսակենդան։ Իմ ներկայությունն ուշքի բերեց նրան։ Ցես չկարողացա թաքցնել նրանից ինձ հետ պատահած ահռելի դիպվածը։ Նա ուշաթափ ընկավ իմ գիրկը, չերբ լսեց Սիննելեյի մահի և իմ վերքի մասին։ Քառորդ ժամից ավելի չարչարվեցի, վորպեսզի նրան ուշքի բերեմ։

Ինքս ել կիսով չափ մեռած էի. վոչ մի չելք չէի տեսնում նրա ու իմ անվտանգության մասին։

«Մանոն, ի՞նչ ենք անելու»,—ասացի չես նրան, չերբ նա մի փոքր սթափվեց։—«Ավա՜ղ, ի՞նչ պիտի անենք։ Անհրաժեշտ է, վոր չես փախչեմ։ Դուք ուզում եք քաղաքում մնալ։ Այո՛, մնացեք. այստեղ դեռևս դուք կարող եք չերջանիկ լինել. իսկ չես գնում եմ ձեզանից հեռու, մահ վորոնելու վայրենիների մեջ կամ գազանների մագիլներում»։

Չնայած իր դրության, նա վեր կացավ, բռնեց իմ ձեռքից՝ ինձ դեպի դուռն առաջնորդելու համար։—«Միասին փախչենք»,—ասաց նա. «չկորցնենք և՛ վոչ մի րոպե։ Սիննելեյի դիակը կարող է պատահաբար գտնված լինել և մենք ժամանակ չենք ունենա բավականին հեռու գնալու»։—«Սակայն, սիրելի Մանոն»,— ասացի չես խելացնոր, — «ասացեք, ո՞ւր կարող ենք գնալ։ Փախստյան

ինչ ուղի ունենք։ Ավելի լավ չի՞ լինի, վոր դուք փորձեք այստեղ առանց ինձ ապրել, իսկ ես գնամ հոժարակամ հանձնվեմ նահանգապետին»։

Այս առաջարկությունն առավել ևս հրահրեց նրա փախչելու տենչը. պետք չեղավ հետևել նրան։ Ցեստակավին բավականին արթնամիտ գտնվեցի, վոր դուրս գալիս հետս վերցրի տանը չեղած մի քանի սրվակ թունդ խմիչքը և այնքան մթերք, վորքան գրպաններումս տեղավորվեց։ Հարևան սենյակում գտնվող ծառաներին մենք ասացինք, վոր գնում ենք յերեկոյան զբոսանքի (սա մեր ամենորյա սովորությունն եր) և քաղաքից հեռացանք ավելի մեծ հապճեպությամբ, քան՝ թվում եր, թույլ եր տալիս Մանոնի քնքույշ կազմվածքը։

Թեև ես տակավին անվճռականության մեջ եյի գտնվում մեր ապաստարանի վայրի նկատմամբ, այնուամենայնիվ յերկու հույս ունեյի, առանց վորոնց ես կգերադասեյի մահն այն անհայտությունից, թե ինչ կարող ե պատահել Մանոնին։ Ցեստակավին լավ եյի ուսումնասիրել յերկիրը՝ այն մոտ տաս ամսվա ընթացքում, վոր ապրում եյի Ամերիկայում, վորպեսզի գիտենայի, թե ինչ կերպ պետք ե վարվել վայրենիների հետ բարեկամանալու համար։ Մարդ կարող ե իրեն հանձնել նրանց, առանց աներկրա մահվան յենթարկվելու։ Ցեստակավին մի քանի խոսք եյի սովորել նրանց լեզվով և գիտեյի նրանց սովորությունները՝ շնորհիվ այն բազ-

մաթիվ հանդիպումների, որ ունեցել էի նրանց հետ։

Այս տխուր հույսի հետ յես ունեի նաև մի ուրիշ հույս, որն ինձ ներշնչում էին անգլիացիները, որոնք մեզ՝ ֆրանսացիներիս նման նոր աշխարհի այն մասում աքսորվածների բնակավայրեր ունեին։

Սակայն հեռավորության մեծությունն ահաբեկում էր ինձ։ Մինչ նրանց գաղութները հասնելու համար բյուր որերի տևողությամբ պետք էր կտրել անբերրի հարթավայրեր և մի քանի սարեր, որոնք այնքան բարձր ու դիք էին, որ ճանապարհը դեպ այդ սարերը դժվարին էր անգամ ամենադիմացկուն և ամենակորովի մարդկանց համար։ Այնուամենայնիվ յես հույս ունեի, թե մենք կարող կլինենք ոգուտ քաղել թե՛ մեկից և թե՛ մյուսից. վայրենիներից՝ մեզ ճանապարհին ոգնելու, իսկ անգլիացիներից՝ նրանց բնակավայրերում պատսպարվելու համար։

Մենք քայլեցինք այնքան ժամանակ, որքան թույլ էին տալիս Մանոնի ուժերը, այն է՝ մոտավորապես յերկու մղոն, որովհետև իմ աննման սիրուհին շարունակ մերժում էր դադար առնել ավելի վաղ։ Վերջապես հոգնածությունից ուժասպառ՝ նա ինձ խոստովանեց, որ այլևս անկարող է առաջ գնալ։

Արդեն գիշեր էր. մենք նստեցինք լայնատարած հարթավայրի մեջտեղում, չկարողանալով գտնել մի ծառ անգամ, որ պատսպարվենք։ Մանոնի առաջին հոգսը յեղավ փոխել իմ վիրակապը, որն ինքն անձամբ փաթաթել էր մեր մեկնումից առաջ։ Ցես իզուր ընդդիմանում էի նրա կամքին. սաստիկ վշտացրած կլիներ նրան, յեթե զրկեի բավականությունից՝ մտածելու թե յես ինձ լավ եմ զգում և վտանգից զերծ եմ, նախքան նա կմտածի իր սեփական վիճակի մասին։ Մի քանի րոպե յես հնազանդվեցի նրա ցանկություններին. նրա հոգածությունն ընդունեցի անխոս և ամոթով։

Բայց յերբ նա ավարտեց իր քնքուշ խնամքը, ինչպիսի թափով յես սկսեցի իմ փոխադարձ գորովալիր հոգատարությունը։ Ցես հանեցի բոլոր զգեստները և փռեցի

նրա տակ, վորպեսզի գետինը նվազ կարծր թվա նրան։ Հակառակ իր կամքի, յես ստիպեցի նրան համաձայնվել, վոր գործադրեմ բոլոր միջոցները՝ նրան հնարավոր հարմարություններ տալու համար։ Իմ տաք համբույրներով և շնչիս ջերմությամբ յես տաքացնում եյի նրա ձեռները։ Ամբողջ գիշերն անընդհատ հսկեցի նրա վրա և աղերսեցի յերկնքին՝ անուշ ու խաղաղ քուն շնորհել նրան։

Ո՜, առտված, վորքան բուռն ու անկեղծ եյին իմ աղերսանքները, և ինչպիսի անագորույն վորոշումով դուք վճռեցիք չընդունել դրանք։

Ներեցեք, յեթե ինձ սպանող այս պատմությունը յես միայն մի քանի խոսքերով եմ վերջացնում։ Ձեզ կպատմեմ մի աղետի մասին, վորի նմանը յերբեք չի պատահել. յես ամբողջ իմ կյանքի ընթացքում պիտի վողբամ այն։ Թեպետ և յես անդադար դա վառ եմ պահում հիշողությանս մեջ, այնուամենայնիվ իմ հոգին ցնցվում է սարսափից ամեն անգամ, յերբ սկսում եմ պատմել այն։

Գիշերվա մի մասը մենք անցկացրինք հանգիստ։ Յես մտածում եյի, թե իմ անգին սիրուհին քնել է և չեյի համարձակվում շնչել անգամ, վախենալով խանգարել նրա քունը։ Այդերացին, յերբ շոշափեցի նրա ձեռները, նկատեցի, վոր սառն են ու դողդոջուն. յես դրանք իմ կրծքին մոտեցրի, վորպեսզի տաքացնեմ։ Նա զգաց

այդ շարժումը և ճիգ արեց իմ ձեռները բռնելու և նվաղկոտ ձայնով ասաց ինձ, որ իրեն թվում է, թե մոտենում է իր վերջին ժամը։

Սկզբում այս խոսքերը յես ընդունեցի որպես վշտի սովորական արտահայտություն, մի մարդու, որը գտնվում է դժբախտության մեջ, և պատասխանեցի միայն սիրո քնքույշ սփոփանքներով։ Սակայն հաճախակի ու արագացած շնչառությունը, լությունը՝ հանդեպ իմ հարցերի, ձեռքերի սեղմումը, որոնց մեջ նա շարունակում եր պահել իմ ձեռները, ինձ հասկացրին, որ իրոք մոտենում է նրա տառապանքների վերջը։

Ինձնից մի՛ պահանջի, որ նկարագրեմ իմ զգացածը կամ պատմեմ նրա վերջին խոսքերը։ Ցեսնրան կորցրի. անգամ իր վերջին շունչը փչելիս՝ նա դեռ իր սիրո նշանները ցուցաբերեց ինձ. ահա այն ամենը, ինչ յես կարող եմ ձեզ հաղորդել այս ճակատագրական ու չարաբաստիկ դեպքի մասին։

Իմ մահը չհետևեց նրա մահին։ Անշուշտ յերկինքը գտնում եր, որ յես դեռ բավականաչափ խստությամբ չեմ պատժվել։ Նա կամեցավ, որ յես այն որից տաղտկալի ու վողորմելի մի կյանք վարեմ։ Հոժարակամ հրաժարվում եմ յերբևե ապրել յերջանիկ կյանքով։

Քսանչորս ժամից ավելի իմ շրթները հպած պահեցի սիրելի Մանոնիս յերեսին ու ձեռներին։ Իմ դիտավորությունն եր մեռնել այնտեղ. սակայն յերկրորդ որվա սկզբին յես մտածեցի, որ իմ մահից հետո նրա մարմինը վայրենի գազանների կեր կդառնա։ Վորոշեցի նրան թաղել և գերեզմանի վրա սպասել մահիս։ Ցեսարդեն այն աստիճան մոտ եյի իմ վախճանին՝ սովի ու ցավի ինձ պատճառած թուլության հետևանքով, որ հարկ յեղավ մեծ ճիգ գործ դնել՝ վոտքի վրա մնալու համար։ Ստիպված յեղա գործածել այն թունդ խմիչքները, որ վերցրել եյի հետս. դրանք ինձ տվին այնքան ույժ, որքան հարկավոր եր այն տխուր արարողությունը կատարելու համար։ Ինձ համար դժվար չեր փորել հողն այնտեղ,



ուր գտնվում էի. դա ավազով ծածկված մի դաշտավայր էր։ Փշրեցի սուսերս, վորպեսզի նրանով փորեմ, սակայն այդ ինձ ավելի քիչ ոգնեց, քան իմ սեփական ձեռները։ Ցեռ մի լայն փոս փորեցի, այնտեղ տեղավորեցի իմ սրտի կուռքը, նախապես մեծ խնամքով փաթաթելով նրա մարմինն իմ բոլոր զգեստներով, վորպեսզի ավազը չպարուրի նրան։ Սակայն, նախքան փոսն ինքնելը, հաղար անգամ համբուրեցի նրան՝ ամենակատարյալ սիրո բուռն կրակով։ Ցեռ նստեցի նրա մոտ. յերկար դիտեցի նրան. սիրտ չեյի անում փոսը ծածկելու։ Վերջապես իմ ույժերը նորից սկսեցին թուլանալ և վախենալով, վոր կարող եմ դրանցից բոլորովին զրկվել նախքան աշխատանքս ավարտելը, յես առհավետ թաղեցի դեռնի ծոցում այն ամենակատարյալ, ամենագեղեցիկ նյակը, վորը յերբևե ապրել է յերկրի վրա։ Այնուհետև պառկեցի զերեզմանի վրա յերեսս դեպի հողը. աչքերս փակեցի՝ դրանք այլևս յերբեք չբացելու դիտավորությամբ և յերկնքի ոգնությունը պաղատեցի և սկսեցի անհամբեր սպասել մահվան։

Ձեզ անհավատալի պիտի թվա, վոր այս ամբողջ արարողության ժամանակ իմ աչքերից վոչ մի արցունք չկաթեց և իմ շրթներից վոչ մի հառաչանք չլսվեց։ Իմ խորին հուսահատությունը և մեռնելու հաստատ վորոշումը խափանել եյին վհատության ու վշտի բոլոր արտահայտությունները։ Ուստի յերկար այս դիրքում

չինացի գերեզմանի վրա և շուտով կորցրեցի այն թույլ գիտակցությունն ու զգացումը, որ դեռ ունեի։

Այն բոլորից հետո, ինչ դուք լսեցիք, իմ պատմության վերջավորությունը նվազ կարևոր է և չարժե, որ դուք նեղություն կրեք այն ունկնդրելու։ Ցերբ Սիննելեյի մարմինը տարել եյին քաղաք և խնամքով դնելով նրա վերքերը, պարզվել եր, որ վոչ միայն նա չի մեռել, այլ վտանգավոր վերքեր անգամ չի ստացել։ Նա իր հորեղբորը պատմել եր, թե ինչպես և ծագել կռիվը և նրա մեծահոգությունը դրդել եր նրան անմիջապես հրապարակով խոստովանել իմ մեծահոգության մասին։ Իմ յետևից մարդ եյին ուղարկել և իմ անհետացումը Մանոնի հետ՝ կասկած եր հարուցել, որ մենք փախել ենք։ Արդեն չափազանց ուշ եր, որպեսզի հենց այն յերեկո ձեռնարկեյին ինձ փնտրելու. սակայն հաջորդ և մյուս որը գործադրել եյին իմ հետապնդման համար։

Ինձ գտան Մանոնի գերեզմանի վրա անկենդան, և ոլքեր ինձ գտան այս վիճակում, տեսնելով գրեթե մերկ ու վերքից արնաքամ, բնավ չեյին կասկածել, որ ինձ կողոպտել են ու սպանել։ Ինձ փոխադրեցին քաղաք։ Ճանապարհ ընկնելու շարժումից յես ուշքի յեկա։ Այն հառաչները, որ յես արձակեցի բացելով աչքերս ու կսկիծով տեսնելով, որ տակավին կենդանի յեմ, մատնանշեցին, որ դեռ կարելի յե ոգնություն ցույց տալ. ինձ այդ ոգնությունը ցույց տրվեց վերին աստիճանի բարեհաջող։

Այնուամենայնիվ ինձ մեկուսացրին նեղլիկ մի բանտում։ Դատական քննություն նշանակեցին և որովհետև Մանոնը չեր հայտնվել, ինձ մեղադրեցին, թե կատաղության ու խանդի մոլուցքում յես նրան սպանել եմ։ Ցես ամենայն անկեղծությամբ պատմեցի ցավալի յեղելությունը։ Սիննելեն՝ չնայած այն անհուն վշտին, որի մեջ ընկղմեց նրան իմ պատմությունը, մեծահոգությամբ խնդրեց, որ ինձ ներում շնորհվի, և նրան հաջողվեց այդ ձեռք բերել։

Ցեռ այն աստիճան թույլ էր, որ ստիպված էր ամենայն բանից ինձ ուղղակի տուն տանել և անկողին դնել, ուր յերեք ամիս ինձ պահեց մի դաժան հիվանդություն։ Իմ առելությունը դեպի կյանքը չեր թուլանում։ Ցեռ անդադար մահ էր աղերսում և յերկար ժամանակ համառորեն հրաժարվում էր բոլոր դեղերից։ Սակայն յերկինքն ինձ այնքան դաժանությամբ պատժելուց հետո մտադիր եր իմ ոգին ծառայեցնել դժբախտություններս ու կրած պատիժներս. նա ինձ լուսավորեց իր լույսով, որն իմ մեջ վերարծարծեց ծագմանս ու դաստիարակության արժանի խոհերը։ Իմ հոգում անդորրությունը վերածնվեց և այս փոփոխությանը շուտով հետևեց ապաքինումս։ Ցեռ բոլորովին անձնատուր յեղա պատվո թելադրանքներին և շարունակեցի կատարել իմ փոքր պաշտոնի աշխատանքները՝ սպասելով ֆրանսիական նավերին, որոնք տարին մի անգամ լինում են Ամերիկայի այն մասում։ Ցեռ վորոշեցի վերադառնալ հայրենիք՝ այնտեղ վոգջամիտ ու կանոնավոր մի կյանքով քավելու իմ վարմունքի խայտառակությունը։ Սիննելեն հոգացել եր իմ անդին սիրուհու մարմինը փոխադրել մի արժանավայել վայր։

Իմ ապաքինումից վեց շաբաթ անց, յերբ մի անգամ միայնակ զբոսնում էի ծովափին, տեսա մի նավ, որն առևտրական գործերով դալիս եր Նոր-Որլեան։ Ցեռ սկսեցի ուշադրությամբ հետևել Էավից դուրս յեկող

մարդկանց։ Ցեռ ծայր աստիճան զարմացա, յերբ դեպի քաղաք դիմող ուղևորների միջև նկատեցի Տիբերժին։ Իմ հավատարիմ բարեկամը հեռվից ճանաչեց ինձ, չնայած այն փոփոխություններին, վոր դրոշմել եր տրտմությունը իմ դեմքին։ Նա ասաց, վոր իր ճանապարհորդության միակ շարժառիթն ինձ տեսնելու ցանկությունն և յեղել և իր դիտավորությունը՝ համոզելու, վոր յես վերադառնամ Ֆրանսիա։ Ցերբ ստացել և Հավրից գրած նամակս, նա անձամբ յեկել և այդ քաղաքը՝ խնդրած ոգնությունը մատուցելու համար։ Լսելով իմ մեկնումը, նա խիստ վշտացել և և անմիջապես իմ յետևից կմեկներ, յեթե նավ լիներ։ Այնուհետև նա մի քանի ամիս զանազան նավահանգիստներում Ամերիկա գնացող նավ եր փնտրել և վերջապես Սեն-Մալոյում այդպիսին գտնելով, վորը դեպի Մարտինիկ եր նավարկելու, մտել եր այդ նավը, հուսալով, թե իրեն դյուրին կլինի Մարտինիկից անցնել Նոր-Որլեան։ Ճանապարհին իսպանական ծովահենները բռնել են Սեն-Մալոյի նավը և տարել իրենց կղզիներից մեկը, վորտեղից նա ճարպկությամբ փախել և. յերկար թափառումներից հետո ի վերջո նա հանդիպել և այն փոքր նավին, վորը հենց հիմա ժամանեց՝ բարեհաջող կերպով նրան ինձ մոտ բերելով։

Ցեռ խոսք չեյի գտնում ըստ հարկի իմ շնորհակալությունն արտահայտելու այդքան մեծահոգի ու հավատարիմ բարեկամիս։ Ցեռ նրան առաջնորդեցի իմ տունը։ Նրա տնորինության տակ դրի իմ ամբողջ ունեցածը։ Նրան պատմեցի այն ամենը, ինչ պատահել եր ինձ Ֆրանսիայից մեկնելուց հետո։ Ցեվ վորպեսզի նրան մի հաճույք պատճառեմ, վորը նա չեր սպասում, հաղորդեցի, վոր Նրա յերբեմնի իմ սրտում նետած առաքինության սերմերը սկսել են պտուղ տալ, վորից նա անշուշտ գոհ պիտի մնա։ Նա խոստովանեց, վոր այդպիսի քաղցր հավաստիացում նրան փոխհատուցում և ճանապարհորդության մեջ կրած բոլոր նեղությունները։

Մենք յերկու ամիս միասին անցկացրինք Նոր-Որլեանում, սպասելով Ֆրանսիայից յեկող նավերին, և



վերջապես ծով դուրս գալով, սրանից յերկու շաբաթ առաջ Հավր-դե-Գրաս ժամանեցինք։ Այնտեղից յես մի նամակ գրեցի իմ ընտանիքին։ Մեծ յեղբորս պատասխանից իմացա իմ հոր մահվան տխուր լուրը, և դեռ հիմա էլ սարսում եմ՝ և վոչ առանց հիմունքի, վոր իմ մոլորություններն արագացրին ծնողիս մահը։ Հողմը բարենպաստ լինելով դեպի Կալե, յես իսկույն նավ նստեցի, վորպեսզի դնամ այս քաղաքից մի քանի մղոն հեռու ապրող իմ մի ազնվական ազգակցի մոտ, ուր ինձ պիտի սպասի յեղբայրս՝ համաձայն իր նամակի։

ՄԱՆՈՆ ԼԵՍԿՈՑԻ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հորացիոսի յերկտողի թարգմանությունը՝ առաջաբանում.

Վորպեսզի այստեղ ասենք այն, ինչ հարկն է, վոր ասենք։
Շատ բան քննության յենթարկենք, և առայժմ անցնենք։

Եջ VIII *(Ականավոր մարդու հիշատակարանը)* Mémoires d'un homme de qualité — *Աբբա Պրեվոյի յերկերից մեկն է վորի VII հատորը խորագրված է «Մանոն Լեսկո»։ Վերջինս առաջին անգամ լույս է տեսել 1731 թ., ինչու և հեղինակի վոճը հնարավորին չափ պահպանելու նպատակով թարգմանիչը գիտակցորեն տեղ է տվել լեզվական մի շարք հնաբանություններին։*

Եջ 1 Պարլամենտ (parlement) — *այստեղ նշանակում է արդարադատության բարձրագույն ատյան։*

Եջ 3 Արդելատուն (hospital) — *ապաստարան աղքատների, շրջմոլիկների և այլն, նաև յուրատեսակ «ղդաստարան» վատ վարքի մեջ մեղադրվող կանանց։*

Եջ 5 Հրացանաձիգ (archer—աղեղնաձիգ) — *զինվոր, վորը տանում եր նաև վոստիկանական պարտականություններ։*

Եջ 10 Մալտայի կարգ (Ordre de Malte) — *խաչակիրների ժամանակաշրջանում հիմնված կրոնական ու ռազմական միաբանություններից ամենանշանավորը։ 18-րդ դարում Մ. կ.-ն արդեն կորցրել եր իր վաղեմի հզորությունն ու փայլը։*

Եջ 15 Եկյու (écu)— *հինավուրց դրամ, վորը զանազան ժամանակաշրջաններում տարբեր գին ուներ։ 18-րդ դարում Ֆրանսիայում արժեր մոտ հինգ ֆրանկ։*

Եջ 19 Կապալառու (fermier) — *մինչ Ֆրանսիական Մեծ հեղափոխությունը՝ հարկահավաք արքունիքին հասանելիք տուրքերի։ Կապալառուն ծայր աստիճան ատված եր ժողովրդից, վորովհետև նա իր իրավունքներն իրականացնում եր վաշխառուական ամենակեղեքիչ յեղանակներով։*

Եջ 20 Պիստոլ (pistole)—վոսկեդրամ, վորը զանազան յերկրներում տարբեր գին ուներ։ 18-րդ դարում՝ Ֆրանսիայում արժեր մոտ տաս ֆրանկ։

Եջ 39 Բենեֆիցիա (bénéfice) — դրամական, կալվածային շնորհումներ և ուրիշ արտոնություններ, վոր կաթոլիկ յեկեղեցին տալիս եր իր սաներին՝ ի հատուցումն վերջիններից սպասվելիք այլևայլ սպասարկությունների։

Եջ 39 Պրելատ (prélat) — հոգևորական աստիճանավոր։

Եջ 48 Տյուիլերի (Tuileries) — ֆրանսիական միապետների աթոռանիստ պալատը՝ Փարիզում։

Եջ 66 Փարաոն (pharaon)—հնում շատ տարածված թղթախաղի մի տեսակը։

Եջ 85 Սեն-Լազար (Saint-Lazare) — միապետության ժամանակաշրջանում հատուկ արգելատուն, ուր բանտարկում եյին բացառապես աղնվականների զավակներին, վորոշ կարգի անկարգությունների մեջ մեղադրվելու դեպքում։

Եջ 103 Ցանսենիստ (janséniste)—հոլլանդական աստվածաբան Ցանսենյուսի կրոնական կաթոլիկական ուղղության հետևորդ։

Եջ 117 Վերսայլ (Versailles) — ֆրանսիական թագավորների հայտնի պալատ, Փարիզի մոտ։

Եջ 140 Սու (sou)—պղնձե մանր դրամ, վորը հավասար է ֆրանկի քսաներորդ մասին։

Եջ 167 Պիկե (piquet) — թղթախաղի մի տեսակը։

Եջ 192 Շատելե (Châtelet) — Փարիզում դատարանի շենքը կոչվում եր Մեծ Շատելե, իսկ քաղաքական բանտը՝ Փոքր Շատելե։

Եջ 198 Գրև (Grève) — Փարիզի խորհրդի առջև ընկած հրապարակ, ուր կատարվում եյին մահապատիժները։

ՀԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0006049

ЦЕНА
II
021688